

Չոյս Մայեր

ԱՎԵԼԻ ՔԱՆ 3 ՄԻԼԻՈՆ ՎԱՃԱՌՎԱԾ ՕՐԻՆԱԿ

Միտքը կռվի դաշտն է

Հաղթելով մտքիդ պատերազմը



ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Միտքը

կռվի

դաշտն է

Հաղթելով մտքիդ պատերազմը

Ջոյս Մայեր
ՄԻՏՔԸ ԿՈՎԻ ԴԱՇՏՆ Է
Թարգմանված է անգլերենից:

Joyce Meyer
Battlefield of the Mind

Faith Words Edition
Copyright © 1995 by Joyce Meyer
Joyce Meyer Ministries
P.O. Box 655
Fenton, Missouri 63026

AMP նշում ունեցող սուրբգրային մեջբերումներն արված են Աստվածաշնչի «Ընդլայնված թարգմանությունից»: Հին կտակարանի հեղինակային իրավունքները` © 1965, 1987, հրատարակված «Zondervan Corporation»-ի կողմից: Ընդլայնված Նոր կտակարանի հեղինակային իրավունքները` © 1954, 1958, 1987: Հրատարակված է «Lochmann Foundation»-ի կողմից: Օգտագործված է համապատասխան թույլատվությամբ:

NKJV նշում ունեցող սուրբգրային մեջբերումներն արված են Աստվածաշնչի «Նյու Քինգ Ջեյմս թարգմանությունից»: Հեղինակային իրավունքները` © 1979, 1980, 1982: Հրատարակված է «Thomas Nelson, Inc., publishers»-ի կողմից: Օգտագործված է համապատասխան թույլատվությամբ:

KJV նշում ունեցող սուրբգրային մեջբերումներն արված են Աստվածաշնչի «Քինգ Ջեյմս թարգմանությունից»:

Աստվածաշնչի «Արարատ» (1869) թարգմանությունից:

«Միտքը կռվի դաշտն է» գիրքը նվիրում եմ
ավագ որդուս՝ Դավիթին:

Ես գիտեմ, որ դու քո էությամբ նման
ես ինձ և քո բաժինն ես ունեցել մտքի բնագավառում
մղվող պայքարում: Ես գիտեմ, որ դու մեծանալով՝
փորձ ես ձեռք բերում այն
հաղթանակներում, որոնք գալիս
են մտքի նորոգումից հետո:

Ես սիրում եմ քեզ, Դավիթ, և հպարտ եմ քեզանով:
Շարունակի՛ր առաջ գնալ:

Բովանդակություն

Վերահրատարակման ներածական 7

Մաս I. Մտքի կարևորությունը

Ներածություն	10
1. Միտքը կռվի դաշտն է	14
2. Կենսական անհրաժեշտություն	27
3. Մի՛ հանձնվիր	32
4. Քիչ-քիչ	37
5. Եղի՛ր լավատես	43
6. Միտքը գերի վերցնող ոգիները	56
7. Մտածի՛ր այն մասին, թե ինչ ես մտածում	61

Մաս II. Մտքի պայմանները

Ներածություն	71
8. Ե՞րբ է իմ միտքը գտնվում լավ վիճակում	74
9. Թափառող, հետաքրքրասեր միտքը	82
10. Շփոթված միտքը	89
11. Չհավատացող և կասկածող միտքը	99
12. Մտահոգ և անհանգիստ միտքը	113
13. Դատապարտող, քննադատող և կասկածող միտքը	128
14. Պասիվ միտքը	145
15. Քրիստոսի միտքը	156

Մաս III. Անապատրային մտածելակերպեր

Ներածություն	182
16. «Իմ ապագան որոշվում է իմ անցյալով և ներկայով»:	185
17. «Թող ինչ-որ մեկն անի դա իմ փոխարեն. ես պատասխանատվություն վերցնելու ցանկություն չունեմ»:	189

18. «Խնդրո՞ւմ եմ, թող ամեն բան հնարավորին չափ հեշտ լինի. ես չեմ կարողանում դժվարություններին դիմանալ»:	200
19. «Ես ոչինչ չեմ կարողանում անել ինձ հետ. ես դարձել եմ փնթփնթացող, տրտնջացող և սխալներ փնտրող»:	209
20. «Ինձ մի՛ սպասեցրեք. ես արժանի եմ, որ ամեն բան ստանամ անմիջապես»:	219
21. «Միգուցե իմ վարքը սխալ է, բայց դա իմ մեղավորությունը չէ»:	230
22. «Ես այնքան դժբախտ եմ. ես խղճում եմ ինձ, քանի որ ապրում եմ թշվառ կյանքով»:	241
23. «Ես արժանի չեմ Աստծո օրհնություններին»:	248
24. «Ինչո՞ւ ես չեմ կարող խանդել կամ նախանձել, երբ բոլորի մոտ ամեն բան ավելի լավ է, քան ինձ մոտ»:	257
25. «Ես դա կանեմ կա՛մ իմ ձևով, կա՛մ ընդհանրապես չեմ անի»:	266
Նշումներ	274
Օգտագործված գրականություն	277

Վերահրատարակման ներածական

«Միտքը կռվի դաշտն է» գրքի բնագիրը խմբագրվել է 1995 թվականին: Ինձ համար շատ հաճելի է ասել, որ այս գիրքը տարիներ շարունակ համարվում է իմ ամենալավ վաճառվող գիրքը: Անգլերենով այն վաճառվել է ավելի քան 3 մլն օրինակ: Գիրքը թարգմանվել է քառասունյոթ լեզուներով, և այն դեռևս շարունակվում է թարգմանվել այլ լեզուներով: Գիրքն այնքան նպաստող դեր է ունեցել մարդկանց կյանքում, որ մենք ստեղծեցինք նոր հրատարակումներ մանուկների և դեռահասների համար, ինչպես նաև ամենօրյա ուղերձներ՝ հիմնված այս գրքի սկզբունքների վրա: Մեր ծառայությունը շատ վկայություններ է ստացել այն մարդկանցից, ովքեր այս գիրքը կարդալու և նրանում գրված աստվածաշնչյան սկզբունքները կիրառելու արդյունքում իրենց կյանքում ունեցել են դրական փոփոխություններ: Մարդիկ ազատագրվել են տարբեր տեսակի կապվածություններից, մարսողական խանգարումներից, վախից, անհանգստությունից, ինքնատելությունից և բազում այլ խնդիրներից:

Հիշում եմ մի կնոջ, ով պատմում էր, թե ինչպես է իր կյանքին վտանգ սպառնացող մարսողական խանգարումների պատճառով երկար տարիներ բուժման ծրագրեր իրականացրել: Նրա ծնողներն ավելի քան հարյուր հազար դոլար են ծախսել, սակայն նրա առողջությունն այդպես էլ չի վերականգնվել: Այդ կինը վաղուց արդեն կորցրել էր երբևէ առողջանալու հույսը... Բայց մեկ օր կարդաց «Միտքը կռվի դաշտն է» գիրքը: Նա նշում է, որ երբ սկսում էր զգալ շատ ուտելու գայթակղությունը, որին հետևում էին փսխումները, նա ծնկում էր հենց զուգարանի առջև և սկսում էր աղոթել ու բարձրածայն կարդալ «Միտքը կռվի դաշտն է» գիրքը, մինչև գայթակղության զգացողությունն անցնում էր. այդ ամենը երկար տարիներ խլել էր նրա կյանքը: Այսօր այդ կինը միանգամայն ազատ է այդ

հիվանդությունից: Հիմա նա օգնում է այն մարդկանց, ովքեր տառապում են դրանից:

Մեկ այլ պատմություն, որի մասին խոսելով ես չափազանց օրհնվում եմ: «Բարնս և Նոուբլ» գրախանութում մի հրեա տղամարդ պատահաբար հայտնվում է գրքերի կապոցների կողքին: Երբ սկսում է դասավորել գրքերը, ձեռքն է ընկնում «Միտքը կռվի դաշտն է» գիրքը: Հրեա տղամարդը բացում է այն՝ գվարճալի որևէ բան գտնելու ակնկալիքով: Եվ այնպես է ստացվում, որ նա գնում է այդ գիրքը, սակայն թաքցնում է իր կնոջից, որովհետև չի ցանկանում՝ կինն իմանա, որ քրիստոնյա հեղինակի գիրք է կարդում: Նա սկսում է ավելի շատ հետաքրքրվել իր կարդացածով, այնուհետև Աստվածաշունչ է գնում, որը նույնպես թաքցնում է: Ի վերջո բացահայտվում է, որ այդ տղամարդու կինը նույնպես գաղտնի կերպով Աստվածաշունչ է կարդում: Նրանք երկուսն էլ ընդունում են Հիսուսին՝ որպես իրենց Փրկիչ, և շատ ընտանիքների էլ օգնում են՝ ընդունել Հիսուսին և փրկություն ստանալ:

Մեր կյանքը փոխվում է այն ժամանակ, երբ բացահայտում ենք, որ մեր խնդիրների արմատը սխալ մտքերն են, և, որ մենք կարող ենք մեր մտքերը փոխելով՝ փոխել մեր կյանքը: Աստծո Խոսքը սովորեցնում է մեզ, որ մեր միտքը պետք է նորոգված լինի այնպես, որ սովորենք մտածել Աստծո նման: Սա անելով, կարող ենք վայելել այն ազատ, պտղաբեր, խաղաղ և ուրախ կյանքը, որն Աստված է ցանկանում, որ ունենանք:

Երբ մենք սովորում ենք ընտրել մեր սեփական մտքերը և թույլ չենք տալիս սատանային, որ մեր միտքը լցնի կործանող մտքերով, այդ ժամանակ մեր առջև բացվում է մի նոր աշխարհ: Մենք պետք է սովորենք պատասխանատվություն կրել մեր մտքերի ու խոսքերի համար, որովհետև դրանցից են ծնվում մեր գործողությունները: Անհնար է վատ բաներ մտածելով՝ լավ վարք ունենալ:

Մեր հեռուստադիտողները գրեթե միշտ ընտրում են այն հաղորդումները, որոնք իրենց մտածելակերպով, ամենասիրելի հաղորդումներից են: Իսկ գիտե՞ք, թե ինչու... որովհետև ավելի շատ խնդիր-

ներ առաջացնում են մեր մտքերը, քան որևէ այլ բան: Մենք ուզում ենք մտքի խաղաղություն, առողջ մտածելակերպ, ուզում ենք ոչ թե դժբախտություն ծնող մտքեր, այլ՝ կյանք տվող մտքեր: «Միտքը կռվի դաշտն է» գիրքը սովորեցնում է մեզ, որ կարող ենք անել դա, և ցույց է տալիս, թե ինչպես պետք է անել:

«Միտքը կռվի դաշտն է» գրքի այս հատուկ վերախմբագրական աշխատանքներն իրականացնելու համար ես կարիք ունեցա կարդալու այն ամբողջությամբ: Եվ իսկապես այն ինձ շատ է դուր գալիս: Այս գիրքը գրելուց հետո ես այն չէի կարդացել, իսկ երբ կարդացի, ինքս էլ շատ քաջալերվեցի ու շինություն ստացա: Հեշտ է կարդալ և ընդունել այն հիմքային ճշմարտությունը, որը պետք է ունենանք նոր կյանք սկսելու համար, որն էլ տեղի է ունենում Քրիստոսի հետ ունեցած մեր փոխհարաբերության միջոցով: Այս խմբագրման մեջ ես ավելացրել եմ որոշ նոր նյութեր, որոնք առաջին հրատարակումից սկսած՝ արտացոլում են տարիների ընթացքում Աստծո կողմից ինձ տրված պատկերացումներն ու ուսումնասիրությունները: Ինչպես նաև ներառել եմ որոշ բաներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Աստված շարժվել իմ կյանքի այն իրավիճակներում, որոնց մասին ես քննարկում եմ իմ առաջին հրատարակության մեջ: Ես շատ ուրախ եմ, որ դու սկսել ես կարդալ այս գիրքը, որովհետև միանգամայն վստահ եմ, որ այն կփոխի քո կյանքը:

Ես հավատում եմ, որ այս գիրքը շատ օգտակար կլինի քեզ համար՝ լինես դու նորահավատ, թե՛ տարիներ շարունակ Աստծո հետ քայլող անձնավորություն: Աղոթում եմ, որ դու վայելես այս գիրքը, և թող այն օրհնություն բերի քո կյանքում:

Մաս I

Մտքի կարևորությունը

Ներածություն

Ինչպե՞ս կարող ենք բավարար կերպով արտահայտել մեր մտքերի կարևորությունը, որպեսզի փոխանցենք Առակաց 23.7-ի իրական նշանակությունը. «Որովհետև նա [որևէ անձ] ինչպես որ իր սրտում հաշիվներ անող է՝ այնպես է...» (AMP):

Որքան երկար եմ ծառայում Աստծուն, այնքան շատ եմ հասկանում մտքերի և խոսքերի կարևորությունը: Ես միանգամայն հստակ զգացի, թե ինչպես է Սուրբ Հոգին առաջնորդում ինձ այս բնագավառներն ուսումնասիրելու հարցում:

Ես միշտ ասել եմ և ինքս էլ հավատում եմ, որ ճիշտ է այն, որ՝ քանի դեռ մենք այս երկրի վրա ենք, միշտ էլ կարիք կունենանք ուսումնասիրել մտքերի և խոսքերի բնագավառները: Նշանակություն չունի, թե որքան բան գիտենք որևէ բնագավառի մասին: Սովորելու համար միշտ էլ կգտնվի նորը: Կան որոշ բաներ, որոնք մենք նախապես սովորել ենք և դրանք թարմացնելու կարիք ունենք:

Ո՞րն է Առակաց 23.7-ի իրական նշանակությունը: Քինգ Ջեյմսի աստվածաշնչյան թարգմանության մեջ այսպես է ասվում. «Նա [մարդը] ինչպես մտածում է իր սրտում, այնպիսին է նա»: Մեկ այլ թարգմանությունում ասվում է. «Մարդն ինչպես մտածում է իր սրտում, այնպիսին էլ դառնում է»:

«Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն [մարմնի ու արյան զենքեր], այլ՝ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու և խորտակելու, [քանի որ մենք] հերքում ենք փաստերն ու տեսությունները և հավաստիացումները, և ամեն մի հպարտ ու գոռոզ բան, որ ինքն իրեն բարձրացնում է Աստծո [ճշմարիտ] գիտության դեմ. և մենք առաջնորդում ենք ամեն մի միտք ու գերի ենք բռնում ամեն մի նպատակ՝ Քրիստոսին [Մեսիային, Օծյալին] հնազանդեցնելու համար»:

Բ Կորնթացիների 10.4,5, AMP

Միտքը բոլոր գործողությունների առաջնորդն ու «նախակարապետն» է: Հռոմեացիների 8.5-ում ասվում է. «Որովհետև նրանք, ովքեր վարվում են մարմնով, վերահսկվում են՝ իրենց մտքերը անսուրբ ցանկություններով կապված և անում են այն բաները, որոնք հաճելի են մարմնին, բայց նրանք, ովքեր վարվում են Հոգով, վերահսկվում են՝ իրենց մտքերը Հոգու ցանկություններով կապված և փնտրում են այն բաները, որոնք հաճելի են [Սուրբ] Հոգուն» (AMP):

Մեր գործերը հանդիսանում են մեր մտքերի անմիջական արդյունքը: Եթե մենք ունենք բացասական միտք, ապա մենք կունենանք բացասական կյանք: Մյուս կողմից, եթե մենք նորոգում ենք մեր միտքն Աստծո խոսքի համաձայն, ապա ինչպես Հռոմեացիների 12.2-ում է գրված, մեր փորձառությամբ կապացուցենք «Աստծո բարի, հաճելի և կատարյալ կամքը» մեր կյանքում:

Ես այս գիրքը բաժանել եմ երեք հիմնական մասերի: Առաջին մասը վերաբերում է մտքերի կարևորությանը: Ես ցանկանում եմ ձեր սրտում ամուր կերպով հաստատել մի բան՝ դուք պետք է սկսեք մտածել այն մասին, թե ինչ եք մտածում:

Շատ մարդկանց խնդիրներն արմատացած են հենց իրենց մտածելակերպի ձևերի մեջ, որն էլ իսկապես խնդիրներ է առաջացնում նրանց կյանքում: Սատանան ամեն մեկին առաջարկում է սխալ մտածելակերպ, բայց չպետք է ընդունել նրա առաջարկը: Սովորի՛ր, թե ինչպիսի մտածելակերպն է ընդունելի Սուրբ Հոգուն և՛ ինչպիսի մտածելակերպն է անընդունելի Նրան:

Կորնթացիների երկրորդ թղթի 10.4,5 խոսքերը հստակ ցույց են տալիս, որ մենք այնքան լավ պետք է իմանանք Աստծո խոսքը, որ կարողանանք համեմատել մեր և Աստծո մտքերը. «...ցանկացած միտք, որ գոռոզանում է Աստծո խոսքի դեմ, մենք խորտակում և գերի ենք վերցնում՝ Հիսուս Քրիստոսին հնազանդեցնելու համար»:

Աղոթում եմ, որ այս գիրքն օգնի քեզ անելու այդ:

Միտքը կռվի դաշտն է, ուստի անհրաժեշտ է մեր մտքերն Աստծո մտքերի հետ նույն գծի վրա պահելը: Սա ընթացք է, որը ժամանակ և ուսում է պահանջում:

Երբե՛ք չհանձնվես, որովհետև դու կամաց-կամաց պետք է փոխվես: Որքան լավացնես քո միտքը, այնքան քո կյանքը կլավանա: Երբ դու քո մտքում սկսես տեսնել Աստծո բարի կամքը քեզ համար՝ դու կսկսես ապրել այդպես:

Գլուխ

1

Միտքը կռվի դաշտն է

Միտքը կռվի դաշտն է

Աստվածաշնչյան այս մեջբերումն ցույց է տալիս, որ մենք պայքարի մեջ ենք: Հետևյալ խոսքն ուշադրությամբ ուսումնասիրելով հասկանում ենք, որ մեր պայքարը ոչ թե ուրիշ մարդկային արարածների դեմ է, այլ՝ սատանայի և նրա դևերի: Մեր թշնամին՝ սատանան, փորձում է ռազմավարություն ու խորամանկություն կիրառելով՝ հաղթել մեզ և օգտագործել նախապես լավ ծրագրավորված ու կանխամտածված սուտը:

Սատանան ստախոս է: Հիսուսը նրան անվանեց «ստի հայր և այն ամենի, որ սուտ է» (Հովհ. 8.44, AMP): Նա խաբուր է և՛ ձեզ, և՛ ինձ: Նա մեր կամ ուրիշների մասին բաներ է ասում, որոնք սակայն ճիշտ չեն: Սատանան մեզ միանգամից չի ասում ամբողջ սուտը:

Նա սկսում է ռմբակոծել մեր միտքը նախապես խելամտորեն մշակված մանր ու կրծող մտքերի, կասկածների, ենթադրությունների, վախերի, հետաքրքրությունների, փաստարկների և տեսությունների միջոցով: Նա շարժվում է դանդաղորեն ու զգուշորեն (ի վերջո, լավ մշակված ծրագիրը ժամանակ է պահանջում): Հիշե՛ք, որ սատանան մշակած ռազմավարություն ունի իր պայքարի համար: Նա երկար ժամանակ ուսումնասիրում է մեզ:

Նա գիտի, թե ինչ ենք մենք սիրում և ինչ չենք սիրում: Նա գիտի մեր անվստահության, մեր թույլ կողմերի և մտավախությունների մասին: Սատանան գիտի, թե ինչն է մեզ ամենից շատ անհանգստացնում, և մեզ հաղթելու համար նա ներդնում է ժամանակի ամեն մի

«Որովհետև մենք չենք պայքարում արյան ու մարմնի հետ [կռվում միայն ֆիզիկական հակառակորդների հետ], այլ՝ բռնակալությունների դեմ, ուժերի դեմ, [ոգիների] ներկայիս խավար աշխարհին տիրողների դեմ, երկնային [զերբնական] քնազավառում եղող չար ոգիների դեմ»:

Եփեսացիների 6.12, AMP

ակնթարթը: Սատանայի ուժեղ կողմերից մեկը նրա համբերությունն է:

ԲԵՐԴԵՐ ԵՆՔ ՔԱՆԴՈՒՄ

«Որովհետև մեր զինվորության զենքերը ֆիզիկական չեն [մարմնի ու արյան զենքեր], այլ՝ Աստծով գորավոր՝ բերդեր քանդելու և խորտակելու, [քանի որ մենք] հերքում ենք փաստերն ու տեսությունները և հավաստիացումները, և ամեն մի հպարտ ու գոռոզ բան, որ ինքն իրեն բարձրացնում է Աստծո [ճշմարիտ] գիտության դեմ. և մենք առաջնորդում ենք ամեն մի միտք ու գերի ենք բռնում ամեն մի նպատակ՝ Քրիստոսին [Մեսիային, Օծյալին] հնազանդեցնելու համար»:

Բ Կորնթացիների 10.4,5, AMP

Սատանան հստակ ռազմավարության և խորամանկ ստի միջոցով փորձում է «բերդեր» կառուցել մեր մտքում: Իսկ մեր մտքում այդ «բերդն» այն բնագավառն է, որտեղ մենք գտնվում ենք կապվածության մեջ (բանտում)՝ մեր իսկ որոշակի մտածելակերպի պատճառով:

Վերոհիշյալ տողերում Պողոս առաքյալն ասում է, որ մենք ունենք այն զենքերը, որոնցով կարող ենք քանդել սատանայի բերդերը: Այդ զենքերի մասին մենք կխոսենք ավելի ուշ, բայց հիմա, խնդրում են, որ ուշադրություն դարձնես այն բանին, որ մենք կրկին պայքարի և հոգևոր պատերազմի մեջ ենք:

Կորնթացիների երկրորդ թղթի 5-րդ խոսքը մեզ հստակ ցույց է տալիս, թե որտեղ է տեղի ունենում այդ պայքարը:

Աստվածաշնչյան ժամանակակից թարգմանության մեջ այս խոսքում ասվում է, որ մենք վերցնում ենք այդ զենքերն ու հերքում ենք փաստարկները: Սատանան բանավիճում է մեզ հետ՝ առաջարկելով տարբեր տեսություններ ու դատողություններ: Բոլոր այս գործողություններն իրականացվում են մտքում: Միտքը կռվի դաշտն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ մենք գիտենք, որ.

1. Մենք մասնակցում ենք ռազմական գործողությունների:
2. Մեր թշնամին սատանան է:
3. Միտքը կռվի դաշտն է:
4. Սատանան ջանասիրաբար աշխատում է մեր մտքում բերդեր կառուցելու համար:
5. Նա դա անում է՝ կիրառելով իր ռազմավարությունն ու խաբեությունը (մախապես լավ ծրագրավորված և կանխամտածված ստի օգնությամբ):
6. Սատանան չի շտապում. նա իր ծրագիրն իրականացնելու համար ներդնում է իր ժամանակը:

Եկե՛ք մի պատմություն նայենք, որի օգնությամբ կարող ենք առավել հստակ ուսումնասիրել սատանայի ծրագիրը:

ՄԵՐԻՒ ՏԵՍԱԿԵՏԸ

Մերին և նրա ամուսին Ջոնը երջանիկ չեն իրենց ամուսնական կյանքում: Նրանք անդադար վեճերի մեջ են. մշտապես զայրացած են, վիրավորված են և միմյանց հանդեպ լցված են դառնությամբ: Նրանք ունեն երկու երեխա, որոնց վրա իրենց բացասական ազդեցությունն են թողնում տանը տեղի ունեցող անախորժությունները: Եվ այդ ամենն անդրադառնում է երեխաների դասերի և վարքի վրա: Նրանցից մեկի մոտ նյարդային համակարգի լարվածության պատճառով առաջացել են ստամոքսի հետ կապված խնդիրներ:

Մերիի խնդիրն այն է, որ նա չգիտի, թե ինչպես թույլ տա իր ամուսնուն՝ Ջոնին, լինելու իրենց տան գլուխը: Մերին սիրում է ղեկավարել, նա ուզում է անձամբ կայացնել բոլոր որոշումները, կառավարել ֆինանսները և հետևել երեխաների կարգապահությանը: Նա ցանկանում է աշխատել և ունենալ իր «անձնական» գումարները: Մերին անկախ է, պահանջկոտ, սիրում է աղմկել և կռվի առիթ որոնել:

Միգուցե հիմա դուք այսպես եք մտածում. «Ես գիտեմ նրա խնդրի պատասխանը. նա կարիք ունի ճանաչելու Հիսուսին»:

Մերին Հիսուսին որպես Փրկիչ ընդունել է հինգ տարի առաջ, իսկ երեք տարի անց նա ամուսնացել է Ջոնի հետ:

Դուք ուզում եք ասել, որ Հիսուսին ընդունելուց հետո Մերիի կյանքում ոչինչ չի՞ փոխվել: Իհարկե, փոխվել է: Նա հավատում է, որ չնայած իր վատ վարքի, միևնույն է, կգնա Երկինք, բայց նա իր վարքի պատճառով մշտապես դատապարտություն է զգում: Մերին այժմ հույս ունի... Մինչև Հիսուսին ընդունելը նա եղել է դժբախտ ու անհույս, իսկ հիմա նա միայն դժբախտ է:

Մերին գիտի, որ իր վերաբերմունքն ամուսնու նկատմամբ սխալ է, և նա ուզում է փոխվել: Նրան շատ խորհուրդներ են տվել: Նա միշտ լսել և ընդունել է այն բոլոր աղոթքները, որոնք հաղթահարում են զայրույթը, ապստամբությունը, չնեղումը, բարկությունն ու դառնությունը: Իսկ ինչ՞ու՞ն նա իր կյանքում չի տեսնում ոչ մի բարելավում...

Պատասխանը գտնվում է Հռոմեացիների 12.2-ում. «Մի նմանվեք այս աշխարհին [այս դարին], [ձևափոխված և հարմարեցված նրա արտաքին, մակերեսային սովորություններին], այլ [ամբողջապես] կերպարանափոխվեք [փոփոխվեք] ձեր մտքի նորոգությամբ [նրա նոր իդեալների և նրա նոր վերաբերմունքի միջոցով] այնպես, որ կարողանաք ապացուցել [ինքներդ ձեզ], թե որն է բարի և հաճելի ու կատարյալ Աստծո կամքը, նույնիսկ այն, ինչը բարի ու հաճելի և կատարյալ է [Նրա կողմից ձեզ համար] (AMP):

Մերին իր մտքում բերդեր ունի, որոնք երկար տարիներ այնտեղ կառուցված են եղել: Նա ինքն էլ չի հասկանում, թե ինչպես են դրանք առաջացել: Մերին գիտի, որ ինքը չպետք է լինի ապստամբող, կարգադրող, փնթփնթացող, սակայն նա չգիտի, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի, որպեսզի փոխի իր բնավորությունը: Թվում է, թե նա որոշ իրավիճակներում իրեն այդպես է դրսևորում զուտ այն պարզ պատճառով, որ չի կարողանում վերահսկել իր գործողությունները:

Մերին չի կարողանում վերահսկել իր գործողությունները, որովհետև նա չի կարողանում վերահսկել իր մտքերը: Նա չի կարողանում վերահսկել իր մտքերը, որովհետև նա նույնիսկ չգիտի, որ մտքի վերահսկումը ևս մեկ տարբերակ է իր համար: Նրա մտքում գոյություն ունեն բերդեր, որոնք սատանան վաղուց է կառուցել:

Սատանան իր կանխամտածված սուտը և նախաձեռնած ծրագրերը մարդու կյանքում տարածում է դեռևս վաղ տարիներից: Մերիի կյանքում այդ խնդիրները սկսվել էին մանկությունից:

Երեխա հասակում Մերին ունեցել է չափազանց դաժան հայր, ով հաճախ էր պատժում նրան, իսկ պատճառը կարող էր լինել հոր վատ տրամադրությունը: Մերիի հայրը զայրույթից կարող էր պռթակալ նրա ամեն մի սխալ քայլից: Տարիներ շարունակ նա ստիպված է եղել դիմանալ իր և մոր հանդեպ ունեցած հոր դաժան վերաբերմունքին: Յայրը ոչ մի հարգանք չի ցուցաբերել իր կնոջ և դստեր նկատմամբ: Մերիի եղբայրը երբեք չէր պատժվում: Թվում էր, թե վերջինս սիրված էր այն պատճառով, որ տղա էր ծնվել:

Տարիների ընթացքում տասնվեցամյա Մերիի մոտ սատանան արդեն ձևավորել էր իր սուտը, որի իրական պատկերը մոտավորապես այսպիսին էր. «Տղամարդիկ կարծում են, թե իրենք իրենցից ինչ-որ բան են ներկայացնում: Նրանք բոլորն էլ նույնն են և նրանց չի կարելի վստահել: Նրանք կարող են ցավեցնել և օգտագործել քեզ: Եթե դու տղամարդ ես, ապա քո կյանքն արդեն դասավորված է: Կարող ես անել այն, ինչ ցանկանում ես: Դու կարող ես հրամայել քեզ շրջապատող մարդկանց, դեկավարել, նրանց հետ վարվել այնպես, ինչպես կամենում ես, և ոչ ոք (հատկապես կանայք կամ աղջիկները) ոչինչ չի կարողանա անել»:

Արդյունքում Մերին եկավ մի եզրահանգման. «Երբ ես ազատվեմ այստեղից, այլևս ոչ ոք և երբեք չի կարողանա ինձ հետ նման կերպով վարվել»:

Սատանան արդեն պատերազմ էր մղում նրա մտքի կռվի դաշտում: Տարիներ շարունակ այս մտքերը գլխումդ պտտելով՝ դու կտեսնես, արդյոք ամուսնանալուց հետո կկարողանա՞ս լինել քնքուշ, նուրբ և սիրող կին: Նույնիսկ, եթե հրաշքով ցանկանաս դառնալ այդպիսին, միևնույն է, չես իմանա, թե ինչպես: Եվ այսօր Մերին իրեն գտավ հենց այսպիսի խառնաշփոթ իրավիճակում. ի՞նչ կարող է նա անել, և ի՞նչ կարող է անել մեզանից յուրաքանչյուրը՝ հայտնվելով նման իրավիճակում:

ԽՈՍՔԻ ԶԵՆՔԵՐԸ

«Եթե դուք մնաք Իմ խոսքում [արագ ընկալեք իմ ուսմունքները և ապրեք դրանց համաձայն], դուք իսկապես Իմ աշակերտներն եք: Եվ դուք կիմանաք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ ազատ կարծակի»:

Յովհաննես 8.31,32, AMP

Այստեղ Հիսուսն ասում է, թե ինչպես պետք է հաղթանակ տանել սատանայի ստերի դեմ: Մենք պետք է լցվենք Աստծո ճշմարիտ գիտությամբ, մեր մտքերը պետք է նորոգենք Նրա Խոսքով և հետո միայն կիրառենք Կորնթացիների երկրորդ թղթի 10.4,5-ում նշված զենքերը՝ բերդերը քանդելու համար:

Այս զենքերը քարոզների, ուսմունքների, գրքերի, տեսանյութերի, կոնֆերանսների ու աստվածաշնչյան անհատական ուսուցման շնորհիվ ստացած խոսքերն են: Սակայն մենք պետք է հարատևենք, այսինքն՝ մնանք Աստծո Խոսքի մեջ, մինչև որ այն դառնա հայտնություն, որը տրվում է մեզ Սուրբ Հոգու միջոցով: Այստեղ կարևոր գործոնը շարունակական հարատևումն է: Մարկոսի Ավետարանի 4.24-ում Հիսուսն ասում է. «...Ինչ չափով (միտք և ուսումնասիրություն) դուք տալիս եք (ճշմարտությունը լսելու համար), նույն չափով (առաքինություն ու գիտություն) կտրվի ձեզ» (AMP):

Կրկնում են, որ մենք պետք է շարունակենք Աստծո Խոսքի զենքի կիրառումը:

Հոգևոր զենքերից են նաև փառաբանությունն ու աղոթքը: Փառաբանությունն առավել արագ է հաղթում սատանային, քան ցանկացած տեսակի զենքի կիրառումը, բայց այն պետք է լինի սրտանց, այլ ոչ թե պարզապես շուրթերից արտաբերված մի երգ, կամ էլ որպես ստուգելու մեթոդ՝ արդյոք գործո՞ւմ է, թե՞ ոչ: Հիշե՛ք՝ փառաբանությունն ու աղոթքն իրենց մեջ պետք է ներառեն Աստծո Խոսքը: Մենք Աստծուն փառաբանում ենք համաձայն Նրա Խոսքի և բարության:

Աղոթքը մեր փոխհարաբերությունն է Երրորդության հետ: Աղոթքով մենք խնդրում ենք Աստծո օգնությունը կամ Նրա հետ խոսում ենք մեզ մտահոգող որևէ հարցի շուրջ: Դա կոչվում է շփում, ընկե-

րություն և հնարավորություն, որոնց միջոցով կարող ենք արտահայտել մեր ողջ գոհունակությունը նրա համար, թե Ով է Աստված մեր կյանքում և ինչ է Նա անում մեզ համար:

Արդյունավետ աղոթքի կյանք ունենալու համար ձեզ հարկավոր է զարգացնել ձեր անձնական փոխհարաբերությունը Հայր Աստծո հետ: Իմացի՛ր, որ Նա սիրում է քեզ, Նա լի է ողորմությամբ և միշտ պատրաստ է օգնել քեզ: Ճանաչի՛ր Հիսուսին, Նա քո ընկերն է և մահացել է քեզ համար: Ճանաչի՛ր Սուրբ Հոգուն, Նա, որպես քո Օգնական, ամեն ժամանակ քեզ հետ է: Թո՛ւյլ տուր Նրան՝ օգնել քեզ:

Սովորի՛ր աղոթքներդ լցնել Աստծո խոսքով: Սաղմոս 9.10-ում ասվում է, որ մենք կիուսանք Աստծո անվանը, որովհետև Նա չի անտեսում Իրեն խնդրողներին:

Այսպիսով՝ մեր զենքը Աստծո խոսքն է, որը կիրառում ենք տարբեր ձևերով: Խոսքով մենք կարող ենք աղոթել, կարող ենք խոսել, կարող ենք երգել և կարող ենք սովորել: Ինչպես Պողոս առաքյալն է ասում Կորնթացիների երկրորդ թղթում, որ մեր զենքերը մարմնավոր չեն (Ֆիզիկական), դրանք հոգևոր են: Մենք հոգևոր զենքերի կարիք ունենք, որովհետև պայքարում ենք իշխող ոգիների դեմ, անգամ՝ սատանայի դեմ: Նույնիսկ Հիսուսն անապատում օգտագործում էր խոսքի զենքը (տե՛ս Դուկ. 4.1-13): Ամեն անգամ, երբ սատանան ստում էր Նրան, Հիսուսը պատասխանում էր. «Գրված է...», և մեջբերում էր խոսքը:

Երբ Մերին սովորի օգտագործել իր զենքերը, նա կսկսի քանդել այն բերդերը, որոնք կառուցված են եղել իր մտքում: Նա կճանաչի ճշմարտությունը, որը նրան ազատ կարծակի: Նա կտեսնի, որ ոչ բոլոր տղամարդիկ են, որ նման են իր երկրային Հորը: Ոմանք այդպիսին են, բայց ոչ իր ամուսին Ջոնը: Նա անչափ սիրում է Մերին:

ՋՈՆԻ ՏԵՍԱԿԵՏԸ

Այս պատմության մյուս կողմում կանգնած է Ջոնը: Նա նույնպես ունի խնդիրներ, որոնք նպաստող գործոն են հանդիսանում իրենց առջև ծառայած ամուսնական և ընտանեկան դժվար իրավիճակում:

Նա, որպես տան գլուխ, պարտավոր է պահել իր դիրքը: Աստված նրան է հանձնել տանը հոգևոր առաջնորդ լինելու պաշտոնը: Ջոնը նույնպես վերստին ծնված քրիստոնյա է և գիտի, թե ինչպիսին է կարգն ընտանիքում: Նա գիտի, որ չպետք է թույլ տա իր կնոջը՝ հսկելու տնային տնտեսությունը, ֆինանսները, երեխաներին և իրեն: Նա գիտի այս ամենը, սակայն ոչինչ չի նախաձեռնում: Ընդհակառակը, զգալով իր լիակատար պարտությունը, խորասուզվում է հեռուստացույցի և սպորտի մեջ:

Ջոնը փախչում է իր պարտականություններից, որովհետև նա ատում է վեճերը: Նա գերադասում է պասիվ դիրք բռնել, մտածելով այսպես. «Լավ, եթե ես պարզապես թողնեմ այս իրավիճակն այնպիսին, ինչպիսին որ կա, երևի թե այն ինքն իրեն լուծվի»: Կամ էլ նա արդարացնում է իր քայլեր չձեռնարկելը, ասելով. «Ես կաղոթեմ դրա համար»: Իհարկե, աղոթքը լավ է, բայց վատ է, եթե այն դառնում է պատասխանատվությունից խուսափելու միջոց:

Թույլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեն, երբ ասում են, որ Ջոնը պետք է ստանձնի Աստծուց իրեն տրված դիրքը: Ես նկատի չունեմ, որ նա պետք է դառնա բռնակալ՝ հռչակելով և աղաղակելով իր իշխանության մասին: Եփեսացիների թղթի 5.25-ում ասվում է, որ ամուսինը պետք է սիրի իր կնոջն այնպես, ինչպես Քրիստոսը սիրեց եկեղեցին: Ջոնը պետք է պատասխանատվություն վերցնի իր վրա, որից հետո հեղինակություն ձեռք կբերի: Նա պետք է սիրով հաստատուն պահի իր դիրքն իր կնոջ նկատմամբ: Նա պետք է համոզի Մերիին, որ չնայած նա ունեցել է դառը մանկություն, բայց այժմ նա իրեն հանձնել է Աստծուն՝ Նրա հանդեպ ցուցաբերելով վստահություն: Այսուհետև նա պետք է վստահ լինի, որ ոչ բոլոր մարդիկ են այնպիսին, ինչպիսին եղել է իր հայրը:

Ջոնը պետք է շատ ջանք գործադրի, բայց ինչպես և Մերին, նա նույնպես սատանայի համար բաց դուռ ունի՝ «բերդեր», որոնք նրան պահում են գերության մեջ: Ջոնի մտքում նույնպես պատերազմ է մղվում: Մերիի նման նա էլ դաժան մանկություն է ունեցել: Նրա բռնակալ մայրը հաճախ է վիրավորական խոսքերով խոցել նրան. «Ջոն,

դու բանի պիտանի չես... քեզանից բան դուրս չի գա...»:

Ջոնը, ինչպես բոլոր երեխաները, բազմիցս փորձել է հաճոյացնել մորը՝ ջանալով ձեռք բերել նրա բարեգթութիւնը: Սակայն, որքան ավելի էր նա փորձում, այնքան ավելի էր սխալներ գործում: Նա ցրված բնավորություն ուներ, և նրա մայրն անդադար հիշեցնում էր դրա մասին: Երբեմն Ջոնի իրերն ընկնում էին նրա ձեռքից, քանի որ նա ջանում էր ինչ-որ կերպ հաճելի լինել մորը, այդ պատճառով էլ նյարդայնանում էր և չէր կարողանում հասնել իր նպատակին:

Մի քանի անգամ նա մերժվել է իր հասակակիցների կողմից, որոնց հետ ցանկացել է ընկերություն անել: Մեզանից շատերի կյանքում են նման բաներ տեղի ունենում... Բայց դա կործանում էր Ջոնին, քանի որ նա մոր կողմից իրեն արդեն մերժված էր զգում:

Ջոնի կյանքում եղել է նաև մի աղջիկ, ում նա իրոք սիրել է դպրոցական վերջին տարիներին, բայց այդ աղջիկը մերժել է իրեն՝ ընտրելով մեկ ուրիշ տղայի: Ժամանակի ընթացքում այս ամենը կուտակվել է Ջոնի կյանքում, և սատանան էլ իր աշխատանքն է արել՝ տարիներ շարունակ նրա մտքում բերդեր կառուցելով: Ջոնը խիզախություն չունենալու պատճառով պարզապես դարձել է երկչոտ, ամաչկոտ և միայնակ մարդ:

Ջոնն իր էությանը խաղաղասեր մարդ է, ով նախընտրում է հարցերը լուծել անաղմուկ տարբերակով: Տարիներ շարունակ նա հակված է եղել հետևյալ մտքերին. «Անիմաստ է մարդկանց ասել այն, ինչ մտածում ես, միևնույն է, նրանք քեզ չեն լսի: Եթե ցանկանում ես, որ մարդիկ ընդունեն քեզ, ապա հարկավոր է գնալ այն ուղղությամբ, ուր նրանք են գնում: Պարզապես թո՛ղ ամեն բան, միևնույն է, քո ասածը ոչինչ չի փոխի»:

Մի քանի անգամ Ջոնը փորձել է պնդել իր ասածը, սակայն այդ փորձերն ավարտվել են նրա պարտությամբ: Ուստի նա վերջնականապես որոշեց, որ դիմադրելու համար չարժե ջանք ներդնել:

«Ի վերջո ես պարտվելու եմ,- մտածեց նա,- այդ դեպքում, էլ ինչո՞ւ է պետք ինչ-որ բան սկսել»:

ՈՐՆ Է ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որովհետև ես Ինձ օծել է [Օծյալը, Մեսիան] բարի լուրը [Ավետարանը] աղքատներին քարոզելու համար. ես Ինձ ուղարկել է գերիների ազատ արձակումը հայտարարելու և կույրերի տեսողությունը վերականգնելու, ինչպես նաև ազատագրելու նրանց, ովքեր ընկճված են [ովքեր հարստահարված են, ծեծված, ջախջախված և կոտորված են աղետների պատճառով]:

Տիրոջ ընդունած և [հաճելի տարին] այն օրը հռչակելու, երբ Աստծո փրկությունն ու ազատ բարեհաճությունն առատապես հորդի...»:

Ղուկաս 4.18,19, AMP

Նայելով Ջոնի և Մերիի խնդիրներին՝ դժվար չէ պատկերացնել նրանց ընտանեկան կյանքը: Հիշե՛ք, որ նրանք անդադար վեճերի մեջ էին: Վեճը ոչ միշտ է արտահայտվում բացահայտ պայքարով: Հաճախ այն արտահայտվում է թաքնված գայրույթով, որի մասին տանը բոլորը գիտեն, բայց, որի դեմ ոչ ոք ոչինչ անել չի ցանկանում: Նրանց տանն ահավոր մթնոլորտ է տիրում. այն շատ սարսափելի է և սատանային դուր է գալիս:

Ի՞նչ կպատահի Ջոնի, Մերիի և նրանց զավակների հետ... Արդյո՞ք կկարգավորվի նրանց ընտանեկան կյանքը: Նրանք քրիստոնյաներ են, և նրանց ամուսնալուծությունն ու ընտանիքի կործանումը խայտառակություն կլինի, չնայած որ ամեն բան հենց իրենցից է կախված: Հովհաննես Ավետարանի 8.31,32 խոսքերը կարող են բանալի հանդիսանալ նրանց որոշման համար: Եթե այդ ամուսինները շարունակեն ուսումնասիրել Աստծո խոսքը, նրանք կիմանան ճշմարտությունը, և ապա, գործելով այդ ճշմարտության համաձայն, դա նրանց ազատ կարծակի: Բայց Աստծո տեսանկյունից նրանք պետք է սթափ հայացք նետեն իրենց անցյալի ճշմարտության և հենց իրենց վրա:

Ճշմարտությունը միշտ էլ բացահայտվում է Աստծո խոսքի միջոցով: Սակայն, ցավոք, մարդիկ ոչ միշտ են ընդունում դա: Ցավալի գործընթաց է մեր սխալներին նայելն ու դրանց դեմ պայքարելը: Մարդիկ, առհասարակ, հակված են լինում արդարացնելու իրենց

սխալ վարքագծերը: Նրանք թույլ են տալիս, որ իրենց անցյալը և ստացած դաստիարակությունը բացասական ազդեցություն թողնեն իրենց հետագա կյանքում:

Մեր անցյալը կարող է բացատրել, թե ինչու ենք մենք տառապում, բայց մենք չպետք է այն օգտագործենք որպես գերության մեջ մնալու արդարացում:

Ոչ ոք չի կարող իրեն արդարացնել, որովհետև Հիսուսը միշտ պատրաստ է իրականացնելու Իր խոստումը՝ գերիներին ազատ արձակելու հարցում: Ցանկացած բնագավառում Նա կանցկացնի մեզ մինչև հաղթական գծի ավարտը, եթե միայն մենք ցանկանանք ամբողջ հեռավորությունն անցնել Իր հետ:

ԵԼՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Ձեզ ուրիշ փորձություն [ոչ մի փորձանք, որը կգայթակղի դեպի մեղքը] չի պատահել ձեզ, որը սովորական չէ մարդու համար [այսինքն՝ ոչ մի փորձություն կամ փորձանք չի եկել ձեզ վրա, որը վեր է մարդկային դիմակայությունից և, որը չի ստուգվում ու հարմարեցվում և պատկանում մարդկային փորձառությանը. և այդպիսին, որ մարդ կարողանա կրել]: Բայց Աստված հավատարիմ է [Իր հոսքով և Իր կարեկցող էությանմբ], և Նա [կարող է վստահելի լինել] թույլ չի տա ձեզ փորձվելու և ստուգվելու ու քննվելու ձեր կարողությունից, դիմակայելու զորությունից ու տոկուն դառնալու ուժից վեր, բայց փորձության հետ մեկտեղ Նա [միշտ] կհոգա ելքը [փախուստի միջոցը դեպի մի հարթավայր], որ դուք կարող, ուժեղ ու զորեղ լինեք՝ այդ ամենը համբերատարությամբ կրելու»:

Ա Կորնթացիների 10.13, AMP

Հուսով են, որ դուք այս պատմությունից կարողացաք հասկանալ, թե ինչպես է սատանան օգտագործում հանգամանքները և բերդեր կառուցում մեր կյանքում, ինչպես նաև պատերազմ մղում մեր մտքի կռվի դաշտում: Բայց, փառք Աստծուն, որ մենք ունենք զենքեր, որոնցով կարող ենք բերդեր քանդել: Աստված չի լքի ու չի թողնի մեզ անօգնական վիճակում: Կորնթացիների առաջին թղթի 10.13-րդ

խոսքում Աստված խոստանում է մեզ, որ թույլ չի տա, որ մեր ուժերից վեր փորձվենք և դրա հետ մեկտեղ, յուրաքանչյուր փորձության ժամանակ Նա մեզ ցույց կտա ելքի ճանապարհը:

Մերիի և Ջոնի փոխարեն կարող էր լինել մեզանից որևէ մեկը: Ես վստահ եմ, որ մեզանից յուրաքանչյուրն ինչ-որ ընդհանուր բան գտավ այս պատմության մեջ: Նրանք ներքին խնդիրներ ունեին, որոնք կապված էին իրենց մտքերի ու վերաբերմունքի հետ: Եվ նրանց վարքը իրենց ներքին կյանքի հետևանքն էր: Սատանան լավ գիտի, որ եթե նա կարողանա վերահսկել մեր մտքերը, ապա կկարողանա վերահսկել նաև մեր գործողությունները:

Միգուցե քո կյանքում կան որոշ բերդեր, որոնք անհրաժեշտ է քանդել: Թո՛ւյլ տուր խրախուսել քեզ, ասելով. «Աստված քո կողքին է»: Քո մտքի դաշտում պայքար է մղվում: Բայց բարի լուրն այն է, որ Աստված քո կողմից է:

Գլուխ
2

**Կենսական
անհրաժեշտություն**

Կենսական անհրաժեշտություն

Միայն այս մի խոսքը թույլ է տալիս մեզ հասկանալու, թե որքան կարևոր է, որ ճիշտ մտածենք: Մտքերն ուժեղ են և, ըստ Առակաց գրքի հեղինակի, նրանք ստեղծագործելու կարողություն ունեն: Եթե մեր մտքերն ազդում են մեր էության վրա, ապա անհրաժեշտ է, որպեսզի մենք ունենանք ճիշտ մտքեր:

Ես ուզում եմ շեշտել, որ շատ անհրաժեշտ է, որպեսզի մեր և Աստծո մտքերը համապատասխանեն միմյանց:

Դուք չեք կարող ունենալ դրական կյանք և բացասական միտք:

«Որովհետև նա, ինչպես որ իր սրբուն մտածում է՝ այնպես է...»:

Առակաց 23.7

ՄԱՐՄՆԻ ՄԻՏՔԸ ՀՈԳՈՒ ՄՏՔԻ ԴԵՄ

«Որովհետև նրանք, ովքեր վարվում են մարմնով, վերահսկվում են՝ իրենց մտքերը անսուրբ ցանկություններով կապված և անում են այն բաները, որոնք հաճելի են մարմնին, բայց նրանք, ովքեր վարվում են Հոգով, վերահսկվում են՝ իրենց մտքերը Հոգու ցանկություններով կապված և փնտրում են այն բաները, որոնք հաճելի են [Սուրբ] Հոգուն»:

Հռոմեացիների 8.5, AMP

Քինգ Ջեյմս աստվածաշնչյան թարգմանության մեջ Հռոմեացիների թղթի 8-րդ գլուխը սովորեցնում է, որ եթե մենք մտածում ենք մարմնականի մասին, ապա մենք կանենք մարմնին հաճելի բաներ,

բայց եթե մենք մտածում ենք Յոզու բաների մասին, ապա կանենք Յոզուն հաճելի բաներ:

Թո՛ւյլ տուր սա բացատրել այլ կերպ. եթե մենք մարմնավոր կերպով մտածում ենք սխալ և բացասական բաների մասին, այդ դեպքում մենք չենք կարող ապրել Յոզու մեջ: Հաջողակ քրիստոնեական կյանքում նորոգված և աստվածային մտածելակերպ ունենալը կենսական անհրաժեշտություն է:

Լինում են պահեր, երբ մարդիկ ծուլանում են՝ չգիտակցելով, թե որքան կարևոր է դրան ուշադրություն դարձնելը: Սակայն, երբ գիտակցում են, որ մեծ խնդիրներն առաջանում են դրանք անտեսելու պատճառով, ապա սկսում են միջոցներ ձեռնարկել:

Օրինակ՝ երբ բանկից զանգում են ձեզ և ասում, որ ձեր ծախսերը ձեր հաշվից գերազանցել են ութ հարյուր հիսուն դոլարով, դուք անմիջապես սկսում եք պարզել դրա պատճառը: Միգուցե դուք մոռացել եք ներդրում կատարել՝ մտածելով, որ արդեն կատարել եք: Եվ դուք անմիջապես վերցնում եք կանխավճարային գումարը և գնում եք բանկ, այդպիսով ազատվելով հետագա խնդիրներից:

Ես կցանկանայի, որ դուք այս հարցը դիտարկեիք որպես մտքի նորոգման մի տարբերակ:

Միգուցե ձեր կյանքում քաոսային իրավիճակ է տիրում, որովհետև տարիներ շարունակ ապրել եք սխալ մտածելակերպով: Եթե այդպես է, ապա ձեզ համար շատ կարևոր է գիտակցել այն փաստը, որ *ձեր կյանքը չի շտկվի, քանի դեռ ձեր միտքը շտկված չէ*: Դուք պետք է մտածեք այս կենսական անհրաժեշտություն կոչված բնագավառի մասին և լուրջ վերաբերվեք ձեր մտքում սատանայի կառուցած բերդերը քանդելու հարցին: Օգտագործե՛ք ձեր զենքերը, որոնք են՝ Աստծո Խոսքը, փառաբանությունն ու աղոթքը:

ԱՍՏՃՈ ՀՈԳՈՎ

«...Ոչ թե զորությունով և ոչ թե ուժով, այլ՝ Իմ Յոզով»,- ասում է Ջորաջ Տերը»:

Չաքարիա 4.6

Ազատության ճանապարհներից մեկն Աստծո օգնությամբ հաճախակի դիմելն է:

Ձեր զենքերից մեկը աղոթքն է, այսինքն՝ խնդրանքը: Միայն վճռական լինելով դու չես կարող հաղթել քո իրավիճակները: Իհարկե դու կարիք ունես վճռական լինելու, բայց այդ վճռականությունը պետք է լինի Սուրբ Հոգով և ոչ թե ձեր մարմնի ջանքերով:

Սուրբ Հոգին ձեր օգնականն է, ուստի՝ դիմե՛ք Նրա օգնությանը: Ապավինե՛ք Նրան, քանի որ միայնակ մնալով, դուք չեք կարողանա հաղթահարել դժվարությունները:

ԿԵՆՍԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Հավատացյալի համար ճիշտ մտածելակերպը կենսական անհրաժեշտություն է, առանց որի պարզապես անհնար է ապրել: Դա նման է սիրտը բաբախելուն կամ արյան ճնշմանը, առանց որոնց ապրելն անհնար է:

Տարիներ առաջ Աստված ինձ ցույց տվեց այս ճշմարտությունը, որը վերաբերում է աղոթքի և հոսքի միջոցով Նրա հետ իմ անձնական փոխհարաբերությանը: Իմ կյանքում խիստ կարգ ու կանոն էր տիրում այդ ամենն անելու առումով, մինչև որ Աստված ցույց տվեց ինձ դրանց կենսական անհրաժեշտությունը: Ինչպես իմ առողջությունն է կախված իմ սրտի բաբախումից և արյան ճնշման մակարդակից, նույնպես էլ իմ հոգևոր վիճակն է որոշվում Աստծո հետ անցկացրած իմ կանոնավոր և արդյունավետ ժամանակից:

Երբ հասկացա, որ Նրա հետ իմ ունեցած փոխհարաբերությունը կենսական նշանակություն ունի, ես իմ կյանքում դա դրեցի առաջին տեղում: Նույնկերպ նաև, երբ հասկացա, որ ճիշտ մտածելակերպը կենսական նշանակություն ունի հաղթական կյանքով ապրելու համար, ես սկսեցի ավելի լուրջ վերաբերվել այն մտքերին, թե ինչ եմ մտածում, և սկսեցի առավել զգուշորեն ընտրել մտքերս:

ԻՆՉՊԻՍԻՆ ՈՐ ՁԵՐ

ՄՏՔԵՐՆ ԵՆ, ԱՅՆՊԻՍԻՆ ԷԼ ԴՈՒՔ ԵՔ

«Կամ ծառը դարձրեք առողջ [լավ] և նրա պտուղը առողջ [լավ], կամ ծառը դարձրեք անպետք [հիվանդ, վատ] և նրա պտուղն անպետք [հիվանդ, վատ], քանի որ ծառն իր պտղից է իմացվում, ճանաչվում և դատվում»:

Մատթեոս 12.33, AMP

Աստվածաշնչում ասվում է, որ ծառը ճանաչվում է իր պտղից:

Նույնը վերաբերում է նաև մեր կյանքին: Մտքերն ունենում են իրենց պտուղը. եթե ունենաք լավ մտքեր, ձեր կյանքը կտա լավ պտուղներ, եթե ունենաք վատ մտքեր, ձեր կյանքը կտա վատ պտուղներ:

Որպես փաստ կարող ենք դիտարկել մարդու վերաբերմունքը ինչ որ բանի նկատմամբ և տեսնել, որ նրա կյանքում մտքերն են գերիշխում: Ինչպես բարի մարդը չունի ստոր և վրեժխնդիր մտքեր, այնպես էլ չար մարդը չունի բարի և սիրող մտքեր:

Հիշե՛ք Առակաց 23.7-ը և թո՛ւյլ տվե՛ք, որ այն դիպչի ձեր կյանքին. դուք այն եք, ինչ մտածում եք ձեր սրտում: Ես հաճախակի եմ կրկնում այս խոսքերը. «Միտքն ուր տանում է, մարդն այն կողմ էլ գնում է»:

Գլուխ
3

Մի՛ հանձնվիր

Մի՛ հանձնվիր

Նշանակություն չունի, թե որքան վատ են ձեր կյանքի պայմանները, և ինչպիսի վատ վիճակում են գտնվում ձեր մտքերը: Միևնույն է, մի՛ հանձնվեք: Գրավեք այն տարածքները, որոնք սատանան գողացել է ձեզանից: Եթե անհրաժեշտ է, ապա փոքրիկ քայլերով կրկին գրավեք ձեր տարածքները՝ մշտապես ապավինելով Աստծո շնորհքին: Մի՛ փորձեք ձեր կարողությամբ հասնել ձեր երազած արդյունքներին:

«Եվ թող մեր սրտերը չթուլանան և չձանձրանան բարին գործելիս և միշտն անելիս, քանի որ իր ժամանակին և նշանակված պահին կհնչենք, եթե չթուլանանք և ուժից չընկնենք»:

Գաղատացիների 6.9, AMP

Գաղատացիների 6.9-ում Պողոս առաքյալը խրախուսում է մեզ, որպեսզի կանգ չառնենք: Մի՛ եղեք այնպիսի մեկը, ով հեշտությամբ գործը կիսատ է թողնում: Մի՛ ունեցեք այն հիմ «հանձնվող» հոգին: Աստված փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր մինչև վերջ իր հետ կանցնեն ամբողջ ճանապարհը:

ԳՆԱԼ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ

«Երբ ջրերի միջով անցնես, ես քեզ հետ կլինեմ, և գետերի միջով, նրանք քեզ չեն ծածկի: Երբ դու անցնես կրակի միջով, դու չես այրվի կամ վառվի, ոչ էլ խանձվածք կլինի քեզ վրա»:

Եսայի 43.2, AMP

Կյանքում ինչ իրավիճակի էլ որ դուք բախվեք, ես կոչ եմ անում ձեզ՝ գնա՛լ մինչև վերջ և չհանձնվել:

Ամբակունի մարգարեության 3.19-ում ասվում է, որ եղնիկի ոտքեր ունենալու համար (որոնք կարողանում են առանց դժվարության մազլցել լեռների գագաթները) մենք պետք է «...քայլենք [ոչ թե ահաբեկված

նստենք, այլ՝ քայլենք] և [հոգևոր] առաջընթաց ունենանք մեր բարձր տեղերում [խնդիրների, տանջանքի կամ պատասխանատվության հարցում]» (AMP):

Հոգևոր առաջընթաց ունենալու համար անհրաժեշտ է, որ Աստված մեզ հետ լինի, և օգնի, զորացնի ու խրախուսի մեզ, որպեսզի դժվար պահերին կանգ չառնենք:

Հանձնվելը հեշտ է, իսկ մինչև վերջ գնալու համար հավատք է պետք:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐՆ Է

«Այսօր երկինքն ու երկիրը վկա են կանչում ձեր վրա, որ ես ձեր առջև դրեցի կյանքն ու մահը, օրհնություններն ու անեծքը. ուրեմն՝ ընտրիր կյանքը, որ դու և քո սերունդը կարողանաք ապրել»:

Երկրորդ Օրինաց 30.19, AMP

Մենք ամեն օր հազարավոր մտքեր ենք ընդունում, ուստի մեր միտքը նորոգման կարիք ունի և այն պետք է նորոգվի Աստծո Հոգով: Մենք այնքան ենք լցված մարմնավոր (աշխարհիկ) մտքերով, որ սխալ բաներ մտածելու հարցում անգամ ջանք չենք գործադրում:

Մյուս կողմից, մենք պետք է կանխամտածված կերպով ընտրենք ճիշտ մտքերը: Եվ, ի վերջո, եթե մենք ցանկանում ենք ունենալ Աստծո միտքը, ապա պետք է *ընտրել* ճիշտ մտքերը և դա պետք է *շարունակաբար* լինի:

Երբ մենք զգում ենք, որ մտքի պայքարը բավականին դժվար է և չենք կարող հաղթել այն, այդ ժամանակ անհրաժեշտ է լինում դեռ նետել նմանատիպ միտքը և մտածել միայն հաղթելու մասին: Մենք ոչ միայն պետք է մտածենք հաղթելու մասին, այլ նաև պետք է որոշենք չհանձնվել: Եթե մեր միտքը լցված է կասկածներով ու մտավախություններով, այդ ժամանակ մենք պետք է ամուր կանգնենք ու ասենք. «Ես երբեք չեմ հանձնվի: Աստված իմ կողքին է: Նա սիրում և օգնում է ինձ»:

Մեր կյանքի ընթացքում մենք բազմաթիվ որոշումներ ենք կայացրել: Երկրորդ Օրինաց 30.19-ում Աստված Իր ժողովրդին ասում է, որ Ինքը նրանց առջև է դրել կյանքն ու մահը և պատվիրել է՝ *ընտրել* կյանքը: Իսկ Առակաց 18.21-ում ասվում է. «Կյանքն ու մահը լեզվի իշ-

խանութան տակ են, և նա, ով տրվի նրան, կուտի նրա պտղից» (AMP):

Մեր մտքերը դառնում են մեր գործերը: Այդ պատճառով էլ կենսական անհրաժեշտություն է կյանք ծնող մտքեր ընտրելը: Եթե մենք այդպես վարվենք, մեր շուրթերից դուրս կգան ճիշտ խոսքեր:

ՄԻ՛ ՀԱՆՁՆՎԻՐ

Երբ պայքարն անվերջանալի է թվում, և դու կարծում ես, որ այն երբեք չես կարող հաղթել, հիշիր, որ դու անցնում ես մարմնավոր, աշխարհիկ մտքի վերածրագրավորման մի ընթացք, որից հետո կսկսես մտածել այնպես, ինչպես Աստված է մտածում:

Անհնարի՞ն է թվում... *Ո՛չ*:

Դժվա՞ր է... *Այո՛*:

Բայց մի պահ մտածիր, որ Աստված քո կողմից է: Ես վստահ եմ, որ Նա ամենալավ «համակարգչային ծրագրավորողն» է: (Ձեր միտքը նման է համակարգչի, որն իր մեջ ունի ժամկետանց աղբարկղ): Աստված ձեր ներսում գործ է անում, և, ի վերջո, եթե դուք հրավիրեք Նրան հսկելու ձեր մտքերը՝ Նա կանի դա և կվերածրագրավորի ձեր միտքը: Պարզապես շարունակեք համագործակցել Նրա հետ և *մի՛ հանձնվեք*:

Այս ընթացքն անցնելու համար ձեզանից, անշուշտ, որոշակի ժամանակ կպահանջվի, և այն հեշտ չի լինի, բայց ընտրելով Աստծո մտածելակերպը՝ դուք ճիշտ ուղղության վրա կլինեք: Միևնույն է դուք ձեր ժամանակն ինչ-որ բանի վրա վատնելու եք, այդ դեպքում ինչո՞ւ չզբաղվել օգտակար գործով, որը մեկընդմիջտ կարող է լուծել ձեր կյանքի խառնաշփոթ իրավիճակը:

ԵՏ ԴԱՐՁԵՔ ԵՎ ԳՐԱՎԵ՛Ք ՁԵՐ ԴԻՐՔԸ

«Մեր Տեր Աստված խոսեց մեզ հետ Քորեթի վրա. «Բավական երկար մնացիք այս սարի վրա: Ե՛տ դարձեք և չվե՛ք ու գնացեք Ամոր-հացիների սարի երկիրը...

Ահա այն երկիրը ձեզ եմ տվել. մտե՛ք և գրավե՛ք այն երկիրը, որը

Տերը երդում արեց ձեր հայրերին՝ Աբրահամին, Իսահակին և Յակոբին, իրենցից հետո ձեզ ու ձեր սերունդներին տալու համար»»»:

Երկրորդ Օրինաց 1.6-8, AMP

Երկրորդ Օրինաց 1.2-ում Մովսեսն իսրայելացիներին ասում է, որ մինչև Քանանի (Խոստմունքի երկիր) սահմանը հասնող ճանապարհն ընդամենը տասնմեկ օրվա ճանապարհ է, այնինչ՝ դա տևեց քառասուն տարի: Հետո 6-րդ խոսքում Մովսեսը նրանց ասում է. «Մեր Տեր Աստված խոսեց մեզ հետ Քորեբի վրա և ասաց. «Բավական երկար մնացիք այս սարի վրա»:

Արդյոք դուք բավական երկար չե՞ք մնացել ձեր նույն սարի վրա: Արդյո՞ք դուք քառասուն տարի եք անցկացրել՝ փորձելով հաղթահարել տասնմեկօրյա ճանապարհը:

Մեկ օր իմ կյանքում ես վերջապես արթնացա և հասկացա, որ ոչ մի տեղ էլ չէի գնում: *Ես քրիստոնյա էի՝ առանց հաղթանակի:* Մերիի և Ջոնի նման ես նույնպես ունեի շատ սխալ մտքեր և տարիներ շարունակ կառուցված մտավոր բերդեր: Սատանան խաբել էր ինձ, իսկ ես հավատացել էի նրան: Հետևաբար, ես ապրում էի խաբված կյանքով:

Ես բավականին երկար էի մնացել նույն սարի վրա և անցկացրել էի քառասուն տարի, որը կարող էր առավել կարճ տևել, եթե իմանալի Աստծո խոսքի ճշմարտությունը:

Աստված ինձ ցույց տվեց, որ իսրայելացիներն անապատում մնացին իրենց «անապատային մտածելակերպի» պատճառով, որն էլ նրանց գերության մեջ պահող սխալ մտածելակերպն էր: Հաջորդ գլխում մենք կխոսենք այս մասին: Իսկ այժմ թո՛ւյլ տվեք խրախուսել ձեզ, որ ճիշտ որոշում կայացնեք ձեր միտքը նորոգելու հարցում և սովորեք ընտրել ճիշտ մտքեր: Մեկընդմիջտ հաստատ որոշեք ձեր մտքում, որ ոչինչ կիսատ չեք թողնի և չեք հանձնվի, մինչև որ հասնեք կատարյալ հաղթանակի և գրավեք այն, ինչն օրինապես հանդիսանում է ձեր ժառանգությունը:

Qinihu
4

Phz-phz

Քիչ-քիչ

Ձեր մտքի նորոգումը տեղի կունենա քիչ-քիչ, այնպես որ, մի՛ հուսահատվեք, եթե առաջխաղացումը դանդաղ թվա:

Նախքան «Խոստմունքի երկիր» մտնելը, Աստված իսրայելացիներին ասաց, որ Նա թշնամիներին քիչ-քիչ դուրս կբշի նրանց առջևից, որպեսզի «դաշտի գազանները» նրանց վրա չշատանան:

Կարծում եմ, որ «գազաններից» մեկը հպարտությունն է, և այն մեզ վրա կտիրի այն ժամանակ, եթե ազատությունը ձեռք բերենք արագությամբ: Առավել լավ է ազատության հասնել մի բնագավառում, ապա՝ մյուսում, և այդպես շարունակ: Այդ դեպքում մենք մեր ազատությունն ավելի շատ կգնահատենք և կհասկանանք, որ այն պարզև է Աստծուց և ոչ թե մեր սեփական ուժով արված մի բան:

«Եվ քո Տեր Աստված կբշի այն ազգերին քո առջևից քիչ-քիչ. դու չես կարող նրանց շուրջով վերջացնել, որ միգուցե դաշտի գազանները քեզ վրա շարանան»:

Երկրորդ Օրինաց 7.22

ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ՀԵՏՈ ԳԱԼԻՍ Է ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

«Ձեզ որ մի քիչ ժամանակով չարչարվում եք, ամեն շնորհքի Աստված [բոլոր տեսակի օրհնություններն ու հաճությունը տրամադրող], Ով կանչել է ձեզ Իր [սեփական] հավերժական փառքի մեջ Քրիստոս Յիսուսով, Ինքը կատարյալ անի ձեզ և ձեզ դարձնի այն, ինչ պետք է դառնաք, հաստատի և ամրապնդի ձեզ ապահովությամբ, զորացնի ու հիմնի ձեզ»:

Ա Պետրոս 5.10, AMP

Ինչո՞ւ պետք է «մի քիչ ժամանակով» տառապենք: Կարծում եմ, որ այն պահից ի վեր, երբ միանգամայն գիտակցում ենք գոյություն ունեցող խնդիրը, մենք ստիպված ենք լինում որոշակի տառապանք-

ներ կրել՝ նախքան այդ խնդրից ազատվելը: Բայց մենք առավել ցնծություն ենք վերապրում, երբ այդ ամենից հետո գալիս է այդքան սպասված ազատությունը: Երբ փորձում ենք խնդիրն անձամբ հաղթահարել՝ ձախողվում ենք, և հետո միայն հասկանում, որ օգնությունը պետք է Աստուծուց սպասել: Երբ մենք տեսնում ենք, թե ինչպես է Հիսուսն անում այն, ինչը մենք չէինք կարող անել մեր ուժերով, այդ ժամանակ մեր սիրտը լցվում է շնորհակալությամբ և փառաբանությամբ:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

«Ուրեմն, հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար, որ չեն ապրում մարմնի թելադրանքով, այլ՝ Հոգու թելադրանքով»:

Հռոմեացիների 8.1, AMP

Եթե կանգնած ես արգելքների և դժվար իրավիճակների առջև, մի՛ ընդունիր ոչ մի դատապարտություն. վեր կաց, թափ տուր քեզ և նորից սկսիր: Երբ երեխան սկսում է քայլել սովորել, նա այնքան է ընկնում, մինչև որ սկսում է վայելել վստահ քայլելու բավականությունը: Սակայն երեխաների մասին կարելի է միանշանակ ասել, որ, եթե անգամ նրանք ընկնելուց հետո մի որոշ ժամանակ լաց են լինում, միևնույն է, նրանք միշտ վեր են կենում և կրկին փորձում:

Սատանան ջանք չի խնայի, որպեսզի կանգնեցնի քեզ միտքդ նորոգելու գործում: Նա գիտի, որ քեզ վերահսկելը կավարտվի այն պահից, երբ դու սկսես սովորել ընտրել ճիշտ մտքերը և մերժել սխալ մտքերը: Նա կփորձի հուսահատության և դատապարտության միջոցով կանգնեցնել քեզ:

Երբ գալիս է դատապարտությունը, օգտագործի՛ր քո «խոսքի զենքը»: Հռոմեացիների 8.1-ը հիշեցրու սատանային և ինքդ քեզ, որ դու ապրում ես ոչ թե «մարմնի թելադրանքով», այլ՝ «Հոգու թելադրանքով»: Երբ վարվում եք մարմնի թելադրանքով, դուք կախված եք լինում ինքներդ ձեզանից, իսկ երբ վարվում եք Հոգու թելադրանքով,

դուք կախված եք լինում Աստծուց:

Անհաջողության պահերը կգան, քանի որ դրանք անխուսափելի են, բայց դա չի նշանակում, որ դուք անհաջողակ եք: Դա պարզապես նշանակում է, որ դուք կատարյալ չեք ամեն ինչում: Բոլորս պետք է ընդունենք այն փաստը, որ մեր ուժեղ կողմերի հետ մեկտեղ մենք ունենք նաև թույլ կողմեր: Պարզապես թույլ տուր Քրիստոսին՝ քո տկարության մեջ զորացնել քեզ: Թո՛ւյլ տուր Նրան՝ դժվար պահերին լինելու քո զորությունը:

Կրկնում եմ՝ *մի՛ ընդունիր ոչ մի դատապարտություն*: Քո կատարյալ հաղթանակը անպայման կգա, բայց դա կլինի ժամանակի ընթացքում, որովհետև այն կգա «քիչ-քիչ»:

ՄԻ՝ ՀՈՒՄԱՀԱՏՎԵՔ

«Ինչո՞ւ ես խորտակված, ո՞վ իմ ներսի անձ: Եվ ինչո՞ւ պետք է դու հառաչես ինձ վրա և անհանգիստ լինես ինձանում: Աստծո՛ւն հուսա և անդադար Նրա՛ն սպասիր, որովհետև ես դեռ պիտի գովաբանեմ Նրան՝ իմ Ապավենին և իմ Աստծուն»:

Սաղմոս 42.5, AMP

Հուսահատությունը կործանում է հույսը և, բնականաբար, սատարան ցանկանում է միշտ հուսահատեցնել մեզ, քանի որ առանց հույսի մենք կհանձնվենք: Աստվածաշունչն անընդմեջ հորդորում է մեզ՝ չհուսահատվել և չսարսափել: Աստված գիտի, որ, եթե հուսահատվենք, մենք հաղթանակ չենք ունենա: Այդ պատճառով էլ Նա միշտ քաջալերում է մեզ՝ ասելով. «Մի՛ հուսահատվեք»: Աստված ցանկանում է, որ մենք ոչ թե հուսահատվենք, այլ հույսով լցվենք:

Երբ հուսահատված ես կամ դատապարտության տակ ես, քննի՛ր քո մտքերը: Տես, թե ինչպիսի մտքեր են պտտվում գլխումդ: Արդյո՞ք դրանք հնչում են այսպես. «Ես չեմ կարողանա դա անել. դա չափազանց դժվար է: Ես միշտ ձախողվում եմ, ամեն բան նույնն է և երբեք չի փոխվում: Ես վստահ եմ, որ ուրիշների կյանքում մտածելակերպի նորոգումն այսքան դժվարություններ չի առաջացնում: Ավելի լավ կլինի, եթե հանձնվեմ:

Հոգնել եմ կրկին փորձելուց: Ես աղոթում եմ, բայց թվում է, թե Աստված չի լսում: Հավանաբար Նա շատ հիասթափված է ինձանից, որովհետև չի պատասխանում իմ աղոթքներին»:

Եթե ձեր գլխում նման մտքեր են պտտվում, ապա զարմանալի չէ, որ դուք հուսահատված եք կամ էլ դատապարտության տակ եք: Հիշե՛ք, դուք այն եք, ինչ մտածում եք: Եթե մտածեք բացասական բաներ, դուք կհուսահատվեք: Եթե ընդունեք դատապարտող մտքեր, դուք կընկնեք դատապարտության տակ: Փոխե՛ք ձեր մտածելակերպը և ազատ եղեք: Բացասական բաներ մտածելու փոխարեն, մտածե՛ք այսպես. «Լավ, իրադարձությունները մի քիչ դանդաղ են ընթանում, բայց, փա՛ռք Աստծուն, ես որոշակի առաջընթաց ունեմ: Միանգամայն վստահ եմ, որ ճիշտ ուղու վրա եմ գտնվում, որն ինձ առաջնորդում է դեպի ազատությունը: Ես գիտեմ, որ երեկվա օրս դաժան էր, քանի որ ամբողջ օրն ընդունել եմ բացասական մտքեր: Հայր, ների՛ր ինձ և օգնի՛ր, որպեսզի շարունակեմ առաջ շարժվել: Ես սխալ եմ թույլ տվել, բայց այլևս այդպիսի սխալ թույլ չեմ տա: Այսօր նոր օր է: Աստված, Դու սիրում ես ինձ, և Քո ողորմությունը նորոգվում է ամեն օր: Ես հրաժարվում եմ հուսահատված լինելուց և դատապարտության տակ գտնվելուց: Հայր, Աստվածաշնչում գրված է, որ Դու ինձ չես դատապարտում: Դու ուղարկել ես Հիսուսին, որպեսզի մահանա ինձ համար: Ինձ մոտ ամեն բան լավ կլինի: Այսօր Դու օգնում ես ինձ, որպեսզի ճիշտ մտքեր ընտրեմ. ինձ հիանալի օր է սպասվում»:

Վստահ եմ, որ դուք արդեն հաղթանակ եք զգում նմանատիպ կենտուրախ, դրական և աստվածահաճո մտքերից:

Մենք սիրում ենք ամեն բան ստանալ անմիջապես: Մեր ներսում գոյություն ունի համբերության պտուղը, սակայն մենք պետք է թույլ տանք, որպեսզի այն դրսևորվի: Երբեմն երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի Աստված առաջնորդի մեզ դեպի ազատությունը: Նա սպասողական դժվար պահերին օգտագործում է մեր հավատքն ամրացնելու և համբերության հիանալի աշխատանքը մեզանում իրականացնելու համար (տե՛ս Հակոբ. 1.4, KJV):

Աստծո ժամանակը կատարյալ է: Նա երբեք չի ուշանում:

Ահա ևս մեկ դրական միտք, որը կարելի է մտապահել. «Ես վստահում եմ Աստծուն: Ես հավատում եմ, որ Նա աշխատանք է տանում իմ ներսում և նշանակություն չունի, թե ինչ եմ ես զգում, կամ ինչ իրավիճակ է տիրում. Աստված հիանալի գործ է սկսել ինձանում, և Նա այն կհասցնի իր կատարելությանը» (տե՛ս Փիլիպ. 2.13,1.6):

Հենց այսպես դուք կկարողանաք արդյունավետ կերպով կիրառել ձեզ տրված Խոսքի զենքը և քանդել թշնամու բերդերը: Ես ձեզ խորհուրդ եմ տալիս՝ ոչ թե պարզապես մտածել ճիշտ մտքեր, այլ անել ավելին՝ բարձրաձայն դավանելով դրանք:

Հիշե՛ք, Աստված ձեզ ազատում է *քիչ-քիչ*, այնպես որ, սխալվելիս մի՛ հուսահատվեք և մի՛ տրվեք դատապարտությանը:

Համբերատար եղեք ինքներդ ձեր հանդեպ:

Գլուխ
5

Եղի՛ր լավատես

Եղի՛ր լավատես

Դրական մտքերը մեր կյանքը դարձնում են դրական, իսկ բացասական մտքերը՝ բացասական: Դրական մտքերը միշտ լի են հավատքով և հույսով, իսկ բացասական մտքերը՝ վախով ու կասկածանքով:

«...Կլինի քեզ այնպես, ինչպես հավատում ես»:

Մատթեոս 8.13, AMP

Ոմանք վախենում են ինչ որ բանի համար հույս ունենալուց, քանի որ իրենց կյանքում շատ տառապանք են կրել: Նրանք բազմիցս հիասթափված են եղել, և չեն էլ կարծել, որ կհաղթահարեն ևս մեկ հիասթափություն: Այդ է պատճառը, որ նրանք մերժում են հույսը, որպեսզի այլևս հիասթափություն չվերապրեն:

Չույսից խուսափելը ցավից պաշտպանվելու մի ձև է, իսկ հիասթափությունը ցավ է պատճառում: Եվս մեկ անգամ ցավ չվերապրելու համար շատերը պարզապես մերժում են հույսը կամ հավատքն առ այն, որ իրենց կյանքում երբևէ ինչ-որ լավ բան կկատարվի: Նմանատիպ վարքն առաջացնում է բացասական վերաբերմունք: Կյանքում ամեն ինչ բացասական է թվում, քանի որ մտքերն են բացասական: Հիշե՛ք, թե ինչ է ասվում Առակաց 23.7-ում. «Որովհետև նա ինչպես որ իր սրտում մտածում է, այնպիսին է...»:

Շատ տարիներ առաջ ես ծայրահեղ բացասական մարդ էի: Այդ ժամանակ իմ ուղեղը երկու դրական մտքից ավել չէր ընդունում: Իմ ամբողջ փիլիսոփայությունը հետևյալն էր. «Եթե դու ոչ մի լավ բանի չես սպասում, ապա դու չես էլ հիասթափվի, երբ դա տեղի չունենա»:

Ես բազմիցս հիասթափված եմ եղել: Իմ կյանքում այնքան շատ դժբախտություններ են տեղի ունեցել, որոնց պատճառով ես վախենում էի մտածել, որ իմ ձեռքերը երբևէ կարող է որևէ լավ բան պատահել: Ես շատ բացասական էի վերաբերվում կյանքիս ամեն մի բնա-

գավառին: Քանի դեռ իմ մտքերը բացասական էին, այդպիսին էին նաև իմ խոսքերը, իսկ հետևաբար՝ նաև իմ կյանքը:

Երբ ես սկսեցի իսկապես ուսումնասիրել Աստծո խոսքը և ինձ վստահեցի Աստծուն, առաջին բանը, որ հասկացա այն էր, որ բացասական մտքերս հեռանում են:

Մատթեոսի 8.13-ում Յիսուսն ասում է մեզ, որ մեր կյանքում կլինի այնպես, ինչպես մենք հավատում ենք: Քինգ Ջեյմսի աստվածաշնչյան թարգմանության մեջ ասվում է. «...ինչպես դու հավատացել ես, այնպես էլ եղել է քեզ»: Այն, ինչին ես հավատացել եմ, եղել է բացասական, այդ պատճառով էլ իմ կյանքում շատ բացասական բաներ են տեղի ունեցել:

Դա չի նշանակում, որ մենք կարող ենք ստանալ ամեն բան, ընդամենը մտածելով դրանց մասին: Աստված կատարյալ ծրագրի ունի մեզանից յուրաքանչյուրի համար, և մենք չենք կարող վերահսկել Աստծուն մեր մտքերով կամ խոսքերով: Բայց մենք պետք է մտածենք և խոսենք Նրա կամքի և մեզ համար ունեցած ծրագրի համաձայն:

Եթե դուք չգիտեք, թե տվյալ պարագայում որն է Աստծո կամքը ձեզ համար, պարզապես սկսեք մտածել այսպես. «Լավ, ես չգիտեմ Աստծո ծրագիրը, բայց գիտեմ, որ Նա սիրում է ինձ: Ինչ էլ որ Նա անի, դա ինձ համար բարի կլինի և իմ կյանքում օրհնություն կբերի»:

Սկսիր կյանքիդ նայել դրական ձևով:

Աշխատիր ցանկացած իրավիճակում վարվել դրական ձևով: Ինչ վատ բան էլ որ քո կյանքում կատարվի, միևնույն է, սպասիր Աստծուն, և Նա դա բարիին գործակից կանի, ինչպես որ խոստացել է:

ԱՄԵՆ ԲԱՆ ԲԱՐԻԻՆ ԳՈՐԾԱԿԻՑ Է ԼԻՆՈՒՄ

«Մենք վստահ ենք ու գիտենք, որ [Աստված, լինելով նրանց գործընկերն աշխատանքի մեջ] ամեն ինչում, միասին է գործում և [ծրագրի համաձայն] բարիին գործակից է անում նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են ըստ Նրա նպատակի և ծրագրի»:

Յոռնեացիների 8.28, AMP

Այս հատվածում չի ասվում, որ ամեն բան բարի ու լավ է, այլ աս-

վում է, որ ամեն բան *բարիին գործակից է լինում*։

Եկե՛ք պատկերացնենք, որ դուք պատրաստվում եք որոշակի գնումներ կատարել։ Դուք նստում եք ձեր մեքենան, սակայն այն չի աշխատում։ Այս իրավիճակում կարելի է դիտարկել երկու տարբերակ. դուք կարող եք ասել. «Ես գիտեի, որ ձախողվելու եմ, քանի որ ինձ հետ միշտ այդպես է պատահում։ Ամեն անգամ, երբ ուզում եմ ինչ-որ բան անել, ամեն ինչ խառնվում է իրար։ Կարծում եմ, որ այս գնումների հարցում նույնպես ձախողվելու եմ, ինչն էլ միշտ պատահում է իմ բոլոր ծրագրերի հետ»։ Կամ էլ դուք կարող եք ասել. «Ես ցանկանում էի խանութ գնալ, բայց, կարծես թե չեմ կարողանում անել դա հենց հիմա։ Լա՛վ, ես կգնամ ավելի ուշ՝ մեքենան կարգավորելուց հետո։ Վստահ եմ, որ ծրագրերիս մեջ այս փոփոխությունն ինձ համար ավելի լավ կլինի։ Հավանաբար որևէ պատճառ կա, որ ես այսօր տանը մնամ, այնպես որ, ես կարող եմ վայելել իմ այս ժամանակը»։

Հռոմեացիների 12.16-ում Պողոս առաքյալը կոչ է անում մեզ հեշտությամբ հարմարվել մարդկանց և իրավիճակների հետ։ Այս խոսքերի իմաստն այն է, որ մենք պետք է լինենք այնպիսի մարդիկ, ովքեր չեն ընկճվում, երբ իրենց կյանքում չեն իրականանում իրենց ծրագրերը։

Վերջերս ինձ մի հիանալի հնարավորություն ընձեռվեց այս սկզբունքը գործնականում կիրառելու համար։ Ես և Դեյվը գտնվում էինք Ֆլորիդայում, Լեյք Ուորթում։ Այնտեղ երեք օր մենք հավաքություն անցկացրինք և ավարտելուց հետո, պատրաստվում էինք հավաքել իրերն ու վերադառնալ տուն։ Ես որոշել էի հազնել տաքատ, բլուզ և ցածրակրունկ կոշիկներ, որպեսզի ճանապարհին ինձ հարմարավետ զգայի։

Ես սկսեցի հազնվել, սակայն չէի կարողանում գտնել իմ տաքատը։ Մենք այն փնտրում էինք ամեն տեղ և, վերջապես, գտանք պահարանի ներքևի մասում։ Տաքատը կախիչի վրայից սահելով ընկել էր և բավականին ճնրթված տեսք ուներ։ Ինձ մոտ ճամփորդական արդուկ կար, և ես փորձեցի արդուկել այն, բայց երբ հագա, տեսա, որ գեղեցիկ չէ. ես ստիպված էի հազնել միայն զգեստս և բարձրակրունկ կոշիկներս։

Ստեղծված իրավիճակի պատճառով տրամադրությունս ընկավ: Այդպես էլ լինում է մեր կյանքում. երբ մենք չենք ստանում այն, ինչ ցանկանում ենք, մեր զգացմունքները գլուխ են բարձրացնում և փորձում են մեզ զցել ինքնախղճահարության և բացասական իրավիճակի մեջ: Ես անմիջապես հասկացա, որ պետք է որոշում կայացնեմ. կան պետք է զայրանայի, քանի որ ոչինչ այնպես չեղավ, ինչպես ես էի ուզում, կան էլ պետք է հարմարվեի այդ իրավիճակին, դրան նշանակություն չտայի և վայելեի իմ ճանապարհորդությունը:

Լավատես մարդկանց կյանքում նույնպես լինում են դեպքեր, երբ իրավիճակները չեն դասավորվում այնպես, ինչպես իրենք են ցանկանում: Սակայն նրանք կարողանում են դրան նշանակություն չտալ և կյանքը վայելելու որոշում կայացնել, անկախ այն բանից, թե ինչ է կատարվում: Իսկ վատատես մարդն այդպես չի վարվում: Նմանատիպ մարդը ոչ մի հետաքրքրություն չի կարող ունենալ: Նա ցանկացած նախաձեռնած գործի վրա «սև ամպեր կկուտակի»: Նրա մեջ ներքին «ծանրության» մի զգացում կա, և նա անընդհատ դժգոհում, տրտնջում ու մեղադրում է: Նշանակություն չունի, թե որքան լավ բաներ են կատարվում նրա շուրջը, միևնույն է, վատատես մարդը միշտ գտնում է մի բան և դրա մեջ հնարավոր խնդիրներ է տեսնում:

Երբ ես ծայրաստիճան վատատես էի, կարող էի մտնել մարդկանց վերանորոգված տները, և այդ հաճելի միջավայրի մասին լավ արտահայտվելու փոխարեն, նկատել պատերի վատ փակցված պատառը կամ պատուհանի վրայի հետքերը: Բայց այժմ ես այնքան ուրախ եմ, որ Հիսուսն ինձ ազատել և կարողություն է տվել վայելելու կյանքի բոլոր լավ բաները: Ես միանգամայն վստահ եմ, որ Աստծուն հուսալով և հավատալով, վատը կարող է դառնալ լավ, այսինքն՝ ամեն բան կարող է բարիին գործակից լինել:

Եթե դու վատատես անձնավորություն ես, *մի՛ ընկիր դատապարտության մեջ*, քանի որ դատապարտությունն ինքնին բացասական երևույթ է: Այս ամենը պատմում են ձեզ, որպեսզի դուք ճանաչեք վատատես լինելու ձեր խնդիրը և սկսեք վստահել Աստծուն, Ով կարող է փոխել ձեզ. ձեր վատատեսությանը բացասականորեն մի՛ վերաբերվեք:

Ազատագրման ճանապարհը սկսվում է այն պահից, երբ մենք խնդիրն ընդունում ենք առանց ինքնարդարացման: Համոզված եմ, որ եթե դուք վատատես մարդ եք, ապա այդ ամենը պատճառ ունի, իսկ այդ պատճառը միշտ էլ կա: Բայց հիշե՛ք, որ համաձայն Աստվածաշնչի, որպես քրիստոնյա՝ դուք այժմ նոր արարած եք:

ՆՈՐ ՕՐ

«Հետևաբար, եթե մեկը [պատվաստված է Քրիստոսի/Մեսիայի] վրա, նա նոր արարած է [ամբողջովին նոր ստեղծագործություն]. հինը [նախկին բարոյական և հոգևոր վիճակը] անցավ: Ահա՛, բարմ և նոր բաներն եկան»:

Բ Կորնթացիների 5.17, AMP

Որպես «նոր արարած»՝ դուք չպետք է թույլ տաք, որ անցյալում կատարվածը շարունակի իր ազդեցությունն ունենալ Քրիստոսի մեջ ապրած ձեր նոր կյանքում: Դուք այժմ նոր արարած եք և կարող եք նորոգել ձեր միտքը համաձայն Աստծո խոսքի: Եվ ձեր կյանքում հրաշալի բաներ տեղի կունենան:

Ուրախացե՛ք, սա մի նոր օր է:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

«Բայց և այնպես, ես ձեզ ճշմարիտ եմ ասում, որ շահավետ է [լավ, նպատակահարմար, ձեռնտու] ձեզ համար, որ ես գնամ: Որովհետև, եթե ես չգնամ, Մխիթարիչը [Խորհրդատուն, Օգնականը, Փաստաբանը, Բարեխոսը, Ձորացնողը, Աջակցողը] չի գա ձեզ մոտ [ձեզ հետ մտերիմ հարաբերություն ստեղծելու համար], բայց եթե ես գնամ, ես կուղարկեմ Նրան ձեզ [ձեզ հետ մտերիմ հարաբերություն ստեղծելու համար]:

Եվ երբ Նա գա, Նա կդատապարտի աշխարհին և ցույց կտա մեղքն ու արդարությունը [սրտի մաքրությունն ու իրավունքն Աստծո հետ] և դատը»:

Հովհաննես 16.7,8, AMP

Վատատեսությունից ազատագրվելու ամենադժվար պահը ճշմարտությանն առերես կանգնելն ու ասելն է. «Ես վատատես եմ, բայց ես ուզում եմ փոխվել: Ես ինքս ինձ չեմ կարող փոխել, բայց հավատում եմ, որ Աստված կարող է, եթե վստահեմ Նրան: Գիտեմ, որ դա ժամանակ կպահանջի, այնպես որ, ես չեմ հուսահատվի ինքս ինձանից: *«Աստված բարի գործ է սկսել ինձանում, և Նա կարող է այն ավարտին հասցնել»* (Փիլիպ. 1.6):

Խնդրե՛ք Սուրբ Հոգուն, որպեսզի հանդիմանի ձեզ ամեն անգամ, երբ բացասական վերաբերմունք եք ունենում: Դա Նրա աշխատանքի մի մասն է: Հովհաննեսի Ավետարանի 16.7,8 խոսքերը սովորեցնում են մեզ, որ Սուրբ Հոգին կհանդիմանի մեր մեղքը, մեր հանցանքը գիտակցել կտա մեզ և ցույց կտա, թե որքանով ենք մենք արդար: Երբ դուք Սուրբ Հոգուց կստանաք այդ համոզմունքը, խնդրե՛ք Աստծուն օգնել ձեզ: Մի՛ կարծեք, որ դուք ի զորու եք փոխել ինքներդ ձեզ. ապավինե՛ք Նրան:

Նույնիսկ, երբ ես ծայրահեղ աստիճանի վատատես էի, Աստված հասկացրեց ինձ, որ եթե ես վստահեմ Իրեն, Նա կօգնի ինձ դառնալ լավատես: Ես դժվար պահեր եմ ունեցել, երբ փորձել եմ ընդունել միայն դրական մտքեր: Բայց ես հաղթահարեցի դա և հիմա տանել չեմ կարողանում վատատեսությունը: Դա կարծես նման է ծխող մարդու օրինակին: Շատ ժամանակ, նախկին ծխողները հետո այլևս չեն կարողանում հանդուրժել ծխախոտը: Դա կատարվեց նաև ինձ հետ: Տարիներ շարունակ ես ծխում էի, բայց այն թողնելուց հետո՝ ծխախոտի հոտն անգամ տանել չեմ կարողանում:

Նույն վերաբերմունքն ունեմ նաև վատատեսության վերաբերյալ: Ես ինքս շատ վատատես անձնավորություն եմ եղել: Այժմ տանել չեմ կարողանում ոչ մի բացասական բան. դա գրեթե վիրավորում է ինձ: Այն պահից ի վեր, ինչ ազատագրվել եմ բացասական մտածելակերպից, ես իմ կյանքում տեսել եմ բազում դրական փոփոխություններ, և հենց դա է պատճառը, որ ես այժմ դեմ եմ ցանկացած բացասական բանին:

Ես ինքս ամեն ինչին սթափ եմ նայում, և ձեզ էլ խորհուրդ եմ տա-

լիս վարվելու նույնկերպ: Եթե հիվանդ եք՝ մի՛ ասեք. «Ես հիվանդ չեմ», որովհետև դա ճիշտ չէ: Դուք կարող եք ասել. «Ես հավատում եմ, որ Աստված բժշկում է ինձ»: Դուք չպետք է ասեք. «Ես երևի ավելի կվատանամ և կմահանամ հիվանդանոցում»: Դրա փոխարեն ասեք. «Աստծո բժշկարար զորությունն ապաքինում է ինձ հենց հիմա: Ես հավատում եմ, որ կառողջանամ»:

Դուք իմաստուն կերպով կվարվեք, եթե իրականությանը ճիշտ նայեք: Ամեն դեպքում, եթե մեր իրականությունը բացասական է թվում, մենք կարող ենք ունենալ դրական վերաբերմունք դրա նկատմամբ: Ձեր միտքը միշտ պատրաստ պահեք ցանկացած իրադարձության համար, հավատալով, որ Աստված ամեն բան բարիին գործակից կանի:

ՀՈԺԱՐ ՄԻՏՔԸ

«Բայց սրանք ավելի ազնիվ էին, քան նրանք, որ Թեսաղոնիկեում էին, որ խոսքը բոլոր հոժարությամբ ընդունեցին. ամեն օր Գրքերը քննում էին, թե՛ այս այսպե՞ս է»:

Գործք առաքելոց 17.11, KJV

Աստվածաշնչում ասվում է, որ մենք պետք է ունենանք հոժար միտք: Դա նշանակում է, որ մենք պետք է ունենանք այնպիսի միտք, որը բաց կլինի Աստծո կամքի համար, ինչպիսին էլ որ այն լինի:

Թույլ տվեք բերել մի օրինակ երիտասարդ կնոջ կյանքից՝ ում ես ծանաչում էի. նա անհաջող նշանադրություն էր ունեցել: Այդ երիտասարդ կինը և նրա փեսացուն աղոթում էին, որպեսզի իմանային, թե արդյո՞ք Աստծո կամքն է, որ իրենք շարունակեն հանդիպել, թեպետ դեռևս չէին որոշել ամուսնանալ: Երիտասարդ կինը ցանկանում էր շարունակել իրենց փոխհարաբերությունը, նա հույս ուներ և հավատում էր, որ իր փեսացուն կզանգի և կասի, որ ունի միևնույն զգացողությունը:

Ես նրան խորհուրդ տվեցի ունենալ «հոժար միտք», քանի որ ամեն ինչ կարող էր այլ կերպ ստացվել: Նա ինձ հարցրեց. «Բայց արդյո՞ք դա չի լինի բացասական վերաբերմունք»:

Ո՛չ, չի՛ լինի:

Բացասական վերաբերմունքը կարտահայտվեր հետևյալ կերպ. «Իմ կյանքն ավարտված է, ես այլևս չեմ լինի ցանկալի: Ես պարտված եմ և իմ ամբողջ կյանքում թշվառ կլինեմ»:

Իսկ դրական վերաբերմունքը կարտահայտվի հետևյալ կերպ. «Ես շատ ցավում եմ, որ այսպես պատահեց, բայց ես պատրաստվում եմ վստահել Աստծուն: Հուսով եմ, որ ես և իմ սիրելին դեռ կհանդիպենք: Ես կհավատամ Աստծուն և կխնդրեմ Նրան, որ մեր հարաբերությունը վերականգնվի, բայց ամենից առավել ցանկանում եմ, որ մեր կյանքում Աստծո կատարյալ կամքը լինի: Եթե նույնիսկ իրավիճակներն այնպես չդասավորվեն, ինչպես ես կուզեի, ապա ուրախ եմ, որ գոնե *կփրկվեմ*, քանի որ Հիսուսն ապրում է ինձանում: Գուցե որոշ ժամանակ դժվար լինի, բայց ես վստահում եմ Աստծուն: Ես հավատում եմ, որ վերջում ամեն բան բարիին գործակից կլինի»:

Երբ ունենում ես հոժար միտք՝ միաժամանակ պահպանելով դրական վերաբերմունքը, դա նշանակում է, որ փաստերին իրատեսորեն ես նայում:

Ես սա համարում եմ առողջ և հավասարակշռված վերաբերմունք:

ՀՈՒՅՄԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«[Աբրահամի համար մարդկային պատճառը] հույսը գնացած, հուսացած հավատքին, որ նա կարող է դառնալ շատ ազգերի հայր, ինչպես որ իրեն խոստացվել էր, որ այնպես [անհամար] կլինեն քո սերունդները:

Նա չտկարացավ իր հավատքի մեջ, երբ նկատի առավ իր մարմնի [բացարձակ] անպետքությունը, ինչն արդեն մեռածի պես էր, քանի որ նա հարյուր տարեկանին մոտ էր, կամ [երբ նա համարեց] Սառայի [մահացած] արգանդի ամուլ լինելը:

Ո՛չ անհավատությունը և ո՛չ էլ անվստահությունը նրան չսասանեցին [կասկածելի հարցերով] Աստծո խոստման վերաբերյալ, այլ նա ավելի ուժեղացավ ու զորացավ հավատքով, և նա գոհություն ու փառք տվեց Աստծուն»:

Հռոմեացիների 4.18-20, AMP

Ես և Դեյվը հավատում ենք, որ Քրիստոսի մարմնում, այսինքն՝ եկեղեցում կատարած մեր ծառայությունը տարեցտարի կաճի: Մենք միշտ ուզում ենք օգնել որքան հնարավոր է շատ մարդկանց: Բայց միևնույն ժամանակ մենք հասկանում ենք, որ եթե Աստված ունի այլ ծրագիր, և եթե մենք տարվա վերջում որևէ աճ չունենանք, այսինքն՝ ամեն բան լինի այնպես, ինչպես եղել էր նախկինում, ապա մենք թույլ չենք տա, որ իրավիճակը զրկի մեզ մեր ուրախությունից:

Մենք *հավատում ենք շատ բաների*, բայց ամենից առավել հավատում ենք *Մեկին*, և այդ Մեկը Հիսուսն է: Ոչ միշտ է լինում, որ մենք իմանում ենք, թե ինչ է կատարվելու: Պարզապես մենք գիտենք, որ մեզ համար միշտ ամեն բան բարիին գործակից է լինում:

Որքան լավատես լինենք, այնքան ավելի շատ կլինենք Աստծո հոսանքի մեջ: Աստված ամեն ինչում լավատես է, և եթե մենք Նրա հետ միասին քայլենք, ապա կկարողանանք լավատես մնալ:

Թերևս ձեր կյանքում հանգամանքներն այնքան էլ լավ չեն ընթանում, և դուք մտածում եք. «Ջոյս, եթե իմանայիք իմ իրավիճակը, նույնիսկ չէիք էլ ակնկալի, որ ես կարող եմ լավատես լինել»: Միանգամայն հեշտ է լինել լավատես այն ժամանակ, երբ ամեն բան դրական է: Բայց երբ մենք լավատեսորեն ենք տրամադրվում բացասական իրավիճակում, դա ցույց է տալիս Աստծո հանդեպ ունեցած մեր կատարյալ վստահությունը և մեր հոգևոր հասունությունը, որը հաճեցնում և փառավորում է Աստծուն:

Ես ձեզ կոչ եմ անում կրկին կարդալ Հռոմեացիների 4.18-20 խոսքերը, որտեղ խոսվում է այն մասին, թե ինչպես վարվեց Աբրահամը՝ իմանալով իր իրավիճակը (նա չէր անտեսում փաստերը) և նկատի առնելով իր մարմնի բացարձակ անզորությունն ու Սառայի մեռած արգանդի անպտղությունը: Թեև այլևս մարդկային ոչ մի հույս չկար, բայց նա գտավ այդ հույսը հավատքով:

Աբրահամը շատ դրական վերաբերմունք ուներ խիստ բացասական իրավիճակների հանդեպ:

Եբրայեցիների 6.19-ում ասվում է, որ հույսը հոգու խարիսխն է:

Չույսն է այն ուժը, որը ստիպում է մեզ կանգուն մնալ փորձության ժամանակ: Երբեք չդադարեք հուսալ, այլապես դուք կթշվառացնեք ձեր կյանքը: Եթե հույսի բացակայության պատճառով ապրում եք դժբախտ կյանքով, ապա սկսեք հուսալ: Մի՛ վախեցեք: Ես չեմ կարող խոստանալ, որ ամեն ինչ կլինի այնքան կատարյալ, որքան դուք կցանկանալիք: Ես չեմ կարող խոստանալ, որ դուք երբեք հիասթափություն չեք վերապրի: Սակայն, նույնիսկ այն պահերին, երբ հիասթափությունը գա, դուք կարող եք պահել ձեր հույսն ու լավատեսությունը. ձեզ զգե՛ք Աստծո հրաշագործ թագավորության մեջ:

Ձեր կյանքում սպասե՛ք հրաշքի:

Սպասե՛ք լավ բաների:

ՍՊԱՍԵՔ, ՈՐՊԵՍՋԻ ՄՏԱՆԱՔ... ՄՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ՍՊԱՍԵՔ

«Եվ այդ պատճառով Տերը [լրջորեն] սպասում է [ակնկալում, փնտրում ու ձգտում] ներողամիտ լինել քո հանդեպ, այդ պատճառով էլ Ինքն Իրեն բարձրացնում է, որպեսզի ողորմած լինի քո հանդեպ և ցույց տա Իր բարեգթությունը քեզ: Տերն արդարության Աստված է: Օրհնյալ [երջանիկ, բախտավոր, երանելի] են նրանք, ովքեր [լրջորեն] սպասում են Նրան, ովքեր ակնկալում, փնտրում ու ձգտում են Նրան, Նրա հաղթանակին, Նրա հաճությանը, Նրա սիրուն, Նրա խաղաղությանը, Նրա ուրախությանը և Նրա անզուգական, անխախտ ընկերակցությանը»:

Եսայի 30.18, AMP

Աստվածաշնչյան այս խոսքը դարձել է իմ սիրելի խոսքերից մեկը: Եթե խորհեք սրա շուրջ, այն կդառնա մեծ հույսի աղբյուր: Այս հատվածում Աստված ասում է, որ Նա փնտրում է մեկին, ում կկարողանա ցույց տալ Իր գթասրտությունը (բարությունը), բայց այդ մեկը չպետք է բարկություն և բացասական վերաբերմունք ունենա: Նա պետք է լինի այնպիսին, ով սպասում է, փնտրում և ձգտում է, որ Աստված ցույց տա Իր բարությունը:

ՎԱՏ ԿԱՆԽԱԶԳԱՑՈՒՄ

Ի՞նչ է վատ կանխազգացումը:

Երբ նոր էի սկսել ուսումնասիրել Աստծո խոսքը, մի առավոտ լողասենյակում, երբ մազերս էի հարդարում, նկատեցի, որ մթնոլորտում տիրում է սարսափելի զգացողություն, որ կարծես ինչ-որ մի վատ բան պետք է պատահի: Ես ուշադրություն դարձրի և հասկացա, որ այդ զգացողությունն իմ կյանքի ընթացքում ինձ հաճախ է ուղեկցել:

Ես հարցրեցի Աստծուն. «Այս ի՞նչ զգացողությունն է, որը ես միշտ ունենում եմ»:

«Վատ կանխազգացում», - եղավ պատասխանը, որն էլ Աստված դրեց իմ սրտում:

Ես չգիտեի դրա նշանակությունը, և երբևէ չէի էլ լսել դա: Դրանից կարճ ժամանակ անց ես Առակաց 15.15-ում գտա հետևյալ նախադասությունը. «Բոլոր հուսալքված և չարչարված օրերը չարից են (մտահոգված ու վատ կանխազգացողության մտքերը), բայց նա, ով ուրախ սիրտ ունի, մշտապես խնջույքի մեջ է՝ անկախ հանգամանքներից» (AMP):

Ես այդ ժամանակ հասկացա, որ կյանքս դարձել է թշվառ հիմնականում վատ մտքերի և կանխազգացումների պատճառով: Այո՛, իմ կյանքում, իրոք, գոյություն ունեին դժվար իրավիճակներ, բայց նույնիսկ այն ժամանակ, երբ այդպես չէր, միևնույն է, ես դժբախտ էի, որովհետև մտքերս միանգամայն թունավորել էին իմ հայացքները՝ ինձանից զողանալով կյանքը վայելելու և լավ օրեր տեսնելու իմ ունակությունը: Նույնիսկ, երբ այդ պահին ոչ մի վատ բան չէր կատարվում, ես միշտ աղոտ կերպով զգում էի, որ ինչ-որ մի վատ բան պետք է կատարվի: Եվ այդ պատճառով չէի կարողանում կատարելապես վայելել իմ կյանքը:

ՊԱՀԵՔ ՁԵՐ ԼԵԶՈՒՆ ՉԱՐԻՑ

«Թող նա, ով կամենում է վայելել կյանքն ու բարի օրեր տեսնել [լավ, ակնհայտ լինեն դրանք, թե՛ ոչ], պետք է իր լեզուն ազատ պահի չարից և իր շուրթերը նենգությունից [դավաճանությունից, խաբեությունից]»:

Ա Պետրոսի 3.10, AMP

Այս խոսքում հստակ ասվում է, որ կյանք վայելելը, բարի օրեր տեսնելը, դրական մտածելակերպը և մաքուր բերան ունենալը փոխկապակցված են:

Նշանակություն չունի, թե որքան բացասական է ձեր վերաբերմունքը և որքան ժամանակ եք այդ վիճակում գտնվում, ես հաստատ գիտեմ, որ դուք կարող եք փոխվել, որովհետև ես փոխվել եմ: Դա Սուրբ Հոգուց պահանջեց ժամանակ և մանրակրկիտ աշխատանք, որը և արժեր տալ:

Նույնը կպահանջվի ձեզանից. ինչ էլ որ տեղի ունենա, միևնույն է, վստահե՛ք Աստծուն և պահե՛ք ձեր լավատեսությունը: Թույլ մի՛ տվեք, որ վատ կանխազգացումները վերահսկեն ձեզ: Փոխարենը ջանասիրաբար դիմադրեք դրանց Հիսուս Քրիստոսի անունով:

Գլուխ
6

**Միտքը գերի
վերցնող ոգիները**

Միտքը գերի վերցնող ոգիները

Մեկ անգամ, երբ արդեն Աստ-
ծո մեջ էի, մի պահ եղավ, երբ
ինձ դժվար էր հավատալ նրան, ին-
չին երբևէ հավատացել էի հեշ-
տությամբ: Ես չէի հասկանում, թե
ինչ էր ինձ հետ կատարվում, և
արդյունքում՝ ամբողջովին շփո-
թության մեջ ընկա: Որքան երկար
էր դա տևում, այնքան ավելի էր
մեծանում իմ շփոթվածությունը: Իմ
անհավատությունն արագորեն
աճում էր: Ես սկսեցի կասկածել իմ կոչմանը, թվում էր՝ ես կորցնում
եմ ծառայության համար Աստծո կողմից ինձ տրված տեսիլքը: Ես
դժբախտ էի [անհավատությունը միշտ դժբախտության
զգացողություն է առաջացնում]: Իմ միտքը ծուլացած էր. ես զգում էի,
որ ոչ մի կերպ չեմ կարողանում հավատալ Աստծուն:

Այնուհետև երկու օր անընդմեջ հոգումս լսում էի միևնույն արտա-
հայտությունը. «Միտքը գերի վերցնող ոգիներ...»: Առաջին օրն այդ-
քան էլ նշանակություն չտվեցի դրան: Սակայն, երկրորդ օրը, հենց որ
սկսեցի բարեխոսել, կրկին ու կրկին լսեցի այդ խոսքերը. «Միտքը գե-
րի վերցնող ոգիներ»: Թեև ինձ անժամոթ էր այդ արտահայտությունը,
բայց այն ստիպում էր ինձ նկատի առնել իմ մտավոր զգացողությունը:

Շատ մարդկանցից, ում պատիվ ունեցա ծառայելու, լսեցի որ բա-
զում հավատացյալներ խնդիրներ են ունենում մտքի բնագավառում: Ես
մտածեցի, որ այդպիսով Սուրբ Հոգին առաջնորդում է ինձ՝ աղոթել
Քրիստոսի մարմնի, այսինքն՝ եկեղեցու համար՝ «միտքը գերի վերց-

*«Հոգ մի՛ արեք, այլ՝ աղոթքով ու
աղաչանքով ձեր խնդրվածքները
գոհությամբ թող հայտնի լինեն
Աստծուն:*

*Եվ Աստծո խաղաղությունը, որ
վեր է ամեն մտքից, ձեր սրտերն
ու մտքերը պիտի պահի Քրիս-
տոս Հիսուսով»:*

Փիլիպեցիների 4.6,7, KJV

նող» ոգիների դեմ: Այնպես որ, ես սկսեցի աղոթել և պայքարել այդ ոգիների դեմ Հիսուսի անունով: Մի քանի րոպե անց ես զարմանալի ազատություն զգացի իմ մտքում: Դա այնքան դրամատիկ էր: Այն միտքը, որ չար ոգիները թաքնված են շուրջդ, բավականին սարսռեցնող է, բայց նրանք գոյություն ունեն: Հիսուսը դևերին անունով էր կանչում և հրամայում էր հեռանալ:

ԱԶՍԱԳՐՈՒՄ ՄԻՏՔԸ ԳԵՐԻ ՎԵՐՑՆՈՂ ՈԳԻՆԵՐԻՑ

Գրեթե ամեն անգամ, երբ Աստված ազատագրում էր ինձ, դա կատարվում էր աստիճանաբար և Աստծո խոսքին հավատալու և դավանելու միջոցով: Հովհաննեսի Ավետարանի 8.31,32 և Սաղմոս 107.20 խոսքերն իմ անձնական վկայությունն են: Հովհաննեսի 8.31,32-ում Հիսուսն ասում է. «...Եթե դուք Իմ խոսքի մեջ կենաք, ճշմարտապես Իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչեք, և ճշմարտությունը կազատի ձեզ»: Սաղմոս 107.20-ում գրված է. «Իր խոսքն ուղարկեց և նրանց բժշկեց և նրանց ազատեց իրենց կորուստից»:

Բայց այդ ժամանակ ես զգացի ու հասկացա, որ իմ մտքում ինչ-որ բան կատարվեց: Բույեների ընթացքում ես սկսեցի կրկին հավատալ նրան, ինչին մինչև այս աղոթքը դժվարացել էի հավատալ ու պայքարել էի:

Ահա մի օրինակ: Նախքան միտքս գերի վերցնող ոգիների կողմից հարձակման ենթարկվելը, ես հավատում էի, որ Աստծո խոսքի համաձայն, այդ փաստը, որ ես մի անհայտ կին եմ Միսսուրիի Ֆենտոն քաղաքից, ազդեցություն չի ունենա ո՛չ իմ կյանքի, ո՛չ էլ իմ ծառայության վրա (տե՛ս Գաղատ. 3.28): Երբ հարմար լինի Աստված կբացի դռներ, որոնք ոչ ոք չի կարողանա փակել (տե՛ս Հայտն. 3.8), և ես կբարոզեմ ամբողջ աշխարհում՝ ազատագրելով այն ուղերձը, որը Նա է տվել ինձ:

Ես հավատում էի, որ առավելություն ունեմ Ավետարանը բոլոր ազգերին ռադիոյով և հեռուստատեսությամբ քարոզելու հարցում: Ես գիտեի, որ ըստ Սուրբ գրերի, Աստված ընտրում է թույլին և հիմարին՝ իմաստուններին անաչեցնելու համար (տե՛ս Ա Կորնթ. 1.27): Ես հավատում էի, որ Աստված օգտագործելու է ինձ՝ հիվանդներին բժշկելու հա-

մար: Ես հավատում էի, որ մեր երեխաները ծառայելու են Տիրոջը: Ես հավատում էի ամեն տեսակի հրաշալի բաների, որ Աստված դրել էր իմ սրտում: Դրանցից շատերը հիմարություն էին թվում կամ խելքից դուրս, բայց Աստված դրանք դրել էր իմ սրտում ու ինձ տվել գերբնական հավատք՝ հավատալու համար այն ամենին, ինչն իրականում անհավատալի էր:

Այնուամենայնիվ, երբ միտքը գերի վերցնող ոգիները պաշարեցին ինձ, թվում էր՝ ես այլևս ոչ մի բանի չեմ հավատում: Ես մտածում էի. «Լավ, երևի ես էի այդ ամենը հորհրներ: Ես հավատում էի այդ ամենին, որովհետև ուզում էի հավատալ, բայց, ամենայն հավանականությամբ, դա երբեք էլ տեղի չի ունենա»: Բայց երբ ոգիները հեռացան, հավատալու կարողությունն անմիջապես վերադարձավ: Այս փորձառության շնորհիվ ինձ համար պարզ դարձավ, թե սատանան որքան ագրեսիվ է տրամադրված մեր մտքերի դեմ: Նա գիտի, որ եթե ինքը կարողանա վերահսկել մեր մտքերը, կկարողանա նաև վերահսկել մեր կյանքերը:

Ուշադրություն դարձրեք, թե ինչ վիճակում է գտնվում ձեր միտքը. պահեք այն ազատ, խաղաղ և հավատքով լի:

ՈՐՈՇԻՐ ՀԱՎԱՏԱԼ

«Այսպիսով, ևս [Սուրբ] Հոգին է մեզ օգնության գալիս և առաջ տանում մեզ մեր թուլության մեջ, քանի որ մենք չգիտենք, թե ինչ աղոթել և ինչպես պետք է աղոթել, բայց Հոգին Ինքն է ընդառաջ գալիս մեր կողմից արված աղերսանքին և խնդրանքներին, ինչպես նաև խորքից բխող անբարբառ թախծի՞ն ու հառաչանքին»:

Հռոմեացիների 8.26, AMP

Որպես քրիստոնյաներ, մենք պետք է սովորենք՝ *որոշել* հավատալ: Աստված հաճախ մեզ տալիս է հավատք (Հոգու պտուղը) այն բաների համար, երբ մեր միտքը ոչ միշտ է կարողանում համաձայնել մեր հոգու հետ: Միտքը միշտ ուզում է ամեն բան հասկանալ՝ ինչու, երբ և ինչպես: Հաճախ, երբ այս հասկացողությունը տրված չի լինում Աստծո կողմից, միտքը հրաժարվում է հավատալ նրան, ինչը չի կարողանում հասկանալ:

Հաճախ է պատահում, երբ հավատացյալն իր սրտում ինչ-որ բան

է *իմանում*, բայց միտքն ընդդիմանում է դրան:

Ես շատ վաղուց որոշել եմ հավատալ նրան, ինչ Աստծո խոսքն է ասում, նույնիսկ այն դեպքում, երբ ես չեմ հասկանում՝ ինչու, երբ կամ ինչպես կարող է դա իրականանալ իմ կյանքում: Որպես Աստծո զավակներ, մեր ունեցած առավելություններից մեկը անհնարին բանին հավատալն է:

Սակայն, այն խնդիրը, որի համար ես պայքար էի մղում, միանգամայն այլ էր. դա որոշում կայացնելու սահմաններից դուրս էր: Ես կապված էի միտքը գերի վերցնող ոգիներով և, պարզապես, չէի կարողանում ինձ ստիպել՝ հավատալ:

Փա՛ռք Աստծուն, որ Նա Սուրբ Հոգու միջոցով ցույց տվեց ինձ՝ ինչպես աղոթել, և հենց աղոթքի ժամանակ զգացի Նրա ազատագրող զորությունը:

Ես համոզված եմ, որ կարդում եք այս գիրքը, որովհետև ձեր ներսում առաջնորդություն եք զգում այդ քայլն անելու համար: Հավանաբար դուք նույնպես խնդիրներ ունեք մտքի բնագավառում: Եթե այո, ապա խորհուրդ եմ տալիս աղոթել Հիսուսի անունով:

Նրա արյան զորությամբ դուրս եկեք բոլոր չար ոգիների դեմ, որոնք խոչընդոտում են բարեպաշտ մտքերին: Եթե զգում եք, որ ձեր միտքը ծուլանում է և այլևս չի կարողանում հավատալ, հակառակվեք մտքերը գերի վերցնող ոգիներին: Այդպես աղոթեք ոչ թե մեկ անգամ, այլ ամեն ժամանակ, երբ արգելք զգաք այդ բնագավառում:

Սատանան երբեք չի սպառում իր կրակոտ նետերը, որոնք նետում է մեզ վրա այն պահին, երբ մենք փորձում ենք առաջ գնալ: Բարձրացրեք ձեր հավատքի վահանը և հիշեք Հոկոթոս 1.2-8-ում ասված խոսքերը, որոնք սովորեցնում են մեզ՝ Աստծուց իմաստություն խնդրել փորձությունների ժամանակ: Եվ համոզված եղեք, որ Նա մեզ իմաստություն կտա, ինչպես նաև ցույց կտա, թե ինչ անել:

Ես նմանատիպ դժվարության մեջ էի՝ կրակոտ նետերի ազդեցության տակ, որոնք երբեք նախկինում չէի զգացել: Բայց Աստված ցույց տվեց ինձ՝ ինչպես և ինչի դեմ պետք է աղոթել, և ես այդպես անելով՝ ազատություն ձեռք բերեցի:

Համոզված եմ՝ դուք նույնպես կգտնեք այդ ազատությունը:

Ἐπιτομή
7

*Ἐπιτομή, πῶς
ἔστιν ἡ ἀποστολή*

Մտածի՛ր, թե ինչ ես մտածում

Աստծո խոսքը մեզ սովորեց-
նում է, թե ինչի շուրջ պետք է
մտածել և ժամանակ տրամադրել:

Այսինքն՝ սաղմոսերգուն գրում
է, որ ինքը մտածում ու խորհում է
Աստծո կանոնների շուրջ: Սա նշա-
նակում է, որ նա շատ ժամանակ էր

անցկացնում՝ Աստծո ճանապարհների, Նրա ցուցմունքների և ուս-
մունքների մասին խորհելով ու մտածելով: Սաղմոս 1.3-ում ասվում է,
որ այսպես վարվող մարդը նման է «ջրի հոսքերում ամուր տնկված մի
ծառի՝ պատրաստ իր ժամանակին պտուղ տալու, նրա տերևը չի ընկ-
նի և չի թառամի, և ամեն ինչ-որ անում է, կիաջողվի [և կհասունանա]
(AMP):

Բավականին շահավետ է Աստծո խոսքի շուրջ խորհելը: Որքան
շատ ժամանակ մարդը տրամադրի խոսքի մասին մտածելուն, այն-
քան շատ խոսք կհնձի:

ՈՒՇԱԴԻՐ ԵՂԵՔ, ԹԵ ԻՆՉ ԵՔ ԼՍՈՒՄ

«Ուշադի՛ր եղեք, թե ինչ եք լսում: Ինչ չափով [միտք և ուսումնա-
սիրություն] եք տալիս [ձձմարտությունը լսելու համար], նույն չա-
փով [առաքինություն ու գիտություն] կտրվի ձեզ և ավելին կտրվի
ձեզ՝ լսողներիդ»:

Մարկոս 4.24, AMP

Ինչպիսի՛ հրաշալի խոսք է: Այն ասում է, որ ինչքան շատ ժամա-
նակ տրամադրենք խոսքը կարդալուն և լսելուն, այնքան ավելի ուժ
և ունակություն ձեռք կբերենք դա անելու համար: Յետևաբար, ավե-

լի շատ հայտնություն տվող գիտելիքներ կստանանք մեր կարդացածից և լսածից: Այսինքն՝ որքան շատ ենք ներդնում Խոսքի ուսումնասիրության մեջ, այնքան շատ էլ Խոսքից ստանում ենք:

Հատուկ ուշադրություն դարձրեք այն խոստմունքին, որ Աստծո Խոսքին շատ ժամանակ ու ջանք տրամադրելով, մենք գիտելիքներ ու զորություն ենք ձեռք բերում:

Վ.Ե.Վայնի «Աստվածաշնչյան բառերի բացատրական բառարանում» Քինգ Ջեյմսի *աստվածաշնչյան տարբերակում* այս սուրբգրային խոսքում «զորություն» բառը հունարեն «*dynamis*» բառն է, որ թարգմանված է «առաքինություն, արժանիք, ուժ»¹: Իսկ Սթրոնգի «Աստվածաշնչյան նոր սպառիչ սիմֆոնիայի» համաձայն՝ հունարեն «*dynamis*» բառը նշանակում է «ընդունակություն, կարողություն»²: Շատ մարդիկ չեն էլ խորանում Աստծո Խոսքի ուսումնասիրության մեջ, և հետո զարմանում են, թե ինչո՞ւ իրենք հաղթական կյանքով ապրող և զորությամբ լցված քրիստոնյաներ չեն:

Բանն այն է, որ շատերն իրականում բավարար եռանդ ու ջանք չեն ներդնում Խոսքի ուսումնասիրության համար: Նրանք հաճախում են եկեղեցու հավաքույթներին և լսում, թե ինչպես են ուրիշները սովորեցնում ու քարոզում Խոսքը, նրանք լսում են ուսմունքների ձայնագրությունները, բայց հազվադեպ են Աստվածաշունչ կարդում, որովհետև չեն ձգտում Խոսքը դարձնել իրենց կյանքի հիմնական մասը՝ խորհելով դրա շուրջ:

Մեր մարմինները ծուլ են, և հենց դրա համար էլ շատերը ցանկանում են իրենց ուզածը ստանալ առանց ինչ-որ բան անելու (իրենց կողմից առանց ջանքև ներդնելու), սակայն այդպես չի լինում: Թո՛ւյլ տվեք կրկնել՝ մարդը Խոսքից կստանա այնքան, որքան կներդնի Խոսքի ուսումնասիրության մեջ:

ՄՏՈՐԵՔ ԽՈՍՔԻ ՇՈՒՐՋ

«Երանելի [երջանիկ, բարգավաճող ու նախանձելի] է այն մարդը, ով չի ապրում և չի քայլում ամբարիշտների խորհրդի մեջ [համաձայն նրանց ծրագրերի և մտադրությունների], ով [ենթարկվող և

հնազանդ] ձևով չի կանգնում մեղք գործողների մեջ, և ոչ էլ [ազատ ու հարմարավետ] նստում [Աստծուն անպատվողների] ծաղր անողների տեղը: Այլ նրա բերկրանքն ու ցանկությունն է Տիրոջ օրենքը և Նրա իրավունքը [Աստծո ցուցմունքները, հրահանգները, ուսմունքները] և, սովորաբար նա խորհում [մտորում և ուսումնասիրում] է դրանց շուրջ օրուգիշեր»:

Սաղմոս 1.1,2, AMP

Ըստ Վերսեթերի բառարանի՝ *մտորել* բառը նշանակում է՝

- 1) անդրադառնալ, խորհել,
- 2) պլանավորել, ծրագրել, մտքի մեջ պահել... զբաղվել ուսումնասիրությամբ³: Վ.Ե.Վայնի «Աստվածաշնչյան բառերի բացատրական բառարանում» Քինգ Ջեյմսի *աստվածաշնչյան տարբերակում մտորել* բառը նշանակում է՝
 - 1) հոգ տանել,
 - 2) ուշադրություն դարձնել,
 - 3) ջանք ներդնել, մտովի եռանդուն գործել:

Առավել տարածված նշանակությունն է՝ պարապել, խորհրդածել, պատկերացնել, նախօրոք մտածել⁴:

Առակաց 4.20-ում ասվում է. «Որդի՛ս, ուշադրություն դարձրու Իմ խոսքերին, համամիտ եղիր Իմ ասածների հետ և դրանց հնազանդվիր»: Եթե այս խոսքը կապենք «մտորել» բառի սահմանումների հետ, կտեսնենք, որ մենք պետք է ուշադրություն դարձնենք Աստծո խոսքին՝ մտորելով դրա շուրջ, խորհելով դրա մասին և կիրառելով դա մեր մտքում: Իմաստը կայանում է նրանում, որ, եթե մենք ցանկանում ենք կատարել այն, ինչ Աստծո խոսքն է ասում, մենք պետք է ժամանակ տրամադրենք խոսքի շուրջ մտորելուն:

Հիշո՞ւմ եք այս հին ասացվածքը՝ «Կրկնությունը գիտության մայրն է»: Բոլորին է հայտնի, որ առանց գործնական, ջերմեռանդ պարապմունքների ոչ ոք չի կարող հմուտ մասնագետ դառնալ որևէ բնագավառում, ուրեմն՝ ինչո՞ւ քրիստոնեությունը պետք է բացառություն լինի այս դեպքում:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՆ ՏԱՆՈՒՄ

«Այս Օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ՝ գիշեր ու ցերեկ նրա վրա մտածես, որ պահես ու կատարես բոլոր նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես, և այն ժամանակ խելամուտ կլինես»:

Յեսու 1.8

Եթե ցանկանում եք հաջողություն ունենալ և բարգավաճել ձեր բոլոր գործերում, ապա ինչպես Աստվածաշնչում է ասվում, պետք է Աստծո Խոսքի շուրջ մտորեք օրուգիշեր:

Որքա՞ն ժամանակ եք հատկացնում Աստծո Խոսքի շուրջ խորհելուն: Եթե ձեր կյանքի ինչ-որ մի բնագավառում խնդիրներ եք ունենում, ապա այս հարցին անկեղծ պատասխան տալը կարող է բացահայտել դրանց պատճառը:

Իմ կյանքում ես երբեք չէի մտածել՝ ինչի մասին եմ մտածում: Պարզապես ընդունում էի ցանկացած միտք, որ ծագում էր իմ ուղեղում: Ես հայտնություն չունեի, որ սատանան իմ ուղեղում մտքեր ցանելու կարողություն ունի: Իմ գլխում հիմնականում կան սատանայական սուտ էր, կան կատարյալ անհեթեթություն, որոնց վրա անիմաստ վատնել էի թանկարժեք ժամանակս: Սատանան կառավարում էր իմ կյանքը, որովհետև վերահսկում էր իմ մտքերը:

ՄՏԱԾԻՐ, ԹԵ ԻՆՉ ԵՍ ՄՏԱԾՈՒՄ

«Այս ամենի մեջ մենք, ինչպես և դուք, ապրել և վարվել ենք մեր մարմինների [մեր վարքի, որը մեր զգացմունքային բնության արտահայտությունն է] կրքերի համեմատ՝ հնազանդվելով մարմնի ազդակներին և ուղեղի մտքերին [մեր տենչանքը թելադրված է մեր զգայարանների և մեր խավար երևակայության կողմից]: Մենք [Աստծո] ցասման երեխաներն ենք եղել և [Նրա] վրդովմունքի ժառանգները, ինչպես և մնացած մարդկությունը»:

Եփեսացիների 2.3, AMP

Պողոսը զգուշացնում է մեզ, որ մեր մեղավոր բնությունը չպետք է

վերահսկի մեզ՝ ենթարկելով մեր մարմնի ազդակներին ու մարմնական մտքերին:

Ես, արդեն քրիստոնյա լինելով, հաճախ խնդիրներ էի ունենում, քանի որ չէի կարողանում սովորել կառավարել մտքերս: Ես անընդհատ մտածում էի ինչ-որ բաների շուրջ, որոնք զբաղեցնում էին միտքս, բայց դրանք դրական արդյունք չէին տալիս:

Ես կարիք ունեի փոխելու իմ մտածելակերպը:

Երբ Աստված ինձ սկսեց ցույց տալ, որ միտքը հանդիսանում է պատերազմի դաշտը, Նա մի շատ կարևոր բան ասաց, որն էլ շրջադարձային եղավ իմ կյանքում: Նա ասաց. «Մտածիր, թե ինչ ես մտածում»: Սկսելով այդպես վարվել՝ ես շուտով հասկացա, թե ինչու իմ կյանքում այդքան շատ խնդիրներ կային:

Իմ մտքում կատարյալ խառնաշփոթ էր տիրում:

Իմ մտածելակերպը սխալ էր, ուստի սխալ էին նաև մտքերս:

Երկար տարիներ հաճախում էի եկեղեցի, սակայն երբեք լրջորեն չէի մտածել լսածներիս մասին: Այն մի ականջիցս մտնում և մյուսից դուրս էր գալիս: Ամեն օր Աստվածաշնչից խոսքեր էի կարդում, սակայն երբեք չէի մտածել, թե ինչ եմ կարդում: Ես խոսքը չէի *ուսումնասիրում*: Այդ իսկ պատճառով էլ ձեռք չէի բերում ո՛չ ուժ, ո՛չ գիտելիք:

ՄՏՈՐԻՐ ԱՍՏԾՈ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մենք Քո տաճարի մեջ մտածում ենք Քո հաստատական սիրո մասին»:

Սաղմոս 48.9, AMP

Սաղմոսները ցույց են տալիս, որ Դավիթը հաճախ էր մտորում Տիրոջ բոլոր հիանալի և հզոր գործերի մասին: Նա ասում է, որ մտածում է Տիրոջ անվան, Նրա ողորմության, սիրո և այլ հրաշալի բաների շուրջ:

Եվ անգամ հուսահատության մեջ լինելով՝ նա Սաղմոս 143.4,5-ում գրել է. «Իմ հոգին ճնշված և թույլ է իմ ներսում (մռայլված), սիրտս ընդարմացած է իմ մեջ: Հիշում եմ ժամանակները հին, մտա-

ծում Քո ստեղծագործությունների մասին, ես խորհում եմ Քո ձեռքի գործերի շուրջ» (AMP):

Այս խոսքից տեսնում ենք, որ, չնայած Դավթի դեպրեսիային և հուսահատությանը, նա հրաժարվում է մտածել իր խնդրի մասին: Փոխարենը նա *որոշում է* հիշել հին ու լավ օրերը՝ խորհելով Աստծո ձեռքի գործերի մասին: Այլ կերպ ասած՝ նա մտածում էր ինչ-որ լավ բանի մասին, ինչն էլ օգնում էր նրան՝ հաղթահարել դեպրեսիան:

Երբեք մի՛ մոռացեք, որ ձեր միտքը շատ կարևոր դեր է խաղում հաղթանակ ձեռքբերելու գործում:

Ես գիտեմ, որ մեր կյանքում հաղթանակ է բերում Սուրբ Հոգու զորությունը՝ Աստծո խոսքի հիման վրա: Սակայն հիմնականում ընդհանուր արդյունքը կախված է մեր մտածողությունից, որը պետք է ենթարկենք Աստծո մտածողությանն ու Նրա խոսքին: Եթե հրաժարվում ենք այդ անելուց կամ ընդունում ենք ցանկացած անպետք միտք, ապա երբեք չենք հաղթի:

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՎԵՔ ԶԵՐ ՄՏՔԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՄԲ

«Մի՛ նմանվեք այս աշխարհին [այս դարին], [ձևափոխված և հարմարեցված նրա արտաքին, մակերեսային սովորություններին], այլ [ամբողջապես] կերպարանափոխվեք [փոփոխվեք] ձեր մտքի նորոգությամբ [նրա նոր իդեալների և նրա նոր վերաբերմունքի միջոցով] այնպես, որ կարողանաք ապացուցել [ինքներդ ձեզ], թե որն է բարի և հաճելի ու կատարյալ Աստծո կամքը, նույնիսկ այն, ինչը բարի ու հաճելի [ընդունելի և կատարյալ է] Նրա կողմից՝ ձեզ համար»:

Հռոմեացիների 12.2, AMP

Այս հատվածում Պողոս առաքյալն ասում է, որ եթե մենք ցանկանում ենք տեսնել Աստծո բարի և կատարյալ կամքի իրականացումը մեր կյանքում, ապա մեզ պետք է *միայն* մեր միտքը նորոգել: Ո՞րն է նորոգվելու նպատակը: Նորոգվում ենք, որպեսզի մտածենք այնպես, ինչպես Աստված է մտածում: Նոր մտածելակերպի գործընթացը կփոխի մեզ, կդարձնի այնպիսի մարդ, ինչպիսին Աստված է ցանկանում

մեզ տեսնել: Հիսուսն այդ վերափոխումը հնարավոր դարձրեց Իր մահվան և հարության շնորհիվ: Եվ դա մեր կյանքում իրականություն է դառնում մտքի նորոգման միջոցով:

Ձեզ շփոթության մեջ չզցելու համար թույլ տվեք ասել, որ ճիշտ մտածելակերպը *ոչ մի ձևով* չի ազդում մեր փրկության վրա: Փրկությունը միայն Հիսուսի արյան, Նրա մահվան և Նրա հարության շնորհիվ է: Շատերը կզնան դրախտ` Հիսուսին անկեղծորեն իրենց Փրկիչ ընդունելու շնորհիվ, բայց նրանցից շատերը չեն կարողանա ապրել հաղթական կյանքով կամ վայելել այն բարի կամքը, որ Աստված էր տվել նրանց կյանքի համար, որովհետև նրանք չեն նորոգել իրենց միտքը` Աստծո Խոսքի համաձայն:

Երկար տարիներ ես եղել եմ այն անձնավորությունը, ով ապրում էր հենց այդպես: Երբ վերստին ծնվեցի, սկսեցի հաճախել եկեղեցի և հետևել կրոնական ավանդույթներին, բայց իրականում իմ կյանքում ոչ մի հաղթանակ չունեի: Պատճառն այն էր, որ ես սխալ էի մտածում:

ՄՏԱԾԻՐ ՄՐԱՆՑ ՄԱՍԻՆ

«Այսուհետև, եղբայրներ, ինչ ճշմարիտ է, ինչ արժանի է ակնածանքի և պատվավոր է ու վայելուչ, ինչ արդար է, ինչ մաքուր է, ինչ սիրելի և սքանչելի է, ինչ բարի է, իմաստուն և շնորհքով, եթե առկա է որևէ առաքինություն ու կատարելություն, եթե կա մի բան արժանի գովաբանության, ապա մտածիր դրա մասին և հաշվի առ այս ամենը [մտքերդ նորոգիր այդ ամենի վրա]»:

Փիլիպեցիների 4.8, AMP

Աստծո Խոսքը միանգամայն մանրամասնորեն ցույց է տալիս, թե ինչպիսի մտքերով պետք է զբաղված լինի մեր միտքը: Տարբեր աստվածաշնչյան խոսքեր վկայում են, որ մենք պետք է մտածենք միայն այն մասին, ինչը շինություն կտա մեզ և մեր հոգին չի խորտակի:

Մեր մտքերն ուղղակիորեն ազդեցություն են ունենում մեր վերաբերմունքի և տրամադրության վրա: Տիրոջ ամեն մի խոսքն ի օգուտ մեզ է: Նա գիտի, թե ինչը կարող է մեզ երջանկացնել, և ինչը` ոչ: Երբ մարդու գլխում միայն վատ մտքեր են, ապա նա դժբախտ է: Իմ իսկ

անձնական փորձից ես եկել եմ մի համոզման, որ երբ մարդը դժբախտ է, սովորաբար, նա դժբախտացնում է նաև ուրիշներին:

Ձեզ հարկավոր է պարբերաբար «գուլքագրում անցկացնել» ձեր մտքերում՝ հարց տալով. «Ի՞նչ եմ ես մտածում»: Ժամանակ հատկացրեք ձեր մտքերը գնահատելու համար:

Շատ կարևոր է մտածել, թե ինչ ես մտածում, քանի որ սատանան հիմնականում խաբում է մարդկանց հենց այստեղ՝ թույլ չտալով նրանց տեսնել իրենց դժբախտությունների կամ խնդիրների իրական աղբյուրը: Նա ստիպում է մեզ հավատալ, որ մեր դժբախտությունների պատճառները գտնվում են մեզանից դուրս [իրավիճակներում], մինչդեռ դժբախտությունն իրականում պետք է փնտրել մեր ներսում [մեր մտքերում]:

Տարիներ շարունակ ես իսկապես հավատացել եմ, որ դժբախտ եմ ուրիշների արած կամ չարած բաների պատճառով: Իմ տառապանքների համար ես մեղադրում էի ամուսնուս և երեխաներիս: Ինձ թվում էր, որ եթե նրանք ուրիշ կերպ վերաբերվեին ինձ, եթե ավելի շատ ուշադրության արժանացնեին իմ կարիքները, եթե ավելի շատ օգնեին ինձ տան գործերում, ապա ես երջանիկ կլինեի: Եվ դա տևել է տարիներ շարունակ: Վերջ ի վերջո, ես ստիպված եղա ընդունել մի ճշմարտություն՝ եթե ես ճիշտ վերաբերմունք ունենամ կյանքիս հանդեպ, ապա ոչինչ չի կարողանա ստիպել ինձ լինել դժբախտ: Ես դժբախտ էի իմ սեփական մտքերի պատճառով:

Թույլ տվեք վերջին անգամ ասել՝ *մտածիր, թե ինչ ես մտածում*: Եվ դրանից հետո շատ արագ կկարողանաք բացահայտել ձեր խնդիրների պատճառները և ազատություն կգտնեք:

Մաս II

Մեր միտքը

Ներածություն

Ի՞նչ է կատարվում քո մտքում:

«Բայց մենք ունենք Քրիստոսի [Մեսիայի] միտքը, և մենք պահում ենք Նրա սրբի մտքերը [զգացմունքներն ու նպատակները]»:

Ա Կորնթացիների 2.16, AMP

Արդյո՞ք նկատել եք, որ ձեր միտքը փոփոխվում է: Երբեմն դուք հանգիստ եք, հանդարտ ու խաղաղ, երբեմն էլ անհանգիստ և մտահոգ: Երբեմն որևէ հարցի շուրջ որոշում եք կայացնում և չեք կասկածում դրա ճշտության վրա, բայց հետո ձեր միտքը խառնվում է, հենց որ սկսում եք մտածել այն մասին, ինչը նախկինում որևէ կասկած չէր առաջացնում ձեզանում: Իմ կյանքում էլ եմ եղել նման պահեր, երբ ես անցնում էի այս ամենի միջով: Եղել եմ պահեր, երբ ինձ թվում էր, թե հեշտությամբ կարող եմ հավատալ Աստծուն, բայց եղել եմ նաև պահեր, երբ կասկածներն ու անհավատությունն անխղճորեն հալածել եմ ինձ:

Տեսնելով, թե որքան տարբեր կարող է լինել իմ միտքը, ես սկսեցի քննել, թե դրանցից ո՞րն է ճիշտ և, ո՞րն է սխալ: Ես ուզում էի հասկանալ դա, որպեսզի ճանաչելով իմ սխալ մտածելակերպը, անմիջապես հրաժարվեի դրանից:

Օրինակ՝ քննադատող, դատապարտող և կասկածող մտքերը հավատացյալի համար հանդիսանում են աննորմալ երևույթներ: Սակայն, իմ կյանքի մեծ մասը ես այդ երևույթները համարել եմ նորմալ. ես պարզապես սովորել էի դրանց: Ու թեև սխալ մտածելակերպ ունեի, որի պատճառով իմ կյանքում առաջանում էին բազմաթիվ խնդիրներ, ես չէի հասկանում, թե ինչ սխալ բան կա իմ մտածածի մեջ:

Ես չգիտեի, որ կարող եմ վերահսկել իմ մտքերը: Լինելով երկար տարիների հավատացյալ, ես պատկերացում անգամ չեմ ունեցել, թե հավատացյալն ինչպես պետք է մտածի և, թե ինչ վիճակում պետք է լինեն նրա մտքերը:

Մեր միտքը չի վերածնվում մեր հոգու վերստին ծնունդի ժամանակ. այն պետք է նորոգման ճանապարհ անցնի (տե՛ս Զռոմ. 12.2): Ինչպես արդեն ասացի, մտքի նորոգումը ժամանակ է պահանջում: Մի հուսահատվեք, եթե կարդաք այս գրքի հաջորդ գլուխները և տեսնեք, որ՝ Զիսուս Քրիստոսին որպես Փրկիչ հռչակած մարդու համար ձեր միտքը հիմնականում գտնվում է աննորմալ վիճակում: Մտքի վերականգնման գործընթացի առաջին քայլը խնդիրը հասկանալն է:

Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա՝ ընդամենը մի քանի տարի առաջ ես առավել լրջորեն սկսեցի վերաբերվել Տիրոջ հետ ունեցած իմ փոխհարաբերություններին: Եվ հենց այդ ժամանակ Աստված սկսեց բացել ինձ այն, որ մեծ մասամբ խնդիրներիս հիմքում ընկած է իմ սխալ մտածելակերպը: Իմ ուղեղում կատարյալ քաոս էր: Ես ընդհանրապես կասկածում էի, որ իմ ուղեղը երբևէ եղել է լավ վիճակում, իսկ եթե նույնիսկ եղել է, ապա՝ կարճ ժամանակով:

Երբ ես հասկացա, թե որքան է արմատացել ինձանում սխալ մտածելակերպը, ես սարսափեցի: Ես փորձում էի ոչնչացնել սխալ մտքերը, որոնք թափանցում էին իմ գիտակցության մեջ, բայց դրանք անմիջապես վերադառնում էին: Սակայն կամաց-կամաց ես դրանցից ազատվեցի:

Սատանան ագրեսիվ կերպով պայքարում է քո մտքի նորոգման դեմ, բայց դու էլ քո հերթին պետք է շարունակես հակառակվել և աղոթել: Դու պետք է սովորես պայքարել այս բնագավառում այնքան, մինչև որ կատարյալ հաղթանակ ունենաս:

Ե՞րբ է քո միտքը լավ վիճակում: Արդյո՞ք կարող ենք թույլ տալ մեր մտքերին՝ թափառել ամենուրեք, թե՞ պետք է դրանք պահենք հսկողության տակ: Կարո՞ղ ենք մեզ թույլ տալ՝ լինել հիասթափված կամ շփոթված, թե՞ պետք է ունենանք հոգու խաղաղություն և վստահություն առ այն, որ ճիշտ ուղղություն ենք ընտրել մեր կյանքում: Արդյո՞ք կարող են կասկածները, անհավատությունը, անհանգստությունը, հոգսերն ու վախը տիրել մեր մտքում: Թե՞ մենք՝ որպես Աստծո զավակներ, մեր բոլոր հոգսերը Նրան հանձնելու առավելություն ունենք (տե՛ս Ա Պետր. 5.7):

Աստժո Խոսքուն ասվուն է, որ մենք Քրիստոսի միտքն ունենք: Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն էր Չիսուսի միտքը, երբ Նա ասրուն էր երկրի վրա՝ լինելով ոչ միայն Աստժո Որդի, այլ նաև մարդու Որդի:

Աղոթքով սկսեք կարդալ այս գրքի հաջորդ մասերը: Ես հավատում եմ, որ դուք կսովորեք տարբերել այն մարդու մտքի նորմալ և աննորմալ վիճակը, ով հանդիսանում է Չիսուսի աշակերտը, և ով որոշել է ասրել հաղթական կյանքով:

Գլուխ

8

**Ե՞րբ է միտքը
գտնվում լավ վիճակում**

Ե՞րբ է միտքը գտնվում լավ վիճակում

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսն աղոթում է, որպեսզի մենք իմաստություն ստանանք՝ մեր «սրտի աչքերը լույսով ողողելու» միջոցով: Աստվածաշնչյան մի քանի գրությունների վրա հիմնվելով ես մարդկանց սովորեցրել եմ, որ օգտագործելով «մեր սրտի աչքերը» արտահայտությունը ես նկատի ունեմ մարդկային միտքը:

Ինչպիսի՞ վիճակում պետք է լինի քրիստոնյայի միտքը: Այլ կերպ ասած՝ հավատացյալի մտքի ինչպիսի՞ վիճակն է համարվում նորմալ: Այս հարցին պատասխանելու համար հարկավոր է դիտարկել մտքի և հոգու տարբեր ֆունկցիաները:

Աստծո հոսքի համաձայն, միտքն ու հոգին աշխատում են միասին. սա այն է, ինչը ես անվանում եմ «հոգուն աջակցող մտքի սկզբունք»:

Այս սկզբունքը լավ հասկանալու համար եկեք տեսնենք, թե ինչպես է այն գործում հավատացյալի կյանքում:

«[Որովհետև ես միշտ աղոթում եմ] Ասրծուն՝ մեր Տեր Հիսուս Զրիսարոսին, փառքի Հորը, որ Նա կարող է փալ ձեզ Բնասարության և Հայրնության Հոգին [որի մեջ է առեղծվածն ու գաղտնիքը], Իրեն [խորապես և սերտորեն] ճանաչելու գիտությունը: Ունենալով ձեր սրտի աչքերը լույսով ողողված այնպես, որ կարելի լինի իմանալ և հասկանալ այն հույսը, որով Նա կանչել է ձեզ, և թե՛ որքան հարուստ է Նրա փառավոր ժառանգությունը սրբերում [Նրա առանձնացրածների մեջ]»:

Եփեսացիների 1.17,18, AMP

ՀՈԳՈՒՆ ԱԶԱԿՑՈՂ ՄՏՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ

«Իսկ ո՞վ գիտի [ընկալում և հասկանում է], թե ինչ է անցնում մարդու մտքերով, բայց միայն մարդու ներսում եղող հոգին: Բացի

**այդ, ոչ ոք չի տարբերում [չի կարողանում իմանալ և հասկանալ]
Աստծո մտքերը, բայց միայն Աստծո Յոգին»:**

Ա Կորնթացիների 2.11, AMP

Երբ մարդն ընդունում է Քրիստոսին որպես իր Փրկիչ, նրանում սկսում է բնակվել Սուրբ Յոգին: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Սուրբ Յոգին գիտի Աստծո մտքերը: Ինչպես մարդու ներսում գտնվող հոգին է միակը, ով գիտի մարդու մտքերը, այնպես էլ Աստծո Յոգին է Միակը, Ով գիտի Աստծո մտքերը:

Քանի որ Սուրբ Յոգին բնակվում է մեր ներսում, և քանի որ Նրան հայտնի են Աստծո մտքերը, Նրա նպատակներից մեկն է՝ բացահայտել մեզ Աստծո իմաստությունն ու հայտնությունները: Այդ իմաստությունն ու հայտնությունները ներդրվում են մեր հոգում, որից հետո մեր հոգին լուսավորում է «մեր սրտի աչքերը», այսինքն՝ մեր միտքը: Այսպես վարվելով Սուրբ Յոգին օգնում է մեզ ֆիզիկական մակարդակում հասկանալ, թե ինչ է կատարվում մեզ հետ հոգևոր մակարդակում:

ՆՈՐՄԱՂ, ԹԵ՛ ԱՆՆՈՐՄԱԼ

Լինելով հավատացյալներ, մենք՝ ինչպես հոգևոր, այնպես էլ ֆիզիկական արարածներ ենք: Ֆիզիկական արարածը միշտ չէ որ հասկանում է հոգևորը, այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որպեսզի մեր միտքը լուսավորված լինի և կարողանա տեսնել այն, ինչ տեղի է ունենում մեր հոգում: Սուրբ Յոգին ցանկանում է լուսավորել մեզ, սակայն *հաճախ միտքը բաց է թողնում այն, ինչը հոգին փորձում է հայտնել, որովհետև ուղեղը բավականին լիքն է այլ մտքերով:*

Մտքի գերզբաղվածությունը նորմալ չէ: Մտքի նորմալ վիճակ է համարվում հանգստությունը, ոչ թե դատարկությունը:

Պետք չէ միտքը ծանրաբեռնել ավելորդ մտածմունքներով, հոգսերով, անհանգստություններով, վախով և այլն: Այն պետք է գտնվի հանգիստ, հանդարտ վիճակում: Սույն գրքի երկրորդ մասը կարդալու ընթացքում դուք կհանդիպեք մտքի վիճակի այն նկարագրու-

յանը, որը համարվում է աննորմալ, և միզուցե, դուք ստիպված լինեք ընդունել, որ շատ հաճախ ձեր միտքը գտնվում է հենց այդպիսի վիճակում:

Կարևոր է հասկանալ, որ միտքը պետք է պահել նորմալ վիճակում, որը նկարագրված է այս գլխում:

Համեմատեք սա ձեր մտքի սովորական վիճակի հետ, և ձեր համար պարզ կդառնա, թե ինչու եք այդքան քիչ հայտնություններ ստանում Սուրբ Հոգուց, և շատ հաճախ իմաստության պակաս զգում:

Հիշե՛ք՝ Սուրբ Հոգին անդադար փորձում է լուսավորել հավատացյալի միտքը: Նա տեղեկությունները փոխանցում է Աստծուց՝ մարդու հոգուն, և եթե մարդու միտքն օգնում է հոգուն, ապա նա կկարողանա քայլել աստվածային իմաստության և հայտնության մեջ: Բայց եթե մարդու միտքը զբաղված է այլ բաներով, ապա նա բաց կթողնի այն ամենն, ինչ Տերը փորձում է հայտնել նրան իր իսկ հոգու միջոցով:

ՀԱՆԳԻՍՏ, ՄԵՂՄ ՁԱՑՆԸ

«Եվ նա ասաց. «Գնա՛ և կանգնի՛ր լեռան վրա, Տիրոջ առջև»: Եվ ահա, Տերն անցավ և մեծ ու ուժեղ քամի փչեց լեռներին և ջախջախեց ժայռերը Տիրոջ առջև: Սակայն Տերը քանու մեջ չէր, քանուց հետո երկրաշարժ եղավ, սակայն Տերը երկրաշարժի մեջ չէր, և երկրաշարժից հետո կրակ եղավ, բայց Տերը կրակի մեջ չէր, կրակից հետո մեղմ խաղաղություն և հանգիստ, ցածր ձայն...»:

Գ Թագավորաց 19.11,12, KJV

Տարիներ շարունակ ես աղոթում և խնդրում էի Աստծուն, որ ինձանում բնակվող Սուրբ Հոգին ինձ հայտնություններ տա: Ես գիտեի, որ իմ խնդրանքը համապատասխանում է Աստվածաշնչին: Ես հավատում էի Խոսքին և չէի կասկածում, որ խնդրանքս կստանամ: Թեպետ հաճախ ինձ զգում էի «հոգևոր հիմար», եթե, իհարկե, կարելի է այսպես ասել: Հետո հասկացա, որ հայտնություններ ստանալու արգելքների պատճառն իմ միտքն էր, որն անսամձ էր և լի ոչ պետքական մտքերով: Դա խանգարում էր ինձ, և ես բաց էի թողնում Հոգուց եկող մտքերը:

Պատկերացրեք, որ մի սենյակում կան երկու հոգի: Մեկը շշուկով

ինչ-որ գաղտնիք է ասում մյուսին: Եթե սենյակում աղմուկ լինի, ապա, չնայած այն հանգամանքին, որ տեղեկություն է փոխանցվում, լսողը չի կարողանա այն ստանալ, որովհետև աղմուկը կխանգարի նրան: Եթե նա շատ ուշադիր չլինի, ապա կարող է նույնիսկ չնկատել, որ փորձում են իրեն ինչ-որ բան ասել:

Երկրորդ օրինակն էլ տեղի է ունենում Աստծո Յոզու և մեր հոգու միջև շփումը: Սուրբ Յոզին բավականին մեղմ է աշխատում: Շատ դեպքերում Նա մեզ հետ խոսում է այնպես, ինչպես Եղիա մարգարեի հետ՝ հանգիստ և նուրբ ձայնով: Ահա թե ինչու մենք պետք է սովորենք պահպանել մեր լսելու կարողությունը:

ՀՈԳԻՆ ԵՎ ՄԻՏՔԸ

«Ուրեմն ի՞նչ, աղոթեմ հոգով [իմ մեջ բնակվող Սուրբ Յոզով], բայց նաև աղոթեմ [խելամտորեն] մտքով և հասկացողությամբ...»:

Ա Կորնթացիների 14.15, AMP

Երբեմն ավելի հեշտ է հասկանալ «հոգուն աջակցող մտքի սկզբունքը» աղոթքի օրինակով: Այս խոսքում Պողոս առաքյալն ասում է, որ նա աղոթում է և՛ հոգով, և՛ մտքով:

Ինձ համար հասկանալի են Պողոսի ասածները, քանի որ ինքս եմ վարվում այդպես: Հաճախ, ես աղոթում եմ հոգով (Սուրբ Յոզու լեզվով), հետո, միզուցե, իմ մտքում գալիս է որևէ կարիք, որի համար հարկավոր է լինում աղոթել անգլերենով (իմ մայրենի լեզվով): Ես համարում եմ, որ այսպիսով՝ միտքն օգնում է հոգուն: Նրանք համագործակցում են, որպեսզի Աստծո գիտությունն ու իմաստությունը դառնան ինձ հայտնի և հասկանալի:

Սա գործում է նաև այլ կերպ: Լինում են պահեր, երբ ինձ մոտ աղոթելու ցանկություն է առաջանում, և ես թույլ եմ տալիս Աստծուն՝ աղոթել իմ միջոցով: Քանի որ աղոթքի ոչ մի հստակ ուղղություն չեն ունենում, ես սկսում եմ աղոթել՝ ինչ գալիս է իմ մտքում: Աղոթում եմ այնպիսի իրավիճակների համար, որոնք Աստծո միջամտության կա-

րիքն ունեն: Երբեմն այդ աղոթքներն ինձ շատ ծանր են թվում, որովհետև իմ հոգին ինձ չի օգնում. թվում է, թե ես պայքարում եմ: Այդ դեպքում անցնում եմ մեկ այլ կարիքի համար աղոթելու, ինչին տեղյակ եմ:

Այսպես եմ վարվում այնքան ժամանակ, մինչև որ Սուրբ Հոգին միանա ինձ: Երբ դա տեղի է ունենում, ես հասկանում եմ, որ հենց դրա համար է Սուրբ Հոգին ուզում, որ ես աղոթեմ: Այսպիսով՝ իմ միտքն ու հոգին համագործակցում են՝ օգնելով միմյանց իրականացնելու Աստծո կամքը:

ԼԵԶՈՒՆԵՐ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

«Հետևաբար նա, ով խոսում է [անհայտ] լեզվով, պետք է աղոթի [կարողանալու համար] այն թարգմանել և բացատրել, թե ինչ է ասում: Եթե ես աղոթում եմ [անհայտ] լեզվով, իմ հոգին [իմ մեջ բնակվող Սուրբ Հոգով] է աղոթում, բայց իմ միտքն անպտուղ է [այն ոչ մի պտուղ չի բերում և ոչ ոքին օգուտ չի տալիս]»:

Ա Կորնթացիների 14.13,14, AMP

Հոգու և մտքի համատեղ աշխատելու և միմյանց օգնելու մեկ այլ օրինակ է նաև լեզուներով աղոթելու և լեզուների թարգմանության պարզևը: Եթե դուք ծանոթ չեք Սուրբ Հոգու պարզևներիին, ապա խորհուրդ եմ տալիս Աստվածաշնչով ուսումնասիրել դրանք: Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն Սուրբ Հոգու բոլոր գերբնական պարզևների համար: Նրան խնդրեք նաև առաջնորդել ձեզ դեպի այն օրհնությունները, որոնք կօգնեն ձեզ սովորելու և դրանք լավ հասկանալու գործում: Սկսե՛ք Կորնթացիների առաջին ուղերձի 12, 13 և 14 գլուխներից:

Երբ ես աղոթում եմ Սուրբ Հոգու լեզուներով, իմ միտքն անպտուղ է մնում, մինչև որ Աստված ինձ կամ մեկ ուրիշին տա այն բացատրությունը, որի համար ես աղոթում եմ: Միայն այդ ժամանակ է իմ միտքն արդյունավետ դառնում:

Խնդրում եմ հիշեք, որ տարբեր լեզուներով (անգլերեն, ֆրանսե-

րեն և այլն) խոսելն ու թարգմանություններ անելը պարզևներ չեն: Օտար լեզուներից թարգմանությունը բառացի փոխանցումն է, իսկ մեկնաբանությունն իրենից ենթադրում է Սուրբ Հոգու լեզուներով աղոթքի իմաստի փոխանցումն իր ոճով մոտ նրան, ով մեկնաբանում է:

Թույլ տվեք ձեզ մի օրինակ բերել: Քույր Սմիթը կարող է ոտքի կանգնել եկեղեցական հավաքույթի ժամանակ և ինչ-որ մի բան ասել Սուրբ Հոգու լեզուներով: Այդ պատգամը նրան տրվում է Հոգուց և ո՛չ նա, ո՛չ էլ ուրիշ մեկը չեն հասկանում ասվածից ոչ մի խոսք: Աստված կարող է ինձ երբեմն հասկացնել այդ պատգամի ընդհանուր իմաստը: Ես հավատքով սկսում եմ մեկնաբանել նրա ասածը, այդ լուրը հասկանալի դարձնելով բոլորին: Այդ մեկնաբանումը կարող է ինձ բնորոշ ձևով հնչել:

Սուրբ Հոգու լեզուներով աղոթքն ու դրա մեկնաբանումը մեզ թույլ են տալիս հասկանալ «հոգուն աջակցող մտքի սկզբունքը»: Հոգին ինչ-որ բան է ասում, իսկ միտքն այն դարձնում է հասկանալի:

Պատկերացրեք, եթե քույր Սմիթը խոսեր Սուրբ Հոգու լեզուներով, իսկ Աստված փնտրեր մեկին, ով կմեկնաբաներ: Նա ստիպված պետք է շրջանցեր ինձ, եթե իմ միտքը զբաղված լիներ բոլորովին այլ բաներով և ես չկարողանայի լսել: Նույնիսկ, եթե Աստված փորձեր ինձ մեկնաբանություն տալ, ես այն չէի կարողանա ընդունել:

Երբ դեռ նոր էի Տիրոջ մեջ և փորձում էի յուրացնել Հոգու պարզևները, ես գրեթե միշտ աղոթում էի միայն լեզուներով: Որոշ ժամանակ անցնելուց հետո իմ աղոթքի կյանքն ինձ շատ ձանձրալի թվաց: Ես խոսեցի Տիրոջ հետ այդ մասին: Նա ինձ բացատրեց, որ ձանձրանալուս պատճառն այն է, որ ես չեմ հասկանում իմ աղոթքների իմաստը: Եվ թեպետ գիտակցում եմ, որ ոչ *միշտ* պետք է հասկանամ աղոթքներս, նաև սովորել եմ, որ միայն Սուրբ Հոգու լեզուներով աղոթելով չեմ կարողանա մնալ հավասարակշռության մեջ և անպտուղ կլինեմ, եթե *երբեք* ոչ մի մեկնաբանություն չունենամ:

ԽԱՂԱՂ, ՍԹԱՓ ՄԻՏՔԸ

«Դու կպաշտպանես նրան և կպահես նրան կատարելության մեջ և հաստատուն խաղաղությամբ նրա մտքերը [նրա ցանկությունը և նրա բնավորությունները] կպահես Քեզանում, որովհետև նա կախված է Քեզանից, վստահում է Քեզ, և նրա միակ հույսը Դու ես»:

Եսայի 26.3, AMP

Չուսով եմ՝ այս օրինակները ցույց տվեցին ձեզ, որ ձեր միտքն ու հոգին համագործակցում են, և երկուսն էլ սերտորեն կապված են միմյանց հետ: *Ուստի՝ չափազանց կարևոր է, որպեսզի ձեր միտքը միշտ մնա լավ վիճակում:* Հակառակ դեպքում՝ այն չի կարողանա գործակցել ձեր հոգու հետ և օգնել ձեզ ապրելու հոգևոր լի կյանքով: Իհարկե, սատանան տեղյակ է այս փաստի մասին, այդ պատճառով էլ հարձակվում է ձեր մտքի վրա՝ իրական պայքար ստեղծելով պատերազմի դաշտում, որը ձեր միտքն է: Նա ցանկանում է հոգնեցնել ձեզ՝ ձեր գլուխը լցնելով տարբեր տեսակի սխալ մտքերով, որպեսզի այն միշտ զբաղված լինի և խանգարի Սուրբ Հոգուն, որ Նա գործի ձեր մարդկային հոգու միջոցով:

Միտքը հարկավոր է պահել հանգիստ վիճակում: Ինչպես ասում է Եսայի մարգարեն, երբ միտքը կենտրոնանում է ճիշտ բաների վրա, ապա նրանում կթագավորի խաղաղությունը:

Միտքը նաև պետք է սթափ լինի: Իսկ դա անհնարին է դառնում, երբ այն լիքն է լինում ոչ պետքական մտքերով:

Մտածեք այն հարցի շուրջ, թե որքա՞ն ժամանակ է ձեր միտքը գտնվում լավ վիճակում:

Գլուխ
9

**Թափառող,
հեղափոխության միտքը**

Թափառող, հեղափոխությունների միտքը

Նախորդ գլխում մենք պնդում էինք, որ մտքերով ծանրաբեռնված ուղեղը չի կարող գտնվել նորմալ վիճակում: Նմանապես, ուղեղի համար նորմալ չէ, երբ միտքը «թափառում է» կամ ցրված է:

«... Գոյեպնդե՛ք ձեր մտքի մեջքը...»:

Ա Պետրոսի 1.13, KJV

Կենտրոնանալու անկարողությունը ցույց է տալիս, որ մտքի վրա կասատանայական հարձակում:

Շատ մարդիկ են թույլ տալիս, որ իրենց մտքերը թափառեն, որովհետև իրենց մտավոր կյանքում երբեք չեն կիրառում կարգապահության կանոնները:

Հաճախ կենտրոնանալ չկարողացող մարդիկ իրենց համարում են մտավոր թերզարգացածներ: Սակայն նման անընդունակությունը կարող է պայմանավորված լինել նրանով, որ մարդը տարիներ շարունակ իր միտքը պահել է բարձիթողի վիճակում: Դա նաև կարող է օրգանիզմում որոշ վիտամինների պակասության հետևանք լինել: Բ վիտամինը բարձրացնում է կենտրոնանալու կարողությունները, այնպես որ, եթե խնդիրներ ունեք այս բնագավառում, ուրեմն մտածեք՝ արդյո՞ք օգտագործում եք ճիշտ և սննդարար կերակուր:

Գերհոգնածությունը նույնպես կարող է բացասաբար ազդել կենտրոնացման վրա: Ես զգացել եմ, որ երբ շատ եմ հոգնում, սատանան փորձում է հարձակվել մտքիս վրա, որովհետև նա գիտի, որ հենց այդ պահերին է իմ դիմադրությունը թուլանում: Սատանան ուզում է, որ մենք մեզ մտավոր թերզարգացածներ համարենք, քանի որ այդ դեպքում մենք նրա դեմ ոչինչ չենք կարողանա նախաձեռնել: Սատանան ցանկանում է, որ մենք պասիվություն ցուցաբերենք և ընդունենք այն ստերը, որ նա ուղղում է մեզ:

Մեր դուստրերից մեկը վաղ հասակում դժվարություններ ուներ մտքի կենտրոնացման բնագավառում: Նա դժվարանում էր կարդալ, որովհետև կենտրոնանալու և հասկանալու կարողությունները փոխկապակցված են: Շատ երեխաներ և նույնիսկ՝ մեծահասակներ, չեն հասկանում իրենց կարդացածը: Նրանց աչքերը սահում են բառերի վրայով, բայց ուղեղները չեն ընկալում կարդացածը:

Հաճախ հասկացողության պակասը հանդիսանում է չկենտրոնանալու արդյունքը: Իմ փորձից գիտեմ, որ կարող եմ Աստվածաշնչից կամ որևէ այլ գրքից մի ամբողջ գլուխ կարդալ ու հանկարծ հասկանալ, որ ընդհանրապես չեմ հիշում, թե ինչ էի կարդում: Իսկ երբ ետ եմ գնում և կարդում եմ այդ գլուխը կրկին, թվում է, թե ես կարդում եմ միանգամայն նոր նյութ: Այս ամենը պայմանավորված է նրանով, որ երբ աչքերս նայում էին բառերին, իմ միտքը թափառում էր չգիտես՝ որտեղ, որովհետև ուշադրությունս չէի կենտրոնացրել: Ուստի՝ ես ոչինչ չհասկացա իմ կարդացածից:

Հաճախ ընկալման բացակայության իրական խնդիրը կայանում է ուշադրության բացակայության մեջ, ինչն էլ թափառող մտքի հետևանք է:

Վերջերս ես, Դեյվը ու ևս մեկ զույգ, ում հետ ընկերացել էինք Յուտայում, մեքենայով գնում էինք: Ես և այդ զույգը միաժամանակ լսում ենք, թե ինչպես է Դեյվն ասում. «Առողջություն»: Մենք ծիծաղեցինք, երբ հասկացանք, որ թեև Դեյվը բարձրաձայն փռշտացել էր, բայց մեզանից ոչ ոք չէր լսել նրան, որովհետև բոլորս մտովի ինչ-որ տեղ էինք սլացել: Ես ասացի. «Ներողություն, չլսեցի քեզ, ես Սեն-Լուիի գրասենյակում էի»: Ետնամասում նստած տղամարդը ծիծաղեց ու ասաց. «Ես Ֆլորիդայում էի՝ գործերով»: Նրա կինը նույնպես ծիծաղեց և ասաց. «Իսկ ես Դալլասի իմ գրասենյակում որոշ իրավիճակներ էի շտկում»:

Մի քանի ակնթարթում երեքս էլ մտովի գնացել էինք տարբեր ուղություններով: Դա ցույց տվեց մեզ, թե միտքն ինչպիսի արագությամբ կարող է շեղվել նրանից, ինչ կատարվում է իրականում: Մենք ծիծաղեցինք, որովհետև Դեյվն իրեն «առողջություն» էր ասել, երբ

մեզանից ոչ ոք մտովի տեղում չէր: Դա ծիծաղելի էր, բայց և լուսաբանող՝ հասկանալու համար, թե ինչպես կարող ենք կորցնել մեր մտքի սթափ վիճակը՝ չկենտրոնանալով նրա վրա, թե ինչ է կատարվում ներկայում:

ԹԱՓԱՌՈՂ ՄԻՏՔԸ

«Ձգո՛ւյշ եղիր [մտովի կենտրոնացիր այն բանի վրա, թե ինչ ես անում]»:

Ժողովող 5.1, AMP

«Ձգո՛ւյշ եղիր» արտահայտությունը նշանակում է «մի՛ կորցրու հավասարակշռությունդ և ճանապարհիցդ մի՛ շեղվիր»: Այսպիսով՝ կարելի է ասել, որ ճանապարհից չշեղվելու համար հարկավոր է մտովի կենտրոնանալ այն բանի վրա, ինչ որ անում եք:

Կար ժամանակ, երբ իմ միտքը թափառում էր, և ես ստիպված էի լինում նրան կարգ ու կանոնի բերել: Դա հեշտ չէր, և նույնիսկ հիմա մտքերս երբեմն թափառում են: Երբ փորձում էի ավարտին հասցնել որևէ մի նախագիծ, հանկարծակի հասկանում էի, որ մտքերս մեկ այլ բանով են զբաղված, ինչը ոչ մի կերպ կապված չէ այդ նախագծի հետ: Ես դեռ չեմ հասել կատարյալ կենտրոնացման գագաթնակետին, բայց գոնե հասկանում եմ, որ չպետք է թույլ տամ իմ մտքերին անել՝ ինչ ուզում են և՛ երբ ուզում են:

«*Թափառել*» բառը Վեբսթերի բառարանում բացատրվում է որպես՝ 1) աննպատակորեն շարժվել, 2) գնալ զարտուղիով, շեղ ճանապարհով, շորորալ, 3) ձեռնարկել ինչ-որ անկարգ գործողություններ կամ ուղղություն, աննպատակ թափառել, 4) անկապ մտածել կամ արտահայտվել, անհետևողական, կցկտուր¹:

Եթե իմ և ձեր մեջ ընդհանուր բաներ եք գտնում, ապա ձեզ մոտ էլ է պատահում, երբ եկեղեցական հավաքույթի ժամանակ քարոզ լսելիս հանկարծ գիտակցում եք, որ ձեր մտքերը գնացել են այլ ուղղությամբ: Անցնում են վայրկյաններ և դուք հանկարծ սթափվում ու հայտնաբերում եք, որ չեք հետևում քարոզչի ասածներին: Թեպետ ձեր

մարմինը եկեղեցում է, բայց մտովի դուք արդեն եղաք խանութում, տանը, զբաղվեցիք ընթրիք պատրաստելով և այլն:

Հիշե՛ք, հոգևոր պատերազմը տեղի է ունենում մտքում: Միտքն է, որ սատանայի կողմից գտնվում է անդադար հարձակումների տակ: Նա շատ լավ գիտի, որ նույնիսկ եկեղեցի հաճախող մարդը քարոզից ոչ մի օգուտ չի ստանա, եթե նրա մտքերը զբաղված լինեն ոչ թե քարոզով, այլ ուրիշ բաներով: Սատանան գիտի, որ մարդն ի վիճակի չէ որևէ գործ ավարտին հասցնելու, եթե նա իր ուղեղն ու միտքը չի կենտրոնացնում այն բանի վրա, ինչ անում է:

«Թափառող մտքի» այս երևույթն արտահայտվում է նաև զրույցի ընթացքում: Երբեմն իմ ամուսին Դեյվը զրուցում է ինձ հետ, և ես որոշ ժամանակ ուշադիր լսում եմ նրան:

Սակայն, հանկարծ գիտակցում եմ, որ իրականում նրա ասածներից ոչ մի բառ չեմ լսել: Ինչո՞ւ: Որովհետև ես թույլ տվեցի իմ մտքերին՝ շեղվել թեմայից: Իմ մարմինը մնաց անշարժ, այդպիսով ցույց տալով, որ ես լսում եմ, այնինչ միտքս բացարձակապես ոչինչ չէր ընկալել:

Դա տևել է երկար տարիներ. ես ձևացնում էի, որ հաստատ գիտեմ՝ ինչի մասին է Դեյվը խոսում: Այժմ ես ընդհատում եմ նրան և ասում. «Կարո՞ղ ես ամեն բան սկզբից սկսել: Ես ուշադիր չէի և քո ասածներից ոչ մի բան չլսեցի»:

Այսպիսով՝ զոհե ես պայքարում եմ այդ խնդրի դեմ: Միայն սեփական թերություններն ու սխալներն անկեղծորեն ընդունելով և դրանց դեմ պայքարելով մենք կկարողանանք հաղթանակ ունենալ:

Ես հասկացել եմ, որ եթե սատանան իր ջանքերը ներդնում է, որպեսզի ուշադրությունս չեղի, ուրեմն հաստատ ինչ-որ կարևոր բան է ասվում ինձ, որը ես պետք է լսեմ:

Այս բնագավառում պայքարի ձևերից մեկը հանդիսանում է քարոզների ձայներիզների ձեռքբերումը, որոնք առաջարկվում են տարբեր եկեղեցիների կողմից: Եթե դուք դեռ չեք սովորել՝ ինչպես կարգապահության մեջ պահել ձեր միտքը և ուշադիր լինել եկեղեցական հավաքույթների ժամանակ, ապա յուրաքանչյուր ծառայությունից

հետո գնեք տվյալ հավաքույթի ձայնագրությունը և լսեք այնքան, որքան անհրաժեշտ է քարոզն ամբողջությամբ ընկալելու համար:

Սատանան ստիպված կլինի հանձնվել, երբ տեսնի, որ դուք մտադիր չեք հանձնվելու:

Հիշեք, սատանան ցանկանում է, որ դուք ձեզ մտավոր տհաս համարեք և ձեզ անլիարժեք զգաք: Բայց ճշմարտությունն այն է, որ դուք պետք է սկսեք վերահսկել ձեր մտքերը: Թույլ մի՛ տվեք նրանց՝ թափառել, անել՝ ինչ իրենք են ցանկանում: Սկսեք կենտրոնացնել ձեր մտքերը նրա վրա, ինչ անում եք: Մի որոշ ժամանակ ստիպված կլինեք ձեզ մարզել: Հին սովորություններից ձերբազատվելու և նորը զարգացնելու համար հարկավոր է ժամանակ, որը լիովին արդարացնում է իրեն: Մենք ապրում ենք ներկա ժամանակում, որն Աստծուց մեզ տրված մեծագույն պարգև է, բայց եթե ներկայի մեջ չենք գտնվում, մենք այն կորցնում ենք:

ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐ, ԳՈՒՇԱԿՈՂ ՄԻՏՔԸ

«Ճշմարիտ են ասում ձեզ, որ ով այս լեռանն ասի՝ վեր կաց և ծովն ընկիր, և չկասկածի իր սրտում, այլ հավատա, որ ինչ-որ նա ասի՝ կկատարվի, այն կկատարվի նրա համար:

Այդ պատճառով ես ասում եմ ձեզ, ինչ-որ աղոթքում խնդրեք, հավատացեք [վստահեք և համարձակ եղեք], որ կտրվի ձեզ, և դուք կստանաք [կունենաք դա]»:

Մարկոս 11.23,24, AMP

Որևէ իրավիճակի առջև կանգնելիս, ես սկսել էի հաճախ ինքս ինձ ասել. «Չետաքրքիր է...»:

Օրինակ՝ «Չետաքրքիր է՝ ինչպիսի՞ն է լինելու եղանակը վաղը»:

«Չետաքրքիր է՝ ի՞նչ զգեստ եմ հագնելու երեկոյան»:

«Չետաքրքիր է՝ Դեննիս (որդիս) ի՞նչ գնահատականներ կունենա այս կիսամյակում»:

«Չետաքրքիր է՝ քանի՞ մարդ կգա իմ սեմինարին»:

Բառարանը «*հետաքրքրվել*» բառը բացատրում է որպես՝ «շփոթության կամ կասկածանքի զգացում», իսկ որպես բայ՝ «լցվել հետաքրքրությամբ կամ կասկածներով»²:

Ես այն եզրակացության եմ հանգել, որ ավելի լավ է պահպանել դրական տրամադրվածությունը, քան ամեն ժամանակ գուշակել այն, ինչ հնարավոր է երևակայել: Դեմնիի գնահատականների մասին մտահոգվելու փոխարեն ես պետք է հավատամ, որ նրա մոտ ամեն բան լավ կլինի: Երեկոյան զգեստ ընտրելու մասին երկար-բարակ մտորելու փոխարեն հարկավոր է պարզապես որոշել՝ ինչ հագնել: Եղանակի կամ սեմինարի մասնակիցների մասին հոգ տանելու փոխարեն պետք է ամեն բան հանձնել Տիրոջը և վստահել, որ ինչ էլ տեղի ունենա, Նա ամեն բան կհարթի:

Ի գիտություն ձեզ՝ մեր որդի Դեմնին չէր սիրում դպրոցը և նրան դուր չէր գալիս, որ ես անդադար հետաքրքրվում էի նրա և նրա ապագայի մասին: Կարծում եմ՝ դուք կուրախանաք՝ իմանալով, որ ներկայումս նա հանդիսանում է Ջոյս Մայերի Ծառայությունների գլխավոր տնօրենը: Ես իզուր ժամանակ էի վատնել նրա մասին այդքան մտահոգվելով: Աստված գիտեր նրա ապագան և ամեն բան պահում էր Իր հսկողության տակ:

Ընդհանուր առմամբ հետքերություն ունենալը նորմալ է: Բայց, եթե այն անցնում է իր չափերը, ապա մարդուն կարող է դարձնել անվճռական, իսկ անվճռականությունը կարող է առաջացնել շփոթություն: Հետաքրքրությունը, անվճռականությունն ու շփոթությունը մարդուն կխանգարեն՝ Աստծուց հավատքով ստանալ աղոթքների կամ կարիքների պատասխանները:

Ուշադրություն դարձրեք, որ Մարկոսի Ավետարանի 11.23,24-ում Հիսուսը չասաց. «Եթե ինչ-որ բան խնդրեք աղոթքով, ապա *գուշակեք*՝ կստանա՞ք, թե՞ ոչ»: Ընդհակառակը, Նա ասաց. «Ամեն, ինչ-որ աղոթք անելով խնդրեք, *հավատացե՛ք*, թե կառնեք»:

Որպես քրիստոնյաներ, որպես *հավատացյալներ*, մենք պետք է հավատանք, այլ ոչ թե կասկածենք:

Գլուխ
10

Շինթված միտքը

Շփոթված միտքը

Մենք բացահայտեցինք, որ երկմտությունն ու շփոթությունը կապված են միմյանց հետ: Երկմտությունը կարող է կասկածների և շփոթմունքի պատճառ հանդիսանալ:

Հակոբոսի 1.5-8-րդ խոսքերն օգնում են մեզ հասկանալ, թե ինչպես կարող ենք հաղթել երկմտությունը, ենթադրությունները, կասկածները, շփոթմունքը, ինչպես նաև օգնում են Աստծուց ստանալ այն, ինչի կարիքը մենք ունենք: Ինձ համար «երկմիտ մարդն» իրենից ներկայացնում է շփոթմունքի մի ամբողջական պատկեր. նրա մտքում մշտապես քառսային վիճակ է և չի կարողանում որևէ որոշում կայացնել: Հենց որ նման մարդն ինչ-որ բան է որոշում, անմիջապես գալիս է երկմտությունը. դրան հաջորդում են կասկածներն ու շփոթությունը, և նա կարծես՝ կրկին բաժանվում է երկու մասի: Այդպիսի մարդը ոչ մի հարցում համոզվածություն չունի:

Երկար ժամանակ ես ապրել եմ այսպես, չգիտակցելով, որ սատանան ինձ ձեռնոց էր նետել և, որ պատերազմի դաշտը իմ միտքն էր: Ես ապրում էի լիակատար քառսի մեջ և չէի հասկանում՝ ինչու:

«Եթե չեզանից մեկը իմաստության պակաս ունի, թող նա խնդրի Աստծուն [Ով փալիս է] բոլորին՝ ազատորեն և առանց նախադեմու, առանց կշիռամբանքի և բժախնդրության, և դա կտրվի իրեն: Միայն թե դա լինի հավարքով, և խնդրի առանց վարանելու [առանց երկմտելու, առանց կասկածելու]: Քանի որ, ով վարանում է [երկմտում, կասկածում], նման է փոթորկույր ծովի ալիքներին, որը շնչասապառ այս ու այն կողմ է նետվում քամուց: Որ իրապես, թող նման մարդը չպարկեքացնի անգամ, որ նա կստանա ինչ-որ բան [որ խնդրում է] Տիրոջից [որ լինելով այդպիսին, ինչպիսին ինքն է], երկմիտ մարդը [փառանվոր, անվճռական] հաստատումիս և հուսալի չէ այն ամեն բանում [որ նա մտածում, զգում, որոշում է]»:

Հակոբոս 1.5-8, AMP

«ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ» ՏԱՆՈՒՄ Է ՇՓՈԹՈՒԹՅԱՆ

«Ինչո՞ւ եք միտք անում ձեր մեջ, թերահավատներ...»:

Մատթեոս 16.8

Մինչև այժմ մենք խոսում էինք երկնտության մասին, իսկ հաջորդ գլխում առավել մանրամասն կխոսենք կասկածների մասին: Այժմ ուզում են ավելի շատ անդրադառնալ շփոթվածությանը:

Աստծո ժողովրդի մեծամասնությունը, ընդհանուր առմամբ, գտնվում է շփոթվածության մեջ: Ինչո՞ւ: Ինչպես արդեն տեսանք, պատճառներից մեկը երկնտությունն է, մյուսը՝ դատողությունը: Բառարանում «դատողություն» բառը որպես գոյական մեկնաբանվում է այսպես. «փաստերը կամ դրդապատճառները հիմնավորել տրամաբանորեն՝ նկատառումների կամ երևույթների համար», իսկ որպես բայ՝ «օգտագործել դատողությունը, մտածել տրամաբանորեն»¹:

Ավելի հեշտ սա կարելի է արտահայտել հետևյալ կերպ. դատողության միջոցով մարդը փորձում է ձևակերպում տալ յուրաքանչյուր իրադարձությանն ու երևույթին: Դատողությունը ստիպում է մարդուն մտովի քննել ցանկացած իրավիճակ, հարց կամ իրադարձություն՝ փորձելով հասկանալ այդ ամենի բոլոր բարդ բաղադրիչները: Մենք մտքում վերլուծում ենք որևէ պնդում կամ ուսմունք, որպեսզի որոշենք, թե որքանով է այն տրամաբանական:

Սատանան հաճախ է մեզ շեղում Աստծո կամքն իրագործելուց՝ մեր իսկ սեփական դատողությունների միջոցով: Միգուցե, Տերը ուղղորդում է մեզ ինչ-որ բան անելու համար, սակայն, եթե դա մեզ տրամաբանական չի թվում, մենք այն ուզում ենք անտեսել: Երբ Աստված առաջնորդում է մարդուն ինչ-որ բան անելու, ոչ միշտ է, որ նրա համար տրամաբանական կարող է թվալ: Նրա հոգին կարող է ընդունել Աստծո կամքը, իսկ միտքը՝ մերժել, հատկապես, եթե դա մարդու համար արտասովոր թվա, զրկի նրան հարմարավետությունից կամ էլ նրանից ինչ-որ բանի զոհողություն պահանջի: Միշտ էլ հաճելի է, երբ հոգին ու միտքը համաձայն են իրար հետ, իսկ եթե ոչ՝ պետք է միշտ ընտրենք հետևել հոգուն:

ՄԻ՝ ՏՐՎԻՐ ՄՏՔԻԴ, ՊԱՐԶԱՊԵՍ ՀՈԳՈՎ ՀՆԱԶԱՆԴՎԻՐ

**«Քայց շնչավոր մարդն Աստծո Յոգու բաները չի ընդունում, որով-
հետև նրանք հիմարություն են նրա համար. և չի էլ կարող գիտե-
նալ, որովհետև հոգևոր կերպով են քննվում»:**

Ա Կորնթացիների 2.14

Ուզում են անձնական մի օրինակ բերել, որը հուսով են՝ կօգնի ձեզ հասկանալ մտքով դատողություններ անելու և հոգով հնազանդվելու միջև եղած տարբերությունը:

Մի առավոտ ես պատրաստվում էի գնալ մեր քաղաքում անցկաց-վող եկեղեցական հավաքույթին, և սկսեցի մտածել մի կնոջ մասին, ով մեր ծառայության հավատարիմ օգնականներից մեկն էր: Իմ սրտում մի ցանկություն առաջացավ՝ ինչ-որ կերպով օրհնել նրան:

«Յայր,- աղոթում էի ես,- Յռութն այնպիսի օրհնություն է եղել մեզ համար այս բոլոր տարիների ընթացքում: Ի՞նչ կարող են անել նրան օրհնելու համար»:

Անմիջապես հայացքս ընկավ իմ պահարանում կախված նոր կար-միր զգեստին, և ես իմ սրտում հասկացա, որ Տերը դրդում է ինձ՝ այն տալ Յռութին: Չնայած ես այն գնել էի երեք ամիս առաջ, բայց դեռ չէի հասցրել հազնել: Ես շատ էի հավանում այդ զգեստը, բայց ամեն ան-գամ, երբ մտածում էի այն հազնելու մասին՝ ցանկությունս կորում էր:

Նկատեք, որ ես ասացի, երբ հայացքս ընկավ այդ զգեստի վրա, ես *հասկացա*, որ պետք է այն նվիրեմ Յռութին: Սակայն ես դա անել չէի *ցան-կանում*: Եվ, իհարկե, անմիջապես սկսեցի մտածել, որ դժվար թե Աստ-ված ինձ ասեր այդ զգեստը Յռութին նվիրելու մասին: Չէ՞ որ այն միան-գամայն նոր էր, բավականին թանկարժեք և, բացի այդ, ես արդեն ձեռք էի բերել զգեստին համապատասխան կարմիր և արծաթե ականջօղեր:

Եթե ես թույլ չտայի, որ իմ միտքը միջամտեր, և իմ հոգում լսեի Աստծո ձայնը, ապա ամեն բան լավ կլիներ: Սակայն մենք ինքներս մեզ կարող ենք խաբել մեր դատողությունների միջոցով, երբ չենք ցանկա-նում անել այն, ինչ Աստված է ասում, որ անենք: Մի քանի րոպե անց ես արդեն հասցրել էի մոռանալ ամեն բան և անցնել իմ գործերին:

Ճշմարտությունն այն էր, որ ես չէի ցանկանում տալ այդ զգեստը, քանի որ այն նոր էր և ինձ շատ էր դուր գալիս: Տրվելով մտքերիս՝ սկսեցի դատողություն անել, որ իմ ցանկությունն Աստծուց չի եղել և, որ սատանան էր փորձում գողանալ այն, ինչը ինձ շատ էր դուր գալիս:

Մի քանի շաբաթ անց ես կրկին պատրաստվում էի գնալ հավաքության, և իմ սրտում նորից հնչեց Յուրի անունը: Ես սկսեցի աղոթել նրա համար և ասացի. «Յայր, տարիներ շարունակ Յուրի այնպիսի օրհնություն է եղել մեզ համար: Ի՞նչ կարող եմ անել նրա համար»: Եվ ամբողջ տեսարանը կրկնվեց նորից. ես տեսա կարմիր զգեստը, և մարդկային առումով դա ինձ դուր չէկավ, քանի որ հիշեցի այն պահը (որը ես շատ արագ մոռացության էի տվել):

Այս անգամ ինձ դուրս պրծնել չհաջողվեց. ես կամ պետք է ընդունեի այն փաստը, որ Աստված արդեն պատասխանեց իմ աղոթքին և կատարեի Նրա ասածը, կամ ասեի. «Տե՛ր, ես հասկանում եմ՝ ինչ ես ուզում ինձանից, բայց ես դա անել չեմ պատրաստվում»: Ես շատ եմ սիրում Տիրոջը և չեմ կարող միտումնավոր կերպով չենթարկվել Նրան: Ես սկսեցի խոսել Նրա հետ կարմիր զգեստի մասին:

Ինձ մի քանի րոպե էր հարկավոր գիտակցելու համար, որ վերջին անգամ իմ մտքերը մի ակնթարթում հեռացրեցին ինձ Աստծո կամքը կատարելուց: Ինձ թվում էր, թե Աստված չի կարող պատվիրել ինձ՝ նվիրել միանգամայն նոր զգեստ: Ես նաև հասկացա, որ Աստվածաշնչում չի ասվում՝ նվիրեք միայն հինը: Ինձ համար նոր զգեստից հրաժարվելը կլիներ իսկական զոհ, իսկ Յուրի համար՝ իսկական օրհնություն:

Երբ ես սիրտս բացեցի Աստծո առջև, Նա սկսեց ցույց տալ ինձ, որ իրականում ես այն գնել էի Յուրի համար: Այդ պատճառով ես ոչ մի անգամ չեմ կարողացել այն հագնել: Ես հասկացա, որ Տերը նախատեսել էր իմ միջոցով օրհնել նրան: Բայց ես իմ սեփական գաղափարներն ունեի կարմիր զգեստի առումով, և քանի դեռ պատրաստ չէի դրանցից հրաժարվելու համար, ես չէի կարողանում առաջնորդվել Սուրբ Հոգով:

Այս դեպքն ինձ շատ բան սովորեցրեց: Երբ ես հասկացա, որ մեր մտքերն ու դատողությունները մեզ շեղում են Աստծո կամքը կատարելուց:

րելուց, ես սկսեցի ակնածալի վախ զգալ դատողություններից:

Հիշե՛ք, որ Կորնթացիների առաջին թղթի 2.14-ի համաձայն, շնչավոր մարդը չի հասկանում հոգևոր մարդուն: Իմ ֆիզիկական միտքը (իմ մարդկային էությունը) չէր հասկանում, թե ինչպես կարելի է լրիվ նոր զգեստը նվիրել, բայց իմ հոգին (իմ հոգևոր էությունը) դա շատ լավ հասկանում էր:

Հուսով եմ՝ այս օրինակը կօգնի ձեզ ավելի լավ հասկանալու այս բնագավառի հետ առնչվող հարցերը, և կօգնի ձեզ՝ ապրել Աստծո կամքի համաձայն ավելի շատ, քան երբևէ:

Ի դեպ, եթե ձեզ հետաքրքրում է, թե արդյո՞ք Հռուբը ստացավ կարմիր զգեստը որպես նվեր, ապա ասեմ, որ՝ այո, ստացավ: Այժմ նա մեր ծառայության աշխատակիցներից է և, ժամանակ առ ժամանակ, ես նրան տեսնում եմ աշխատավայրում այդ կարմիր զգեստով:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Մի քանի տարի այդ կարմիր զգեստը հագնելուց հետո Հռուբն այն նվիրեց ինձ: Այն հիմա այդքան էլ նորածև չէ, բայց ես պահում եմ այդ հագած, հնաոճ կարմիր զգեստը՝ ինձ հիշեցնելու համար, որ պետք է դատողությունս հնազանդեցնեմ Աստծուն:

ԵՂԻՐ «ԽՈՍՔԸ ԿԱՏԱՐՈՂ»

«Բայց եղեք խոսքը կատարողներ [հնազանդվեք ուղերձին], և ոչ միայն այն պարզապես լսողներ, ինքների ձեզ խաբող [խաբեությանը հակառակվելով ճշմարտությանը]»:

Հակոբոս 1.22, AMP

Ամեն անգամ, երբ հասկանալով հանդերձ, թե ինչ է ասում խոսքը, չենք կատարում այն, մենք թույլ ենք տալիս, որ մեր դատողությունները խաբեն մեզ և արդյունքում հավատում ենք նրան, ինչը ճշմարիտ չէ: Պետք չէ չափազանց շատ ժամանակ վատնել (մտքով) հասկանալու համար այն ամենը, ինչ ասվում է խոսքում: Մենք կարող ենք առաջ շարժվել, եթե մեր ներսում առաջնորդություն ենք զգում:

Ես բացահայտեցի, որ Աստված ինձանից պահանջում է հնազանդվել ամեն ինչում, անկախ նրանից, ես դա ուզում եմ, թե՛ ոչ, ես դա

սիրում են, թե՛ ոչ, ես դա համարում եմ լավ, թե՛ վատ գաղափար:

Երբ Աստված խոսում է Իր Խոսքի միջոցով կամ մեր հոգու ներսում, մենք չպետք է սկսենք մտածել դրա մասին, քննարկել դա կամ ինքներս մեզ հարց տալ, թե որքանով են տրամաբանական Նրա ասածները:

Երբ Աստված մեզ ինչ որ բան է ասում, մենք պետք է այն ամիջապես կատարենք և ոչ թե դատողություն անենք:

ՎՍՏԱՀԻՐ ԱՍՏՃՈՒՆ՝ ՈՉ ԹԵ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԱՏՈՂՈՒԹՅԱՆԸ

«Ապավինի՛ր, վստահի՛ր և հաստատո՛ւն եղիր Տիրոջ մեջ քո ողջ սրտով և քո ողջ մտքով, և մի՛ վստահիր քո ներըմբռնմանը կամ հասկացողությամբ»:

Առակաց 3.5, AMP

Այլ կերպ ասած, մի՛ վստահեք ձեր դատողությամբ: Դատողությունը դուռ է բացում խաբեության առջև և տանում է շփոթության:

Մեկ անգամ ես հարցրեցի Տիրոջը. «Ինչո՞ւ են այդքան շատ մարդիկ ապրում շփոթմունքի մեջ»: Նա պատասխանեց. «Ասա՛ նրանց, որ չերկմտեն, այդ ժամանակ նրանք չեն ընկնի շփոթության մեջ»: Ես համոզվեցի, որ դա միանգամայն ճիշտ է. դատողություններն ու շփոթվածությունը կապված են մեկը մյուսի հետ:

Մենք կարող ենք մեր ներսում խորհել ինչ-որ բանի շուրջ, կարող ենք այն բերել Տիրոջ առջև և տեսնել՝ Նա ցանկանո՞ւմ է հասկանալի դարձնել տվյալ հարցը մեզ համար, թե՞ ոչ: Բայց երբ սկսում ենք զգալ, որ շփոթված վիճակում ենք, ապա պարզ է դառնում, որ մեր դատողություններով շատ հեռուն էինք գնացել:

Մարդկային դատողությունը վտանգավոր է մի քանի պատճառներով, բայց դրանցից մեկը հետևյալն է՝ մենք կարող ենք մտածել և ըմբռնել մի բան, որն ըստ մեզ կարող է տրամաբանական թվալ, բայց դա կարող է միանգամայն սխալ լինել:

Մարդկային մտքին բնորոշ են տրամաբանությունը, կարգն ու ճիշտ դատողությունը: Մտքին հաճելի է գործ ունենալ միայն հասկա-

նալի բաների հետ: Այդ պատճառով էլ մենք հակված ենք մեր մտքերում «ամեն առարկա դնել իր դարակում»՝ մտածելով այսպես՝ «Սա անհրաժեշտ է անել այսպես, իսկ սա՝ այնպես, որպեսզի ամեն ինչ համապատասխանի»: Երբեմն մեզ մոտ ամեն բան շատ լավ համապատասխանում է, բայց ի վերջո, ստացվում է միանգամայն սխալ բան:

Պողոս առաքյալը Հռոմեացիների 9.1-ում ասում է. «Ճշմարիտ են ասում Քրիստոսում՝ և սուտ չեն ասում, իմ խղճմտանքն էլ վկայում է ինձ Սուրբ Հոգով»:

Պողոսը գիտեր, որ ինքը բարի գործ է անում, որովհետև դրա մասին վկայում էր իր հոգին, ոչ թե դատողությունը:

Ինչպես արդեն տեսանք, միտքը ժամանակ առ ժամանակ օգնում է հոգուն: Միտքն ու հոգին համագործակցում են, բայց, այնուամենայնիվ, հոգուն ավելի պետք է տեղ տանք, քան՝ մտքին:

Եթե մեր հոգուն մենք գիտենք, որ ինչ-որ բան այնպես չէ, ապա չպետք է թույլ տանք, որ մեր դատողությունը հակառակը համոզի մեզ: Ինչպես նաև, եթե համոզված ենք որևէ արարքի իրավացիության մեջ, ապա չպետք է թույլ տանք, որ մեր մտքերը հակառակվեն դրան:

Աստված մեզ հասկացողություն է տալիս շատ հարցերում, սակայն ոչ միշտ է, որ մենք հասկանում ենք, թե ինչ է նշանակում ապրել Տիրոջ հետ՝ հնազանդ լինելով Նրա կամքին: Լինում են ժամանակներ, երբ Աստված մեր կյանքի ճանապարհին մեծ հարցականներ է կանգնեցնում՝ տալով մեզ հավատքի մեջ աճելու հնարավորություն: Այդ չպատասխանված հարցերը խաչում են մարմնավոր կյանքը: Մարդկային արարածին շատ դժվար է հրաժարվել դատողություններից և պարզապես վստահել Աստծուն, սակայն, երբ դա ստացվում է, մտքում սկսում է հանգստություն տիրել:

Դատողությունը մտքում տիրող «զբաղվածությունն» է, որը խանգարում է զանազանելուն և հայտնության գիտությանը: Մտավոր գիտելիքների և հայտնության գիտության միջև գոյություն ունի մեծ տարբերություն:

Չգիտեմ դուք ինչպես, բայց ես ուզում եմ, որ Աստված կատարվող բաներն ինձ այնպես հայտնի, որ ես հոգումս *իմանամ*, որ իմ մտքում բացահայտված ամեն ինչը ճիշտ է: Ես չեմ ցանկանում դատողություն անել, հաշվարկել, հետևել տրամաբանությանը, գլխումս անդադար պտտել միևնույն հարցերը, մինչև որ հոգնեմ ու վերջնականապես ընկնեմ շփոթության մեջ: Ես ուզում եմ վերապրել մտքի և սրտի այն խաղաղությունը, որը գալիս է, երբ սկսում ենք վստահել Աստծուն, և ոչ թե մեր մարդկային հասկացողությանը:

Մենք պետք է աճենք և հասնենք այն մակարդակին, որ ճանաչենք Նրան, Ով գիտի ամեն բան:

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՐԵՔ՝ ՔՐԻՍՏՈՍԻՑ ԲԱՑԻ ՈՉԻՆՉ ՉԻՄԱՆԱԼ

«Ուրեմն, եղբայրներ, երբ ես եկա ձեզ մոտ, ես չեկա հռչակելու ձեզ վկայությունը կամ Աստծո խորհրդավորությունն ու գաղտնիքը [նրա վերաբերյալ, ինչ Նա արել էր Քրիստոսի միջոցով մարդկության փրկության համար] մարդկային փիլիսոփայության և իմաստության գոռոզամիտ խոսքերով: Քանի որ, ես որոշել եմ ոչինչ չիմանալ [ոչ մի գիտելիք չցուցաբերել], Յիսուս Քրիստոսից [Մեսիայից] բացի, այն էլ՝ խաչված»:

Ա Կորնթացիների 2.1,2, AMP

Այսպես էր Պողոսը վերաբերվում գիտելիքներին ու դատողությանը, և նրա մոտեցումը հասկանալի ու ընդունելի դարձավ ինձ համար: Շատ ժամանակ անցավ, երբ հասկացա, որ հաճախ ինչքան քիչ եմ իմանում, այնքան ավելի շատ եմ ինձ երջանիկ զգում: Երբեմն մենք այնքան շատ բան ենք իմանում, որ դառնում ենք դժբախտ մարդիկ:

Ես միշտ եղել եմ շատ հետաքրքրասեր ու փորփորող անձնավորություն: Ինձ բավարարված զգալու համար ես անպայման պետք է ամեն բան հասկանալի մինչև վերջ: Աստված սկսեց ցույց տալ ինձ, որ իմ մշտական դատողություններն են եղել իմ շփոթության պատճառը, ինչն էլ խանգարել է ինձ՝ Իրենից ստանալու այն, ինչ Նա ցանկանում էր ինձ տալ: Նա ասաց. «Ջոյս, հրաժարվիր քո մարմնական դատողություններից, եթե դեռ ցանկանում ես զանազանել հոգևորը»:

Այժմ գիտակցում եմ, որ ես ինձ ավելի վստահ էի զգում, երբ ամեն բան ինձ համար հասկանալի էր լինում: Ես չէի ցանկանում կյանքում կորցնել ինչ որ բան: Ես ուզում էի ամեն բան պահել վերահսկողությամբ տակ, և երբ ինչ-որ բան չէի հասկանում, սկսում էի վախենալ ու կորցնում էի ինձ: Սակայն նույնիսկ, երբ ամեն բան պարզ ու հասկանալի էր թվում, այնուամենայնիվ, ինչ-որ բան դեռևս բացակայում էր. իմ մտքում չկար խաղաղություն, իսկ մշտական դատողություններն ինձ ֆիզիկապես հոգնեցրել էին:

Նմանատիպ շարունակական սխալ մտավոր ակտիվությունն, ի վերջո, հանգեցնում է ֆիզիկական հոգնածության: Այն վատնում է ձեր ուժերը:

Աստված պահանջեց, որ ես հրաժարվեմ դրանից, և ես խորհուրդ եմ տալիս բոլոր նրանց, ովքեր արդեն կախվածության մեջ են դատողություններից, նույն կերպ վարվել: Այո՛, ես ասացի *կախվածությունն* դատողություններից: Կարելի է կախվածություն ունենալ սխալ մտավոր ակտիվությունից ճիշտ այնպես, ինչպես թմրադեղերից, ալկոհոլից կամ նիկոտինից: Ես մոլի մտածող էի, և ինձ շատ դժվար եղավ դրանից ազատվելը: Ես շփոթված ու վախեցած էի, որովհետև չէի իմանում, թե ինչ է կատարվում: Ես նույնիսկ ձանձրանում էի:

Ես այնքան ժամանակ ու եռանդ էի վատնում դատողությունների վրա, որ երբ հրաժարվեցի դրանից, ստիպված էի հարմարվել իմ մտքի խաղաղ վիճակին: Ինչ-որ մի ժամանակ դա ինձ համար ձանձրալի էր թվում, բայց հիմա ես վայելում եմ դա: Նախկինում թույլ էի տալիս մտքիս՝ թափառել ամենուրեք, բայց այժմ ես չեմ կարողանում հանդուրժել այն ցավն ու տանջանքը, որոնցով սովորաբար ուղեկցվում են դատողությունները:

Աստծո ծրագրի համաձայն, մշտական դատողությունները մեր գիտակցության համար նորմալ վիճակ չեն հանդիսանում:

Իմացե՛ք, երբ ձեր ուղեղը լի է մտքերով, դա նորմալ չէ: Նորմալ չէ այն քրիստոնյայի համար, ով ցանկանում է ապրել հաղթական կյանքով, և այն հավատացյալի համար, ով ցանկանում է հաղթանակել այն պատերազմը, որը մղվում է իր մտքում:

Գլուխ

11

***Չհավատացող
և կասկածող միտքը***

Չհավատարմություն և կասկածող միտքեր

Սովորաբար մենք կասկածանքների և անհավատության մասին խոսում ենք այնպես, կարծես դրանք միևնույն բանն են: Ծիշտ է, թեև կասկածանքն ու անհավատությունը կապված են միմյանց հետ, այնուամենայնիվ դրանք երկու տարբեր բաներ են:

Վ.Ե.Վայնի «*Չին և Նոր կտակաբանների բառերի բացատրական*

բառարանը» կասկածել բառը մեկնաբանում է այսպես՝ «...կանգնել երկու ճանապարհների վրա՝ չիմանալով որ կողմով գնալ, բավականաչափ հավատք չունենալ... անհանգստանալ, ընկնել մտքի խելակորույս վիճակի մեջ՝ տատանվելով հույսի և վախի միջև...»¹:

Նույն բառարանը հունարենից թարգմանանաբար «անհավատություն» նշանակող բառը մեկնաբանում է որպես «անհնազանդություն»՝ Քինգ Ջեյմսի սրբագրված թարգմանությամբ²:

Եթե այս երկուսը դիտարկենք որպես թշնամու հզոր զենքեր, կտեսնենք, որ կասկածանքը մարդուն ստիպում է վարանել երկու տեսակետի միջև, իսկ անհավատությունը տանում է անհնազանդության:

Կարծում եմ՝ մեզ համար օգտակար կլինի իմանալ, թե սատանան կոնկրետ ինչի՞ օգնությամբ է փորձում հարձակուն գործել մեզ վրա: Մենք գործ ենք ունենում կասկածանքի՞, թե՞ անհավատության հետ:

«...Թերահավատ, ինչո՞ւ երկմտեցիր»:

Մատթեոս 14.31

«Եվ նրանց անհավատության համար զարմանում էր...»:

Մարկոս 6.6

ԿԱՍԿԱԾԱՆՔ

«...Դեռ երկա՞ր եք տատանվելու երկու կարծիքների միջև...»:
Գ Թագավորաց 18.21, AMP

Մեկ անգամ ես մի պատմություն լսեցի, որից պարզ դարձավ, թե ինչ է կասկածանքը:

Մի մարդ հիվանդ էր և անդադար հռչակում էր բժշկությանը վերաբերող աստվածաշնչյան խոսքերը՝ հավատալով, որ տեսնելու է իր հրաշքի իրականացումը: Դրա հետ մեկտեղ, ժամանակ առ ժամանակ նրա վրա հարձակում էին գործում կասկածանքի մտքերը:

Նրա համար շատ դժվար էր, և նա արդեն սկսել էր հիասթափվել, երբ հանկարծ Աստված նրան ցույց տվեց հոգևոր աշխարհը: Եվ ահա թե ինչ տեսավ նա. դեռ անընդհատ նրա ականջին ստեր էր փսփսում, որ իբրև նա չի բժշկվի և, որ խոսքի հռչակումը նրան չի օգնի: Բայց տեսավ նաև, որ ամեն անգամ խոսքը հռչակելիս՝ նրա բերանից սրի պես լույս էր ճառագում, որը դեին ստիպում էր կծկվել ու ընկնել:

Աստծո տված այդ տեսիլքի շնորհիվ այդ մարդը հասկացավ, թե ինչու է կարևոր խոսքի շարունակական հռչակումը: Նա հասկացավ նաև, որ իր ունեցած հավատքի պատճառով էր դեռ անդադար կասկածներով լի մտքեր ուղարկում նրան:

Կասկածները չեն գալիս Աստծուց: Աստվածաշնչում ասվում է, որ Աստված յուրաքանչյուրին տալիս է «հավատքի չափ» (տե՛ս Հռոմ. 12.3): Աստված մեր սրտերում հավատք է դրել, իսկ սատանան փորձում է կասկածների միջոցով ոչնչացնել այն:

Կասկածները մեր կյանք գալիս են մտքերի միջոցով, որոնք դիմադրում են Աստծո խոսքին: Ահա թե ինչու մենք պետք է լավ իմանանք Աստծո խոսքը: Բացի այդ, եթե լավ իմանանք խոսքը, ապա հեշտությամբ կտարբերենք սատանայի սուտը: Համոզված եղեք, որ նա սուտասան է, և նրա նպատակն է զրկել մեզ այն ամենից, ինչը Հիսուսն էր մահվան և հարության շնորհիվ ձեռք բերեց մեզ համար:

ԿԱՍԿԱԾԱՆՔ ԵՎ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ

«Աբրահամը, ով այլևս հույս չուներ, բայց հուսացած էր հավատքին, որ իրեն խոստացվել էր լինել շատ ազգերի և անհամար սերունդների հայր:

Նա չտկարացավ իր հավատքի մեջ, երբ նկատի առավ իր մարմնի [բացարձակ] անպետքությունը, ինչն արդեն մեռածի պես էր, քանի որ նա հարյուր տարեկանին մոտ էր, կամ [երբ նա համարեց] Սառայի [մահացած] արգանդի ամուլ լինելը:

Ո՛չ անհավատությունը, և ո՛չ էլ անվստահությունը նրան չսասանեցին [կասկածելի հարցերով] Աստծո խոստման վերաբերյալ, այլ նա ավելի ուժեղացավ ու զորացավ հավատքով և գոհություն ու փառք տվեց Աստծուն: Նա լիովին բավարարվեց և համոզվեց, որ Աստված ի զորու է պահելու Իր խոսքը՝ խոստումը կատարելու համար»:

Հռոմեացիների 4.18-21, AMP

Երբ ես պայքար եմ մղում՝ իմանալով, թե ինչ է Աստված խոստացել ինձ, ես դիմադրում եմ կասկածների և անհավատության կատարյալ հարձակումներին՝ կարդալով և մտորելով սուրբգրային այս հատվածների մասին:

Աստված խոստացել էր Աբրահամին, որ ժառանգ կտա նրան: Տարիներն անցնում էին, բայց Աբրահամն ու Սառան երեխա չէին ունենում: Աբրահամն առաջվա պես շարունակում էր կանգուն մնալ իր հավատքի մեջ, իմանալով, որ Աստված անպայման կկատարի Իր խոսքը: Ժամանակ առ ժամանակ նա կասկածներով լի մտքերի հարձակման տակ էր գտնվում, իսկ անհավատության ոգին դրդում էր նրան չհնազանդվել Աստծուն:

Նման իրավիճակում չենթարկվելը նշանակում է հանձնվել, այնինչ Աստված դրդում է առաջ գնալ: Անհնազանդությունը ոչ միայն տասը պատվիրանների խախտումն է, այլ նաև այն փաստի անտեսումն է, որ Տերն անձամբ է խոսում մեզ հետ:

Աբրահամը հաստատուն էր իր հավատքի մեջ: Նա շարունակում էր փառավորել և մեծարել Աստծուն: Աստվածաշունչը պնդում է, որ այդպես վարվելով, նա աճեց հավատքի մեջ:

Երբ Աստված պատվիրում կամ որևէ բան է խնդրում մեզ, ապա դա

անելու համար հավատք էլ է տալիս, որը զալիս է Աստծո խոսքի հետ միասին: Աստծո կողմից անհեթեթություն կլիներ, եթե Նա մեզանից ինչ-որ բան ակնկալեր և կարողություն չտար հավատալու, որ մենք կկարողանանք իրականացնել Նրա ասածը: Սատանան գիտի, թե իր համար ինչ վտանգ ենք ներկայացնում, երբ մեր սրտերը լցվում են հավատքով, այդ պատճառով էլ մեզ կասկածների և անհավատության հարձակումների է ենթարկում:

Բանն այն չէ, որ մենք հավատք չունենք, այլ այն, որ սատանան փորձում է ստի միջոցով ոչնչացնել մեր հավատքը:

Թո՛ւյլ տվեք մի օրինակ բերել: Ես կպատմեմ, թե ինչպես Աստված կանչեց ինձ ծառայության: Դա սովորական, առանց արտառոց դեպքերի մի առավոտ էր: Դրանից երեք շաբաթ առաջ ես մկրտվել էի Սուրբ Զոզով: Ես լսեցի «Անցնել մյուս կողմը» ուսմունքի ծայնագրությունը, և զարմացա, թե ինչպես կարող է ուսմունքը հետաքրքիր լինել, երբ այն քարոզվել է մի ամբողջ ժամ՝ հիմնված լինելով սուրբգրային մեկ խոսքի վրա:

Անկողինս հավաքելիս հանկարծ զգացի, որ ինձանում կրակոտ ցանկություն առաջացավ՝ սովորեցնելու Աստծո խոսքը: Այնուհետև հնչեց Աստծո ձայնը. «Դու կզնաս ամենուր և կսովորեցնես Իմ խոսքը: Քո ծառայությունը նույնպես կմեծանա ուսմունքների ծայնագրությունների շնորհիվ»: Ես պարզորոշ ձայն չլսեցի, սակայն իմ սրտում իմացա այդ մասին, ինչն էլ թույլ տվեց ինձ հավատալ, որ կարող եմ անել այն, ինչ Աստված ցույց էր տալիս ինձ:

Իրականում հավատալու ոչ մի պատճառ չկար, որ, իրոք, ինձ հետ խոսում էր Աստված և, որ ես ի վիճակի էի անելու այն, ինչ Նա ասում էր: Ես ինքս բազմաթիվ խնդիրներ ունեի և ամենևին էլ նման չէի ապագա ծառայողի, սակայն Աստված ընտրում է այս աշխարհի անմիտին ու թույլին՝ իմաստուններին ամաչեցնելու համար (տե՛ս Ա Կորնթ. 1.27): Նա նայում է մարդու սրտին, և ոչ թե մարմնին (տե՛ս Ա Թագ. 16.7): Եթե մարդու սիրտը մաքուր է, ապա Աստված կարող է փոխել մարմինը:

Թեպետ ոչ մի հիմք չկար հավատալու, որ Աստված իսկապես խոսել էր ինձ հետ, բայց այդ պահին, երբ քարոզելու ցանկություն զգա-

ցի, ես լցվեցի հավատքով ու հասկացա, որ կարող եմ կատարել Տիրոջ պատվիրանը: Երբ Աստված կանչում է, Նա տալիս է նաև ցանկություն, հավատք և ունակություն՝ Նրա խոսքը կատարելու համար: Ուզում եմ ավելացնել, որ նախապատրաստվելու և սպասելու այս բոլոր տարիների ընթացքում սատանան պարբերաբար հարձակվում էր ինձ վրա կասկածների և անհավատության միջոցով:

Աստված Իր ժողովրդի սրտում երազանքներ ու ծրագրեր է դնում փոքրիկ սերմերի տեսքով: Ինչպես կինն է իր արգանդում սերմ ընդունում և հղիանում, այդպես էլ մենք ենք «հղիանում», երբ Աստված խոսում է Իր խոստումների մասին և դրանք հռչակում մեր կյանքերում: «Հղիության» ընթացքում սատանան ջանասիրաբար աշխատում է «վիժեցնել» մեր երազանքերը: Որպես գործիք՝ նա օգտագործում է կասկածանքը, կամ՝ անհավատությունը: Երկուսն էլ օգտագործվում են մտքի դեմ հարձակումների դեպքում:

Հավատքը հոգու պտուղ է, այն հանդիսանում է հոգևոր ուժ: Թշնամին չի ուզում, որ մեր միտքը համաձայն լինի մեր հոգու հետ: Նա գիտի, որ, եթե Աստված մեզ հավատք է տվել որոշակի աշխատանք իրականացնելու համար, և եթե մենք կենտրոնանում ենք այն կատարելու վրա, ապա մենք կարող ենք զգալի վնաս հասցնել նրա թագավորությանը:

ՇԱՐՈՒՆԱԿԻՐ ՔԱՅԼԵԼ ԶՐԻ ՎՐԱՅՈՎ

«Բայց նավն արդեն ծովի մեջտեղն էր՝ ակից շատ ֆուրլոնգներ [մեկ ֆուրլոնգը մեկ ութերորդական մղոն է] հեռու, և ալեկոծվում ու տարուբերվում էր, քանի որ քամին նրանց հակառակ էր:

Եվ գիշերվա չորրորդ պահին [երեքից վեցն ընկած ժամանակահատվածում] Հիսուսն եկավ նրանց մոտ՝ ջրի վրայով քայլելով:

Եվ երբ աշակերտները տեսան Նրան ծովի վրայով քայլելիս՝ սարսափեցին և ասացին. «Սա ուրվական է»: Ու վախի մեջ սկսեցին աղաղակել:

Հիսուսն անմիջապես ասաց նրանց. «Քա՛ջ եղեք: Այդ Ե՛ս եմ: Մի՛ վախեցեք»: Եվ Պետրոսը պատասխանեց Նրան. «Տե՛ր, եթե Դու ես, ապա հրամայիր ինձ գալ Քեզ մոտ ջրի վրայով»:

Նա ասաց. «Ե՛կ»: Եվ Պետրոսը դուրս ելավ նավից ու քայլեց ջրի վրայով դեպի Հիսուսը:

Բայց երբ նա նկատեց, որ քամին սաստիկ է, վախեցավ, և երբ սկսեց ընկղմվել՝ սկսեց աղաղակել. «Տե՛ր, փրկի՛ր ինձ [մահից]»:
Հիսուսն անմիջապես հասավ ու իր ձեռքը մեկնեց, բռնեց ու պահեց նրան՝ ասելով. «Թերահավա՛տ, ինչո՞ւ կասկածեցիր»:
Եվ երբ նրանք մտան նավակը, քամին դադարեց»:

Մատթեոս 14.24-32, AMP

Ես ընդգծել եմ վերջին տողը՝ ցանկանալով ձեր ուշադրությունը հրավիրել նրան, թե ինչ ծրագիր է թշնամին պատրաստում: Լսելով Հիսուսի խոսքերը, Պետրոսը դուրս եկավ նավակից, որպեսզի անի այն, ինչը երբեք չէր արել: Փաստորեն, Հիսուսից բացի ուրիշ ոչ ոք երբեք չէր քայլել ջրի վրայով:

Դրա համար հավատք էր պետք:

Պետրոսը սխալ թույլ տվեց. նա բավականին երկար նայեց փոթորկին և վախեցավ: Կասկածներն ու անհավատությունը ճնշեցին նրան, և նա սկսեց ընկղմվել: Պետրոսը աղաղակեց Հիսուսին, և Նա օգնեց նրան: Սակայն, ուշադրություն դարձրեք, որ փոթորիկը դադարեց, երբ *Պետրոսը կրկին նավակը մտավ:*

Հիշե՛ք Հռոմեացիների 4.18-21-րդ խոսքերը, որտեղ Աբրահամն անսասան էր իր հավատքի մեջ, թեպետ տեսնում էր իր վիճակի հուսահատությունը: Աբրահամին հայտնի էին բոլոր հանգամանքները, սակայն, ի տարբերություն Պետրոսի, նրա պայմանները խոչընդոտ չէին հանդիսանում նրա հավատքի համար: Նա երևի շատ չէր մտածում կամ խոսում դրանց մասին: Նրա միտքն ու զրույցը Աստծո հետ էր: Մենք կարող ենք գիտակցել մեր իրավիճակները, բայց և այնպես, մեր մտքերը կենտրոնացնենք այն բանի վրա, ինչը շինություն կտա մեզ և կամրացնի մեր հավատքը:

Ահա թե ինչու էր Աբրահամը շարունակում փառավորել և մեծարել Աստծուն: Մեր գոհունակությունն արտահայտվում է նրանում, որ մենք ճիշտ ենք վարվում նույնիսկ այն ժամանակ, երբ դա հեշտ չէ: Եփեսացիների ուղերձի 6.14-ում գրված է, որ հոգևոր պատերազմ վարելիս մենք պետք է ամուր կապենք մեր ճշմարտության գոտին:

Երբ մեր կյանքում փոթորիկներ են գալիս, մենք պետք է «ամուր տնկվենք», պնդացնենք մեր ճակատները, լցվենք Սուրբ Հոգով և ոչ մի դեպքում նավակ չվերադառնանք: Մենք կարող ենք ասել՝ «Դու՛րս եկ և մի՛ վերադարձիր»: Շատ հաճախ փոթորիկը դադարում է, երբ դուք հրաժարվում եք կատարել պատվիրանը և վերադառնում եք այնտեղ, որտեղ ապահով և անվտանգ է:

Սատանան փոթորիկներ է բերում ձեր կյանքում՝ ձեզ վախեցնելու մտադրությամբ: Փոթորկի ժամանակ հիշեք, որ միտքը պատերազմի դաշտն է: Մի՛ կայացրեք որոշումներ՝ հիմնված ձեր մտքերի կամ զգացմունքների վրա. թող հոգին վերահսկի ձեր գործողությունները: Այդպես վարվելով դուք ձեր հոգում կրկին կգտնեք այն տեսիլքը, որը նախապես ստացել էիք Տիրոջից:

Ո՛Չ ՄԻ ԵՐԿՄՏՈՒԹՅՈՒՆ

«Եթե ձեզանից մեկը իմաստության պակաս ունի, թող խնդրի Աստծուն [Ով տալիս է] բոլորին ազատորեն և առանց նախատինքի, առանց կշտամբանքի և սխալներ փնտրելու, և դա կտրվի իրեն: Միայն թե դա լինի հավատքով, և խնդրի առանց վարանելու [առանց երկմտելու, առանց կասկածելու]: Քանի որ, ով վարանում է [երկմտում, կասկածում], նա նման է փոթորկոտ ծովի ալիքների, որը շնչասպառ այս ու այն կողմ է նետվում քամուց: Որ իրապես, թող նման մարդը չպատկերացնի անգամ, որ նա կստանա ինչ-որ բան, [որ խնդրում է] Տիրոջից»:

Հակոբոս 1.5-7, AMP

Մի հովիվ պատմում էր, թե ինչպիսի շփոթության մեջ էր հայտնվել Աստվածաշնչյան քոլեջն ավարտելուց հետո՝ մի որոշում կայացնելու հարցում: Աստված նրա սրտում դրել էր քոլեջից հետո վերադառնալ Սեն-Լուի, Միսսուրի, և այնտեղ նոր եկեղեցի հիմնել, որը և նա պատրաստվում էր անել: Բայց երբ մոտենում է գնալու ժամանակը, իրավիճակն այնպես է դասավորվում, որ նա իր գրպանում ունենում է ընդամենը հիսուն դոլար, և բացի այդ, նա պետք է գնար երեխայի և հղի կնոջ հետ: Ակնհայտ էր, որ հանգամանքները նրա դեմ էին:

Նա փորձում էր ճիշտ որոշում կայացնել, և այդ ժամանակ նրան աշխատանք են առաջարկում երկու խոշոր նոր հաստատվող ծառայություններում՝ խոստանալով բարձր աշխատավարձ: Առաջարկները շատ գայթակղիչ էին, իսկ խոշոր ծառայություններում մասնակցության հնարավորությունը շոյում էր նրա ինքնասիրությունը: Որքան երկար էր մտածում այդ առաջարկի մասին, այնքան շատ էր ընկնում շփոթմունքի մեջ: (Կարծես՝ «պարոն կասկածանքն» էր նրան այցելության եկել, այդպես չէ՞):

Կար ժամանակ, երբ նա հաստատ գիտեր, թե ինչ է ուզում, բայց հիմա նա *տատանվում էր*: Այն պահից, երբ Սեն-Լուի մեկնելու համար իրավիճակները հակառակ էին դասավորվել, այդ երկու առաջարկներից մեկն ընդունելու գայթակղությունն ավելի էր մեծացել, սակայն նրա սրտում չկար խաղաղություն: Ի վերջո, նա դիմեց իրեն աշխատանք առաջարկող հովիվներից մեկի խորհրդին, ով շատ իմաստուն պատասխան տվեց. «Առանձնացիր որոշ ժամանակով, հանգստացիր և ազատվիր քեզ տանջող մտքերից: Նայիր սրտիդ, տես՝ ինչ է այնտեղ կատարվում, իսկ հետո անցիր գործի»:

Հետևելով հովվի խորհրդին, նա շուտով համոզվում է, որ իր սրտի ցանկությունն էր Սեն-Լուիում եկեղեցի ստեղծելը: Նա չգիտեր՝ ինչպես պետք է կարողանար իրականացնել այդ ծրագիրը, բայց հնազանդության քայլ արեց, որը հիանալի արդյունք ունեցավ:

Այսօր այդ հովիվը՝ Ռիկ Շելթոնը, հանդիսանում է Սեն-Լուիի, Միսսուրի «Կյանք» քրիստոնեական կենտրոնի հիմնադիրն ու ավագ հովիվը: Տարիներ շարունակ հազարավոր մարդիկ օրհնվում և վերափոխվում են նրա ծառայության շնորհիվ: Հինգ տարի շարունակ ես այնտեղ եղել եմ որպես հովվի օգնական. այդ ժամանակ է ծնվել իմ ծառայությունը: Պատկերացրեք, թե որքան շատ բան կարող էր գողանալ սատանան կասկածների և անհավատության միջոցով, եթե հովիվ Շելթոնը հետևեր իր մտքին, և ոչ թե սրտին:

ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵՐՆ Է՝ ԿԱՍԿԱԾԵՂ, ԹԵ՛ ՈՉ

«Հաջորդ օրը վաղ առավոտյան, երբ Նա վերադառնում էր քաղաք, սովածացավ:

Ճանապարհի վրա տեսնելով տերևածածկ մի թզենի՝ Նա գնաց դրա մոտ, բայց տերևներից բացի ուրիշ ոչինչ չգտավ դրա վրա [թզենու տերևներն ու պտուղները աճում են, հայտնվում են միաժամանակ]: Եվ Նա ասաց ծառին. «Այլևս պտուղ չլինի քեզ վրա»: Եվ թզենին անմիջապես չորացավ:

Աշակերտները տեսնելով դա՝ մեծապես զարմացան ու ասացին.

«Այդ ինչպե՞ս թզենին անմիջապես չորացավ»:

Հիսուսը պատասխանեց նրանց. «Ճշմարիտ են ասում ձեզ, եթե հավատք ունենաք [ամուր վստահություն] և չկասկածեք, ապա դուք ոչ միայն կկարողանաք անել այն, ինչ տեղի ունեցավ թզենու հետ, այլ, եթե այս լեռանն ասեք՝ «Վե՛ր կաց և ծովն ընկիր», ապա կլինի դա:

Եվ ինչ որ ակոթի մեջ խնդրեք, հավատք ունեցեք և [իսկապես հավատացեք], որ կստանաք»»:

Մատթեոս 21.18-22, AMP

Երբ զարմացած աշակերտները Հիսուսին հարցրին, թե ինչպես կարողացավ չորացնել ծառը խոսքի միջոցով, Նա նրանց ասաց. «Եթե հավատաք և չկասկածեք, կկարողանաք կատարել նույնը, ինչ որ Ես արեցի թզենուն, և է՛լ ավելին» (տե՛ս Հովհ. 14.12, AMP):

Մենք արդեն սահմանեցինք, որ հավատքն Աստծո պարզևն է, այդ պատճառով էլ գիտենք, որ հավատք ունենք (տե՛ս Հռոմ. 12.3): Բայց կասկածանքը ընտրություն է. դա մեր մտքի դեմ ուղղված սատանայի մարտական ռազմավարությունն է:

Քանի որ դուք պետք է որոշեք, թե որ միտքն եք ընտրում, ապա երբ կասկածները գան, դուք պետք է սովորեք տարբերել դրանք՝ ասելով. «Ո՛չ, շնորհակալություն», և շարունակեք հավատալ:

Ընտրությունը ձերն է:

ԱՆՎԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է

«Եվ երբ որ նրանք ժողովրդի մոտ եկան, մի մարդ մոտեցավ Նրան և առաջը ծունկ դնելով՝ ասում էր. «Տե՛ր, իմ որդուն ողորմիր, որ

լուսնոտում է և չարաչար տանջվում է, որովհետև շատ անգամ կրակն է ընկնում և շատ անգամ ջուրը:

Եվ ես նրան Քո աշակերտների մոտ բերեցի, և չկարողացան նրան բժշկել:

Հիսուսն էլ պատասխանեց և ասաց. «Ո՛վ անհավատ և խոտորյալ ազգ, մինչև ե՞րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև ե՞րբ պիտի ձեզ համբերեմ: Նրան Ինձ մոտ բերեք այստեղ:

Եվ Հիսուսը նրան սաստեց, և դևը նրանից դուրս եկավ, և տղան նույն ժամին բժշկվեց: Այն ժամանակ աշակերտներն առանձին Հիսուսի մոտ եկան և ասացին. «Մենք ինչո՞ւ չկարողացանք հանել նրան»: Հիսուսն էլ ասաց նրանց. «Ձեր թերահավատության համար»»:

Մատթեոս 17.14-20, KJV

Հիշե՛ք, անվստահությունը միշտ տանում է անհնազանդության:

Ամենայն հավանականությամբ, Հիսուսն իր աշակերտներին պատմում էր, թե ինչպես կարելի է վարվել նման իրավիճակներում, սակայն նրանց անհավատությունը պատճառ հանդիսացավ՝ Հիսուսին անհնազանդ լինելու համար, ինչին էլ հաջորդեց անհաջողությունը:

Ամեն դեպքում հարցն այն է, որ անհավատությունը, ինչպես և կասկածանքը, մեզ ետ կպահեն կատարելու այն, ինչի համար Աստված կանչել և օծել է մեզ: Այն նաև կզրկի մեզ խաղաղության զգացումից, որն Աստված ցանկանում է, որ մենք վայելենք՝ իր մեջ հանգստություն գտնելով (տե՛ս Մատթ. 11.28,29):

ՇԱԲԱԹՕՐՅԱ ՀԱՆԳԻՍ

«Հետևաբար, եկե՛ք ինքներս եռանդուն և ջանասեր լինենք և ժրաջան աշխատենք [Աստծո] այդ հանգստի մեջ մտնելու համար [անձամբ իմանանք և փորձառու լինենք դրան], որ ոչ ոք չընկնի կամ չկործանվի միևնույն անհավատությունից և անհնազանդությունից [ինչի պատճառով նրանք ընկան անապատ]»:

Եբրայեցիների 4.11, AMP

Եթե կարդաք Եբրայեցիների 4-րդ գլուխն ամբողջությամբ, ապա կբացահայտեք, որ այնտեղ խոսվում է շաբաթօրյա հանգստի մասին, որը հասանելի էր Աստծո ժողովրդին: Հին ուխտի ժամանակ շաբաթը համարվում էր հանգստյան օր: Նոր ուխտում այս շաբաթի մասին խոսվում է որպես հանգստի հոգևոր մի վայր, որը հավատացյալը կարող է վայելել: Հոգսերից և անհանգստություններից փախչելն արտոնություն է յուրաքանչյուր հավատացյալի համար: Եվ որպես քրիստոնյաներ՝ մենք կարող ենք մտնել և մնալ Աստծո հանգստի մեջ:

Եբրայեցիների 4.11-րդ խոսքը ցույց է տալիս, որ միայն հավատքի միջոցով մենք կարող ենք մտնել այդ հանգստի մեջ, իսկ անհավատությունն ու անհնազանդությունը կզրկեն մեզ այդ իրավունքից: Անհավատությունը մեզ կպահի «անապատում», բայց Հիսուսը հոգ է տարել մեր հանգստի համար, որը մենք կկարողանանք գտնել, եթե ապրենք հավատքով:

ԱՊՐԵԼՈՎ ՀԱՎԱՏՔԻՑ ՀԱՎԱՏՔ

«Որովհետև Աստծո արդարությունը Նրանով հայտնվում է հավատքից հավատքի մեջ, ինչպես գրված է, թե՛ արդարը հավատքից կապրի»:

Հռոմեացիների 1.17

Հիշում եմ մի դեպք, որը կարող է հստակեցնել այս պահը: Մեկ օր երեկոյան տանը շրջում էի և փորձում էի զբաղվել տնային գործերով: Ես ինձ շատ դժբախտ էի զգում. ոչ մի ուրախություն չունեի, սրտումս խաղաղություն չկար: Շարունակ հարցնում էի Տիրոջը. «Ի՞նչ է կատարվում ինձ հետ»: Դա հաճախ էր պատահում, և ես իսկապես ցանկանում էի իմանալ պատճառը: Ես փորձում էի ապրել այնպես, ինչպես պետք է ապրի Քրիստոսին հետևող մարդը, սակայն ես ինչ-որ բան բաց էի թողնում:

Այդ ժամանակ ինչեց հեռախոսազանգը: Ջրուցելիս ես սկսեցի նայել սուրբգրային մեջբերումներով բացիկներ, որոնք ինչ-որ մեկը նվիրել էր ինձ: Իրականում ես չէի կարդում, այլ՝ հեռախոսազրույցի

ընթացքում պարզապես թերթում էի դրանք:

Երբ դրեցի լսափողը, որոշեցի քաշել պատահական բացիկ և տեսնել, թե արդյո՞ք բացիկի վրայի գրվածը ինձ կխրախուսի:

Ես քաշեցի Հռոմեացիների 15.13-ը. «Եվ հույսի Աստվածը լցնի ձեզ ամեն ուրախությունով և խաղաղությունով, հավատալու մեջ, որ հույսով ավելանաք Սուրբ Հոգու զորությունով»:

Ես տեսա՛ դա...

Իմ խնդիրների ողջ պատճառը կասկածանքն ու անհավատությունն էր: Ես ինքս ինձ դժբախտացնում էի՝ հավատալով սատանայի ստերին: Ես բացասաբար էի տրամադրված: Ես չէի կարողանում ունենալ ո՛չ ուրախություն, ո՛չ խաղաղություն, որովհետև հավատք չունեի: Հնարավոր չէ ունենալ ուրախություն և խաղաղություն ու ապրել անհավատության մեջ:

Որոշում կայացրեք հավատալ Աստծուն, և ոչ թե սատանային:

Սովորեք ապրել հավատքից հավատք: Հռոմեացիների 1.17-րդ խոսքի համաձայն հենց այս կերպ է բացահայտվում Աստծո արդարությունը: Աստված հայտնեց ինձ, որ հավատքից հավատք ապրելու փոխարեն ես հաճախ անցնում էի հավատքից դեպի կասկածներ և անհավատություն: Հետո կարճ ժամանակով վերադառնում էի հավատքին, ապա կրկին ընկնում կասկածների ու անհավատության մեջ: Ետ ու առաջ գնալով՝ ես հայտնվում էի այս ու այն կողմում: Այդ պատճառով էլ իմ կյանքում այդքան շատ էին անհաջողություններն ու դժբախտությունները:

Հիշե՛ք, Հակոբոսի 1.7,8 խոսքերի համաձայն, երկմիտ մարդն անկայուն է իր բոլոր ճանապարհներում և երբեք Տիրոջից չի ստանա այն, ինչ ցանկանում է: Որոշում կայացրեք, որ չեք լինի երկմիտ մարդ. մի՛ ապրեք կասկածանքի մեջ:

Աստված ձեզ համար հրաշալի կյանք է պատրաստել: Թույլ մի՛ տվեք սատանային, որ նա գողանա այն իր ստի միջոցով: Փոխարենը «խորտակենք, (քանի որ մենք) հերքում ենք փաստերն ու տեսությունները և հավաստիացումները, և ամեն մի հպարտ ու գոռոզ բան,

որ ինքն իրեն բարձրացնում է Աստժո (Ճշմարիտ) գիտության դեմ. և մենք գերի ենք վերցնում ամեն մի միտք ու մտադրություն՝ Քրիստոսին (Մեսիային, Օճյալին) հնազանդեցնելու համար» (Բ Կորնթ. 10.5, AMP):

Գլուխ
12

*Մշակույթի և
անհանգիստ միտքը*

Մտահոգ և անհանգիստ միտքը

Անհանգստությամբ ու հոգսերով լի մտքերն հարձակվում են մեզ վրա՝ Տիրոջը ծառայելու նպատակից շեղելու համար: Թշնամին օգտագործում է այս երկու տանջանքները՝ մեր հավատքը կործանելու համար, որովհետև առանց հավատքի չենք կարող ապրել հաղթական կյանքով:

Որոշ մարդիկ այնքան շատ են մտահոգվում իրենց կյանքում, որ գրեթե դարձել են դրանց գերին: Եթե հանկարծ նրանք իրենց կյանքում չեն գտնում անհանգստության պատճառ, նրանք սկսում են ուրիշների կյանքի համար անհանգստանալու առիթ փնտրել: Քանի որ դա պատահել է ինձ հետ, ես այդ իրավիճակը կարող եմ նկարագրել իր բոլոր մանրամասնություններով:

Անընդհատ մտահոգվելով ինչ-որ բանի մասին՝ ես չէի կարողանում վայելել այն խաղաղությունը, որն ինձ տրված էր Հիսուսի մահվան շնորհիվ:

Հնարավոր չէ մտահոգվել և միևնույն ժամանակ պահպանել հոգու խաղաղությունը:

Խաղաղությունը հնարավոր չէ ստիպողաբար տալ մարդուն, այն Հոգու պտուղ է (տե՛ս Գաղատ. 5.22), իսկ պտուղը որթի վրա մնալու արդյունքն է (տե՛ս Հովհ. 15.4): Իսկ մնալը կապված է «Աստծո հանգստության» մեջ մտնելու հետ, ինչի մասին խոսվում է Եբրայեցիների 4-րդ գլխում և աստվածաշնչյան այլ հատվածներում: Հիսուսը մեզ տվեց իր խաղաղությունը (տե՛ս Հովհ. 14.27) և ասաց, որ մենք

«Դադարի՛ր բարկությունից և թո՛ղ սրբամտությունդ մի՛ բարկացիր, որ չար չգործես»:

Սաղմոս 37.8, KJV

չպետք է վախենանք ու անհանգստանանք: Մեկ այլ խոսքերով ասած՝ խաղաղությունը նվեր է մեզ, բայց մեր ընտրությունից է կախված, թե որքանով լցված կլինենք խաղաղությամբ. մենք պետք է մտածենք խաղաղությանը նպաստող բաների մասին, և ոչ թե դուռ բացենք անհանգստության ու մտահոգության առջև:

Աստվածաշնչում կարելի է գտնել մտահոգությունն նկարագրող որոշ բառեր և արտահայտություններ՝ կախված նրանից, թե որ թարգմանությունն է: Աստվածաշնչի Քինգ Ջեյմս տարբերակում «անհանգստանալ» բառը չի օգտագործվում: Սաղմոս 37.8-ում ասված «մի՛ բարկացիր» արտահայտությունից բացի, օգտագործվում են նաև այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «հոգս մի՛ արեք» (Մատթ. 6.25, Փիլիպ. 4.6), «ծեր բոլոր հոգսերը զցեք...» (Ա Պետր. 5.7): Ես հիմնականում օգտագործում եմ «*Աստվածաշնչի Ընդլայնված թարգմանությունը*», որն իր մեջ պարունակում է այս կամ այլ արտահայտությունների տարբեր թարգմանություններ: Հետագայում սույն գլխի մեջ խոսքս առավել պարզեցնելու համար ես կօգտագործեմ «անհանգստանալ» բառը:

«ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Վերստին «անհանգստանալ» բառը սահմանում է հետևյալ կերպ՝ «զգալ դժվարություն կամ տագնապել», «առաջացնել անհանգստություն, մտահոգվել», «կռվի և վրդովմունքի առիթ հանդիսանալ»¹: Ես նաև լսել եմ դրա սահմանումը՝ տանջվել անհանգստացնող մտքերից:

Երբ ես տեսա բառի երկրորդ բացատրությունը, որի մեջ մարդն իրեն տանջում է անհանգստացնող մտքերով, ես անմիջապես որոշեցի ավելի խելամտորեն վարվել: Հավատում եմ, որ դա կարող է անել յուրաքանչյուր քրիստոնյա, որովհետև մենք պետք է ոչ թե ինքներս մեզ տանջանքների ենթարկենք, այլ ավելի լցվենք իմաստությամբ: Անհանգստությունը ոչ մեկին օգուտ չի բերում: Ինչո՞ւ ուրեմն չհրաժարվել դրանից:

«Չկրճատված բառարանը» տալիս է ևս մեկ սահմանում՝ «ատամներով բռնել կոկորդից և թափ տալ կամ խեղդել, ինչպես դա անում են կենդանիները, կամ՝ ուժասպառ անել՝ անդադար խայթելով ու հարձակվելով»²:

Խորհելով այս սահմանման մասին, ես կատարեցի հետևյալ հարաբերակցությունը. սատանան օգտագործում է անհանգստությունը մեր դեմ ճիշտ այնպես, ինչպես նկարագրված է վերևում: Երբ մենք թույլ ենք տալիս, որ անհանգստությունը ժամեր շարունակ չարչարի մեզ, ապա, իսկապես, սկսում ենք զգալ, որ կարծես ինչ-որ մեկը բռնել է մեր կոկորդից ու թափահարում է այնքան, մինչև որ ամբողջությամբ ուժասպառ լինենք անդադար խայթոցներից ու հարձակումներից: Մտքերն ուղեղում կրկին ու կրկին պտտելը նման է հաճախակի խայթոցների և հարձակումների, որը նկարագրված է վերոնշյալ սահմանման մեջ:

Անկասկած, անհանգստությունը սատանայական հարձակում է մարդու ուղեղի վրա: Հավատացյալի գլխում կան մտքեր, որոնք թշնամին ուզում է այնպես անել, որ նա համոզված լինի, որ դրանք երբեք չեն կատարվի: Այդ պատճառով էլ սատանան փորձում է մարդու ուղեղը լցնել սխալ մտքերով, որպեսզի մարդը հնարավորություն չունենա օգտագործել իր միտքն այն նպատակի համար, որ նախասահմանված է Աստուծոց:

Հաջորդ գլուխներում կխոսենք այն մասին, թե ինչպիսի ֆունկցիաներ է կատարում միտքը: Բայց այժմ եկե՛ք շարունակենք խոսել անհանգստության մասին՝ դրա անօգտակարությունը լիովին բացահայտելու համար:

Հիանալի են Մատթեոսի Ավետարանի 6.25-34-րդ խոսքերը, որոնք մենք պետք է կարդանք ամեն անգամ, երբ մեր միտքը գտնվում է անհանգստության հարձակման տակ: Եկե՛ք յուրաքանչյուր խոսքն ուսումնասիրենք առանձնակի, որպեսզի տեսնենք, թե ինչ է ցանկանում Տերն ասել այս կարևոր հարցի վերաբերյալ:

ՉԷ՝ ՈՐ ԿՅԱՆՔՆ ԱՎԵԼԻՆ Է, ՔԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ

«Հետևաբար ասում եմ ձեզ, մի եղեք անընդհատ անհանգիստ [մտահոգ] ձեր կյանքի համար, թե ինչ եք ուտելու կամ ինչ եք խմելու, կամ ձեր մարմնի մասին, թե՛ ինչ եք հագնելու: Չէ՞ որ կյանքն ավելին է [արժեքավոր], քան սնունդն ու մարմինը, և [շատ ավելին ու գերազանց], քան հագուստը»:

Մատթեոս 6.25, AMP

Կյանքը մեզ տրված է որպես մեծագույն արժեք, և մենք պետք է վայելենք այն: Հովհաննեսի Ավետարանի 10.10-ում Հիսուսն ասաց. «Գողը գալիս է միայն, որ գողանա և սպանի ու ոչնչացնի: Ես եկա, որ կյանք ունենաք և է՛լ ավելին ունենաք (այնպես, որ ավերից թափվի)» (AMP): Սատանան փորձում է գողանալ մեր կյանքը տարբեր ձևերով, ու դրանցից մեկն անհանգստությունն է:

Մատթեոսի Ավետարանի 6.25-ը սովորեցնում է մեզ, որ կյանքում գոյություն չունի մի բան, որի համար անհանգստանալու կարիք չի: Աստուծոց մեզ տրված կյանքը հիասքանչ է: Այն իր մեջ ընդգրկում է բոլոր տեսակի նյութական բարիքները, սակայն, եթե մենք սկսում ենք անհանգստանալ դրանց համար, ապա՝ մեզ տրված կյանքի հետ մեկտեղ մենք կորցնում ենք նաև դրանք:

ՉԷ՝ ՈՐ ԴՈՒՔ ԱՎԵԼԻ ԼԱՎՆ ԵՔ, ՔԱՆ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

«Նայե՛ք երկնքի թռչուններին, որ չեն սերմում և ոչ էլ հնձում և ոչ ամբարների մեջ ժողովում, և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց. չէ՞ որ դուք նրանցից ավելի լավն եք»:

Մատթեոս 6.26

Մեզ բոլորիս օգտակար կիներ թռչուններին նայելը. այդպես է մեզ ասել մեր Տերը: Եթե ոչ ամեն օր, գոնե, երբեմն պետք է ժամանակ տրամադրենք մեզ հիշեցնելու, թե որքան լավ են ապահովված մեր փետրավոր «բարեկամները»: Նրանք բացարձակապես չգիտեն, թե որտեղից է գալու իրենց կերակուրը: Եվ ես երբեք չեմ տեսել, որ թռչունը նստի ճյուղի վրա և խիստ մտահոգվի դրա համար:

Մեր Վարդապետի խոսքերի բուն իմաստը շատ պարզ է. «Չէ՞ որ դուք ավելի լավն եք, քան թռչունները»:

Նույնիսկ, եթե ձեր կարծիքը ձեր իսկ մասին բավականաչափ բարձր չէ, հաստատ վստահ եղեք, որ դուք ավելին եք, քան թռչունը: Տեսե՛ք՝ ինչպես է ձեր երկնային Հայրը հոգ տանում նրանց մասին:

ԻՆՉ Է ՁԵՁ ՏԱԼԻՍ ԱՆՎԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«Հիմա ձեզանից ո՞վ կարող է հոգս անելով և անհանգստանալով իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել կամ իր կյանքի ակնթարթը երկարացնել»:

Մատթեոս 6.27, AMP

Խոսքը պարզ և հստակ ասում է, որ անհանգստանալն անիմաստ է: Այն ոչ մի լավ բան չի տալիս: Իսկ եթե դա այդպես է, ուրեմն այլևս ինչո՞ւ անհանգստանալ ու մտահոգվել:

ԻՆՉՈ՞Ւ ԱՆՎԱՆԳՍՏԱՆԱԼ

«Եվ ինչո՞ւ անհանգստանաք հազուստի համար: Նայե՛ք դաշտի շուշաններին և սովորե՛ք, թե ինչպես են դրանք աճում. դրանք չեն աշխատում, և ոչ էլ՝ մանում:

Բայց ասում են ձեզ, որ նույնիսկ Սողոմոնն իր բոլոր շքեղության [գերազանցության, արժանապատվության և շնորհիքի] մեջ չհագնվեց դրանց պես:

Բայց եթե Աստված այդպես շքեղ հագցնում է դաշտի խոտին, որն այսօր կա և վաղը պետք է նետվի վառարանը, մի՞թե ավելի լավ չի հագցնի նաև ձեզ»:

Մատթեոս 6.28-30, AMP

Որպես օրինակ օգտագործելով Իր ստեղծագործություններից մեկը, Տերը հստակ արտահայտում է Իր միտքը, որ եթե ծաղիկը, որը ոչինչ չի անում, բայց այդքան խնամված ու հիասքանչ տեսք ունի և նույնիսկ գերազանցում է Սողոմոնի ողջ մեծափառությանը, ապա, իհարկե, մենք կարող ենք վստահորեն հավատալ, որ Նա կհոգա նաև մեր մասին:

ՈՒՐԵՄՆ ՄԻ՛ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԵՔ ԵՎ ՄԻ՛ ՄՏԱՀՈԳՎԵՔ

«Ուրեմն մի՛ անհանգստացեք և մի՛ մտահոգվեք ասելով՝ ի՞նչ պետք է ուտենք, կամ՝ ի՞նչ պետք է խմենք, կամ՝ ի՞նչ պետք է հագնենք»:

Մատթեոս 6.31, AMP

Կցանկանայի մի քիչ ընդլայնել այս մեջբերումը և նրանում ավելացնել ևս մեկ հարց՝ «Ի՞նչ պետք է անենք»:

Կարծում եմ, որ սատանան դևերին ուղարկում է աշխարհ՝ նրանց հանձնարարելով, որ օրուգիշեր հավատացյալների ականջներից փսփսան այդ արտահայտությունը: Նրանք հավատացյալի մտքում բորբոքում են բարդ հարցեր, իսկ վերջինս վատնում է իր թանկարժեք ժամանակը՝ դրանց պատասխանները գտնելու համար: Սատանան անընդհատ պատերազմ է վարում ռազմի դաշտում, այսինքն՝ մարդու մտքում, հուսալով, որ քրիստոնյան կմտնի այդ երկար ու քայքայիչ պայքարի մեջ: Սատանայի մեզ ուղղված «Ի՞նչ պետք է անենք» հարցի պատասխանը պետք է շատ պարզ լինի. «Ես դեռևս չգիտեմ՝ ինչ եմ անելու իմ այս իրավիճակում, բայց Աստված գիտի, և դա միանգամայն բավական է ինձ. Նա ճիշտ ժամանակին ճիշտ ուղղություն կտա ինձ»:

Ուշադրություն դարձրեք 31-րդ խոսքի այն հատվածին, որտեղ Տերն ասում է, որ չմտահոգվենք կամ չանհանգստանանք: Հիշե՛ք, որ սրտի առատությունից խոսում են շուրթերը (տե՛ս Մատթ. 12.34): Թշնամին գիտի, որ եթե իրեն հաջողվի զբաղեցնել մեր ուղեղը սխալ մտքերով, ապա դրանք, ի վերջո, կվերածվեն բառերի: Մեր բառերը շատ կարևոր են, որովհետև դրանք կան ապացուցում են մեր հավատքի առկայությունը, կան ապացուցում են դրա բացակայությունը:

ՓՆՏՐԵՔ ԱՍՏԾՈՒՆ՝ ՈՉ ԹԵ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

«Հեթանոսներն են ցանկանում, խնդրում ու ջանասիրաբար փնտրում այս ամենը: Քանի որ ձեր երկնային Հայրը գիտի, որ դուք այդ ամենի կարիքն ունեք: Բայց փնտրեք [նպատակ ունեցեք և ձգտեք] նախ և առաջ Նրա թագավորությունն ու Նրա արդա-

րությունը [վարվելու և ճիշտ լինելու Նրա եղանակը], իսկ մնացած ամեն բան կտրվի ձեզ»:

Մատթեոս 6.32,33, AMP

Միանգամայն ակնհայտ է, որ Աստծո զավակները պետք է տարբերվեն աշխարհում: Աշխարհը փնտրում է նյութականը, բայց մենք պետք է փնտրենք Տիրոջը: Եվ եթե մենք դա անենք, Նա խոստացել է մեզ տալ այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք:

Մենք պետք է սովորենք փնտրել Աստծո երեսը:

Մեր երկնային Հայրն Իր զավակներին պարգևներ է տալիս այն ժամանակ, երբ մենք չենք փնտրում դրանք Աստծուց առավել: *Փնտրելը* շատ ուժեղ բառ է, որը նշանակում է «հետապնդել, հետամուտ լինել, տենչալ, փափագել, անդադար ձգտել, աղաչել, ողջ զորությամբ հետևել»: Ինչ-որ բան ուզելն արգելված չէ, բայց մենք պետք է *փնտրենք* միայն Աստծուն, որովհետև առանց Նրա ոչ մի բան արժեք չունի:

Աստված գիտի մեր կարիքները, նախքան դրանց մասին Իրեն հայտնելը: Եթե մենք Նրան հայտնենք մեր կարիքներն ու ցանկությունները (տե՛ս Փիլիպ. 4.6), Նա կկատարի դրանք Իր կողմից նախասահմանված ճիշտ ժամանակին: Անհանգստությունը դրան չի օգնի. այն միայն կօգնի մեր առաջընթացը խոչընդոտելուն:

ԱՊՐԵՔ ԱՅՍՕՐՎԱ ԿՅԱՆՔՈՎ

«Հոգս մի՛ արեք կամ մի՛ անհանգստացեք վաղվա օրվա համար, որովհետև վաղվա համար բավական է իր խնդիրը: Բավական է յուրաքանչյուր օրվա համար իր անհանգստությունը»:

Մատթեոս 6.34, AMP

Ես ցանկանում եմ անհանգստությունը կամ մտահոգությունն այսպես նկարագրել՝ մենք մեր յուրաքանչյուր օրը վատնում ենք՝ վաղվա օրը պատկերացնելու համար: Եկե՛ք սովորենք Աստծուց մեզ տրված ժամանակն օգտագործել նրա վրա, ինչի համար որ Նա սահմանել է դա:

Կյանքը պետք է ապրել, ուրեմն եկե՛ք ապրենք այն հիմա:

Ցավալի է, բայց քչերն են տեղյակ, թե ինչպես պետք է օրն ավելի լիարժեք ապրել և հնարավոր է, որ հենց դուք նրանցից մեկն եք: Հիսուսն ասաց, որ սատանան՝ թշնամին, գալիս է ձեր կյանքը գողանալու համար (տե՛ս Հովհ. 10.10): Թույլ մի՛ տվեք նրան դա անելու: Մի՛ վատնեք ձեր յուրաքանչյուր օրը՝ վաղվա օրվա համար անհանգստանալով: Չէ՞ որ դուք այսօր արդեն բավականաչափ գործեր ունեք անելու: Աստված ձեզ շնորհք է տալիս այսօրվա համար ծրագրավորված ձեր բոլոր գործերն այսօր կատարելու համար: Իսկ վաղվա համար շնորհքը կգա միայն վաղը: Ուստի, մի՛ վատնեք ձեր յուրաքանչյուր օրը:

ՄԻ՛ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԵՔ

«Մի՛ անհանգստացեք կամ մի՛ մտահոգվեք ինչ-որ բանի համար, բայց ցանկացած պարագայում և ամեն ինչում աղոթքի և բարեխոսության միջոցով [հստակ խնդրվածքներով], շնորհակալությամբ շարունակեք ձեր խնդրանքները հայտնի անել Աստծուն»:

Փիլիպեցիների 4.6, AMP

Սա ևս մեկ հիանալի խոսք է, որին պետք է ուշադրություն դարձնել, երբ անհանգստության հարձակում եք ունենում:

Խորհուրդ եմ տալիս ձեզ հնարավորին չափ հաճախ հռչակել Աստծո խոսքը: Այն նման է երկսայրի սրի, որը մենք պետք է օգտագործենք թշնամու դեմ պատերազմելիս (տե՛ս Եբր. 4.12, Եփես. 6.17): Պատյանում դրված սուրը պայքարի ժամանակ չի օգնի:

Աստված մեզ տվել է Իր խոսքը. *օգտագործե՛ք այն*: Անգիր սովորեք նմանօրինակ աստվածաշնչյան խոսքերը և, երբ թշնամին հարձակվի, ապա դիմադրեք դրան այն նույն զենքով, որն օգտագործում էր Հիսուսը՝ *խոսքով*:

ԽՈՐՏԱԿԵՔ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԸ

«[Բանի որ մենք] հերքում ենք փաստերն ու տեսությունները և հավաստիացումները, և ամեն մի հպարտ ու գռռոզ բան, որ ինքն

իրեն բարձրացնում է Աստծո [ճշմարիտ] գիտության դեմ. և մենք գերի ենք վերցնում ամեն մի միտք ու մտադրություն՝ Քրիստոսին [Մեսիային, Օծյալին] հնազանդեցնելու համար»:

Բ Կորնթացիների 10.5, AMP

Երբ ձեզ մոտ մտքերի հարձակում է լինում, որոնք հակառակ են Աստծո խոսքին, ապա սատանային լռեցնելու ամենալավ միջոցը խոսքը հռչակելն է:

Հավատացյալի բերանից դուրս եկած խոսքը միակ արդյունավետ գեներն է, որն ի զորու է հաղթել անհանգստությունն ու տագմապը:

ՁԵՐ ԲՈՒՈՐ ՀՈԳՍԵՐԸ ԱՍՏԾՈ ՎՐԱ ԳՑԵՔ

«Հետևաբար, խոնարհեցրեք ինքներդ ձեզ [իջեցնելով, ցածրացնելով ինքներդ ձեզ ձեր գնահատման մեջ] Ամենակարող Աստծո ձեռքի տակ, որ ճիշտ ժամանակին Նա ձեզ կբարձրացնի:

Գցե՛ք ձեր բոլոր հոգսերը [ձեր բոլոր անհանգստությունը, ձեր բոլոր մտահոգությունները, ձեր բոլոր վրդովմունքները մեկընդմիջտ] Նրա վրա, քանի որ Նա հոգ է տանում ձեզ համար աչալրջությամբ»:

Ա Պետրոսի 5.6,7, AMP

Երբ թշնամին փորձում է խնդիրներ առաջացնել մեր կյանքում, մենք այդ բոլոր հոգսերն Աստծո վրա գցելու արտոնություն ունենք: «Գցել» բառը նշանակում է «կտրուկ նետել, շարտել»: Մենք կարող ենք կտրուկ նետել կամ շարտել մեր բոլոր խնդիրներն Աստծո վրա և, հավատացե՛ք ինձ, Նա կարող է բռնել դրանք. Նա գիտի՝ ինչպես վարվել դրանց հետ:

Այս խոսքը թույլ է տալիս մեզ հասկանալու, որ մեզ խոնարհեցնելը չի նշանակում անհանգստանալ: Մշտապես մտահոգված մարդը համարում է, որ ինքը կարող է ինչ-որ կերպ լուծել իր խնդիրները և ջանում է ելք գտնել իրավիճակից: Հպարտ մարդը կենտրոնացած է իր վրա, իսկ խոնարհը՝ Աստծո: Հպարտ մարդն անհանգստանում է, իսկ խոնարհը՝ սպասում:

Միայն Աստված կարող է ազատել մեզ: Նա ցանկանում է, որ մենք

հստակ իմանանք, որ ինչպիսին էլ լինի իրավիճակը, մենք պետք է վստահենք իրեն և մտնենք իր հանգստի մեջ:

ԱՍՏԾՈՆ ՀԱՆԳԻՍՏԸ

«Ո՛վ մեր Աստված, մի՞թե չես իրականացնի Քո վճիռը նրանց վրա: Մենք զորություն չունենք դեմ կանգնելու հսկայական բանակին, որ գալիս է մեզ վրա: Մենք չգիտենք՝ ինչ անել, այլ՝ մեր աչքերը դեպի Քեզ են ուղղված»:

Բ Մնացորդաց 20.12, AMP

Ես սիրում եմ այս խոսքը: Ժողովուրդը հասկացել էր երեք կարևոր ճշմարտություն՝

1. Նրանք զորություն չունեին թշնամիներին դիմակայելու,
2. Նրանք չգիտեին՝ ինչ անել,
3. Նրանք կարիք ունեին իրենց հայացքը կենտրոնացնելու Աստծո վրա:

Նույն գլխի 15-րդ և 17-րդ խոսքերում տեսնում ենք, որ Աստված սկսում է խոսել այն բանից հետո, երբ նրանք վերջնականապես հասկանում և ընդունում են իրենց Աստծուն. «Մի՛ վախեցեք և մի՛ սարսափեք այդ մեծ բանակից, քանի որ այս պայքարը ձերը չէ, այլ՝ Աստծունը... Դուք չպետք է պայքարեք այս պատերազմում: Գրավե՛ք ձեր դիրքերը, սպասե՛ք և կտեսնեք Աստծո փրկությունը ձեր կյանքում» (AMP):

Որո՞նք են մեր դիրքերը: Դրանցից մեկը երկրպագությունն է, Հիսուսի մեջ մնալը և Աստծո հանգստի մեջ մտնելը: Մյուսը՝ Տիրոջը անդադար սպասելը՝ մեր աչքերը մշտապես կենտրոնացնելով Նրա վրա, Նրա բոլոր պատվերներն իրականացնելը և ակնածալի վախ ունենալով՝ մարմնի ցանկությունների համաձայն չվարվելը:

«Աստծո հանգստի» վերաբերյալ կցանկանայի ասել հետևյալը. առանց դիմադրության «Աստծո հանգիստ» գոյություն չունի: Հեշտ է խաղաղություն ունենալ, երբ չկա դիմադրություն: Անհավատ մարդիկ էլ են խաղաղություն ունենում իրենց կյանքի հեշտ պահերին: Բայց «Աստծո հանգիստը» պարզ և է, որը դժվար պահերին հավատացյալին լցնում է խաղաղությամբ: Դա պարզ և է Աստծուց՝ իր զավակներին:

Խոսքս պատկերավոր դարձնելու համար թո՛ւյլ տվեք պատմել երկու նկարիչների մասին, որոնց խնդրել էին խաղաղությունը պատկերել յուրովի: Մեկը նկարել էր հանգիստ, խաղաղ լիճ, որը գտնվում էր բարձր լեռներում: Իսկ մյուսը պատկերել էր մոլեգնած ջրվեժ՝ կողքին աճող կեչի, որի ճյուղին՝ բնի մեջ, իր հանգիստն էր գտել մի թռչուն:

Նկարներից որո՞ւմ էր իրապես պատկերված խաղաղության նկարագրումը. միանշանակ՝ երկրորդում, քանի որ առանց դիմադրության խաղաղություն գոյություն չունի: Առաջին նկարը պատկերում էր անշարժություն. գուցե նրա համար, որ ամեն բան անխռով էր պատկերված: Մարդիկ կցանկանային գնալ այնտեղ հանգստանալու: Այն գեղեցիկ նկար էր, բայց չէր պատկերում «Աստժո հանգիստը»:

Հիսուսն ասաց. «Ես խաղաղություն եմ ձեզ թողնում: Իմ [սեփական] խաղաղությունն եմ տալիս ձեզ, ոչ թե ինչպես աշխարհն է տալիս...» (Հովհ. 14.27, AMP): Նրա խաղաղությունը հոգևոր խաղաղություն է, և Նրա հանգիստն այն հանգիստն է, որն ազդեցություն ունի ոչ թե հանդարտ եղանակի, այլ՝ փոթորկի վրա: Հիսուսը չեկավ, որ մեր կյանքից հեռացնի բոլոր դիմադրությունները, այլ՝ որ մեզ ուրիշ վերաբերմունք տա մեր կյանքի փոթորիկների նկատմամբ: Մենք պետք է մեզ վրա վերցնենք Նրա լուծը և սովորենք Նրանից (տես Մատթ. 11.29): Սա նշանակում է, որ մենք պետք է սովորենք Նրա ուղիները, և կյանքին նայենք այնպես, ինչպես Հիսուսն է նայում:

Հիսուսը չէր անհանգստանում, ուրեմն մենք նույնպես չպետք է անհանգստանանք:

Եթե դուք ակնկալում եք, որ կգա մի ժամանակ, երբ դուք անհանգստանալու պատճառներ այլևս չեք ունենա, ապա ասեմ, որ շատ երկար եք սպասելու, քանի որ այդ ժամանակը *երբեք* չի գա: Ես վատատես չեմ, պարզապես անկեղծ եմ ձեզ հետ: Մենք ապրում ենք տանջանքներով լի աշխարհում: Դա տիրում է մեր շրջապատում, բայց չպետք է տիրի մեր ներսում:

Մատթեոսի Ավետարանի 6.34-ում գրված է, որ չնտահոգվենք վաղվա օրվա համար, քանի որ յուրաքանչյուր օր ունի իր հոգսերի ծանրությունը: Հիսուսն Ինքն է այս խոսքն ասել, և Նա հաստատ վա-

տատես չէր: Երբ պահում ենք մեր խաղաղությունն ու վայելում ենք Աստծո հանգիստը փոթորկի պահին, դա փառավորում է Աստծուն, որովհետև Նրա գործելու եղանակներն արդյունավետ են:

ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ,

ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԻՑ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ

Երկար տարիներ ես անհանգստանում էի որոշ բաների համար, որոնք փոխելու գործություն չունեի: Ես կցանկանայի ետ բերել այդ տարիները և դրանց վերաբերվել այլ կերպ: Սակայն, հնարավոր չէ ետ բերել ու ինչ-որ բան փոխել Աստծուց տրված այն ժամանակներում, որոնք արդեն անցել են:

Ամուսինս, ընդհակառակը, երբեք չէր մտահոգվում: Կար ժամանակ, երբ դա ինձ ահավոր զայրացնում էր: Նա չէր կիսում ինձ հետ իմ մտահոգությունները, չէր քննարկում ինձ հետ այնպիսի մտահոգիչ հարցեր, ինչպիսիք են՝ ի՞նչ կարող է տեղի ունենալ, եթե Աստված չմիջամտի և չբավարարի մեր կարիքները:

Մեկ անգամ ես նստած էի խոհանոցում և թերթելով նայում էի մեր չեկի գրքույկը: Վայրկյան առ վայրկյան ես ավելի էի մտահոգվում, քանի որ վճարման ենթակա գումարի չափը գերազանցում էր մեր ունեցած գումարի չափին: Իսկ այդ ժամանակ Դեյվը կողքի սենյակում խաղում էր երեխաների հետ: Նրանք մազլցում էին նրա վրայով՝ խառնելով նրա մազերը, իսկ նա հեռուստացույց էր դիտում:

Հիշում եմ՝ ինչպես ես խոսեցի նրա հետ բավականին տհաճ տոնով. «Միգուցե խաղալու փոխարեն միանաս ինձ և փորձես լուծե՞լ այս հարցը»: Նա պատասխանեց. «Եվ, ըստ քեզ, ես ի՞նչ պետք է անեմ»: Ես պատասխան չունեի. ինձ պարզապես կատաղեցրեց այն, որ նա կարող էր զվարճանալ այն ժամանակ, երբ մենք գտնվում էինք ֆինանսական վատ վիճակում:

Դեյվը փորձեց հանգստացնել ինձ: Նա հիշեցրեց, որ Աստված միշտ բավարարել է մեր կարիքները, որ մենք հավատարմորեն կատարում ենք մեր մասը (այսինքն՝ տասանորդ և նվիրատվություններ

ենք տալիս, աղոթում և վստահում ենք Նրան) և, որ Տերը հետագայում էլ կշարունակի կատարել Իր մասը: (Ավելացնեն, որ այն ժամանակ, երբ ես անհանգստանում էի, ի տարբերություն ինձ, Դեյվը վստահում էր Աստծուն): Ես միացա նրան, բայց շուտով անհանգիստ մտքերը կրկին գլուխ բարձրացրին. «Ի՞նչ ենք անելու: Ինչպե՞ս ենք վճարելու այդ հաշիվները: Իսկ եթե...»:

Հետո իմ երևակայության շնորհիվ ես պատկերացրեցի մի սարսափելի տեսարան. մեզ զրկում են ապառիկ առևտրի իրավունքից, մեքենան առգրավվում են, ինչպես ենք ընկերների և հարազատների առջև ստորանում՝ նրանցից ֆինանսական օգնություն խնդրելու դեպքում և այլն: Դուք երբևէ տեսե՞լ եք այդ «ֆիլմը»: Պատահե՞լ է այնպես, որ ձեզ անընդհատ անհանգստացնեն նման մտքերը: Իհարկե, պատահել է, հակառակ դեպքում դուք չէիք կարդա այս գիրքը:

Որոշ մտորումներից հետո, որոնք ինձ վրա նետում էր սատանան, ես վերադառնում էի խոհանոց, հանում էի հաշվիչն ու չեկի գրքույկը և կրկին ընկղմվում մռայլ հաշվարկների մեջ: Կարծում էի, թե որքան երկար նստեմ ու նայեմ դրանց, այնքան հեշտ կգտնեմ պատասխանը, բայց միայն Աստված ունի պատասխանը: Եվ որքան շատ էի նայում այդ հաշիվներին, այնքան ավելի էի վշտանում: Հետո ամեն բան կրկնվում էր նորից: Ես բղավում էի Դեյվի և երեխաների վրա, որովհետև նրանք զվարճանում էին, մինչդեռ ես ինձ վրա էի կրում ողջ «պատասխանատվությունը»:

Իրականում, ոչ ոք ինձանից դա չէր պահանջում: Ես պետք է իմ բոլոր հոգսերը հանձնեի Աստծուն:

Այժմ նայելով ետ՝ հասկանում եմ, որ զուր եմ վատնել այն հրաշալի երեկոները, որոնք Աստված տվել էր ինձ իմ վաղ ամուսնության տարիներին: Նրա կողմից մեզ տրված ժամանակն անգին նվեր է: Բայց ես այն տվեցի սատանային: Չեր ժամանակը պատկանում է ձեզ: Խելամտորեն օգտագործեք այն, և մի՛ անցեք այս նույն ճանապարհով:

Աստված հոգացել է մեր բոլոր կարիքները: Նա դա արել է տարբեր միջոցներով: Նա երբեք մեզ չի թողել, երբեք... Աստված հավատարիմ է:

ՄԻ՛ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԵՔ, ՎՍՏԱՀԵՔ ԱՍՏԾՈՒՆ

«Թող ձեր բնավորությունը կամ բարոյական դիրքորոշումն ազատ լինի փողասիրությունից [ներառյալ ազահությունը, ժլատությունը, հեշտասիրությունը և աշխարհիկ սեփականությունների ցանկությունները], և բավարարված եղեք ձեր ներկայով [կյանքի հանգամանքներով և ինչ-որ հիմա ունեք], քանի որ Նա [Աստված] Ինքն ասաց. «Ես ձեզ երբե՛ք չեմ լքի և չեմ թողնի առանց օգնության: Ես երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք ոչ մի դեպքում ձեզ անօգնական կամ լքված կամ ընկած չեմ թողնի [հանգստացեք, ես պահում եմ ձեզ]»:

Երբայեցիների 13.5, AMP

Աստվածաշնչյան այս հիանալի խոսքը կարող է ձեզ քաջալերել, երբ անհանգստացած եք այն խնդրի շուրջ, թե արդյո՞ք Աստված կլրացնի ձեր բոլոր կարիքները:

Այս խոսքով Տերն ուզում է մեզ ասել, որ մենք չպետք է մտածենք գումարի մասին և այդ հոգսը վերցնենք մեզ վրա, քանի որ Նա կվերցնի դա Իր վրա: Նա խոստացել է, որ երբե՛ք չի թողնի և չի՛ լքի մեզ:

Կատարեք ձեր մասը, և մի՛ փորձեք կատարել Աստծո մասը: Այդ բեռը բավականին ծանր է ձեզ համար, և եթե զգուշություն չցուցաբերեք, այն կարող է ձեզ միանգամայն խորտակել:

Մի՛ անհանգստացեք: «Տիրոջը վստահիր (ապավինիր) և բարին գործիր. ապրիր երկրի վրա ու հետևիր Նրա հավատարմությանը, և դու իրապես կերակրված կլինես» (Սաղմ. 37.3, AMP):

Սա Աստծո խոստումն է:

Գլուխ
13

**Դապապարտող,
քննադատող և կասկածող միտքը**

Դատապարտող, քննադատող և կասկածող միտքը

Մարդիկ շատ տառապանքներ են կրում կյանքում այն պատճառով, որ դատապարտում ու քննադատում են ուրիշներին և նրանց վերաբերվում են կասկածանքով: Սա այն չարիքն է, որ շատերի փոխհարաբերություններն է փչացրել: Եվ ահա պատերազմի դաշտը կրկին միտքն է:

«Մի՛ դատիր, որ չդատվես...»:

Մատթեոս 7.1, KJV

«Ես կարծում եմ, որ...» այս և սրա նման մտքերը կարող են գործիք լինել սատանայի ձեռքում, որը մարդուն պահում է մեկուսացման մեջ: Մարդկանց հաճելի չէ շփվել այնպիսի մարդու հետ, ով իր կարծիքը համարում է անվիճելի: Երբեմն մենք ավելի հակված ենք մարդկանց ասելու մեր կարծիքը, քան լսելու, սովորելու և լավ փոխհարաբերություններ կառուցելու:

Ես ճանաչում էի մի կնոջ, ում ամուսինը մեծահարուստ գործարար էր: Էությանը հանդարտ մարդ լինելով՝ նա քիչ էր խոսում, իսկ նրա կինը ցանկանում էր, որ ամուսինը շատ խոսի: Նա բավականին կրթված անձնավորություն էր: Եվ նրա կինը միշտ բարկանում էր իր ամուսնու վրա այն բանի համար, որ երբ շրջապատում ինչ-որ մեկը սկսում էր զրուցել մի թեմայի շուրջ, ինչից իր ամուսինը քաջատեղյակ էր և կարող էր շատ բաներով կիսվել, նա լռում էր:

Մեկ անգամ նմանատիպ մի երեկոյից հետո տուն վերադառնալով՝ կինը սկսում է կշտամբել ամուսնուն և ասել. «Ինչո՞ւ չմիացար խոսակցությանը և չասացիր նրանց այն ամենն, ինչ դու գիտես այդ մասին: Դու նստել և ձևացնում էիր, թե իբրև ոչինչ չգիտես այդ բնագավառի մասին»:

«Ես գիտեմ այն, ինչ ես գիտեմ», - պատասխանում է ամուսինը,- «Այդ պատճառով էլ լռում էի, ցանկանալով լսել, թե ինչ գիտեն ուրիշներն այդ մասին»:

Կարծում եմ, որ հենց սրանում է թաքնված բիզնեսի մեջ նրա հաջողությունը: Նա իմաստուն մարդ էր: Շատ քչերն են կարողանում հարստանալ առանց իմաստության:

Եվ շատ քչերն են ընկերներ ձեռք բերում, եթե չունեն իմաստություն փոխհարաբերություններ կառուցելու հարցում:

Դատապարտությունը, եսասիրությունը, քննադատությունը հանդիսանում են ցանկացած փոխհարաբերությունների քայքայման ճշգրիտ մեթոդները: Անխոս, սատանան ցանկանում է, որ մենք միայնակ ու լքված լինենք, այդ պատճառով էլ նա հարձակվում է մեր մտքի այդ բնագավառների վրա: Հուսով եմ, որ այս գլուխը կօգնի ձեզ ճանաչել սխալ մտածելակերպը և կտվորեցնի պայքարել կասկածանքի դեմ:

«ԴԱՏԵԼ» ԲԱՌԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Վ.Ե.Վայնի «Հին և Նոր կտակարանների բառերի բացատրական բառարանում» հունարեն «դատաստան» թարգմանված բառը սահմանվում է այսպես՝ «ուրիշների սխալների վրա կայացրած վճիռ», և խաչածն վկայակոչում է «դատապարտում, դատավճիռ» բառը¹: Միևնույն բառարանի համաձայն, հունարեն «դատ» թարգմանված բառը սահմանվում է այսպես՝ «որոշակի կարծիքի ձևավորում» և խաչածն վկայակոչվում է «դատավճիռ, պատիժ» բառի հետ²:

Աստված է այն Միակը, Ով իրավունք ունի դատելու կամ վճիռ կայացնելու ինչ-որ մեկի վերաբերյալ, և երբ մենք որևէ մեկի մասին դատում ենք, ապա ըստ էության, ստանձնում ենք Աստծո դերը:

Զգիտեմ դուք ինչպես, բայց ես այդ իսկ մտքից լցվում եմ Տիրոջ վախով: Ես, իհարկե, ուժեղ մարդ եմ, բայց ընդհանրապես Աստված լինելու կարիք չունեմ: Այս բնագավառներն իմ անհատականության մեծագույն խնդիրն են եղել: Եվ ես հավատում եմ, որ կիսվելով այն

ամենի մասին, ինչ Աստված սովորեցրեց ինձ, օգտակար կլինի ձեզ համար:

Քննադատությունը, սեփական կարծիքներն արտահայտելն ու դատապարտումը կապված են իրար հետ, այդ պատճառով կքննարկենք այս երեք երևույթները որպես հսկայական խնդիր:

Նախկինում ես սիրում էի քննադատել ամեն ինչ և ամենքին: Ես նկատում էի այն, ինչը սխալ էր, և չէի նկատում այն, ինչը ճիշտ էր: Որոշ մարդիկ ավելի շատ են տառապում այս «հիվանդությունից», քան մյուսները: Ոմանք էլ, ընդհակառակը, այնքան են լցված կենսուրախությամբ, որ չեն ցանկանում նկատել այն, ինչն իրենց ուրախություն է պարգևում և ստեղծում լավ տրամադրություն: Հետևաբար, նրանք ուշադրություն չեն դարձնում այն բաներին, որոնք կարող են արգելք հանդիսանալ նրանց ուրախության համար: Մելամխոլիկներն առավել հաճախ, նկատում են հենց սխալը. հիմնականում, նման մարդիկ ուրիշների հետ կիսվում են իրենց բացասական կարծիքներով ու տեսակետներով:

Մենք պետք է գիտակցենք, որ ամեն մարդ կյանքին նայում է այլ կերպ: Մեզ դուր է գալիս ուրիշներին պատմել, թե ինչ ենք մենք մտածում, սակայն հարկավոր է հասկանալ հետևյալը. իմ կարծիքը կարող է ճիշտ լինել ինձ համար, բայց ոչ ձեզ համար, և հակառակը: Իհարկե, մենք բոլորս գիտենք, որ «Մի՛ գողացիր» պատվիրանը ճիշտ է բոլորի համար, բայց ես հիմա խոսում եմ այն բաների մասին, որոնց մենք բախվում ենք ամեն օր և, որոնք իրենք իրենցով ոչ լավն են, ոչ վատը, այլ՝ դրանք պարզապես յուրաքանչյուրի անձնական ընտրության հարցն է: Կարելի է միայն ավելացնել, որ մարդն իրավունք ունի ընտրության ինքնուրույն որոշում կայացնելու՝ առանց որևէ արտաքին միջամտության:

Միևնույն բանի վերաբերյալ ամուսինս և ես ունենք բոլորովին այլ մոտեցում: Մեր տարածայնություններից մեկը մեր տան ձևավորումն է: Չեմ կարող ասել, որ մեր նախասիրությունները տարբերվում են, բայց երբ միասին ցանկանում ենք որևէ կենցաղային իր գնել, ապա պարզվում է, որ Դեյվին դուր է գալիս մի բան, իսկ ինձ՝ մեկ այլ բան:

Ինչո՞ւ: Պարզապես այն պատճառով, որ մենք երկու տարբեր մարդիկ ենք: Նրա կարծիքը ոչ մի բանով վատը չէ իմ կարծիքից, իսկ իմը՝ նրա կարծիքից: Դրանք ուղղակի տարբերվում են միմյանցից:

Ինձ երկար տարիներ էին հարկավոր հասկանալու համար, որ դա նորմալ երևույթ է: Ես երկար ժամանակ կարծում էի, որ եթե Դեյվը ինչ-որ հարցում ինձ հետ համաձայն չէ, ապա նրա մոտ ինչ-որ բան այն չէ: Եվ իհարկե, նախկինում ես նրան միշտ ասում էի, որ ինչ-որ բան սխալ է նրա մոտ, որովհետև նա չի կիսում իմ կարծիքը: Ակնհայտ էր, որ նման խնդիրների նկատմամբ իմ մոտեցումն առաջացնում էր բազում խնդիրներ մեր փոխհարաբերություններում:

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ. «ԵՍ»-Ի ԽՆԴԻՐ

«Եվ հիմա զգուշացնում եմ ձեզ բոլորիդ ինձ տրված այն շնորհքով, որ դուք չգնահատեք ու չմտածեք ինքներդ ձեր մասին բարձր, քան որ կա [չունենաք չափազանց մեծ կարծիք ձեր կարևորության մասին], այլ մտածել պարկեշտ կենալ համաձայն այն հավատքի չափի, որ Աստված տվել է ձեզ»:

Հռոմեացիների 12.3, AMP

Դատելն ու քննադատությունը հպարտության պտուղներ են, որոնք բավականին լուրջ խնդիր են հանդիսանում: Երբ մեր «ես»-ը չափից ավել է լինում, դա ծնում է մի շարք խնդիրներ, որոնց մասին մենք հիմա խոսում ենք: Աստվածաշունչը բազմիցս զգուշացնում է մեզ ամբարտավանության մասին:

Եթե մարդն օժտված է որոշակի կարողություններով, ապա դա միայն այն պատճառով է, որ Աստված է օժտել նրան: Ամբարտավան մարդը, ով իր մասին բարձր կարծիք ունի, մարդկանց վերևից է նայում և նրանց համարում է իրենից ցածր: Նման վերաբերմունքը կամ մտածելակերպը զզվելի է Տիրոջ աչքերին, և այն մեր կյանքերում դուռ է բացում թշնամու համար:

ՍՈՒՐԲ ԵՐԿՅՈՒՂ

«Եղբայրներ՛ր, եթե ինչ-որ մեկը բռնված է ինչ-որ սխալով կամ մեղքով, դուք, որ հոգևոր եք [ովքեր զգայուն են և Հոգով վերահսկվող], պետք է ուղղեք և վերականգնեք նրան, առանց գերազանցության զգացումի և ողջ քնքշությամբ՝ ինքներդ ձեզ ուշադիր լինելով, որ դուք էլ չգայթակղվեք:

Տարեք [համբերեք, կրեք] միմյանց բեռը և բարոյական ծանր սխալները, և այս կերպով կատարեք ու պահպանեք Քրիստոսի [Մեսիայի] օրենքը, և ավարտին հասցրեք այն, ինչ բացակայում է [ձեր հնազանդությունը սրանում]:

Եթե որևէ անձ կարծում է, որ ինքն ինչ-որ մեկն է [չափազանց կարևոր, ում առջև կարելի է խոնարհվել], այնինչ նա ոչինչ է [վերադասության առումով, բացառությամբ իր սեփական գնահատման], ապա նա խաբված է և մոլորված ու ինքն էլ՝ սրիկա»:

Գաղատացիների 6.1-3, AMP

Այս խոսքերի առավել ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես պետք է արձագանքենք ուրիշների թերություններին, ինչպիսի վերաբերմունք պետք է ունենանք դրանց նկատմամբ: Մենք պետք է հպարտության փոխարեն «սուրբ երկյուղ» ունենանք և հատկապես ուշադիր լինենք մարդկանց դատելու կամ քննադատելու հարցում:

Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ, ՈՐ ԴԱՏՈՒՄ ԵՆՔ

«Ո՞վ եք դուք, որ դատում եք և պախարակում ուրիշի ծառային: Թող իր տերը որոշի՝ ծառան կանգնի կամ ընկնի: Եվ ծառան կկանգնի և կբարձրանա, քանի որ Վարդապետը [Տերը] զորավոր է նրան աջակցելու և կանգնեցնելու համար»:

Հռոմեացիների 14.4, AMP

Եկե՛ք այս խոսքը դիտարկենք հետևյալ տեսանկյունից. պատկերացրեք ձեզ մոտ է եկել ձեր հարևանը և հուշում է ձեզ, թե ինչ հագուստ պետք է հագցնեք ձեր երեխաներին դպրոց գնալիս, և ինչ պետք է վերցնեն նրանք իրենց հետ: Ինչպիսի՞ն կլինեն ձեր պատաս-

խանը: Կամ, ենթադրենք, ձեր հարևանն ասում է ձեզ, որ իրեն դուր չի գալիս, թե ինչպես եք մաքրում ձեր տունը: Ի՞նչ պատասխան կտայիք ձեր հարևանին: Վստահ եմ՝ կասեիք, որ դա նրա գործը չէ:

Հենց սրա մասին է այս խոսքը: Մենք բոլորս պատկանում ենք Աստծուն, և նույնիսկ, եթե մենք որոշ թերություններ ունենք, Նա կարող է մեզ վեր բարձրացնել և արդարացնել: Մենք պատասխան ենք տալու Աստծո առջև, և ոչ թե միմյանց, այնպես որ, մենք չպետք է քննադատենք իրար:

Սատանայի նպատակն է դևեր ուղարկել՝ մարդկանց ուղեղները դատապարտող և քննադատող մտքերով լցնելու համար. սա է նրա զբաղմունքը: Հիշում եմ, թե որքան հաճելի էր ինձ համար հետևել այգում կամ մեծ խանութում անցնող-գնացող մարդկանց և մտքում գնահատականներ տալ նրանցից յուրաքանչյուրին, նրանց հագուստին, մազերին, նրանց ուղեկիցներին և այլն: Միշտ չէ, որ մենք կարողանում ենք զսպել մեզ՝ մարդկանց մասին կարծիք ձևավորելիս, թեպետ անպայման չէ, որ արտահայտենք դրանք: Ես համոզված եմ, որ կարող ենք անել այնպես, որ մեր ունեցած կարծիքները չլինեն այդչափ քննադատող:

Ես հաճախ եմ ինձ ասում. «Ձո՛յս, դա քեզ չի վերաբերում»: Հիմնական խնդիրն այն է, որ հաճախ մենք այնքան երկար ենք մտածում ինչ-որ բանի շուրջ, որ հասարակ կարծիքն աճելով վերածվում է դատապարտման: Խնդիրն ավելի է խորանում նաև այն դեպքում, երբ ցանկություն է առաջանում ձեր նկատառումների մասին ինչ-որ մեկին հայտնելու համար, գուցե, նույնիսկ նրան, ում դատապարտում եք: Հետո իրավիճակն ավելի պայթյունավտանգ է դառնում, քանի որ այն կարող է զգալի վնաս հասցնել ինչպես ձեր փոխհարաբերությունների, այնպես էլ հոգևոր բնագավառին: Դուք կարող եք ազատվել նմանատիպ խնդիրներից, եթե սովորեք ասել ինքներդ ձեզ. «Սա ինձ չի վերաբերում»:

Իմ ընտանիքում քննադատությունն ու դատապարտումը եղել են «մշտական հյուրեր»: Կարելի է ասել, որ ես մեծացել եմ դրանց մեջ: Նման պայմաններում հարաբերությունների կառուցելը նույն բանն է,

ինչ՝ կոտրված ոտքով գնդակ խաղալը: Ես փորձում էի «գնդակ խաղալ» Աստծո հետ: Ես ցանկանում էի գործել և մտածել այնպես, ինչպես Նա, բայց չէի կարողանում: Երկար տարիներ ես թշվառ վիճակում էի և միայն հետո իմացա, որ իմ մտքում կային որոշ ամրություններ, բերդեր, որոնց անհրաժեշտ էր կործանել, որպեսզի վարքս հնարավոր լիներ փոխել:

Չիշենք, ձեր վարքը չի փոխվի այնքան ժամանակ, մինչև չփոխվի ձեր միտքը:

Մատթեոսի Ավետարանի 7.1-6 խոսքերը հանդիսանում է աստվածաշնչյան դասական խոսքերից մեկը, որն անդրադառնում է դատելուն և քննադատելուն: Եթե հակված եք ուրիշներին քննադատելու, ապա կարդացեք այս և նմանատիպ հատվածները: Կարդացեք դրանք, կարդացեք բարձրաձայն, օգտագործեք դրանք որպես զենք՝ ուղղված սատանայի դեմ, ով փորձում է ձեր ուղեղում պատնեշներ ստեղծել: Գուցե արդեն երկար տարիներ ձեր մտքում գոյություն ունեցող ամրությունները նա օգտագործում է որպես պատնեշներ:

Եկեք դիտարկենք այս խոսքը և մեկնաբանություն տանք յուրաքանչյուր հատվածին:

ԴԱՏԵԼՈՒ «ՑԱՆՔԻ ԵՎ ՀՈՒՆՁՔԻ» ՍԿՁԲՈՒՆՔԸ

«Մի՛ դատիր և քննադատիր և դատապարտիր ուրիշներին, և ինքդ չես լինի դատված և քննադատված և դատապարտված: Քանի որ դուք ինչպես դատում, քննադատում և դատապարտում եք ուրիշներին, այնպես էլ դուք կլինեք դատված, քննադատված և դատապարտված, և ինչ չափով որ չափեք [չափել եք] ուրիշներին, նույն չափով կչափվեք դուք»:

Մատթեոս 7.1,2, AMP

Այս հատվածներն աներկբայորեն խոսում են նրա մասին, որ մենք հնձելու ենք այն, ինչ ցանում ենք (տե՛ս Գաղատ. 6.7): «Ցանքի և հունձքի» սկզբունքը գործում է ոչ միայն գյուղատնտեսության կամ ֆինանսների բնագավառում, այլ նաև մտքի: Մենք կարող ենք ցանել և հնձել որոշակի վերաբերմունք:

Ինձ ծանոթ հովիվներից մեկը հաճախ է ասում. «Երբ ես իմանում եմ, որ ինչ-որ մեկը դատում կամ վատ է արտահայտվում իմ մասին, ես հարցնում եմ ինքս ինձ՝ այդ նա՞ է ցանում, թե՞ ես եմ հնձում»: Հաճախ մենք մեր կյանքում հնձում ենք այն, ինչ նախկինում ցանել ենք ուրիշների կյանքում:

ԲԺԻՇԿ, ԲԺՇԿԻՐ ԻՆՔԴ ՔԵՁ

**«Ինչո՞ւ եք նկատում ձեր եղբոր աչքի միջի շյուղը, բայց չեք զգուշանում ու նկատի առնում ձեր աչքի միջի չորսու գերանը:
Կամ ինչպե՞ս եք կարողանում ձեր եղբորն ասել՝ թույլ տուր հանել աչքիցդ այդ շյուղը, երբ քո աչքի մեջ չորսու գերան կա:
Կեղծավո՞ր, նախ՝ դուրս հանիր այդ գերանը քո աչքից, և հետո կկարողանաս տեսնել՝ ինչպես հանել եղբորդ աչքի շյուղը»:**
Սատթեսու 7.3-5, AMP

Սատանան հաճույք է ստանում, երբ մեր միտքը պահում է զբաղված վիճակում՝ մտովի դատելով ուրիշներին իրենց թերությունների համար: Այդպես վարվելով՝ մենք չենք նկատում մեր թերությունները և ոչինչ չենք ձեռնարկում՝ դրանցից ձերբազատվելու համար:

Մենք չենք կարող փոխել մարդկանց. դա կարող է անել միայն Աստված: Մենք չենք կարող փոխել ինքներս մեզ, բայց մենք կարող ենք համագործակցել Սուրբ Հոգու հետ և թույլ տալ Նրան՝ մեզանում աշխատանք տանելու: Թերություններից ազատվելու առաջին քայլը՝ ազնվորեն ընդունելն է այն ճշմարտությունը, որը Տերը փորձում է ցույց տալ մեզ:

Երբ մտածում և խոսում ենք այն մասին, թե որքան սխալ են վարվում ուրիշները, մենք սովորաբար խաբում ենք ինքներս մեզ մեր իսկ վարքի հարցում: Այդ պատճառով էլ Հիսուսն ասում է մեզ, որ մեր ուղեղները չզբաղեցնենք նրանով, թե ինչ է կատարվում ուրիշների հետ: Նախ և առաջ, թույլ տվեք Աստծուն՝ լուծել ձեր թերությունների հարցերը, իսկ հետո դուք կկարողանաք յուրացնել հոգևորում աճելու ձգտում ունեցող քրիստոնյաներին օգնելու մեթոդները:

ՍԻՐԵՔ ՄԻՄՅԱՆՑ

«Մի՛ նետեք շների առջև այն, ինչ սուրբ է [սրբություն], և մի՛ նետեք խոզերի առջև ձեր մարգարիտները, որպեսզի չլինի այնպես, որ տրորեն դրանք իրենց ոտքերով և ձեզ վրա ցատկեն ու ձեզ պատառոտեն»:

Մատթեոս 7.6, AMP

Ես կարծում եմ, որ այստեղ խոսվում է միմյանց սիրելու այն կարողության մասին, որով Աստված օժտել է մեզ:

Եթե մեզ տրված է միմյանց սիրելու այդ կարողությունը, և Աստված պատվիրել է մեզ դա անել, իսկ մենք փոխարենը դատում և քննադատում ենք մարդկանց, ապա մենք վերցնում ենք այն, որ սուրբ է (սերը), և նետում ենք շների ու խոզերի (չար ոգիների) առջև: Մենք դուռ ենք բացում նրանց առջև՝ թույլ տալով տրորել ու պատառոտել սուրբ բաները:

Մենք պետք է գիտակցենք, որ «սիրո մեջ ապրելը» պաշտպանություն է դիվային հարձակումներից: Ես համոզված եմ, որ սատանան չի կարող մեծ վնաս հասցնել նրան, ով իսկապես ապրում է սիրո մեջ:

Երբ ես հղի էի չորրորդ երեխայով, ես արդեն քրիստոնյա էի, մկրտված էի Սուրբ Յոզով և կանչված էի ծառայելու: Ես արդեն բավականին գիտելիքներ ունեի հավատքով բժշկություն ստանալու մասին: Հղիության առաջին երեք ամիսների ընթացքում ես ինձ շատ վատ էի զգում: Ես նիհարում և ուժասպառ էի լինում: Հիմնականում ժամանակս անցկացնում էի բազմոցին պառկած, որովհետև ուժեղ սրտխառնոցներ էի ունենում: Ես ինձ այնքան հոգնած էի զգում, որ հազիվ էի կարողանում շարժվել:

Այս վիճակն ինձ շատ էր տխրեցնում, քանի որ առաջին երեք հղիությունների ժամանակ ես ինձ զգացել եմ հիասքանչ: Այն ժամանակ ես դեռ շատ լավ չգիտեի Աստծո խոսքը: Թեև հաճախում էի եկեղեցի, բայց չգիտեի՝ ինչպես օգտագործել հավատքը՝ Աստծուց ինչ-որ բան ստանալու համար: Իսկ այժմ արդեն քաջ ծանոթ եմ Աստծո խոստումներին, բայց հիվանդ ժամանակ ո՛չ մի աղոթք, դևերին ուղղված ո՛չ մի հակառակություն չէր օգնում ինձ:

Մեկ օր անկողնունս պառկած լսում էի, թե ինչպես է Դեյվը խաղում երեխաների հետ: Բավականին ագրեսիվ տոնով ես դիմեցի Աստծուն. «Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ: Ինչո՞ւ եմ ես ինձ այսքան վատ զգում: Ինչո՞ւ է չեմ առողջանում»:

Սուրբ Յոզիմ ինձ հուշեց կարդալ Մատթեոսի 7-րդ գլուխը: Ես հարցրի Տիրոջը, թե ի՞նչ կապ ունի այդ գլուխն իմ և իմ առողջության հետ: Ինձ թվում էր, որ ես այն պետք է կարդայի կրկին ու կրկին: Ի վերջո, Աստված ինձ հիշեցրեց մի իրադարձություն, որը տեղի էր ունեցել մի քանի տարի առաջ:

Ես Աստվածաշնչյան դաս էի անցկացնում իմ տանը, և շատերի հետ միասին դասի էր գալիս նաև մի երիտասարդ կին, որին մենք կկոչենք Ջեյն: Նա մեր ծառայությունների հավատարիմ այցելուներից էր, բայց հղիանալուց հետո չէր կարողանում կանոնավոր կերպով գալ դասի, քանի որ իրեն միշտ թույլ ու հոգնած էր զգում:

Այդ օրն անկողնունս պառկած ես հիշեցի ևս մեկ այլ կնոջ, ում հետ մենք խոսել էինք Ջեյնի մասին: Մենք քննադատել էինք նրան՝ ասելով, որ նա «պարզապես չի ցանկանում հավաքել իրեն», դառնալ ավելի ջանասեր՝ դասերին հաճախելու հարցում: Մեր մտքով անգամ չէր անցել նրան ինչ-որ օգնություն առաջարկել: Մենք ուղղակի կարծիք էինք ձևավորել, որ նա «թույլի» մեկն է և հղիությունն օգտագործում է իր ալարկոտությունն ու թերությունները ծածկելու համար:

Այժմ ես գտնվում էի նույն վիճակում, ինչ իրավիճակում Ջեյնն էր երկու տարի առաջ: Աստված ցույց տվեց ինձ, որ թեև առաջին երեք հղիությունների ընթացքում ես ինձ լավ էի զգում, հետո ամեն բան փոխվեց, քանի որ դուռ էի բացել սատանայի համար՝ քննադատելով ու դատապարտելով ուրիշին: Ես վերցրել էի իմ մարգարիտները, սուրբ բաները (Ջեյնին սիրելու իմ կարողությունը) և դրանք նետել էի շների ու խոզերի առջև: Այդ պատճառով էլ նրանք սկսել էին պատահոտել ինձ: Ասեմ, որ ես անմիջապես ապաշխարեցի: Եվ դա անելուց անմիջապես հետո իմ առողջությունը վերականգնվեց, իսկ հղիության հետագա ամիսներին ես ինձ հիանալի էի զգում:

Այս դեպքը մեծ դաս եղավ ինձ համար: Ես հասկացա, թե որքան

վտանգավոր է ուրիշներին դատելն ու քննադատելը: Ես ուրախությամբ կցանկանայի ասել, որ այս փորձը բավական էր, որպեսզի ես այլևս նման սխալ թույլ չտայի, բայց, ցավոք, դա այդպես չէ: Ես հետո նմանատիպ շատ ավելի սխալներ թույլ տվեցի, և ամեն անգամ Աստված աշխատում էր ինձ հետ, ինչի համար ես խորապես երախտապարտ եմ Նրան:

Մենք *բուրբու* ենք սխալներ գործում: Մենք *բուրբու* ունենք թույլ կողմեր: Աստվածաշնչում ասվում է, որ մենք չպետք է խստասրտորեն, քննադատաբար վերաբերվենք միմյանց, այլ պետք է ներենք և միմյանց հանդեպ ողորմած լինենք, ինչպես Աստված էլ Քրիստոսով մեզ ներեց (տե՛ս Եփես. 4.32):

ԴԱՏԵԼԸ ՏԱՆՈՒՄ Է ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ

«Ուստի, դուք չունեք ոչ մի արդարացում կամ պաշտպանություն: Ո՛վ մարդ, ո՞վ ես դու, որ դատում ու դատապարտում ես ուրիշին: Եվ ինչպես դատում ու դատավճիռ ես կայացնում ուրիշի համար, դու ինքդ ես քեզ դատապարտում: Քանի որ դատում ես, սովորաբար կիրառում ես նույն բաները [դու պախարակում ու մեղադրում ես]»:

Հռոմեացիների 2.1, AMP

Այլ կերպ ասած՝ այնպես, ինչպես մենք դատում ենք ուրիշներին, այդպես էլ կդատվենք նաև մենք:

Մեկ անգամ այս սկզբունքը հասկանալու համար Տերն ինձ մի լավ օրինակ բերեց: Ես խորհում էի, թե ինչու է մեր արած բանը մեր աչքին հիասքանչ թվում, իսկ երբ մեկ ուրիշն է այդ նույն բանն անում, դատում ենք նրան: Նա ասաց. «Ձո՛յս, դուք ձեզ նայում եք վարդագույն ակնոցների միջով, իսկ ուրիշներին՝ խոշորացույցի»:

Մենք մեր վարքն արդարացնում ենք, բայց երբ մեկ ուրիշն է վարվում այդպես, մենք երբեմն դառնում ենք դաժան: Ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեն (տե՛ս Մատթ. 7.12): Սա լավ սկզբունք է, և եթե մենք հետևենք սրան, այն մեզ զերծ կպահի բազում դատապարտությունից ու քննադատությունից:

Դատող մտածելակերպը բացասական մտածելակերպի ճյուղերից է, որ ավելի շատ հակված է անհատի մեջ տեսնել սխալը, քան ճիշտը:

Եղի՛ր լավատես, ոչ թե վատատես:

Դա ուրիշների համար լավ կլինի, իսկ ձեզ համար՝ օգտակար:

ԶԳՈՒՇԱՑԻՐ ՍՐՏԻԴ ՀԱՄԱՐ

«Ամեն զգուշությունից առավել զգուշացիր քո սրտին, որ նրանից է կյանքի ելքը»:

Առակաց 4.23

Եթե ուզում եք, որ կյանքը հոսի ձեզանում, ուրեմն պահպանեք ձեր սիրտը:

Կան որոշ մտքեր, որոնք պետք է «անընդունելի» լինեն հավատացյալի համար. դրանց շարքում են դատապարտող ու քննադատող մտքերը: Այն ամենն, ինչ Աստված ցանկանում է մեզ հայտնել, մեր բարօրության և երջանկության համար են: Նրա ճանապարհներին հետևելը մեր կյանքը կլցնի պտղաբերությամբ, իսկ սատանայի ճանապարհներին հետևելը՝ անպտղաբերությամբ:

ԿԱՍԿԱԾԱՆՔՈՎ ՎԵՐԱԲԵՐՎԵՔ ԿԱՍԿԱԾԱՆՔԻՆ

«Սերը դիմանում է ամեն ինչին, որ գալիս է, և միշտ պատրաստ է հավատալու ամեն անձի մեջ գոյություն ունեցող լավագույնին»:

Ա Կորնթացիների 13.7, AMP

Ես անկեղծորեն խոստովանում եմ, որ այս խոսքին հնազանդվելը միշտ դժվար է եղել ինձ համար: Ես դաստիարակվել եմ կասկածանքի մեջ: Ինձ սովորեցրել են չվստահել ամեն մեկին, հատկապես նրանց, ովքեր ձգտում են լինել լավ ու բարի, քանի որ միգուցե այդ ամենն անելով նրանք քողարկում են ինչ-որ բան ցանկանալու իրենց նկատառումները:

Բացի այն, որ ինձ սովորեցրել էին կասկածել մարդկանց՝ իրենց

դրդապատճառներով, ես որոշ մարդկանցից հիասթափվել էի: Եվ սա տեղի էր ունեցել ոչ միայն իմ քրիստոնյա դառնալուց առաջ, այլև հետո: Մտորելով սիրո բաղադրիչների մասին և հասկանալով, որ սիրող մարդը միշտ հավատում է լավագույնին, օգնեց ինձ խորապես զարգացնելու մի նոր մտածելակերպ:

Եթե ձեր միտքը թունավորված է, կամ սատանան բերդեր է կառուցել ձեր մտքում, ապա անհրաժեշտ է նորոգել այն Աստծո Խոսքի համաձայն: Սա կատարվում է Խոսքի հաճախակի ընթերցանության շնորհիվ և դրա մասին մտորելով (խորհելով, ինքդ քո ներսում այն կրկնելով, մտածելով դրա մասին):

Մեր մեջ բնակվում է հրաշալի Սուրբ Հոգին, Ով զգուշացնում է մեզ, երբ մեր մտքերը շեղվում են: Աստված այդպես է վարվում ինձ հետ, երբ սիրելու մտքերով լցվելու փոխարեն ես լցվում եմ կասկածանքով: Մարդը հակված է մտածելու. «Եթե ես վստահեմ մարդկանց, նրանք ինձ կչարաշահեն»: Դա հնարավոր է, բայց այն օգտակար փաստը, որ դուք վստահում եք որևէ մեկին, կգերազանցի ձեր բոլոր բացասական վերապրումները:

Վստահությունն ու հավատքը կյանքը լցնում են ուրախությամբ և օգնում են փոխհարաբերություններին՝ հասնելու իրենց առավելագույն մակարդակին:

Կասկածանքը վնասում և, սովորաբար, քանդում է փոխհարաբերությունները:

Աստվածային մեթոդները գործում են, իսկ մարդկայինը՝ ոչ: Աստված դատապարտում է քննադատությունը, դատելը, կասկածամտությունը, և մենք նույնպես պետք է այդպես վարվենք: Պետք է սիրենք այն, ինչ Աստված է սիրում, և ատենք այն, ինչ Նա է ատում, ընդունենք այն, ինչ Նա է ընդունում, մերժենք այն, ինչ Նա է մերժում:

Հավասարակշռված վերաբերմունքը լավագույն քաղաքավարությունն է: Սա չի նշանակում, որ մարդկանց հետ գործ ունենալիս մենք չպետք է օգտագործենք մեր իմաստությունն ու զանազանելու կարողությունը: Մենք չպետք է մեր սիրտը բացենք առաջին իսկ հանդիպած մարդու առջև և թույլ տանք նրան՝ միջամտել մեր կյանքին:

Մյուս կողմից՝ մենք չպետք է մարդկանց նայենք բացասաբար, կասկածանքով, միշտ ակնկալելով, որ մեկը կփորձի չարաշահել մեզ:

ԼԻՈՎԻՆ ՎՍՏԱՀԵՔ ԱՍՏԾՈՒՆ, ԻՍԿ ՄԱՐԴՈՒՅ ԶԳՈՒՇԱՑԵՔ

«Բայց երբ Նա երուսաղեմում էր Ձատկի տոնի առթիվ, շատերը հավատացին Նրա անվանը [նույնացնելով իրենց Նրա խմբի հետ], երբ տեսան Նրա նշանները [հրաշքները], որոնք Նա անում էր:

Բայց Հիսուսն [Իր հերթին] Իրեն չէր վստահում ոչ մեկին, քանի որ գիտեր նրանց [բոլորին]:

Եվ Նա կարիք չունեի որևէ մեկի, ով կվկայեր մյուսի մասին [կապացուցեր մեկ ուրիշի մասին], քանի որ Նա Ինքը գիտեր, թե ինչ է կատարվում մարդկային էության մեջ: [Նա կարողանում էր կարողալ մարդկանց սրտերը]»:

Հովհաննես 2.23-25, AMP

Մեկ անգամ ես հայտնվեցի եկեղեցական մի տիաճ իրավիճակի մեջ, և Աստված իմ ուշադրությունը սևեռեց Հովհաննեսի Ավետարանի 2.23-25-րդ խոսքերի վրա:

Այս հատվածը խոսում է Հիսուսի և Նրա աշակերտների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների մասին և մի քանի անգամ հստակորեն նշում, որ Հիսուսն Իրեն չէր վստահում Իր աշակերտներից: Սա չի ասում, որ Նա կասկածանքով էր վերաբերվում նրանց, կամ՝ որ Նա չէր վստահում նրանց: Սա պարզապես բացատրում է, որ իմանալով մարդու էությունը (որը բնորոշ է բոլորիս), Նա Իրեն չէր վստահում Իր աշակերտներից՝ Իր հավասարակշռությունը պահելու համար:

Ես լավ դաս քաղեցի սրանից: Եկեղեցում ես մի ցավոտ միջադեպ ունեցա, որովհետև շատ էի վստահել մի խումբ կանանց և այդպիսով կորցրել իմ հավասարակշռությունը: Ամեն անգամ, երբ կորցնում եմք այն, մենք դուռ ենք բացում սատանայի համար:

Պետրոսի առաջին թղթի 5.8-ում ասվում է. «Հավասարակշռված եղե՛ք (ողջամիտ, ունեցե՛ք սթափ միտք), զգո՛ն և զգույշ եղե՛ք ամեն

Ժամանակ, քանի որ ձեր թշնամին՝ սատանան, ինչպես (սոված) առյուծ, մռնչյունով ման է գալիս՝ փնտրելով մեկին, որ բռնի և կուլ տա» (AMP):

Ես հասկացա, որ ապավինել եմ այդ մի խումբ կանանց և նրանց եմ վստահել, փոխարենը որ պետք է ապավինեի և վստահեի միայն Աստծուն: Մարդկանց հետ փոխհարաբերություններում չպետք է գնալ շատ հեռու: Եթե շարունակենք առաջ գնալ առանց իմաստության՝ խնդիրներն անխուսափելի կլինեն, իսկ մենք՝ վիրավորված:

Միշտ ձեր ամբողջ վստահությունը դրեք միայն Աստծո վրա: Այսպես վարվելով դուք դուռ կբացեք Սուրբ Հոգու համար, Ով կզգուշացնի ձեզ, երբ անցնեք հավասարակշռության այդ գիծը:

Որոշ մարդիկ կարծում են, որ կարողանում են զանազանել մարդկանց, երբ կասկածներ են ունենում: Բայց գոյություն ունի Սուրբ Հոգու մի պարզև, որը կոչվում է հոգիների զանազանման պարզև (տե՛ս Ա Կորնթ. 12.10): Այն զանազանում է ոչ թե միայն վատը, այլ՝ թե՛ լավը, թե՛ վատը: Կասկածանքը ծնվում է չնորոգված մտքում, իսկ զանազանումը՝ նորոգված հոգում:

Աղոթե՛ք ձեր հոգում պարզևներն ունենալու համար: Մի՛ փորձեք մարմինը զարդարել Հոգու պարզևներով: Հոգևոր ճշմարիտ զանազանումը մարդուն դրդում է աղոթքի, ոչ թե բամբասանքի: Եթե բուն խնդիրը զանազանվում է իսկական պարզևի շնորհիվ, ապա այն կվարվի սուրբգրային խոսքերի և ոչ թե մարմնի համեմատ՝ խնդիրն ավելի խառնելով:

ԲԱՐԻ ԽՈՍՔԵՐԸ ՔԱՂՅՐ ԵՆ ՈՒ ԲԺՇԿԱՐԱՐ

**«Իմաստունի սիրտն իմաստուն է անում նրա բերանը, և նրա շրթունքների վրա ուսում է ավելացնում:
Մեղրի խորիսխ է վայելուչ խոսքը, քաղցր է հոգուն և բժշկություն՝
ոսկորներին»:**

Առակաց 16.23,24

Խոսքերն ու մտքերը նման են ոսկորին ու ոսկրածուծին. դրանք

իրար այնքան մոտ են, որ դժվար է առանձնացնելը (տե՛ս Եբր. 4.12):

Մեր մտքերը մեր լուռ խոսքերն են, որոնք լսելի են միայն մեզ և Տիրոջը: Այդ բառերն իրենց ազդեցությունն ունեն մեր ներքին մարդու, առողջության, ուրախության և մեր վերաբերմունքի վրա: Հաճախ մեր մտքերն արտահայտվում են մեր խոսքերով: Եվ, ցավոք, երբեմն դրանց պատճառով մենք հայտնվում ենք հիմար դրության մեջ: Դատապարտումը, քննադատությունն ու կասկածանքը երբեք ուրախություն չեն բերում:

Հիսուսն ասաց, որ Ինքը եկել է մեզ կյանք և էլ ավելին տալու համար (տե՛ս Հովհ. 10.10): Գործածե՛ք Քրիստոսի միտքը, և այն ձեզ կմտցնի բոլորովին նոր կյանքի մեջ:

Գլուխ
14

Պատիվ միտքը

Պասիվ միտքը

Այս խոսքն, անշուշտ, ճիշտ է պասիվության բնագավառի վերաբերյալ: Շատ քրիստոնյաներ նույնիսկ ծանոթ չեն այս արտահայտությանը և չեն էլ իմանում՝ ինչպես ճանաչել դրա ախտանիշները:

Պասիվությունը ակտիվության հակառակն է: Սա վտանգավոր խնդիր է, որովհետև Աստծո խոսքը հստակ սովորեցնում է մեզ՝ լինել սթափ, զգույշ և ակտիվ (տե՛ս Ա Պետր. 5.8), որպեսզի լինենք կրակոտ և բորբոքենք մեր ներսում եղած պարզևները (տե՛ս Բ Տիմոթ. 1.6, AMP):

Ես կարդացել եմ «պասիվություն» բառի տարբեր սահմանումներ և այն կբնութագրեմ որպես ցանկության բացակայություն, ընդհանուր անտարբերություն, սառնություն և ծուլություն: Պասիվության ետևում կանգնած են չար ոգիները: Սատանան գիտի, որ անգործության, անհավեսության միջոցով նա հավատացյալին կթելադրի իր սուտը: Որքան մարդն իր կամքով դիմադրի չարին, այնքան թշնամին չի կարողանա հաղթել այդ պատերազմը: Այնուհանդերձ, եթե նա գտնվում է պասիվ վիճակում, նա միանգամայն լուրջ խնդիր ունի: Բավականին շատ հավատացյալներ, ինչ-որ իրավիճակներում, վարվում են զգացմունքներից դրդված: Եթե նրանք տրամադրություն չունեն ինչ-որ բան անելու համար, ապա չեն անում: Նրանք միայն զգացմունքներից դրդված են փառաբանում Աստծուն կամ պահում իրենց խոստումը: Այլ կերպ ասած՝ նրանք ոչինչ չեն անի, եթե ոչինչ չզգան:

«Իմ ժողովուրդը բնաջինջ եղավ գիտություն չլինելու համար...»:

Ովսէ 4.6

ԱԶԱՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԿ ՏԵՂ Է

«Տեղ մի՛ տվեք սատանային»:

Եփեսացիների 4.27, KJV

Սովորաբար սատանան մեր կյանքում գրավում է այն տեղը, որը դատարկ է: Դատարկ և պասիվ միտքը կարող է հեշտությամբ լցված լինել տարբեր սխալ գաղափարներով:

Պասիվ մտածելակերպով և սխալ մտքերին չդիմադրող հավատացյալը հաճախ դրան վերաբերվում է որպես իր սեփական մտքերի: Նա չի հասկանում, որ չար ոգին է այդ մտքերով լցնում իր ուղեղը:

Ձեր միտքը սխալ մտածողությունից զերծ պահելու միջոցներից մեկը՝ այն ճիշտ մտքերով լցնելն է: Դուք կարող եք քշել սատանային, բայց նա շարունակում է շրջել ու դատարկ տեղեր փնտրել: Երբ նա վերադառնում է իր նախկին տեղն ու այն գտնում դատարկ, ապա, ինչպես ասում է Աստվածաշունչը Դուկասի Ավետարանի 11.24-26-րդ խոսքերում, իր հետ բերում է այլ չար ոգիների, և մարդու վիճակն ավելի վատ է լինում, քան նախկինում էր:

Ես չեմ ասում, որ ով ունի վատ մտքեր՝ լցված է չար ոգով: Բայց, սովորաբար, չար ոգին է կանգնած վատ մտքերի ետևում: Մարդը կարող է բազմիցս ջախջախել մտքում կառուցված պատկերացումները, բայց դրանք կրկին ու կրկին կվերադառնան, մինչև որ նա սովորի իր մտքի դատարկ տարածքները լցնել ճիշտ մտքերով: Երբ թշնամիմ վերադառնում է, նա չպետք է որևէ ազատ տեղ գտնի իր համար:

Գոյություն ունեն ագրեսիվ մեղքեր (երբ մենք կատարում ենք դրանք), և պասիվ մեղքեր (երբ մենք չենք կատարում այն, ինչ պետք է կատարենք): Այլ խոսքերով՝ կան սխալ բաներ, որոնք մենք անում ենք, և կան ճիշտ բաներ, որոնք մենք չենք անում:

Օրինակ՝ փոխհարաբերությունները կարող են քանդվել մեր չմտածված խոսքերի պատճառով, բայց դրանք կարող են քանդվել նաև այն դեպքում, երբ մենք չենք ասում այն լավ և շինություն տվող խոսքերը, որոնք հարկավոր է ասել մարդկանց:

Պասիվ մարդը մտածում է, որ ոչինչ չանելով, ինքը ոչ մի վատ բան

չի անում: Դեմ առ դեմ դուրս գալով իր սխալին, նա ասում է. «Բայց ես ոչինչ չեմ արել»: Նրա վերլուծումը ճիշտ է, բայց նրա վարքը՝ ոչ: Խնդիրն առաջացել է, որովհետև նա ոչինչ չի արել:

ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՊԱՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Տարիներ շարունակ իմ ամուսին Դեյվը խնդիրներ ուներ պասիվության հետ: Որոշ բաներում նա շատ ակտիվ էր. ամեն օր գնում էր աշխատանքի, շաբաթ օրերին գոլֆ էր խաղում, իսկ կիրակի օրերին՝ ֆուտբոլ նայում: Բայց մնացած ամեն ինչում չափազանց դժվար էր նրան ստիպել՝ որևէ բան անել: Եթե ես կարիք էի ունենում պատից նկար կախելու՝ դա կարող էր նրանից պահանջել երեք կամ չորս շաբաթ: Սա մեծ խնդիրներ էր առաջացնում մեր փոխհարաբերություններում: Ինձ թվում էր, որ նա անում է միայն այն, ինչ ինքն է ուզում, և ուրիշ ոչինչ:

Դեյվը սիրում էր Տիրոջը, և երբ նա խնդրել էր նրան՝ օգնել այդ խնդիրը լուծելու հարցում, Աստված հայտնել էր նրան, թե որքան վտանգավոր է պասիվությունը: Նա հասկացել էր, որ իր անգործության ետևում կանգնած էին չար ոգիները: Նրա կյանքում կային բնագավառներ, որտեղ նա ոչ մի խնդիր չուներ, քանի որ այդտեղ իրականացնում էր իր կամքը: Բայց մյուս բնագավառներում Դեյվն իր պասիվության պատճառով իր կամքը ենթարկել էր թշնամու կամքին: Նա հարստահարված էր այդ բնագավառներում և չուներ որևէ խնդիր լուծելու ո՛չ ցանկություն, ո՛չ էլ դրդապատճառ:

Աստծո խոսքի ուսումնասիրությունն ու աղոթքն այն երկու բնագավառներն էին, որտեղ նա նույնպես պասիվ էր: Իմանալով, որ նա Աստծուց առաջնորդվելու ձգտում չուներ, ես չէի կարողանում նրան հնազանդ լինել. ես ապստամբում էի: Ակնհայտ է, որ սատանան օգտագործում էր մեր թույլ կողմերը միմյանց դեմ: Շատ ամուսնական զույգեր են ամուսնալուծվում սրա պատճառով: Նրանք իրականում չեն հասկանում, թե ինչ է կատարվում:

Ես բավականին ազդեսիվ էի և անընդհատ Աստծուց առաջ էի վազում, վարվում էի մարմնի համեմատ՝ սեփական եղանակներով և

ակնկալելով, որ Աստված պետք է օրհնի: Իսկ Դեյվը Տիրոջից սպասելուց բացի ուրիշ ոչինչ չէր անում, ինչն ինձ սարսափեցրեց՝ զայրացնում էր: Այժմ մենք ծիծաղում ենք՝ հիշելով, թե ինչպիսին էինք առաջ: Բայց հիմա դա ծիծաղելի չէր լինի, եթե այն ժամանակ Աստված մեր ուշադրությունը չուղղեր նրա վրա, ինչի պատճառով մենք, միգուցե հիմա, լինեինք այն անուսնալուծված զույգերից մեկը:

Դեյվն ասում էր ինձ, որ ես անընդհատ Աստուծուց առաջ եմ ընկնում, իսկ ես պատասխանում էի, որ ինքը տասը մղոն ետ է ընկել Աստուծուց: Ես չափազանց ակտիվ էի, իսկ Դեյվը՝ չափազանց պասիվ:

Եթե հավատացյալը պասիվ է այն բնագավառում, որի համար իրեն տրված են կարողություններ կամ տաղանդներ, ապա այդ տարածքները սկսում են քայքայվել կամ թուլանալ: Որքան երկար ժամանակ է մարդը պասիվություն ցուցաբերում, այնքան ավելի է թուլանում ինչ-որ բան անելու նրա ցանկությունը: Լավագույն օրինակներից է ֆիզիկական մարզումները:

Ես մարմնամարզության մի լավ ծրագրով եմ պարապում, և որքան շատ եմ պարապում, այնքան ընթացքն ավելի է հեշտանում: Երբ սկսեցի՝ շատ դժվար էր. ծրագրին հետևելն իմ մարմնի համար ցավոտ էր, որովհետև մինչև այդ ես երկար ժամանակ չէի պարապել ու մարզվել: Մարմնիս պասիվ վիճակի պատճառով վատացել էր իմ ֆիզիկական պատրաստվածությունը: Ես գնալով տկարացել ու թուլացել էի՝ մկաններս չօգտագործելու պատճառով:

Դեյվն, ի վերջո, տեսավ իր խնդիրը: Նա ստիպված եղավ գործ ունենալ այն չար ոգիների հետ, որոնք օգտվելով Դեյվի պասիվ վիճակից, երկար ժամանակ հարստահարել էին իրեն: Երբ Սուրբ Հոգին հայտնեց այդ ճշմարտությունը նրան, նա որոշեց կանգնեցնել ծուլությունն ու կրկին դառնալ ակտիվ ու խիստ հետևողական:

Այս հարցում որոշում կայացնելն ամենահեշտն էր, իսկ այն կիրառելը՝ ամենադժվարը: Դժվար էր այն առումով, որ բոլոր բնագավառներում, որտեղ նա նախկինում պասիվություն էր ցուցաբերել, հարկավոր էր մարզվել այնքան, մինչև դրանք կրկին ամրապնդվեին:

Նա սկսեց արթնանալ առավոտյան ժամը 5⁰⁰-ին, կարդալ խոսքն

ու աղոթել՝ նախքան աշխատանքի գնալը: *Իրական պայքարը սկսվեց հետո*: Սատանան չի ցանկանում ետ տալ այն տարածքները, որոնք նա արդեն զավթել է, և նա չի տալիս դրանք առանց կռվի: Դեյվը զարթնում էր իր ժամանակն Աստծո հետ անցկացնելու համար, բայց միանգամից ընկղմվում էր քնի մեջ՝ բազմոցին պառկած: Չնայած այն հանգամանքին, որ երբեմն առավոտյան նա քնաթաթախ էր աղոթում, այնուամենայնիվ առաջընթացն ակնհայտ էր. նա վեր էր կենում անկողնուց և փորձում էր կառուցել իր աղոթքի կյանքը:

Երբեմն նա ծանծրանում էր: Լինում էին օրեր, երբ նա ոչ մի շարժ չէր զգում, կարդացածից ոչ մի բան չէր հասկանում, աղոթքը կարծես տեղ չէր հասնում: Սակայն նա համառորեն շարունակում էր, քանի որ Սուրբ Հոգին հայտնել էր նրան պասիվության վտանգը:

Ես սկսեցի նկատել, որ երբ կարիք էր լինում տանն ինչ-որ բան մեխելու կամ սարքելու, նա անմիջապես անում էր դա: Նա ավելի վճռական էր դարձել: Շատ ժամանակ նա ոչ մի հաճույք չէր ստանում իր կատարածից, բայց նա այլևս չէր առաջնորդվում զգացմունքներով և մարմնական ցանկություններով: Որքան շատ էր հասկանում, որ ինքը ճիշտ է վարվում, այնքան շատ էր վայելում իր ազատությունը:

Անկեղծ լինելով կասեմ, որ դա նրան հեշտ չտրվեց: Նա ազատություն ձեռք չբերեց մի քանի օրվա կամ շաբաթվա ընթացքում: Պասիվությունն ամենադժվար վիճակներից մեկն է, որը հաղթահարելու համար, ինչպես արդեն ասացի, մարդը չպետք է վարվի իր զգացմունքներով:

Աստծո օգնությամբ Դեյվը համառորեն գնաց առաջ, և հիմա նրանում պասիվության ոչ մի նշույլ չի նկատվում: Նա հանդիսանում է մեր ծառայության ադմինիստրատորն ու ֆինանսական պատասխանատուն, ինչպես նաև ռադիոյի և հեռուստատեսության բաժնի ղեկավարը: Նա միշտ ճանապարհորդում է ինձ հետ և պլանավորում մեր բոլոր ուղևորությունները: Նա նաև հիասքանչ տղամարդ է ընտանիքում: Նա պարբերաբար իր ժամանակն անցկացնում է աղոթքի և Աստծո Խոսքի ընթերցանության մեջ: Կարճ ասած՝ նա հարգանքի արժանի մի մարդ է:

Ճիշտ է, նա դեռևս խաղում է գոլֆ և հետևում հեռուստատեսային

մարզական ծրագրերին, բայց միևնույն ժամանակ, չի անտեսում իր պարտականությունները: Այժմ իմանալով նրան և տեսնելով այն ամենն, ինչ նա անում է, ոչ ոք նույնիսկ չի մտածի, որ նա երբևէ այդքան պասիվ է եղել:

Պասիվությունը կարելի է հաղթահարել: Բայց դրա առաջին քայլերից մեկը՝ այն մտքում հաղթահարելն է: Դեյվը չկարողացավ առաջընթաց ունենալ, մինչև չկայացրեց իր որոշումն ու փոխեց իր մտածելակերպը:

ԾԻՇՏ ՄՏՔԵՐԻՆ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ ԾԻՇՏ ՔԱՅԼԵՐԸ

«Մի՛ նմանվեք այս աշխարհին [այս դարին], [ձևափոխված և հարմարեցված նրա արտաքին, մակերեսային սովորություններին], այլ [ամբողջապես] կերպարանափոխվեք [փոփոխվեք] ձեր մտքի նորոգությամբ [նրա նոր իդեալների և նրա նոր վերաբերմունքի միջոցով]»:

Հռոմեացիների 12.2, AMP

Աստծո խոսքն այստեղ բացահայտում է մի կարևոր սկզբունք. ոչ ոք չի կարողանա ապրել հաղթական կյանքով, քանի դեռ չի հասկանում և կիրառում հետևյալ սկզբունքը՝ *ճիշտ մտքերին հետևում են ճիշտ քայլերը*:

Թույլ տվեք սա արտահայտել այլ կերպ՝ *դուք չեք կարողանա փոխել ձեր վարքը, մինչև որ չփոխեք ձեր մտքերը*:

Ըստ Աստծո կարգ ու կանոնի, նախ՝ գալիս են ճիշտ մտքերը, հետո՝ ճիշտ գործողությունները: Ես համոզված եմ, որ ճիշտ գործողությունները կան ճիշտ վարքը ճիշտ մտածելակերպի պտուղներն են... Շատ հավատացյալներ են պայքարելով փորձում ճիշտ վարվել, բայց պտուղը պայքարի արդյունքը չէ: Պտուղը որթի վրա մնալու արդյունք է (տե՛ս Զովի. 15.4): Իսկ որթի վրա մնալը պահանջում է հնազանդություն (տե՛ս Զովի. 15.10):

Երբ ես խոսում եմ այս սկզբունքի մասին, միշտ օգտագործում եմ Եփեսացիների ուղերձի 4.22-24-րդ խոսքերը: 22-րդ խոսքում ասվում է. «Ձեզանից դուրս հանեք նախկին ընթացքով քայլող հին մարդը, որ

խաբերայության ցանկությունով ապականված է»:

24-րդ խոսքը շարունակում է. «Եվ նոր մարդուն հագեք, որ Աստծո պատկերի պես ստեղծված է՝ ճշմարտության արդարությունով և սրբությունով»:

Այսպիսով տեսնում ենք, որ 22-րդ խոսքը հիմնականում մեզ ասում է, որ դադարեցնենք ապականությունը, իսկ 24-րդ խոսքը պատվիրում է մեզ վարվել սրբությամբ:

23-րդ խոսքը ես անվանում եմ «կամուրջ-խոսք»: Այն ասում է, թե ինչպես 22-րդ խոսքից (ապականությունից) անցնել 24-րդ խոսքին (սրբությանը). «...և ձեր մտքի հոգով նորոգվեք» (այսինքն՝ ձեռք բերեք թարմ միտք և հոգևոր վերաբերմունք):

Անհնար է սխալ վարքից անցնել ճիշտ վարքի, եթե, *նախ և առաջ*, չփոխենք մտածելակերպը: Պասիվ մարդը կարող է ճիշտ վարվելու ցանկություն ունենա, բայց նա երբեք չի կարողանա դա անել, մինչև իր միտքը նպատակադրված կերպով չուղղի Աստծո Խոսքի և Նրա կամքի համապատասխան:

Ես հիշեցի մի մարդու, ով իմ սեմինարներից մեկի ժամանակ խնդրեց աղոթել իր համար: Նա խնդիրներ ուներ իր կրքերի հետ կապված: Նա իսկապես սիրում էր իր կնոջը և չէր ցանկանում, որ իրենց անուսնությունն ավարտվի բաժանությամբ: Եվ եթե նրա խնդիրը չլուծվեր, ապա նա կարող էր կորցնել իր ընտանիքը:

«Ձո՛յս, ես կրքերիս հետ կապված խնդիրներ ունեմ,- ասաց նա,- և չեմ կարողանում անտարբեր անցնել ոչ մի կնոջ կողքով: Կարո՞ղ ես աղոթել իմ ազատագրման համար: Ես բազմիցս աղոթել եմ դրա համար, սակայն ոչ մի փոփոխություն չեմ տեսնում»:

Սուրբ Հոգին առաջնորդեց ինձ՝ նրան ասելու հետևյալը. «Այո՛, ես կաղոթեմ ձեզ համար, բայց ձեզանից է կախված, թե ինչ թույլ կտաք, որ ձեր մտքի էկրանը ձեզ ցույց տա: Եթե ցանկանում եք երբևէ վայելել ձեր ազատագրումը, ուրեմն դուք պետք է դադարեք պոռնոգրաֆիկ տեսարաններ պատկերացնել ձեր մտքում, կամ՝ ձեզ տեսնել այլ կանանց հետ»:

Այս մարդու նման ուրիշներն էլ պետք է հասկանան, որ միայն ցան-

կանալով չեն կարողանա ճեղքում ունենալ, եթե ուզում են ազատ լինել: *Մարդիկ ուզում են փոխել իրենց վարքը, բայց ոչ իրենց մտքերը:* Հաճախ միտքը դառնում է մի դաշտ, որտեղ մարդիկ «խաղում են մեղքի հետ»: Հիսուսը Սատթեոսի Ավետարանի 5.27,28-ում ասել է. «Լսե՞լ եք, որ ասվեց առաջիններին, թե՛ շնություն մի՛ արա: Բայց ես ասում եմ ձեզ, թե՛ ամեն մարդ, ով մի կնոջ վրա նայի նրան ցանկանալու համար, նա արդեն շնացավ նրա հետ իր սրտի մեջ»: Մեղավոր գործերը ծնվում են մեղավոր մտածելակերպից:

Իմ տանն անցկացվող Աստվածաշնչյան առաջին դպրոցին մասնակցում էր մի կին: Նա հանձնել էր իր կյանքը Տիրոջը և ցանկանում էր իր տունն ու ընտանիքը ամրացնել Աստծո մեջ: Նրա կյանքը քառսի մեջ էր՝ տունը, երեխաները, ամուսնությունը, ֆինանսները, առողջությունը և այլն: Նա բացեիբաց ասում էր, որ չի սիրում իր ամուսնուն և միանգամայն արհամարհում էր նրան: Իմանալով, որ իր այս վերաբերմունքը Աստծո առջև սխալ է, նա ցանկություն հայտնեց սիրել իր ամուսնուն, սակայն չէր կարողանում հանդուրժել նույնիսկ նրա ներկայությունը:

Մենք աղոթում էին, նա աղոթում էր, բոլորն աղոթում էին... Մենք նրա հետ խոսում էինք Աստվածաշնչից և քարոզների լսածապավենների էինք տալիս, որպեսզի լսեր: Մենք արեցինք այն, ինչ կարող էինք, թեև թվում էր, թե նա հետևում է մեր խորհուրդներին, բայց նրա կյանքում ոչ մի առաջընթաց չէր նկատվում: *Ինչո՞ւմն էր սխալը:* Մեր խորհրդատվություններից մեկի ժամանակ պարզվեց, որ նա իր ողջ կյանքի ընթացքում եղել է երազող: Նա միշտ իրեն պատկերացրել է հեքիաթում որպես մի արքայադուստր, իսկ իր սիրելիին՝ մի գեղեցիկ արքայազն, ով պետք է աշխատանքից տուն վերադառնար ծաղիկներով և քաղցրավենիքով, ծնկի գար և խոստովաներ իր նվիրվածությունը:

Նա իր օրերը վատնել էր այսպես մտածելով, և երբ նրա գեր, հոգնած, քրտնած, կեղտոտ (ատամներից մեկն ընկած) ամուսինը ծանր աշխատանքից գալիս էր տուն, նա սկսում էր անարգել նրան:

Մի պահ մտածեք այս իրավիճակի մասին: Վերստին ծնված այս

կնոջ կյանքը դեռևս քառսի մեջ էր: Նա ցանկացել էր հնազանդվել Աստծուն և ապրել Նրա համար, նաև ուզում էր սիրել իր ամուսնուն, որովհետև գիտեր, որ դա է Աստծո կամքը: Նա ուզում էր հաղթանակ ունենալ և՛ իր կյանքում, և՛ ամուսնության մեջ, բայց նրա միտքը պարտության էր մատնում նրան: Ոչ մի կերպ նա չէր կարողանում հաղթահարել այն գարշանքը, որը զգում էր իր ամուսնուց, մինչև որ նա սկսեց կառավարել «մտքի ձայնը»:

Նա մտովի ապրում էր մի աշխարհում, որը գոյություն չուներ և երբեք չէր էլ ունեցել: Այդ պատճառով էլ ընդհանրապես պատրաստ չէր առնչվելու իրականության հետ: Նրա միտքը պասիվ էր, և քանի դեռ նա չէր որոշել իր միտքը համաձայնեցնել Աստծո խոսքին, չար ոգիները շարունակում էին սխալ մտքերով լցնել նրան:

Նա կարծում էր, թե դրանք իր անձնական մտքերն են, այդ պատճառով էլ չէր կարողանում հաղթանակ ունենալ այդ բնագավառում: Նա փոխեց իր մտածելակերպը, և նրա կյանքը սկսեց փոխվել: Դա մտովի փոխեց իր վերաբերմունքն ամուսնու հանդեպ, իսկ վերջինս էլ սկսեց փոխվել և՛ իր կնոջ հանդեպ, և՛ արտաքինապես:

ՄՏԱԾԵՔ ՎԵՐԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արդ, եթե Քրիստոսի հետ հարություն առաք, ապա խնդրե՛ք վերինները, որտեղ Քրիստոսն է նստում Աստծո աջ կողմում: Վերինները մտածեք, ոչ թե երկրի վրայինները»:

Կողոսացիների 3.1,2

Եվ կրկին մենք տեսնում ենք նույն սկզբունքը. եթե ուզում եք ապրել Հիսուսի հետ հարություն առած կյանքով, ուրեմն փնտրեք այդ նոր, զորավոր կյանքը՝ ձեր միտքը կենտրոնացնելով և մտածելով այն բաների մասին, որ վերիններում է:

Պողոս առաքյալն ասում է, որ եթե մենք լավ կյանք ենք ցանկանում, ուրեմն պետք է մեր միտքը պահենք լավ բաների վրա կենտրոնացած:

Շատ հավատացյալներ ուզում են ունենալ լավ կյանք, բայց

նրանք պասիվորեն մտտում և ակնկալում են, թե երբ ինչ-որ մի լավ բան տեղի կունենա իրենց կյանքում: Հաճախ նրանք նախանձում են ուրիշներին, ովքեր ապրում են հաղթական կյանքով և բարկանում են, որ իրենց կյանքն այդքան դժվար է:

Եթե ցանկանում եք հաղթել ձեր խնդիրները, եթե իսկապես ուզում եք ապրել հարության կյանքով, *ապա պետք է ունենաք ոչ թե միայն ցանկություն, այլ՝ կայուն և ամուր բնավորություն:* Դուք պետք է ակտիվ լինեք, ոչ թե պասիվ: Ճիշտ գործողությունը սկսվում է ճիշտ մտածելակերպից: Մի՛ եղեք պասիվ ձեր մտքերում: Հենց այսօր սկսեք ճիշտ մտքեր ընտրել:

Գլուխ
15

Քրիստոսի միտքը

Քրիստոսի միտքը

Չամոզված եմ՝ դուք արդեն հստակ որոշում եք կայացրել, որ ընտրելու եք ճիշտ մտքեր, այնպես որ, եկեք դիտարկենք որոշ մտածելակերպեր, որոնք ընդունելի են Տիրոջ կողմից: Կան տարբեր մտածելակերպեր, որոնք լիովին անընդունելի էին Հիսուսի համար, երբ Նա ապրում էր երկրի վրա: Եթե մենք ցանկանում ենք քայլել Նրա շավիղներով, ապա պետք է սկսենք մտածել Նրա նման:

Համոզված եմ, որ անմիջապես կմտածեք. «Ձո՛յս, դա անհնար է, քանի որ Հիսուսը կատարյալ է: Գուցե ես կարողանամ փոխել իմ միտքը դեպի ավելի լավը, բայց ես երբեք չեմ կարողանա մտածել Հիսուսի նման»:

Իսկ Աստվածաշնչում ասվում է, որ մենք ունենք Քրիստոսի միտքը, ինչպես նաև՝ նոր սիրտ ու նոր հոգի:

ՆՈՐ ՍԻՐՏ ՈՒ ՆՈՐ ՀՈԳԻ

«Եվ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղեն սիրտը և ձեզ մարմնեղեն սիրտ պիտի տամ: Եվ իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ, և պիտի անեմ, որ իմ օրենքների մեջ վարվեք և իմ դատաստանները պահեք և նրանք կատարեք»:

Եզեկիել 36.26,27

Որպես քրիստոնյաներ, մենք ունենք նոր էություն, որը հենց Աստծո էությունն է՝ դրված մեզանում վերստին ծնունդից ի վեր:

Հռոմեացիների ուղերձի 8.6-րդ խոսքում ասվում է մարմնի մտքի մասին և, որ մարմնավոր մտքին հետևելու արդյունքը մահն է, իսկ Հոգու մտքին հետևելու արդյունքը՝ կյանքը:

Մենք անհավատալի առաջընթաց կունենանք, եթե սովորենք՝ ինչպես տարբերակել կյանքն ու մահը:

Եթե ինչ-որ բան ձեզ տանում է մահվան, ապա մի արեք դա այլևս: Երբ որոշ մտքեր ձեզ լցնում են մահով (ցանկացած դժբախտությամբ), ուրեմն անմիջապես հասկացեք, որ դրանք Հոգու մտքից չեն:

Օրինակ՝ պատկերացնենք, որ ես մտածում եմ, թե ինչպես եմ մի մարդու պատճառով անարդարացիորեն տանջվում: Այդ մտքերն ինձ զայրացնում են: Ես սկսում եմ մտածել, թե որքան տհաճ է այդ մարդն ինձ համար: Եթե ես սկսեմ մի պահ քննել իմ վիճակը, ես կհասկանամ, որ լցվում եմ մահաբեր մտքերով: Դրանք ինձ տխրեցնում են, լարվածություն բերում, և նույնիսկ, ֆիզիկական անհանգստություն պատճառում: Իմ սխալ մտածելակերպի արդյունքը կարող են լինել նաև գլխացավը, ստամոքսի ցավը, գերհոգնածությունը: Մյուս կողմից, եթե ես սկսեմ մտածել, թե որքան օրհնված եմ, և որքան բարի է Աստված իմ հանդեպ, ապա կլցվեմ կյանք բերող մտքերով: Հավատացյալը պետք է սովորի մահն ու կյանքը զանազանելը: Հիսուսն ամեն բան պատրաստեց մեզ համար, որպեսզի մենք լցվենք կյանքով: Մենք պետք է որոշում կայացնենք՝ ապրել Քրիստոսի միտքն ունենալով:

Հաջորդ էջերում դուք կկարդաք, թե ինչպես պետք է ապրել Քրիստոսի մտքի համեմատ:

Քայլ 1. Ունեցի՛ր դրական մտքեր

«Մի՞թե երկուսը կգնան միասին, եթե համաձայնության եկած չլինեն»:

Ամովս 3.3

Ինչպիսի՞ն կլինեն այն հավատացյալի մտքերը, ով մտածում է Քրիստոսի մտքի համեմատ. իհարկե, դրական: Նախորդ գլուխներից մեկում մենք արդեն խոսել ենք դրական մտածելակերպի անհրաժեշտության մասին: Եթե ցանկանում եք, կարող եք վերադառնալ 5-րդ գլուխ և վերհիշել, թե որքան կարևոր են դրական մտքերը: Ես կարդացի այդ գլու-

խը ևս մեկ անգամ և կրկին օրհնվեցի, չնայած նրան, որ ես էի այն գրել:

Անհնար է գնահատել դրական վերաբերմունքի զորությունը: Աստված դրական է, և եթե մենք ուզում ենք «լողալ» Նրա հետ, պետք է գտնվենք միևնույն ալիքի բարձրության վրա և սկսենք դրական մտածել: Ես չեմ խոսում մտքի վերահսկողության մասին, այլ պարզապես ուզում եմ ասել, որ հարկավոր է լավատես լինել՝ բոլոր առումներով:

Կյանքին նայեք և վերաբերվեք լավատեսորեն: Շարունակե՛ք պահել դրական մտքերը և սպասե՛ք լավ բաների: Ջրույցի համար ընտրեք միայն դրական թեմաներ:

Հիսուսն, անշուշտ, լավատես էր և Իր կյանքի հանդեպ ցուցաբերեց դրական վերաբերմունք: Նա ստիպված եղավ կրել բազմաթիվ դժվարություններ՝ ներառյալ հարձակումները, Իր մասին տարածվող ստերը, աշակերտների կողմից լքված լինելն այն պահին, երբ այդքան անհրաժեշտ էին Իրեն, ծաղրի առարկա դառնալը, միայնակությունը, շատերի կողմից ընդունված չլինելն ու սրանց նման այլ հիասթափեցնող պահերը: Այնուամենայնիվ, այս բոլոր բացասական բաների մեջ Հիսուսը մնաց լավատես: Նա միշտ պատրաստ էր խրախուսական և բարձրացնող խոսքեր ասել մարդկանց: Նա միշտ հույս էր տալիս նրանց, ովքեր գալիս էին Իր մոտ:

Մենք Քրիստոսի միտքն ունենք, և այն ունի դրական հիմք, այնպես որ, ամեն անգամ վատատեսությամբ լցվելիս պետք է հասկանանք, որ չենք վարվում Քրիստոսի մտքի համեմատ: Միլիոնավոր մարդիկ տառապում են իրենց կյանքում գոյություն ունեցող դեպրեսիայից, հիասթափություններից ու անհուսությունից: Եվ ես համոզված եմ, որ հնարավոր չէ լինել վատ տրամադրության մեջ և չլինել բացասական մտքերի ազդեցության տակ, նույնիսկ, եթե խնդիրը վերաբերում է առողջությանը: Սակայն, եթե դեպրեսիայի պատճառը հիվանդությունն է, ապա վատատեսությունը այն ավելի կսրի ու կբարդացնի: Երբ մարդու տրամադրությունն ընկած է, նրա շուրջբոլորը նույնպես մռայլության մեջ է: Գլուխը կախ զգած, դեմքին արտահայտություն չկա, աչքերը տխուր են, ուսերը կախ ընկած... Եվ սովորաբար, այս ամենն ավարտվում է նրանով, որ ինքն էլ է ընկնում մի

անկյուն ու այդպես էլ մնում է:

Սաղմոս 3.3-րդ խոսքի համաձայն՝ Աստված մեր փառքն է ու մեր գլուխները վեր բարձրացնողը: Նա ցանկանում է վեր բարձրացնել մեզ. մեր հույսը, մեր վերաբերմունքը, մեր տրամադրությունը, մեր գլուխները, ձեռքերն ու սրտերը: Աստված ուզում է մեզ վեր բարձրացնել, իսկ սատանան՝ վայր գցել: Սատանան օգտագործում է մեր կյանքում կատարվող վատ դեպքերն ու իրավիճակները՝ մեզ ընկճելու և ճնշելու համար: Բառարանում «ճնշել» բառի սահմանումը հետևյալն է՝ «ընկնել հոգեպես, ՏԽՐԵԼ»¹: Վերսբերի բառարանի համաձայն, այն, ինչը *ճնշված է*՝ «սուզված է»²:

Ճնշել նշանակում է «ընկղմել, ներքև սեղմել կամ պահել գետնի մակարդակից ցածր»: Ժամանակ առ ժամանակ լինում են պահեր, երբ մենք բացասական մտքեր ենք ընդունում, բայց դրանք միայն ավելի են ուժեղացնում ճնշումը: Վատատեսությունն ու բացասական վերաբերմունքը չեն կարող լուծել մեր խնդիրները. դրանք միայն ավելի կբարդացնեն իրավիճակը:

ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԴԵՊՐԵՍԻԱՆ

Սաղմոս 143.3-10-րդ խոսքերը նկարագրում են դեպրեսիան և ցույց տալիս, թե ինչպես կարելի է այն հաղթահարել: Եկե՛ք այդ հատվածն ավելի մանրամասնորեն դիտարկենք՝ տեսնելու համար այն քայլերը, որոնց միջոցով կկարողանանք հաղթահարել թշնամու այս հարձակումը:

1. Որոշե՛ք խնդրի բնույթն ու պատճառը

«Որովհետև թշնամին հալածում է իմ անձը, նա կյանքս վայր է գցում գետնին և ինձ նստեցնում է խավարի մեջ՝ ինչպես որ սկզբից մեռածները»:

Սաղմոս 143.3

«...Ինձ նստեցնում է խավարի մեջ՝ ինչպես որ սկզբից մեռածները» արտահայտությունը հստակորեն ցույց է տալիս մի մարդու, ով տա-

ռապում է դեպրեսիայից:

Նկատե՞ք, որ այս դեպրեսիայի պատճառը կամ աղբյուրը՝ սատանայի կողմից հոգևոր հարձակումն է:

2. Գիտակցե՞ք, որ դեպրեսիան գողանում է կյանքն ու լույսը

«Եվ իմ հոգին մաշված է ինձանում, իմ սիրտն ավերված է ինձանում»:

Սաղմոս 143.4

Դեպրեսիան ճնշում է մարդու հոգևոր ազատությունն ու զորությունը:

Մեր հոգին (Աստծո Յոգով ուժեղացած և խրախուսված) զորավոր ու ազատ է: Այդ պատճառով էլ սատանան փորձում է մթագնել մեր միտքը՝ մեր հոգու զորությունն ու ազատությունը ճնշելու համար: Խնդրում են, հասկացե՞ք, որ կենսականորեն շատ կարևոր է դիմադրել «դեպրեսիա» կոչվող զգացողությանն այն պահից սկսած, երբ այն սկսում է գլուխ բարձրացնել: Որքան երկար թույլ տաք ձեզ՝ մնալ դրա մեջ, այնքան ավելի դժվար կլինի դրան դիմադրելը:

3. Հիշե՞ք լավ ժամանակները

«Ես հիշում եմ առաջին օրերը. մտածում եմ Քո բոլոր գործերի վրա, խորհում եմ Քո ձեռքերի գործերի վրա»:

Սաղմոս 143.5

Այս հատվածում տեսնում ենք, որ սաղմոսերգուն արձագանքում է իր իրավիճակներին: Հիշելը, մտորելն ու խորհելը հանդիսանում են մտքի ֆունկցիաները: Նա միանշանակ գիտի, թե ինչպես են իր մտքերն ազդում իր զգացմունքների վրա, այդ պատճառով էլ իր ուղեղը զբաղեցնում է այնպիսի մտքերով, որոնք կարող են օգնել իրեն՝ իր մտքի վրա կատարած հարձակումը ետ մղելու համար:

4. Փառաբանե՞ք Տիրոջը, երբ դժվարության մեջ եք

«Ձեռքերս տարածում եմ դեպի Քեզ. իմ անձը չոր երկրի պես ծարավ է Քեզ»:

Սաղմոս 143.6

Սաղմոսերգուն գիտի փառաբանության կարևորությունը. նա իր ձեռքերը պարզում է երկրպագության ժամանակ: Նա հայտարարում է, որ ինքն, իրականում, միայն Աստծո կարիքն ունի: Միայն Տերը կարող է նրան տալ ճշմարիտ բավարարվածության զգացումը:

Շատ հաճախ մարդիկ ճնշված վիճակում են գտնվում, որովհետև, երբ նրանք ինչ-որ բանի կարիք են ունենում, այն փնտրում են սխալ տեղերում, ինչն ավելի է դժվարացնում նրանց խնդիրները:

Երեմիայի մարգարեության 2.13-ում Տերն ասում է. «Իմ ժողովուրդը կրկնապատիկ չարություն գործեց. Ինձ՝ կենաց ջրի աղբյուրիս, թողեցին, որ իրենց համար հորեր փորեն, ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել»:

Միայն Աստված կարող է հագեցնել հոգու ծարավը: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ, մտածելով, որ Աստծուց բացի ուրիշ բաներով կկարողանաք կատարյալ բավարարվածություն գտնել: Սխալ բաների ետևից ընկնելը ձեզ միշտ կտանի հիասթափության, իսկ վերջինս էլ դուռ կբացի դեպրեսիայի համար:

5. Խնդրե՛ք Աստծո օգնությունը

«Շուտով լսի՛ր ինձ, Տե՛ր. հոգիս մաշվում է. երեսդ մի՛ ծածկիր ինձանից, որ գերեզմանի մեջ իջնողներին չմմանվեմ»:

Սաղմոս 143.7

Սաղմոսերգուն օգնություն է խնդրում: Ըստ էության, նա ասում է. «Շտապի՛ր, Աստվա՛ծ, որովհետև ես երկար չեմ դիմանա առանց Քեզ և Քո օգնության»:

6. Լսե՛ք Տիրոջ ձայնը

«Առավոտյան լսել տուր ինձ Քո ողորմությունը, որ Քեզ եմ հուսացել. ինձ ցույց տուր այն ճանապարհը, որ պետք է գնամ նրանում, որովհետև դեպի Քեզ եմ բարձրացնում իմ անձը»:

Սաղմոս 143.8

Սաղմոսերգուն գիտի, որ ինքը կարիք ունի լսել Աստծուց: Նա կարիք ունի հաստատվելու Աստծո սիրո և բարության մեջ: Նա Աստծո ուշադրության և առաջնորդության կարիքն ունի:

7. Աղոթե՛ք ազատագրման համար

«Ազատի՛ր, Տե՛ր, ինձ իմ թշնամիներից. ես Քեզ եմ ապավինում»:
Սաղմոս 143.9, AMP

Սաղմոսերգուն կրկին հայտարարում է, որ միայն Աստված կարող է օգնել իրեն:

Խնդրում եմ նկատի առնել այն, որ ամբողջ ժամանակ նա իր միտքը պահում է Աստծո, և ոչ թե իր խնդիրների վրա:

8. Որոնե՛ք Աստծո իմաստությունը, գիտությունն ու առաջնորդությունը

«Սովորեցրո՛ւ ինձ կատարել Քո կամքը, որովհետև Դու ես իմ Աստվածը. Քո բարի հոգին թող առաջնորդի ինձ դեպի ուղիղ երկիր»:

Սաղմոս 143.10

Գուցե սաղմոսերգուն այստեղ նշում է, որ ինքը շեղվել է Աստծո կամքից և այդպիսով դուռ բացել հոգևոր հարձակումների համար: Նա ցանկանում է լինել Աստծո կամքի մեջ, քանի որ գիտակցում է, որ դա է միակ ապահով վայրն իր համար:

Այնուհետև խնդրում է Աստծուն, որպեսզի օգնի իրեն՝ հաստատուն լինել: Կարծում եմ, որ «...առաջնորդի՛ր ինձ դեպի ուղիղ երկիր» արտահայտությունը վերաբերում է նրա շփոթված զգացմունքներին: Նա ուզում է լինել ուղիղ գծի վրա, չի ցանկանում շեղվել ո՛չ աջ, ո՛չ ձախ:

ՕԳՏԱԳՈՐԾԵ՛Ք ՁԵՐ ԶԵՆՔԵՐԸ

«Որովհետև մեր զինվորության զենքերը ֆիզիկական չեն [մարմնի ու արյան զենքերը], այլ՝ Աստծով զորավոր բերդեր քանդելու և խորտակելու, [քանի որ մենք] հերքում ենք փաստերն ու տեսությունները և հավաստիացումները, և ամեն մի հպարտ ու գռռոզ բան, որ ինքն իրեն բարձրացնում է Աստծո [ճշմարիտ] գիտության դեմ. և մենք գերի ենք վերցնում ամեն մի միտք ու մտադրություն՝ Քրիստոսին [Մեսիային, Օծյալին] հնազանդեցնելու համար»:

Բ Կորնթացիների 10.4,5, AMP

Սատանան օգտագործում է դեպրեսիան և մնացած բոլոր տեսակի «անկումները»՝ միլիոնավոր մարդկանց խավարի և հուսահատության անդունդը նետելու համար: Հաճախ դեպրեսիայի արդյունք է հանդիսանում ինքնասպանությունը: Սովորաբար ինքնասպանության քայլին պատրաստ մարդը գտնվում է այնպիսի վատատեսության մեջ, որ կորցնում է հույսն ապագայի հանդեպ:

Հիշե՛ք, բացասական մտքերն առաջացնում են բացասական զգացմունքներ:

Միտքը պատերազմի դաշտն է: Եվ դա այն վայրն է, որտեղ պատերազմը հաղթում կամ պարտվում են: Այսօր ընտրե՛ք՝ լինել լավատես, դրական հայացքների տեր մարդ, խորտակե՛ք բոլոր բացասական պատկերացումները և ձեր մտքերը գերի վերցրե՛ք՝ Հիսուս Քրիստոսին հնազանդեցնելու համար (տե՛ս Բ Կորնթ. 10.5):

Քայլ 2. Աստծո մտածելակերպն ունեցե՛ք

«Դու կպաշտպանես նրան և կպահես նրան կատարելության մեջ և հաստատուն խաղաղությամբ նրա մտքերը [նրա ցանկությունը և նրա բնավորությունները] կպահես Քեզանում, որովհետև նա կախված է Քեզանից, վստահում է Քեզ, և նրա միակ հույսը Դու ես»:

Եսայի 26.3, AMP

Հիսուսն անդադար չփում ուներ իր երկնային Հոր հետ: Հնարավոր չէ շփվել մեկի հետ, եթե ձեր մտքերն ուղղված չեն դեպի այդ անձնավորությունը: Եթե իմ ամուսինն ու ես գտնվում ենք մեքենայի մեջ, և նա խոսում է ինձ հետ, բայց ես մտովի սավառնում եմ ուրիշ վայրերում, ապա չի կարելի ասել, որ մենք շփվում ենք, քանի որ ես չեմ տալիս նրան իմ ողջ ուշադրությունը: Հետևաբար, կարող ենք վստահորեն ասել, որ Քրիստոսի մտքով առաջնորդվող մարդու մտքերն ուղղված կլինեն Աստծուն և Նրա բոլոր զորավոր գործերի վրա:

ՄՏԱԾԵՔ ԱՍՏԾՈՒ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իմ կյանքը կկշտանա ինչպես ծարպով և պարարտությունով և իմ բերանը կօրհնի Քեզ ուրախ շրթունքներով:

Երբ որ Քեզ հիշում եմ անկողնումս գիշերվա պահերին՝ Քեզ վրա եմ մտածում»:

Սաղմոս 63.5,7

«Ես քննում եմ Քո ամեն գործերը և միտք եմ առնում Քո արածները»:

Սաղմոս 77.12

«Ես կխորհեմ Քո կանոնների շուրջ և կպատվեմ Քո ճանապարհները [կյանքի ուղիները Քո օրենքի համապատասխան եմ գծված]» (AMP):

Սաղմոս 119.15

«Ես հիշում եմ առաջին օրերը. մտածում եմ Քո բոլոր գործերի վրա, խորհում եմ Քո ձեռքերի գործերի վրա»:

Սաղմոս 143.5

Սաղմոսների հեղինակ Դավիթը հաճախ էր խոսում Աստծո, Նրա բարության և ձեռքի գործերի ու ճանապարհների մասին: Աստծո բարության և Նրա ձեռքերի հրաշալի ստեղծագործությունների մասին մտածելը միանգամայն խրախուսում ու ոգեշնչում է մարդուն:

Ես սիրում եմ դիտել բնության, կենդանական աշխարհի և օվկիանոսային կյանքի մասին հեռուստահաղորդումներ, որովհետև դրանք ցույց են տալիս Աստծո մեծությունն ու վեհությունը, Նրա անսահման ստեղծագործական հնարավորությունները, և ցույց տալիս, թե ինչպես է Նա ամեն բան պահում Իր զորության կարողությամբ (տե՛ս Եբր. 1.3):

Եթե ցանկանում ես ապրել հաղթական կյանքով, ապա Աստծո, Նրա ուղիների և գործերի մասին խորհելը պետք է դառնա քո մտավոր կյանքի բնականոն մասը:

Իմ սիրելի աստվածաշնչյան խոսքերից մեկը Սաղմոս 17.15-ն է, որտեղ սաղմոսերգուն ասում է Տիրոջը. «Ես կատարյալ բավականություն կունենամ, երբ արթնանամ [և ինձ գտնեն] Քեզ նմանվելով [և Քեզ հետ սերտ շփում ունենամ] (AMP):

Ես շատ դժբախտ օրեր եմ անցկացրել, որովհետև ամեն առավոտ՝ արթնանալուց ամիջապես հետո, սկսում էի մտածել տարբեր

վատ բաների մասին: Բայց երբ Սուրբ Հոգին սկսեց ինձ սովորեցնել՝ ինչպես օգտագործել Քրիստոսի միտքը (Հոգու միտքը), իմ կյանքը միանգամայն լցվեց ներքին բավարարվածությամբ: Վաղ առավոտյան Աստծո հետ ունեցած շփումն այն ճիշտ ձևերից մեկն է, որն օգնում է վայելել կյանքը և յուրաքանչյուր օրը ճիշտ ապրել:

ՇՓՈՒՄ ՏԻՐՈՋ ՀԵՏ

«Բայց և այնպես, ես ձեզ ճշմարիտ եմ ասում, որ շահավետ է [լավ, նպատակահարմար, ձեռնտու] ձեզ համար, որ ես գնամ: Որովհետև, եթե ես չգնամ, Մխիթարիչը [Խորհրդատուն, Օգնականը, Փաստաբանը, Բարեխոսը, Ջորացնողը, Աջակցողը] չի գա ձեզ մոտ [ձեզ հետ մտերիմ հարաբերություն ստեղծելու համար], բայց եթե ես գնամ, ես կուղարկեմ Նրան [ձեզ հետ մտերիմ հարաբերություն ստեղծելու համար]»:

Հովհաննես 16.7, AMP

Հիսուսն այս խոսքերն ասաց երկինք համբարձվելուց առաջ: Այս խոսքից երևում է, որ Աստծո կամքն այն է, որ մենք սերտ շփում ունենանք Իր հետ:

Ոչինչ չի կարող լինել մեզ ավելի մոտ, քան մեր սեփական մտքերը: Հետևաբար, եթե մենք մեր մտքերը լցնենք Տիրոջով, ապա Նրանով կլցվի նաև մեր գիտակցությունը, և մենք կսկսենք վայելել Նրա հետ ունեցած մեր շփումը, որն իր հերթին մեր ամենօրյա կյանքը կլցնի ուրախությամբ, խաղաղությամբ ու հաղթանակով:

Նա միշտ մեզ հետ է, ինչպես և խոստացել էր միշտ լինել մեզ հետ (տե՛ս Մատթ. 28.20, Եբր. 13.5):

Մենք լցված չենք լինի Նրա ներկայությամբ, եթե չմտածենք Նրա մասին: Ես կարող եմ լինել որևէ մեկի հետ մույ՛ն սենյակում, բայց եթե միտքս զբաղված լինի հազար ու մի բանով, ես այդպես էլ չեմ նկատի այդ մարդուն: Սա վերաբերում է նաև Տիրոջ հետ ունեցած շփման մեր արտոնությանը: Նա միշտ մեզ հետ է, բայց մենք պետք է մտածենք Նրա մասին և մշտապես մնանք Նրա ներկայության մեջ:

Քայլ 3. Ստածեք, որ Աստված սիրում է ձեզ

«Եվ մենք գիտենք [հասկանում, ճանաչում, գիտակցում ենք դիտարկման և փորձերի միջոցով] ու հավատում [հավատարիմ մնում, հավատում և ապավինում] ենք այն սիրուն, որ Աստված տածում է մեր հանդեպ: Աստված սեր է, և նա, ով մնում և ապրում է այդ սիրո մեջ՝ մտնում և ապրում է Աստծո մեջ, և Աստված էլ մնում և ապրում է նրա մեջ»:

Ա Յովհաննեսի 4.16, AMP

Ես հասկացել եմ մի կարևոր բան. այն, ինչ ճշմարիտ է Աստծո սիրո վերաբերյալ, ճշմարիտ է նաև Աստծո ներկայության վերաբերյալ: Եթե մենք երբեք չենք մտածում Աստծո մեր հանդեպ ունեցած սիրո մասին, մենք այն երբեք չենք էլ զգա:

Եփեսացիների ուղերձի 3-րդ գլխում Պողոս առաքյալն աղոթում է, որ մարդիկ վերապրեն Աստծո սերը: Աստվածաշնչում ասվում է, որ Աստված սիրում է մեզ: Բայց Աստծո զավակներից քանի՞սը դեռ չունեն Աստծո սիրո մասին այս հայտնությունը:

Հիշում եմ, երբ սկսեցի իմ ծառայությունը: Հենց առաջին շաբաթվա հավաքույթին Տիրոջը խնդրեցի՝ ասել ինձ, թե ինչ պետք է սովորեցնեն մարդկանց: Եվ Նա պատասխանեց. «Ասա՛ Իմ ժողովրդին, որ ես սիրում եմ նրանց»:

«Նրանք, հավանաբար, գիտեն դա,- ասացի ես,- և ուզում եմ նրանց սովորեցնել ինչ-որ մի հզոր բանի մասին, ոչ թե կիրակնօրյա դպրոցի դաս տալ Յովհաննեսի Ավետարանի 3.16-ի մասին»:

Տերն ասաց ինձ. «Իմ ժողովրդից շատ քչերն իրականում գիտեն, թե որքան շատ եմ սիրում նրանց: Եթե նրանք իմանային այդ մասին, ապա այլ կերպ կվարվեին»:

Երբ ես սկսեցի ուսումնասիրել, թե ինչպես կարելի է ստանալ Աստծո սերը, հասկացա, որ ես ինքս ունեմ Նրա սիրո կարիքը: Այդ ուսումնասիրությունների ժամանակ Տերն ինձ ցույց տվեց Յովհաննեսի 4.16-ը, որն ասում է, որ մենք պետք է գիտակցենք Աստծո սերը: Դա նշանակում է, որ մենք միշտ պետք է մնանք Աստծո սիրո մեջ:

Ես աղոտ պատկերացում ունեի այն մասին, որ Աստված սիրում է

ինձ: Բայց չէ՞ որ Աստծո սերը մեր կյանքում պետք է լինի այն հզոր ուժը, որը կանցկացնի մեզ առավել դժվար փորձությունների միջով դեպի հաղթանակը:

Հռոմեացիների ուղերձի 8.35-ում Պողոս առաքյալը հորդորում է մեզ. «Ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց, տառապա՞նք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր»: Այնուհետև 37-րդ խոսքում նա շարունակում է. «Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, Ով մեզ սիրեց»:

Ես շատ երկար ժամանակ եմ ուսումնասիրել այս հատվածը, որոնց արդյունքում եկել եմ Աստծո սիրո գիտակցմանն ու ըմբռնմանը՝ Նրա սիրո մասին մտածելով և այն բարձրաձայն հռչակելով: Աստծո սիրո մասին խոսքերի շուրջ ես մտածում էի, դրանք կարդում էի բարձրաձայն, իսկ հետո անգիր էի սովորում: Ես ամիսներ շարունակ կրկնում ու կրկնում էի, և Աստծո անձնուրաց և անվերապահ սիրո հայտնությունը բացվում էր ինձ ու դառնում առավել իրական:

Այժմ Նրա սերն ինձ համար այնքան իրական է, որ նույնիսկ դժվար պահերին ես ինքս ինձ մխիթարում եմ այն «գիտակից փաստով», որ Նա սիրում է ինձ, և ես չպետք է ապրեմ վախի մեջ:

ՄԻ՛ ՎԱԽԵՑԻՐ

«Վախ չկա սիրո մեջ. կատարյալ սերը հեռացնում է վախը»:

Ա Յովհաննեսի 4.18, KJV:

Աստծո սերը մեր հանդեպ կատարյալ է, ինչպես և մենք ենք կատարյալ՝ Նրա մեջ: Հռոմեացիների ուղերձի 5.8-ում ասվում է. «Բայց Աստված հայտնեց Իր սերը դեպի մեզ, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ»:

Քրիստոսի մտքի համեմատ առաջնորդվող հավատացյալները չեն մտածում, թե ինչ ահավոր մարդիկ են իրենք: Նրանց մտքերը հիմնված են արդարության վրա: Դուք պետք է ունենաք արդարությունը գիտակցող մտքեր և մշտապես մտածեք, թե ով եք դուք Քրիստոսի մեջ: Մենք Աստծո առջև որպես արդարներ կանգնելու իրավունք

չունեիմք՝ հիմնվելով զուտ այն փաստի վրա, որ մենք ինքներս մեզանով արդար չենք կարող լինել: Բայց Աստված տվեց մեզ արդարանալու և Նրա շնորհքի մեջ կանգնելու իրավունքը: Արդարության պարզևը կսկսի ավելի ու ավելի արտահայտվել մեր ճիշտ վարքով, երբ մենք այն ընդունենք հավատքով:

ՈՉ ԹԵ ՄԵՂՔԸ, ԱՅԼ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՏԱԿՑՈՂՆԵՐ ԵՂԵՔ

«Մեզ համար Նա Քրիստոսին [փաստորեն] մեղավոր արեց, Ով մեղքը չգիտեր, որպեսզի Նրանով և Նրա միջոցով մենք կարողանանք դառնալ [օժտված, օրինակ] Աստծո արդարությունը [այն, ինչ մենք պետք է լինենք, հաստատված և ընդունելի և ճիշտ փոխհարաբերությունների մեջ Նրա հետ, Իր բարության շնորհիվ]»:

Բ Կորնթացիների 5.21, AMP

Շատ հավատացյալներ տանջվում են իրենց իսկ վերաբերյալ ունեցած բացասական մտքերի պատճառով: Նրանք կարծում են, որ Աստված պետք է դժգոհ լինի իրենց թերությունների և ծախողումների պատճառով:

Որքա՞ն ժամանակ եք վատնում մեղքի ու դատապարտության ծանրության տակ ապրելով: Նկատեք, որ ես ասացի *վատնել*, քանի որ նման մտածողությունը հենց ժամանակի վատնում է:

Մի մտածեք, թե ինչ ահավոր մարդիկ էիք դուք նախքան Քրիստոսին ընդունելը: Ավելի լավ է մտածեք Աստծո արդարության մասին, որը Քրիստոսի շնորհիվ դարձավ նաև ձերը: Հիշե՛ք, որ *մտքերը վերածվում են գործողության*: Եթե ցանկանում եք բարելավել ձեր վարքը, նախ սկսեք փոխել ձեր մտածելակերպը: Եթե շարունակեք մտածել, որ դուք սարսափելի անձնավորություն եք, ձեր վարքը միայն կվատանա: Ամեն անգամ, երբ սկսում եք բացասական, դատապարտող մտքեր ստանալ, հիշեցրեք ինքներդ ձեզ, որ Աստված սիրում է ձեզ և դուք Աստծո արդարությունն եք ձեռք բերել Քրիստոսի մեջ:

Աստծո մեջ դուք կշարունակեք փոխվել դեպի լավը: Ամեն օր դուք կաճեք հոգևորում: Աստված փառահեղ ծրագիր ունի ձեր կյանքի համար: Սրանք այն ճշմարտություններն են, որոնց մասին դուք պետք է մտածեք:

Սա այն է, ինչ դուք պետք է անեք ձեր մտքի հետ:

Մտածեք Աստծո Խոսքի համեմատ, ոչ թե ձեր գլխով անցած յուրաքանչյուր միտք ընդունեք որպես ձեր անձնական միտքը:

Քշե՛ք սատանային և սկսե՛ք առաջ գնալ՝ մտածելով միայն լավ բաների մասին:

Քայլ 4. Ունեցե՛ք հորդորող միտք

«Եթե մեկը հորդորում է, թող հորդորի...»:

Չռոմեացիների 12.8

Քրիստոսի միտքն ունեցող մարդը փորձում է ուրիշների, ինչպես նաև իր և իր կյանքի իրավիճակների մասին ունենալ դրական, բարձրացնող, շինություն տվող մտքեր:

Այսօր մարդիկ շատ կարիք ունեն լինել հորդորված և խրախուսված: Ձեր բառերը չեն խրախուսի մարդուն, եթե, նախ և առաջ, ինքների չուրեցնաք լավ մտքեր տվյալ անձնավորության մասին: Հիշե՛ք՝ ինչ որ կա ձեր սրտում, անպայման դուրս կգա ձեր բերանից: Թող ձեր նպատակները դրդված լինեն «սիրո մտքերից»:

Մարդկանց նկատմամբ սիրով լի մտքեր ունեցեք: Նրանց կյանքում հռչակեք հորդորող ու խրախուսող խոսքեր:

Ըստ Վ.Ե.Վայնի «*Հին ու Նոր կտակարանների բառերի բացատրական բառարանի*», հունարեն «*parakaleo*» բառը թարգմանվում է որպես հորդորում, ինչն էլ նշանակում է՝ «կոչ անել մեկին (*para* – կողքին, *kaleo* – կանչել, կոչ անել)...խրատել, որևէ մեկին համոզել՝ որոշակի վարքագիծ նշակել»³: Ես այս սահմանումը մեկնաբանում եմ հետևյալ կերպ. կանգնել մեկի կողքին և նրան կոչ անել՝ որոշակի քայլեր կատարելու համար:

Չռոմեացիների 12.8-ում «հորդորման» պարզևի մասին խոսելիս ասվում է, որ այն ակնհայտ է նրանց մոտ, ովքեր ունեն այդ պարզևը:

Նման մարդիկ միշտ ինչ-որ խրախուսական կամ բարձրացնող խոսքեր են ասում բոլորին, ինչի հետևանքով նրանք իրենց ավելի լավ և ոգևորված են զգում:

Ոչ բոլորին է տրված հորդորման պարզև, բայց բոլորը կարող են սովորել՝ խրախուսել մարդկանց: Դրա համար կա մի պարզ կանոն. եթե տեսնում եք որևէ վատ բան, ապա այդ մասին ո՛չ մտածեք, ո՛չ էլ խոսեք:

Մարդկանց կյանքն առանց այդ էլ լի է դժվարություններով և պետք չէ ձեր խոսքերով նրանց ավելի ընկճեք: Մենք պետք է միմյանց սիրով բարձրացնողներ լինենք (տե՛ս Եփես. 4.29): Մի՛ մոռացեք՝ սերը միշտ հավատում է ամեն մեկի մեջ գոյություն ունեցող լավագույնին (տե՛ս Ա Կորնթ. 13.7):

Սկսեք մարդկանց մասին մտածել լավը և կնկատեք, որ նրանց վարքագիծը փոխվում է դեպի լավը: Մտքերն ու բառերն իրենցից ներկայացնում են անոթներ կամ զենքեր, որոնք պարունակում են ստեղծարար կամ կործանարար զորություն: Դրանք կարող են գործադրվել սատանայի ու նրա գործերի դեմ, կամ կարող են օգտակար լինել նրա կործանիչ ծրագրերի իրականացման համար:

Ենթադրենք՝ դուք մի երեխա ունեք, ով վարքագծի հետ կապված խնդիրներ ունի, և միանշանակ՝ փոխվելու կարիք ունի: Դուք աղոթում եք նրա համար, խնդրում եք Աստծուն, որ աշխատի նրա կյանքի հետ և փոխի նրան: Այժմ ինչպիսի՞ն կլինեն նրա վերաբերյալ ձեր ունեցած մտքերն ու խոսքերը այդ ընթացքում: Շատերը չեն էլ տեսնում իրենց աղոթքների պատասխանները, որովհետև իրենց իսկ մտքերով և բառերով սկսում են հերքել իրենց աղոթքները՝ նախքան Աստված ինչ-որ բան կաներ նրանց կյանքում:

Գուցե դուք աղոթում եք ձեր երեխայի համար, բայց միևնույն ժամանակ նրա մասին վատն եք մտածում: Կամ գուցե աղոթում եք Աստծուն՝ փոխել նրան, բայց միևնույն ժամանակ ուրիշներին ասում եք. «Օ՛հ, այս երեխան երբեք չի փոխվի»: Հաղթանակով ապրելու համար դուք պետք է աշխատեք ձեր մտածելակերպի վրա և մտածեք Աստծո հոսքի համաձայն:

Եվ եթե մեր մտքերը չեն համապատասխանում նրան, ինչ խոսքն է ասում, ուրեմն մենք չենք ապրում խոսքի համաձայն:

Երբ աղոթում եք որևէ մեկի համար, ապա ձեր մտքերն ու խոսքերը համաձայնեցրեք ձեր աղոթքների հետ, և դուք ճեղքում կունենաք:

Ես ձեզ չեմ առաջարկում դուրս գալ հավասարակշռությունից և ժխտել խնդրի գոյության գիտակցումը: Եթե ձեր երեխան դպրոցում վարքագծի հետ կապված խնդիրներ ունի, և ձեր ընկերները հետաքրքրվում են նրա մասին, ապա ինչպե՞ս պիտի վարվեք, եթե իրականում ոչ մի փոփոխություն չեք նկատում նրա պահվածքում: Դուք կարող եք ասել. «Ցավոք, դեռևս ոչ մի շարժ չկա, բայց հավատում եմ, որ Աստված աշխատանք է տանում նրա հետ, ինչը մենք շուտով կտեսնենք»:

Քայլ 5. Չարգացրե՛ք գոհացող միտք

«Մտե՛ք Նրա դռները գոհությունով և Նրա սրահները՝ օրհնաբանությունով. գոհությո՛ւն մատուցեք Տիրոջը և օրհնե՛ք Նրա անունը»:

Սաղմոս 100.4, AMP

Քրիստոսի միտքն ունեցող մարդու մտքերը միշտ լցված են գովասանքով ու երախտագիտությամբ:

Բողոքն ու տրտունջը շատ հաճախ դռներ են բացում թշնամու առջև: Որոշ մարդիկ ֆիզիկապես հիվանդ են ու ապրում են թույլ, անզոր կյանքով տրտունջի պատճառով, որն էլ ազդեցություն է ունենում նրանց մտքերի ու խոսքերի վրա:

Մեր կյանքը չի կարող լիովին հագեցած լինել, եթե մենք անշնորհակալ ենք: Աստվածաշունչը կրկին ու կրկին մեզ սովորեցնում է երախտագիտության սկզբունքները: Մտքում ծնված և խոսքերի միջոցով արտահայտված բողոքները գործի մեջ են դնում մահվան սկզբունքը, իսկ խոսքերի միջոցով արտահայտված շնորհակալությունը՝ կյանքի սզբունքը:

Եթե մարդը չունի շնորհակալ սիրտ (միտք), ապա նրա բերանից

դուրս չեն գա գոհություն արտահայտող խոսքեր: Շնորհակալության զգացումը հարկավոր է արտահայտել բառերով:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՂԵՔ ԱՄԵՆ ԺԱՄԱՆԱԿ

«Հետևաբար, Նրա միջոցով մշտապես Աստծուն գոհության գոհ մատուցենք, որն է՝ մեր շուրթերի պտուղը՝ շնորհակալության գիտակցումն ու խոստովանությունը և Նրա անվան փառաբանումը»:

Եբրայեցիների 13.15, AMP

Որքա՞ն հաճախ պետք է շնորհակալություն հայտնենք: Ամեն ժամանակ՝ ցանկացած իրավիճակում և ամեն բանի համար: Այդպես վարվելով՝ մենք կմտնենք այն հաղթական կյանքի մեջ, որը դուրս է սատանայի վերահսկողությունից:

Ինչպե՞ս կարող է սատանան վերահսկել մեզ, եթե մենք, անկախ մեր իրավիճակներից, լցված լինենք ուրախությամբ ու շնորհակալությամբ: Անկասկած, նման ապրելակերպը ենթադրում է, որ գովասանքն ու գոհությունը երբեմն կարող են մեր գոհը լինել: Բայց ես նախընտրում եմ իմ գոհության գոհը մատուցել Աստծուն, և ոչ թե իմ ուրախությունը գոհաբերել սատանային: Ես մեծ դժվարությամբ վերջապես հասկացա, որ իմ դժկամությամբ գոհաբերված շնորհակալությունն առ Աստված, անկասկած, ինձ կզրկի իմ ուրախությունից: Այլ կերպ ասած՝ ես այն կկորցնեմ տրտունջի ոգու պատճառով:

Սաղմոս 33.1-ում սաղմոսերգուն ասում է. «Ամեն ժամ Տիրոջը կօրհներգեմ, Նրա օրհնությունն ամեն ժամ իմ բերանում կլինի» (AMP): Ինչպե՞ս կարող ենք օրհնել Տիրոջը: Ամեն ժամանակ պետք է *շարունակենք* օրհնել Նրան մեր մտքերում ու խոսքերում:

Եղեք երախտապարտ, լցված շնորհակալությամբ ոչ միայն Աստծո, այլ նաև մարդկանց հանդեպ: Երբ ինչ-որ մեկը ձեզ մի լավ բան է անում, մի մոռացեք հայտնել ձեր երախտագիտությունը նրան:

Ձեր շնորհակալությունը նույնպես հայտնեք ձեր ընտանիքի անդամներին: Հաճախ մեզ համար սովորական են դառնում Աստծո

օրհնությունները: Մենք կկորցնենք ամեն բան, հենց որ սկսենք դադարել շնորհակալ լինելուց:

Ես երախտապարտ եմ իմ ամուսնուն: Մենք երկար ժամանակ է, որ ամուսնացած ենք, բայց դա չի խանգարում ինձ նրան հաճախակի հայտնել իմ շնորհակալությունը: Նա շատ համբերատար մարդ է՝ օժտված լավ հատկանիշներով: Ես գիտեմ, որ մարդկանց հայտնած մեր երախտագիտությունը օգնում է կառուցել ու պահպանել լավ փոխհարաբերություններ՝ հատկապես կարևորելով այն պահերը, որոնց համար մենք շնորհակալ ենք լինում նրանց:

Ես շատ մարդկանց հետ եմ գործ ունենում և շարունակում եմ զարմանալ, թե որքան մարդիկ կան, ովքեր երախտապարտ են լինում իրենց հանդեպ ցուցաբերած յուրաքանչյուր մանրուքի համար, և կան այնպիսիք, ովքեր երբեք չեն բավարարվում նրանով, ինչ մարդիկ անում են իրենց համար: Ես համոզված եմ, որ այս խնդրի մեջ իր մասն ունի հպարտությունը: Ոմանք այնքան տարված են իրենցով, որ չեն էլ նկատում, թե մարդիկ ինչ են անում իրենց համար: Նրանք կարծում են, որ իրենք արժանի են ավելիին, քան որ արվում է: Այդպիսի մարդիկ հազվադեպ են հայտնում իրենց շնորհակալությունը:

Երախտագիտությունն անհրաժեշտ է հայտնել ոչ միայն ուրիշ մարդկանց, այլ նաև ինքներս մեզ, քանի որ դա ավելացնում է մեզանում եղած ուրախությունը:

Ամեն օր մտածեք այն բաների մասին, որոնց համար կարող եք ձեր երախտագիտությունը հայտնել: Ասեք դա Աստծուն ձեր աղոթքների ժամանակ, և երբ դա անեք, ձեր սիրտը կլցվի կյանքով ու լույսով:

ԱՄԵՆ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՂԱՑԵՔ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

«Եվ մի՛ հարբեք գինով, դրա մեջ զեխություն [անբարոյականություն] կա. այլ՝ հատկապես [ցվե՛ք [Սուրբ] Հոգով:

Որպեսզի միմյանց հետ խոսեք [ըստ Քինգ Ջեյմսի տարբերակի՝ «ձեզ հետ խոսեք»] սաղմոսներով, օրհներգություններով և հոգևոր երգերով առ Աստված՝ ձայներդ վեր բարձրացնելով գոհությամբ և [երաժշտական գործիքներով] երգեր ասեք ձեր սրտերում:

**Եվ ամեն ժամանակ գոհանանք ամեն ինչի համար մեր Տեր Հիսուս
Քրիստոսի անունով՝ մեր Հայր Աստծուն»:**

Եփեսացիների 5.18-20, AMP

Ի՛նչ հզոր խոսք է...

Ինչպե՞ս կարող ենք մենք լցված մնալ Սուրբ Հոգով. ինքներս մեզ (մեր մտքերում) կամ ուրիշներին (մեր խոսքերով) ասելով սաղմոսներ և օրհներգություններ ու հոգևոր երգեր: Ես չեմ կարծում, որ սա մշակում է, որ մենք պետք է միայն միմյանց հետ շփվենք Աստծո խոսքերով և երգեր երգելով, ոչ՝ մենք պետք է մեր մտքերն ու խոսքերը լցնենք Աստծո խոսքով՝ փառաբանելով Նրան *ամեն ժամանակ ու շնորհակալություն հայտնելով ամեն ինչի համար:*

Քայլ 6. Մտածե՛ք Աստծո խոսքի մասին

«Եվ ձեր սրտերում չի ապրում Նրա խոսքը [Նրա մտքերը], քանի որ դուք չեք հավատում, ապավինում ու վստահում Նրան, Ում Նա ուղարկեց: [Այդ պատճառով էլ կենդանի չեք պահում Նրա ուղերձը ձեզանում, որովհետև չեք հավատում այն Ավետաբերին, Ում Նա ուղարկել է]»:

Հովհաննես 5.38, AMP

Աստծո խոսքը Նրա մտքերն են՝ հանձնված թղթին, որպեսզի մենք կարողանանք ուսումնասիրել և հասկանալ այն: Նրա խոսքն այն մասին է, թե ինչ է Նա մտածում ցանկացած իրավիճակի կամ հարցի շուրջ:

Հովհաննեսի Ավետարանի 5.38-րդ խոսքում կարդում ենք, թե ինչպես Հիսուսը հանդիմանեց որոշ անհավատների: Այս խոսքը ցույց է տալիս, որ Աստծո խոսքը Նրա մտքերի արտացոլումն է թղթի վրա, և այն մարդիկ, ովքեր ցանկանում են հավատալ և վայելել հավատքի բոլոր բարի պտուղները, պետք է թույլ տան, որպեսզի Նրա խոսքը կենդանի ուղերձ լինի իրենց սրտերում: Դա տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ մտածում ենք Աստծո խոսքի մասին: Միայն այդպես կարող են Նրա մտքերը դառնալ մեր մտքերը: Դա է միակ ճանապարհը՝ Քրիստոսի միտքը մեզանում զարգացնելու համար:

Հովհաննեսի Ավետարանի 1.14-րդ խոսքում ասվում է, որ Հիսուսն էր այդ խոսքը, որ հայտնվեց մարմնով: Դա Նրան անհնար կլիներ,

եթե Նրա միտքը միշտ լցված չլիներ Աստծո հոսքով:

Աստծո հոսքի շուրջ խորհելը կենսական կարևոր սկզբունքներից մեկն է, որ պետք է սովորենք: Վ.Ե. Վայնի «*Յիմ և Նոր կտակարանների բառերի բացատրական բառարանը*» «մտորել» բառը սահմանում է հետևյալ կերպ՝ «հոգ տանել», «ուշադրություն ցուցաբերել, կիրառել գործնականում», «ջանք ներդնել», «գործադրել՝ բառիս լայն իմաստով», «խորհել, պատկերացնել», «կշռադատել, խորհել»⁴: Մեկ այլ տեղ այդ բառը նշանակում է «քթի տակ խոսել» կամ «շշնջալ»⁵:

Ցանկանում եմ շեշտել այս սկզբունքի կարևորությունը: Ես այն կոչում եմ կյանքի սկզբունք, որովհետև Աստծո հոսքի շուրջ խորհելը ձեզ և ձեզ շրջապատող մարդկանց լցնում է կյանքով:

Շատ քրիստոնյաներ սկսել են վախենալ «մտորել» բառից, որովհետև որոշ հեթանոսական կրոնների և օկուլտիզմի մեջ լայնորեն օգտագործվում է «*խորհել*» տերմինը: Բայց ես ուզում եմ հիշեցնել, որ սատանան երբեք ի վիճակի չէ որևէ նոր բան հնարելու: Նա սովորաբար վերցնում է այն, ինչ պատկանում է Լուսի թագավորությանը, և աղավաղելով՝ օգտագործում է իր խավարի թագավորության համար: Մենք պետք է բավական իմաստուն լինենք գիտակցելու համար, որ եթե մտորելը կարող է այդչափ զորությամբ լցնել խավարը, այն կզորացնի նաև լուսի զավակներին: Մտորելու սկզբունքը սկիզբ է առնում հենց Աստծո հոսքից. եկեք նայենք, թե ինչ է ասում Աստվածաշունչն այդ մասին:

ՄՏՈՐԵՔ ԵՎ ԲԱՐԳԱՎԱՃԵՔ

«Այս Օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ՝ գիշեր ու ցերեկ Նրա վրա մտածես, որ պահես ու կատարես բոլոր նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես, և այն ժամանակ խելամուտ կլինես»:

Չեսու 1.8

Այս խոսքում Աստված հստակ ասում է, որ մենք չենք կարողանա հոսքն իրականացնել, եթե մտովի չմարզենք մեր միտքը:

Սաղմոս 1.2,3-ում խոսվում է բարեպաշտ մարդու մասին. «Այլ՝ նրա բերկրանքն ու ցանկությունն է Տիրոջ օրենքը և Նրա իրավունքը

(Աստծո ցուցմունքները, հրահանգները, ուսմունքները) և, սովորաբար, նա խորհում (մտորում և ուսումնասիրում) է դրանց շուրջ օրուգիշեր: Եվ նա նման է մի ծառի՝ ամուր տնկված գետի ջրերում, որն իր պտուղը կտա իր ժամանակին. նրա տերևները նույնպես չեն թառամի, և ինչ-որ նա անի՝ կհաջողվի» (AMP):

ՄՏՈՐԵՔ ԵՎ ԿԼԻՆԵՔ ԲԺՇԿՎԱԾ

«Որդյա՛կ իմ, ուշադի՛ր եղիր իմ խոսքերին, համաձայնիր և ընդունիր Իմ ասածները. թող դրանք չհեռանան քո հայացքից, պահիր դրանք քո սրտի կենտրոնում: Քանի որ դրանք կյանք են այն գտնողների համար և բժշկություն ու առողջություն՝ նրանց մարմինների համար»:

Ուսկաց 4.20-22, AMP

Եթե հիշենք, որ «մտորել» բառի իմաստային սահմանումներից մեկը նշանակում էր «ուշադրություն ցուցաբերել», ապա հարկ կլինի ուշադրություն ցուցաբերել այս խոսքին, որն ասում է, որ Տիրոջ խոսքերը բժշկություն և առողջություն են մեր մարմինների համար:

Աստծո խոսքի վրա մտորելը (խորհելն ու մտածելը), անշուշտ, բարերար ազդեցություն կթողնի մեր ֆիզիկական մարմնի վրա: Այս տարիների ընթացքում, Աստծո հետ շփվելիս, ես արտաքննապես փոխվել եմ: Ես ավելի լավ տեսք ունեմ, որովհետև ավելի քիչ եմ անհանգստանում և տխուր կամ դժբախտ չեմ: Դժբախտությունն իր հետքն է թողնում մեր դեմքի վրա, նույնը լինում է նաև ուրախության դեպքում: Որքան երջանիկ եմք, այնքան երիտասարդ եմք երևում, և թեպետ ես տարեց տարի մեծանում եմ, սակայն օրեցօր ներքուստ թարմանում և նորոգվում եմ, ինչն էլ արտաքննապես երևում է:

ԼՍԵՔ ԵՎ ՀՆՁԵՔ

«Ինչ չափով [միտք և ուսումնասիրություն] դուք տալիս եք [ճշմարտությունը լսելու համար], նույն չափով [առաքինություն ու գիտություն] կտրվի ձեզ»:

Մարկոս 4.24, AMP

Սա նման է ցանքի և հունձքի: Որքան շատ ցանենք, այնքան շատ կհնձենք հունձքի ժամանակ: Տերն ասում է Մարկոսի Ավետարանի 4.24-ում, որ ինչքան շատ ժամանակ հատկացնենք մեր լսած խոսքի շուրջ մտորելուն և ուսումնասիրելուն, այնքան ավելի շատ բան «կհնձենք» խոսքից:

ԿԱՐԴԱՑԵՔ ԵՎ ՀՆՁԵՔ

«[Բաները թաքցված են ժամանակավորապես միայն որպես հայտնության միջոցներ]: Չկա ոչ մի թաքցված բան, որ հայտնի չլինի, և ոչ էլ որևէ բան, որ գաղտնի մնա և չկատարվի»:

Մարկոս 4.22, AMP

Այս երկու խոսքերն ասում են, որ խոսքի մեջ թաքնված են անգին հարստություններ, զորավոր կյանք պարզևող գաղտնիքներ, որոնք Աստված ցանկանում է հայտնել մեզ: Դրանք ի հայտ են գալիս նրանց կյանքում, ովքեր անդադար մտորում, խորհում, ուսումնասիրում, մտածում, մտովի կիրառում և շշնջում են Աստծո խոսքը:

Որպես Աստծո խոսքի ուսուցիչ, ես անձամբ գիտեմ այս սկզբունքի ճշմարտացիությունը: Թվում է՝ վերջ չկա այն գանձերին, որոնք Աստված բացահայտում է յուրաքանչյուր սուրբգրային խոսքի մեջ: Տարբեր ժամանակ ուսումնասիրելով միևնույն խոսքը՝ ես կարող եմ ստանալ տարբեր նոր հայտնություններ, որոնք նախկինում չէի նկատել:

Տերը շարունակում է հայտնել Իր գաղտնիքները նրանց, ովքեր ջանասիրաբար ուսումնասիրում են Իր խոսքը: Մի՛ եղեք այնպիսին, ովքեր միշտ ցանկանում են ապրել ուրիշի ստացած հայտնություններով: Ուսումնասիրեք խոսքն ինքներդ և թո՛ւյլ տվեք Սուրբ Հոգուն՝ օրհնել ձեր կյանքը ճշմարտությամբ:

Ես դեռ երկար կարող եմ խոսել Աստծո խոսքի շուրջ մտորելու թե՛ մայի մասին: Ինչպես արդեն ասել եմ, դա այն առավել կարևոր բաներից մեկն է, որ մենք պետք է սովորենք անել: Ջրաղվելով ձեր առօրյա գործերով՝ խնդրեք Սուրբ Հոգուն՝ հիշեցնել ձեզ աստվածաշնչյան

որևէ հատված, որի շուրջ կսկսեք մտածել: Դուք կգարմանաք, թե ինչ գործությամբ կլցվի ձեր կյանքն այդ սկզբունքի կիրառման շնորհիվ: Որքան շատ մտածեք Աստծո խոսքի մասին, այնքան ավելի հեշտությամբ կանցնեք կյանքի դժվարին պահերը: *Հիշե՛ք՝ Աստծո խոսքի մասին մտածելը ձեզ գործություն և ունակություն կտա՝ այն կատարելու համար:*

ՀԵՋՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՔ ԽՈՍՔԸ

«...Դեն գցելով ամեն աղտեղություն և չարիքի ավելցուկ, հեզությամբ (համեստությամբ) ընդունեք ձեր մեջ (սրտերում) սերմանված խոսքը, որ զորավոր է փրկելու ձեր հոգիները»:

Չակոբոս 1.21

Այս խոսքում տեսնում ենք, որ խոսքը զորություն ունի մեղավոր կյանքից մեզ փրկելու համար, բայց միայն այն դեպքում, եթե ընդունում ենք այն հեզությամբ և արմատավորում մեր սրտերում (մտքերում): Արմատավորումը տեղի է ունենում Աստծո խոսքի նկատմամբ ուշադրություն ցուցաբերելով, այսինքն՝ երբ այն ավելի շատ տեղ է զբաղեցնում մեր մտքերում, քան ցանկացած այլ բան:

Եթե մենք ամեն ժամանակ մտածենք մեր խնդիրների մասին, մենք ավելի շատ կարմատավորվենք դրանցում: Եթե մտածենք, թե ինչ սխալ բաներ են կատարվում մեր կամ ուրիշների կյանքում, մենք ավելի շատ կընկնենք այդ խնդիրների դատապարտության տակ և երբեք չենք տեսնի դրանց լուծումները: Սա նման է կյանքով լի հսկայական մի օվկիանոսի, իսկ մեզ տրված է այն գործիքը, որով պետք է ջանասիրաբար աշխատենք՝ ուսումնասիրելով և մտածելով Աստծո խոսքի շուրջ:

Մեր ծառայությունը կոչվում է «Վայելել ամենօրյա կյանքը», և իմ փորձառությունից ելնելով կարող եմ ասել, որ մենք իսկապես կարող ենք վայելել կյանքը՝ սիրելով Աստծո խոսքը և հնազանդվելով նրան:

ԸՆՏՐԵՔ ԿՅԱՆՔԸ

«Մարմնի միտքը [որը զգում և հասկանում է առանց Սուրբ Հոգու] մահ է, [մահ, որը ենթադրում է մեղքից ծնվող բոլոր տեսակի դժբախտություններն այժմ և հավիտյան]: Իսկ [Սուրբ] Հոգու միտքը կյանք է և [հոգու] խաղաղություն [այժմ և հավիտյան]»:

Հռոմեացիների 8.6, AMP

Այս գլուխն ամփոփելու համար կարծում եմ, որ լավ կլինի ձեր ուշադրությունը կրկին հրավիրել Փիլիպեցիների 4.8-րդ խոսքին. «Այսուհետև, եղբայրներ, ինչ ճշմարիտ է, ինչ արժանի է ակնածանքի և պատվավոր է ու վայելուչ, ինչ արդար է, ինչ մաքուր է, ինչ սիրելի և սքանչելի է, ինչ բարի է, իմաստուն և շնորհքով, եթե առկա է որևէ առաքինություն ու կատարելություն, եթե կա մի բան արժանի գովաբանության, ապա մտածիր դրա մասին և հաշվի առ այս ամենը [մտքերդ նորոգիր այդ ամենով]» (AMP):

Այս խոսքը բնութագրում է ձեր մտքի վիճակը: Դուք ունեք Քրիստոսի միտքը, ուրեմն սկսեք օգտագործել այն: Եթե Նա թույլ չի տալիս որևէ միտք, ապա դուք նույնպես պետք է հրաժարվեք դրանից:

Եթե սկսեք անընդհատ վերահսկել ձեր մտքերը, ապա դուք կսկսեք գերի վերցնել ձեր բոլոր մտքերը և հնազանդեցնել դրանք Քրիստոսին (տե՛ս Բ Կորնթ. 10.5):

Սուրբ Հոգին ազդանշան կտա ձեզ, երբ ձեր միտքը սխալ ուղղությամբ գնա, սակայն այդ պահին որոշումը ձերն է լինելու՝ հետևե՞լ ազդանշանին, թե՞ անտեսել այն: Դուք կվարվեք մարմնի մտքի համեմատ, թե՞ Հոգու: Դրանցից մեկը տանում է դեպի մահ, իսկ մյուսը դեպի կյանք: Ընտրությունը ձերն է:

Ընտրե՛ք կյանքը...

Մաս III

***Անպատասխան
մտածելակերպեր***

Ներածություն

Ի սրայելի ժողովուրդն անապատում թափառում էր քառասուն տարի, թեև այդ հեռավորությունը կարելի էր անցնել տասնմեկ օրում: Ինչո՞ւ: Ի՞նչն էր խոչընդոտ հանդիսանում նրանց ճանապարհին. թշնամիներ՞ը, հանգամանքներ՞ը, փորձություններ՞ը, թե՞ մեկ ուրիշ բան:

Մինչև ես խորհում էի այս իրավիճակի շուրջ, Աստված ինձ մի հզոր հայտնություն տվեց, որն օգնեց ինչպես ինձ, այնպես էլ հազարավոր մարդկանց: Տերն ասաց. «Իսրայելի որդիները տասնմեկ օրվա փոխարեն քառասուն տարի վատնեցին անապատում, որովհետև նրանք ունեին «անապատային մտածելակերպ»:

«Սեիր լեռան վրայով [ընդամենը] տասնմեկ օրվա ճանապարհ է Քորեթից դեպի Կադես-Բառնես [Քանանի սահմանը, սակայն իսրայելացիներից պահանջվեց քառասուն տարի, որպեսզի այն գրավեին]»:

Երկրորդ Օրինաց 1.2, AMP

ԲԱՎԱԿԱՆ ԵՐԿԱՐ ՄՆԱՑԻՔ...

«Մեր Տեր Աստված խոսեց մեզ հետ Քորեթի վրա. «Բավական երկար մնացիք այս սարի վրա»:

Երկրորդ Օրինաց 1.6, AMP

Իրականում իսրայելացիները չպետք է մեզանում զարմանք առաջացնեն, քանի որ մեզանից շատերն են վարվում նրանց նման: Մենք առաջ զնալու փոխարեն շարունակում ենք պտտվել միևնույն սարի շուրջը: Արդյունքում՝ մեզանից տարիներ են պահանջվում, մինչև որ հաղթանակ ենք ունենում այն հարցերում, որոնք հնարավոր էր և պետք էր լուծել շատ արագ:

Կարծում եմ՝ Աստված նույն բանը, ինչ որ ասում էր Իսրայելի ժո-

ղովորդին, այժմ մեզ է ասում. «Քավական երկար մնացիք այս սարի վրա... ժամանակն է՝ շարժվելու»:

ՄՏԱԾԵՔ ՎԵՐԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վերինները մտածեք, ոչ թե երկրի վրայինները»:

Կողոսացիների 3.2

Աստված ինձ ցույց տվեց տասը «անապատային մտածելակերպեր», որոնց պատճառով իսրայելացիները մնացին անապատում: Անապատային մտածելակերպը սխալ մտածելու ձևն է:

Մեր մտածելակերպը կարող է լինել ինչպես ճիշտ, այնպես էլ՝ սխալ: Առաջինը կարող է օգուտ բերել մեզ, իսկ երկրորդը՝ ցավ ու խոչընդոտ հանդիսանալ մեր առաջընթացի համար:

Կողոսացիների ուղերձի 3.2-րդ խոսքը սովորեցնում է մեզ մեր մտքերն ուղղել վերին բաների մասին մտածելու ուղղությամբ: Մենք պետք է մեր միտքը կենտրոնացնենք ճիշտ բաների վրա: Սխալ մտածողությունն իր վատ ազդեցությունը կունենա ոչ միայն մեր հանգամանքների, այլ նաև մեր ներքին կյանքի վրա:

Որոշ մարդիկ անապատային կյանք ունեն, որովհետև նրանք իրենցից «անապատ» են *ներկայացնում*:

Կային ժամանակներ, երբ իմ հանգամանքներն այդքան էլ վատ չէին, բայց ես չէի կարողանում վայելել կյանքս, քանի որ ներքուստ «անապատ» էի: Մենք ունեինք գեղեցիկ տուն, չորս հրաշալի երեխաներ, լավ աշխատանք և բավարար գումար՝ հարմարավետ կյանքով ապրելու համար: Ես չէի կարողանում վայելել մեր օրհնությունները, որովհետև ես որոշ հարցերի վերաբերյալ ունեի անապատային մտածելակերպ: Իմ կյանքն ինձ անապատ էր թվում, որովհետև ես ամենուր անապատ էի տեսնում:

Որոշ մարդիկ ամեն բան սև են տեսնում, քանի որ իրենց ողջ կյանքում եղել են դժբախտ և երբեք չեն էլ կարողացել պատկերացնել, որ իրենց կյանքում երբևէ ինչ-որ բան կփոխվի դեպի լավը: Կան մարդիկ, ովքեր տեսնում են բոլոր վատ և բացասական բաները, քանի որ

իրենք ներքուստ այդպիսին են: Ինչ պատճառ էլ, որ սա ունենա, միևնույն է, բացասական վերաբերմունքը մարդուն ստիպում է ընկնել դժբախտության ու անհաջողության մեջ՝ թույլ չտալով ունենալ առաջընթաց և հասնել Ավետյաց երկիր:

Աստված Իսրայելի որդիներին դուրս հանեց եգիպտական ստրկությունից և կոչ արեց՝ գնալ Խոստմունքի երկիր, որը Նա խոստացել էր տալ որպես ժառանգություն: Դա մի երկիր էր, որտեղ կաթ ու մեղր էր բխում (տե՛ս Ելից 3.8), որն առատ էր այն ամենով, ինչը միայն կարելի է պատկերացնել: Դա մի երկիր էր, որտեղ մարդկանց կարիքները բավարարված էին, և նրանք բարգավաճում էին իրենց կյանքի ամեն բնագավառում:

Եգիպտոսից դուրս եկած իսրայելացիների մեծ մասը չմտավ Խոստացված երկիր: Նրանք մնացին անապատում: Ըստ իս, սա ամենատխուր իրադարձություններից է, որ կարող է պատահել Աստծո զավակի կյանքում՝ ունենալ այդքան հնարավորություններ և դրանցից ոչ մեկը երբեք չօգտագործել:

Տարիներ շարունակ իմ քրիստոնեական կյանքում ես եղել եմ այդ մարդկանցից մեկը: Ես ճանապարհ էի ընկել դեպի Ավետյաց երկիր (Երկինք), բայց այդ ուղևորությունն ինձ ուրախություն չէր պարգևում: Ես դժբախտ էի անապատում: Բայց, փա՛ռք Աստծուն Իր ողորմության համար, որ լույս վառեց իմ խավար կյանքում և դուրս հանեց ինձ այնտեղից:

Ես աղոթում եմ, որ հաջորդ գլուխները լուսավորեն ձեր կյանքն ու պատրաստեն ձեզ, որպեսզի դուրս գաք անապատից և մտնեք Աստծո թագավորության փառահեղ լույսի մեջ:

Գլուխ
16

**«Իմ ապագան որոշվում
է իմ անցյալով և ներկայով»:**

Անաստասյան մրաօճելակերպ. թիվ 1

Նկատեք, թե որքան բացասական էին այս մարդիկ. նրանք տրտմջում էին և պատրաստ էին հեշտությամբ հանձնվել, որքեր գերադասում էին ետ վերադառնալ իրենց գերությանը, քան՝ անցնել այդ անապատն ու հասնել Ավետյաց երկիր:

Իրականում, նրանք որևէ խնդիր չունեին, այլ՝ հենց իրենք էին խնդիրը:

ՎԱՏ ՄՏՔԵՐԸ ԾՆՈՒՄ ԵՆ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

«Ժողովուրդը խմելու ջուր չուներ, ուստի հավաքվեց Մովսեսի և Ահարոնի դեմ:

Եվ ժողովուրդը գանգատվում էր Մովսեսի դեմ ու ասում. «Ավելի լավ կլիներ, եթե մենք էլ մեռնեինք, երբ մեր եղբայրները կոտորվում էին Տիրոջ առջև:

Ինչո՞ւ Տիրոջ ժողովրդին բերեցիք այս անապատը, որ կոտորվենք մենք ու մեր անասունները»:

Թվոց 20.2-4, AMP

Իսրայելացիների խոսքերից կարելի է հեշտությամբ հասկանալ, որ նրանք ամենևին էլ չէին վստահում Աստծուն: Նրանց տրամադրվածությունը բացասական էր, այնպիսին, ինչպիսին սովորաբար ունենում են պարտություն տարած մարդիկ: Նրանք արդեն որոշել էին, որ ինչ էլ սկսեն, ավարտվելու էր իրենց անհաջողությամբ ու մահով: Նրանց վերաբերմունքը ցույց էր տալիս իրենց սխալ մտածելակերպը:

Վատ վերաբերմունքը վատ մտքերի արդյունքն է:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ

ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԵՐԱԽՏՈՒԹՅՈՒՆ

«Հովր լեռից շարժվելով դեպի Կարմիր ծովը տանող ճանապարհով, նրանք շրջանցեցին Եդովմը: Մարդիկ սկսեցին կորցնել իրենց համբերությունը [ընկճվեցին, հուսահատվեցին] ճանապարհի [վիրծությունների] պատճառով:

Եվ ժողովուրդը սկսեց խոսել Աստօծ և Մովսեսի դեմ. «Ինչո՞ւ մեզ դուրս հանեցիք Եգիպտոսից, որ այս անապատում կոտորվե՞նք: Քանի որ չկա ոչ հաց, ոչ ջուր: Մենք զզվել ենք այս թեթև [արհամարհելի, ոչ պինդ] մանանայից»:

Թվոց 21.4,5, AMP

Վերոհիշյալ խոսքում նկարագրված իրավիճակի նկատմամբ իսրայելացիների ունեցած սխալ վերաբերմունքը ցույց է տալիս, որ նրանք բոլորովին զուրկ էին երախտագիտության զգացումից: Իսրայելի որդիները փոխարենը շարունակեին իրենց ճանապարհը, նրանք չէին կարողանում չմտածել այն մասին, թե որտեղից էին եկել և, թե որտեղ են գտնվում արդեն բավականին երկար ժամանակ:

Չէր խանգարի նրանց հիշել իրենց նախահայր Աբրահամին: Նա էլ էր իր կյանքում անցել հիասթափության այդպիսի փորձություններով, բայց թույլ չէր տվել, որպեսզի դրանք իրենց բացասական ազդեցությունն ունենային իր ապագայի վրա:

ԿՅԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՎԵՃԵՐԻ

«Եվ կռիվ եղավ Աբրամի հոտերի հովիվների և Դովտի հոտերի հովիվների միջև: Եվ քանանացիներն ու փերեզացիներն այդ ժամանակ բնակվում էին այդ երկրում [ինչն ավելի էր դժվարացնում անասունի կեր ճարելը]:

Այնուհետև Աբրամն ասաց Դովտին. «Ես աղաչում եմ քեզ, թող կռիվ չլինի քո և իմ միջև, կամ քո հովիվների և իմ հովիվների միջև, քանի որ մենք բարեկամներ ենք:

Մի՞թե ողջ երկիրն առջևդ չի փռված: Առանձնացիր ինձանից, աղաչում եմ: Եթե դու գնաս ձախ կողմ, ապա ես կգնամ աջ կողմ, կամ՝ եթե դու ընտրես աջ կողմը, ուրեմն ես կգնամ ձախ կողմ»:

Եվ Դովտը նայեց և տեսավ, որ Զորդանանի բոլոր հովիտներն էլ շատ ջրով ոռոգված էին: Նախքան Տիրոջ կողմից Սողոմն ու Գոմորը կործանելը [ամենուրեք] այն նման էր Տիրոջ պարտեզին, Եգիպտոսի երկրի պես՝ Սեզովրի ճանապարհներին:

Հետո Դովտն ընտրեց Զորդանանի ողջ դաշտավայրը և գնաց դեպի արևելք: Այսպիսով՝ նրանք առանձնացան»:

Ծննդոց 13.7-11, AMP

Աբրահամը գիտեր վեճերի մեջ թաքնված վտանգի մասին, այդ պատճառով էլ Ղովտին առաջարկեց առանձնանալ: Սիրո մեջ ապրելու և հետագայում վեճերից խուսափելու համար Աբրահամն իր եղբորորդուն թույլ տվեց ընտրել այն հովիտը, որտեղ ինքն էր ցանկանում ապրել: Ղովտն ընտրեց լավագույնը՝ Հոբոթանանի հովիտը, և նրանք առանձնացան:

Պետք է հիշենք, որ Ղովտը սկզբում ոչինչ չուներ, և նա օրհնվում էր Աբրահամի շնորհիվ: Աբրահամը կարող էր ուրիշ վերաբերմունք ունենալ Ղովտի հանդեպ, բայց այդպես չվարվեց: Աբրահամը գիտեր, որ եթե ինքը վարվի Աստծո կամքի համեմատ, Նա հոգ կտանի իր համար:

ԱԶԶԵՐԴՎԵՐ ԲԱՐՁՐԱՅՐՈՒ ԵՎ ՆԱՅԻՐ

«Ղովտի հեռանալուց հետո Աստված ասաց Աբրահամին. «Կանգնածդ տեղից աչքերդ վեր բարձրացրու և նայիր դեպի հյուսիս ու հարավ, դեպի արևելք ու արևմուտք:

Այն բոլոր երկիրը, որ աչքդ տեսնում է, ես կտամ քեզ և քո սերունդներին հավիտյան»:

Ծանոթոց 13.14,15, AMP

Այս հատվածը պարզորոշ ցույց է տալիս այն հանգամանքը, որ թեև Աբրահամը Ղովտի հեռանալուց հետո գտնվում էր անմխիթար վիճակում, Աստված ցանկացավ, որ նա վեր նայի իր կանգնած տեղից դեպի այն երկիրը, որ Աստված ցանկանում էր տալ նրան:

Աբրահամը տվյալ իրավիճակում ցուցաբերեց լավ վերաբերմունք, և արդյունքում սատանան չկարողացավ պահել Աստծո օրհնությունները նրա կյանքից: Աստված նրան ավելի շատ ունեցվածք տվեց, քան նա ունեցել էր Ղովտից առանձնանալուց առաջ. Նա Աբրահամին ամեն ինչով առատապես օրհնեց:

Խորհուրդ եմ տալիս ձեզ՝ ձեր ապագային նայել դրական տեսանկյունից և գոյություն չունեցող բաները կանչել որպես գոյություն ունեցող (տե՛ս Հռոմ. 4.17): Ձեր ապագայի մասին մտածեք և խոսեք ոչ թե ձեր անցյալի ու ներկայի համեմատ, այլ այն ամենի, ինչ Աստված է դրել ձեր սրտում:

Գլուխ

17

**«Թող ինչ-որ մեկն
անի դա իմ փոխարեն. ես
պատասխանատվություն վերցնելու
ցանկություն չունեմ»:**

Անպատասխան մտածելակերպ. թիվ 2

**«Թող ինչ-որ մեկն անի
դա իմ փոխարեն. ես
պատասխանատվություն վերցնելու
ցանկություն չունեմ»:**

Գլուխ
17

Անպատասխան մտածելակերպ. թիվ 2

Պատասխանատվության հասկացողությունը երբեմն բնորոշվում է նրանով, թե ինչպես է մարդն արձագանքում Աստուծոց իրեն տրված կարողությունների: Պատասխանատու անձ լինելը նշանակում է օգտագործել այն հնարավորությունները, որոնք Աստված դնում է մեր առջև:

«Եվ Թարսն առավ իր որդի Աբրամին և իր թոռ Առանի որդի Ղովկին և իր որդի Աբրամի կնոջը՝ իր հարս Սառային, և նրանց հետ քաղդեացիների Ուր քաղաքից դուրս եկավ Քանանի երկիրը գնալու համար. և եկան մինչև Խառան և այնտեղ բնակվեցին»:

Ծննդոց 11.31

Աստված Աբրահամի հոր վրա պատասխանատվություն դրեց՝ տեղափոխվելու դեպի Քանան: Բայց այդ ամբողջ ճանապարհը Տիրոջ հետ անցնելու փոխարեն նա որոշեց կանգ առնել և հաստատվել Խառանում:

Ինչպիսի՞ ոգևորությամբ ենք լցվում, երբ Աստված խոսում է մեզ հետ և հնարավորություն ընձեռում ինչ-որ բան անելու: Սակայն ինչպես Թարան, շատ անգամներ մենք նույնպես չենք ավարտում այն, ինչ սկսում ենք, որովհետև մտնելով դրա մեջ, հանկարծ գիտակցում ենք, որ այն մեզանից բավականին ջանք ու եռանդ կպահանջի:

Ցանկացած նոր նախաձեռնություն սկսվում է մեծ խանդավառությամբ, բայց, ընդամենը այն պատճառով, որ այն նոր է: Ոգևորվածությունը կարող է մարդուն առաջ տանել մի որոշ ժամանակ, բայց դա նրան չի կարողանա անցկացնել ավարտի գծից:

Շատ հավատացյալներ վարվում են այնպես, ինչպես վարվեց Թարան: Նրանք իրենց ուղին սկսում են մի վայրից և հաստատվում են մեկ այլ վայրում: Նրանք հոգնում են, թուլանում, ցանկանում ավարտին հասցնել բռնած գործը, սակայն, իրականում, նրանք չեն ցանկանում պատասխանատվություն ստանձնել այդ ամենն իրականացնելու համար: Եթե նրանց փոխարեն դա անի մեկ ուրիշը, նրանք հաճույքով կհամաձայնեն «հնձել» դրա օգուտը, բայց դա այդպես չի լինում:

ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱՆՁՆԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԼԻԱԶՈՐԵԼ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ

«Եվ եղավ հետևյալ օրը, որ Մովսեսն ասաց ժողովրդին. «Դուք մեծ մեղք գործեցիք. և հիմա Եհովայի մոտ պիտի վեր գնամ, գուցե քավություն անեմ ձեր մեղքի համար»: Եվ Մովսեսը ետ դարձավ Եհովայի մոտ և ասաց. «Ո՛հ, այս ժողովուրդը մեծ մեղք գործեց և իրենց համար ոսկի աստվածներ շինեցին: Բայց հիմա, եթե նրանց մեղքերը ներես՝ ներիր, եթե ոչ՝ աղաչում եմ՝ ջնջիր ինձ Քո գրած գրքից»»:

Ելից 32.30-32

Կարդալով և ուսումնասիրելով իսրայելացիներին վերաբերող այս հատվածները, ես նկատեցի, որ նրանք չէին ցանկանում որևէ պատասխանատվություն վերցնել իրենց վրա: Նրանց համար աղոթում էր Մովսեսը, նրանց փոխարեն Աստծուն փնտրում էր Մովսեսը և, նույնիսկ, նրանց փոխարեն ապաշխարում էր Մովսեսը, երբ նրանք ընկնում էին որևէ խնդիրների մեջ (տե՛ս Ելից 32.1-14):

Երեխան քանի դեռ փոքր է՝ չի կարող որևէ բանի համար պատասխանատվություն ստանձնել, բայց երբ նա մեծանում է, նրա պատասխանատվության զգացումը նույնպես պետք է մեծանա: Ծնողների խնդիրներից մեկն այն է, որ սովորեցնի երեխային՝ պատասխանատվություն ստանձնել: Աստված ցանկանում է Իր զավակներին սրանում կրթել:

Տերն ինձ հնարավորություն է տվել ամբողջ ժամանակով լինել ծառայության մեջ՝ սովորեցնելով Նրա Խոսքը միջազգային ռադիո-

յով և հեռուստատեսությամբ, ինչպես նաև Ավետարանը քարոզել ամբողջ Միացյալ Նահանգներում և այլ երկրներում: Բայց կարող եմ ձեզ հավաստիացնել, որ այդ կոչումն իր հետ բերել է պատասխանատվություն, որի լրջությունը շատերը չեն էլ հասկանում: Շատերն են ասում, որ կցանկանային լինել ծառայության մեջ, քանի որ նրանց թվում է, թե դա պարզապես հոգևոր զբաղմունք է:

Շատ մարդիկ են գալիս մեզ մոտ աշխատելու ցանկությամբ: Նրանք մտածում են, որ չկա ավելի սքանչելի բան, քան քրիստոնեական ծառայության անդամ լինելը: Բայց ավելի ուշ նրանք հայտնաբերում են, որ պետք է աշխատեն այնպես, ինչպես կաշխատեին ցանկացած այլ վայրում: Նրանք պետք է արթնանան վաղ առավոտյան և ժամանակին լինեն աշխատավայրում, պետք է ենթարկվեն ղեկավարությանը, հետևեն օրվա աշխատակարգին և այլն: Երբ մարդիկ մեզ մոտ աշխատելու ցանկություն են հայտնում, մենք ասում ենք նրանց, որ մենք ողջ օրը չենք սավառնում ամպերի մեջ՝ երգելով «Ալելուիա» երգը, այլ՝ աշխատում ենք, և այն էլ՝ ջանասիրաբար: Մենք քայլում ենք միաբանության մեջ՝ ձգտելով մեր գործը կատարել գերազանց:

Իհարկե, քրիստոնեական ծառայության մեջ աշխատելն արտոնություն է: Սակայն մենք փորձում ենք պարզ դարձնել բոլոր նրանց համար, ովքեր ցանկություն են հայտնում մեզ մոտ աշխատել, որ սկզբնական շրջանում նրանց մոտ առաջացած խանդավառության և ոգևորության ազդեցությունն անցնելուց հետո, նրանցից պահանջվելու է բարձր մակարդակի պատասխանատվություն:

ԳՆԱ՛ ՄՐՋՅՈՒՆԻ ՄՈՏ

«Գնա՛ մրջյունի մոտ, ո՛վ ծույլ, նրա ճանապարհները տես և իմաստուն եղիր:

Որ իշխան, ոստիկան և տիրող չունի, բայց իր կերակուրը պատրաստում է ամռանը և իր ուտելիքը հունձքի ժամանակ է հավաքում:

Մինչև ե՞րբ ես պառկելու, ո՛վ ծույլ, ե՞րբ ես գարթնելու քնիցդ:

Մի քիչ քուն, մի քիչ ննջել, մի քիչ էլ ձեռք-ձեռքի դնել պառկել:

Այն ժամանակ քո աղքատությունը ճանապարհորդի պես կգա, և քո կարոտությունը՝ սպառազինյալ մարդու պես [դարձնելով քեզ անօգնական]»:

Առակաց 6.6-11, AMP

Իսրայելացիների անապատում տասնմեկօրյա ճանապարհը քառասուն տարում անցնելու պատճառներից մեկը նրանց ծուլ միտքն էր:

Ես սիրում եմ կարդալ Առակացի այս հատվածը. այն մեր ուշադրությունը սևեռում է մրջյունի վրա, որը չունենալով ոչ մի հսկիչ կամ դեկավար, ապահովում է իրեն ու իր ընտանիքին:

Կյանքում երբեք ոչ մի մեծ բան չեն կարողանա անել այն մարդիկ, որոնց անընդհատ հարկավոր է քաշել առաջ: Եվ այն մարդիկ, ովքեր իրենց գործը ճշտությամբ կատարում են միայն այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը հսկում է իրենց, նրանք նույնպես հեռու չեն գնա: Մղումը պետք է լինի մեր ներսից, ոչ թե դրսից: Մենք պետք է մեր կյանքն ապրենք Աստծո առջև, իմանալով, որ Նա ամեն ինչ տեսնում է և, որ Նա կհատուցի մեզ, եթե մենք իսկապես կատարենք այն, ինչ Նա հանձնարարում է մեզ կատարել:

ՇԱՏԵՐՆ ԵՆ ԿԱՆՉՎԱԾ, ԲԱՅՑ ՔՉԵՐՆ ԵՆ ԸՆՏՐՎԱԾ

«...Որովհետև շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված»:

Մատթեոս 20.16

Մեկ անգամ ես լսեցի աստվածաշնչյան մի ուսուցչի, ով այս խոսքը մեկնաբանում էր այսպես, որ շատերն են կանչված կամ շատերին է տրված Տիրոջ համար ինչ-որ բան անելու հնարավորությունը, բայց քչերն են ցանկանում իրենց վրա վերցնել այդ կոչման պարտականությունը:

Ինչպես ասացի նախորդ գլխում, շատերն ունեն ցանկություն, բայց՝ ոչ բավարար կամքի ուժ: «Անապատային մտածելակերպով» մարդիկ ցանկանում են ունենալ ամեն ինչ, սակայն այդ ամենն ունենալու համար չեն ուզում անել ոչինչ:

ՎԵՐ ԿԱՑ ՈՒ ԱՆՑԻՐ

«Եվ եղավ, որ Տիրոջ ծառա Մովսեսի մեռնելուց հետո Տերը խոսեց Մովսեսի սպասավոր Նավեի որդի Յեսուի հետ՝ ասելով. «Իմ ծառա Մովսեսը մեռավ. և հիմա վեր կաց ու անցիր այդ Յորդանանով դու և այս բոլոր ժողովուրդը այն երկիրը, որ ես տալիս եմ Իսրայելի որդիներին: Բոլոր տեղերը, որ կոխեն ձեր ոտքի թաթերը, ձեզ պիտի տամ, ինչպես որ Մովսեսին ասել եմ...»:

Յեսու 1.1-3

Երբ Աստված հայտնեց Յեսուին Մովսեսի մահը և ասաց, որ հիմա ինքն է զբաղեցնելու նրա տեղն ու ժողովրդին անցկացնելու է Յորդանանով դեպի Ավետյաց երկիր, դա նշանակեց, որ Յեսուի վրա դրվեցին նոր պարտականություններ ու պատասխանատվություն:

Նույնը սպասվում է մեզանից, երբ մտնում ենք մեր հոգևոր ժառանգության մեջ: Մենք երբեք Աստծուն ծառայելու արտոնություն չենք ունենա, եթե չենք կամենում ամենայն լրջությամբ ստանձնել մեզ վրա դրվող պատասխանատվությունը:

ՀԻՄԱ՝ Է ՆՊԱՍՏԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ

«Նա, ով հետևում է քամուն (սպասում է այն բոլոր նպաստավոր պայմաններին), չի սերմի, և նա, ով նայում է ամպերին՝ չի հնձի»:
Ժողովող 11.4, AMP

Երբ 1993 թվականին Աստված ամուսնուս և ինձ պատվիրեց սկսել մեր հաղորդումների հեռարձակումը հեռուստատեսությամբ, Նա ասաց. «Ես ձեզ հնարավորություն եմ տալիս մտնել հեռուստատեսություն, բայց եթե դուք հիմա չօգտագործեք այդ հնարավորությունը, այն այլևս ձեզ չի տրվի»: Եթե Աստված մեզ չզգուշացներ, որ մենք պետք է այդ հնարավորությունն օգտագործենք այդ պահին, գուցե մենք չչտապեինք քայլեր ձեռնարկել: Մենք ապրում էինք բավականին հարմարավետ կյանքով: Եվ եթե մենք այդ ժամանակ անմիջապես գործի չանցնեինք, գուցե Աստված գտներ մեկ ուրիշին, ով կօգտագործեր այդ հնարավորությունը:

Ինը տարի շարունակ մենք գտնվում էինք մեր ծառայությունը «ծնելու» գործընթացում: Իսկ հետո, հանկարծ, Աստված մեզ հնարավորություն է տալիս հասնելու ավելի մեծ թվով մարդկանց, ինչին մենք ձգտում էինք ողջ սրտով: Այդ ամենն իրականացնելու համար մենք ստիպված էինք դուրս գալ մեր հարմարավետությունից և վերցնել նոր պատասխանատվություն:

Երբ Տերն Իր ժողովրդին կոչ է անում ինչ-որ բան անել, դրան անմիջապես հետևում է «նպաստավոր ժամանակին» սպասելու գայթակղությունը (տե՛ս Գործք 24.25): Մարդը հակված է հարմար պահին սպասել այնքան ժամանակ, քանի դեռ դա իրենից մեծ ծախսեր կամ ջանք չի պահանջում:

Ես կոչ եմ անում ձեզ՝ լինել այնպիսի մարդ, ով չի վախենում պատասխանատվություն ստանձնելուց: Դիմադրության հանդիպելիս դուք միայն ավելի կամրանաք: Եթե դուք միշտ կատարեք այն, ինչ հեշտ է, դուք միշտ կմնաք թույլ ու տկար:

Աստված ուզում է, որ մենք պատասխանատու լինենք այն ամենի համար, ինչ Նա տալիս է մեզ, որ անենք: Եթե մենք չենք օգտագործում այն պարգևներն ու տաղանդները, որոնք Աստված տվել է մեզ, ուրեմն մենք պատասխանատվություն չենք վերցնում այն ամենի համար, ինչով Նա օժտել է մեզ:

ՊԱՏՐԱՄՍ ԵՂԵՔ

**«Չետևաբար, նայեք [խիստ ուշադիր եղեք և զգույշ ու ակտիվ],
քանի որ չգիտեք ոչ օրը, ոչ ժամը, թե երբ է մարդու Որդին գալու»:
Մատթեոս 25.13, AMP**

Մատթեոսի Ավետարանի 25-րդ գլխում գրված է, թե ինչպես պետք է վարվենք՝ սպասելով մեր Տիրոջ վերադարձին:

Առաջին տասներկու խոսքերում կարդում ենք տասը կույսերի մասին, որոնցից հինգն անխելք էին, իսկ հինգը՝ իմաստուն: Անխելք կույսերը չէին ուզում ոչ մի ավել բան անել՝ վստահ լինելու համար, որ իրենք պատրաստ են իրենց Տիրոջ վերադարձին: Նրանք չէին

ուզում ավել քայլ անել իրենց լապտերներում շատ յուղ ունենալու համար: Իսկ իմաստուն կույսերն արեցին ավելին, քան պահանջվում էր իրենցից: Նրանք ավելի շատ յուղ վերցրեցին՝ վստահ լինելով, որ պատրաստված են երկար սպասելու համար:

Երբ փեսացուն եկավ, անխելք կույսերը տեսան, որ իրենց լապտերներն արդեն հանգչում են, և, իհարկե, խնդրեցին իմաստուն կույսերին՝ իրենց յուղ տալ: Սովորաբար դա այդպես էլ լինում է: Ծույլ և դանդաղաշարժ մարդիկ միշտ ինչ որ բան ուզում են աշխատասեր մարդկանցից և պատասխանատու են նրանց համար, ովքեր պետք է իրենց գործը կատարեն անձամբ:

ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ԱՅՆ, ԻՆՉ ՏՐՎԵԼ Է ՁԵՉ

«...Դու չա՛ր ու ծո՛ւյլ և անբա՛ն ծառա...»:

Մատթեոս 25.26, AMP

Մատթեոսի Ավետարանի 25-րդ գլխում Հիսուսը մի առակ է պատմում երեք ծառաների մասին: Նրանց տերը տաղանդներ էր բաժանել իրենց և գնացել ուրիշ երկիր, ակնկալելով, որ ծառաներն իր բացակայության ժամանակ լավ հոգ կտանեն իր ունեցվածքի համար:

Այն մարդը, ում տրվել էր հինգ տաղանդ, գործի մեջ էր դրել դրանք և ձեռք էր բերել ևս հինգ տաղանդ: Այն մարդը, ում տրվել էր երկու տաղանդ, նույնպես կրկնապատկել էր այն: Բայց այն մարդը, ում տրվել էր մեկ տաղանդ, վախենալով իր տիրոջից՝ այն թաղել էր գետնի մեջ: Նա վախեցել էր քայլ անելուց և ինչ-որ բան ձեռնարկելուց, այսինքն՝ վախեցել էր պատասխանատվությունից:

Երբ տերը վերադարձավ, գովեց առաջին երկու ծառաներին, ովքեր վերցրել էին իրենց տրված տաղանդներն ու կրկնապատկել էին: Բայց այն ծառային, ով վերցրել էր իր տաղանդն ու թաղել էր հողում՝ չգործածելով այն, նա ասաց. «...Դու չա՛ր ու ծո՛ւյլ և անբա՛ն ծառա...»:
Այնուհետև տերը հրամայեց, որ նրան տրված մեկ տաղանդը վերցվի և տրվի տասը տաղանդ ունեցողին, իսկ ծույլ ու անբան ծառային հրամայեց, որ պատժեն:

Ես կոչ եմ անում ձեզ օգտագործել այն հնարավորությունները, որոնք Աստված դրել է ձեր ներսում, որ անեք այն ամենն, ինչ ի զորու եք անել, որպեսզի, երբ Տերը վերադառնա, դուք Նրան տաք ոչ միայն այն, ինչ Նա էր ձեզ տվել անել, այլ՝ տաք ավելին:

Աստվածաշունչը մեզ հստակ ցույց է տալիս, որ Աստծո կամքը մեզ համար բարի պտուղ բերելն է (տե՛ս Գովի. 15.16):

ՀԱՆՁՆԵՔ ՁԵՐ ՀՈԳՍԵՐԸ,
ՈՉ ԹԵ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«Խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ձեզ բարձրացնի ժամանակով:

Ձեր բոլոր հոգսը Նրա վրա գցեք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար»:

Ա Պետրոսի 5.6,7

Մի՛ վախեցեք պատասխանատվություն կրելուց: Սովորեք Տիրոջը հանձնել ձեր հոգսը, ոչ թե պատասխանատվությունը: Որոշ մարդկանց մոտ շատ լավ ստացվում է ոչ մի բանի համար չամհանգստանալը: Նրանք կարծես «իրենց հոգսը գցելու» գործում փորձագետներ են դարձել: Նրանք իրենց բավականին հարմարավետ են զգում՝ իրենց հոգսերի հետ մեկտեղ հանձնելով նաև իրենց պատասխանատվությունը:

Ձեր միտքն ուղղեք այն գործին, ինչ դրված է ձեր առջև և ոչ մի բանից մի փախչեք միայն այն պատճառով, որ դա ձեզ դժվար է թվում:

Միշտ հիշեք, որ ինչ էլ խնդրեք Աստծուց, օրհնության հետ միասին ձեզ կտրվի նաև պատասխանատվություն: Եթե ունեք տուն կամ մեքենա, Աստված ակնկալում է, որ դուք հոգ տանեք այդ ամենի համար: Ծուլությունը կարող է հարձակվել ձեր մտքի և զգացմունքների վրա, բայց դուք ունեք Քրիստոսի միտքը: Դուք, անշուշտ, ի վիճակի եք ճանաչել սատանայի խաբեությունն ու այն ճնշումը, որ նա կրերի ձեր զգացմունքների վրա և կխոչընդոտի ձեզ՝ անել այն, ինչ դուք գի-

տեք, որ ճիշտ է: Ինչ-որ բան խնդրելը հեշտ է... իսկ այդ խնդրանքի համար պատասխանատվություն ստանձնելն արդեն բնավորության զարգացման հարց է:

Հիշում եմ, երբ փորձում էի ամուսնուս համոզել, որ լճի ափին մի տուն գնի. մի տեղ, որտեղ կկարողանայինք հանգստանալ, աղոթել և Խոսքն ուսումնասիրել: Ուզում էի մի տեղ լիներ, ուր կկարողանայի «փախչել» ամեն ինչից: Ես ասացի նրան, որ դա հրաշալի կլիներ մեր, երեխաների ու թոռնիկների համար, ինչպես նաև կկարողանայինք այնտեղ անցկացնել մեր ավագների հավաքությունները, գործնական հանդիպումներն ու միաբան աղոթքները:

Այդ ամենն իհարկե այնքան հիանալի էր թվում, որ ես լցվում էի ոգևորվածությամբ: Բայց Դեյվն ինձ ասաց այն ամենի մասին, որոնց համար մենք պետք է սկսեինք հոգ տանել: Նա հիշեցրեց ինձ, որ մենք արդեն իսկ բավական զբաղված ենք և ժամանակ չենք ունենա ևս մեկ տուն պահելու համար: Նա սկսեց խոսել կանաչապատման, մաքրության, կոմունալ վճարումների և նման այլ հարցերի մասին և ասաց, որ ավելի հեշտ կլինի, եթե հանգստանալու համար մի տուն վարձենք, և պատասխանատվություն չկրենք այդ սեփական տան համար:

Ես հարցին վերաբերվում էի միայն զգացմունքայնորեն, բայց Դեյվն ինձ այն ցույց տվեց գործնական տեսանկյունից: Ամեն անգամ որոշում կայացնելիս, մենք չպետք է մոռանանք հարցը դիտարկել երկու կողմից: Լճի ափին տունն իդեալական է նրանց համար, ովքեր կարող են ժամանակ տրամադրել այն խնամելու համար, բայց մենք դա անել չէինք կարողանա: Իմ ներսում ես դա գիտեի, սակայն մի ամբողջ տարի փորձում էի համոզել Դեյվին՝ գնելու այդ տունը:

Ես ուրախ եմ, որ նա իր ասածների մեջ հաստատուն էր: Հակառակ դեպքում մենք հիմա պետք է գնած լինեինք այդ տունը, օգտագործեինք այն մի որոշ ժամանակ, հետո, ամենայն հավանականությամբ, հանեինք վաճառքի, քանի որ դա մեզանից կպահանջեր չափազանց շատ ժամանակ և աշխատանք: Եվ ինչպես հետո պարզվեց, մեր լավ ընկերները տուն էին գնել լճի մոտ և մեզ թույլ տվեցին այն օգտա-

գործել որքան որ մեզ պետք է: Իսկ մի քանի տարի անց մենք ունեցանք մեր սեփական տունը և հենց դա էր ճիշտ ժամանակը՝ այն ձեռք բերելու համար: Բայց երբ ես ցանկանում էի այդ տունն ունենալ նախքան այդ, ապա դա ամենասխալ ժամանակն էր: Ինչ-որ բան ցանկանալը բավական չէ: Մենք պետք է լիովին պատրաստ լինենք պատասխանատվություն ստանձնելու համար:

Եթե դուք իմաստուն վարվեք, կտեսնեք, որ Աստված հոգում է ձեր կարիքները: Ամեն մեկը, ով առաջնորդվում է Քրիստոսի մտքի համեմատ, կվարվի իմաստությամբ, և ոչ թե զգացմունքներով:

Եղե՛ք պատասխանատու անձ:

Գլուխ
18

**«Խնդրո՛ւմ եմ,
թող ամեն բան հնարավորին
չափ հեշտ լինի. ես չեմ կարողանում
դժվարություններին դիմանալ»:**

Անապատային մտածելակերպ. Թիվ 3

**«Խնդրո՛ւմ եմ,
թող ամեն բան հնարավորին
չափ հեշտ լինի. ես չեմ կարողանում
դժվարություններին դիմանալ»:**

Գլուխ
18

Անպատասխան մտածելակերպ. Թիվ 3

Այս սխալ մտածելակերպը նման է նրան, ինչը քննարկեցինք նախորդ գլխում, և, ցավոք, Աստծո զավակների մոտ սա այնքան հաճախ է նկատվում, որ սրան պետք է հատկացնել մի ամբողջ գլուխ:

Ես շատ հաճախ եմ ինքնարդարացումներ լսում այն մարդկանցից, ովքեր աղոթքի խնդրանքով մոտենում են ինձ: Եվ երբ ես նրանց ասում եմ այն, ինչ իրենց իրավիճակի համար ասում է Աստծո Խոսքը կամ Սուրբ Հոգին, նրանք պատասխանում են. «Ես գիտեմ, որ դա ճիշտ է: Աստված ինձ ցույց էր տվել այդ նույն բանը: Բայց, Ջոյս, դա շատ դժվար է»:

Աստված հայտնեց ինձ, որ թշնամին ամեն ջանք ներդնում է, որ պեսզի այդ արտահայտությունը խցանի մեր մտքերում և մեզ ստիպի հանձնվել: Մի քանի տարի առաջ, երբ Աստված ինձ ցույց տվեց այս ճշմարտությունը, Նա արգելեց ինձ՝ խոսել դժվարությունների մասին և հավաստիացրեց, որ ամեն բան շատ ավելի հեշտ կընթանա, եթե ես այլևս չբողոքեմ դրանցից:

Նույնիսկ, երբ մենք որոշել ենք շարունակել մեր ընթացքը և ինչոր բան անել, բայց չափազանց շատ ժամանակ ենք վատնում մտածելու և խոսելու վրա, թե որքան ծանր ու դժվար է դա անելը, ապա

«Որովհետև այս պատվիրանը, որ Ես այսօր քեզ պատվիրում եմ, քեզ համար անհիմանալի [դժվար] չէ և հեռու չէ»:

Երկրորդ Օրինաց 30.11, AMP

գործն, իրոք, կթվա առավել դժվար, քան իրականում կա: Բացասական մոտեցում ցուցաբերելու փոխարեն պահպանեք ձեր լավատեսությունը:

Երբ սկսեցի տեսնել, թե ըստ Աստծո հոսքի, ինչպիսին պետք է լինի իմ կյանքն ու վարքագիծը, և սկսեցի համեմատել նրա հետ, ինչպիսին ես իրականում կայի, ես սկսեցի հաճախ կրկնել. «Աստված, ես ուզում եմ ամեն ինչում վարվել Քեզ նման, բայց դա այնքան դժվար է»: Տերն առաջնորդեց ինձ կարդալ Երկր. Օր. 30.11-րդ խոսքը, որտեղ Նա ասում է, որ Իր պատվիրանները դժվար ու հեռու չեն մեզանից: Տիրոջ պատվիրանները դժվար չեն մեզ համար, որովհետև Նա մեզ տալիս է Իր Յոգին, Ով աշխատում է մեզանում հզոր ձևով և օգնում է մեզ իրականացնել Աստծո բոլոր պատվիրանները:

ՕԳՆԱԿԱՆ

«Եվ ես կխնդրեմ Յորը, և Նա ձեզ կտա մեկ ուրիշ Մխիթարիչ [Խորհրդատու, Օգնական, Բարեխոս, Փաստաբան, Ջորացնող], որ Նա ձեզ հետ կմնա հավիտյան»:

Յովհաննես 14.16, AMP

Միշտ էլ դժվար է լինում, երբ փորձում ենք ինչ-որ բան անել ինքնուրույն, առանց Աստծո շնորհքին ապավինելու: Եթե կյանքում ամեն բան հեշտ լիներ, մենք Սուրբ Յոգու զորության կարիքը չէինք ունենա մեզ օգնելու համար: Աստվածաշունչը Նրան ներկայացնում է որպես «Օգնականի»: Նա մեր մեջ է և միշտ մեզ հետ է: Նա պատրաստ է ամեն ժամանակ *օգնել մեզ* և կարողություն տալ, որպեսզի մենք իրականացնենք այն, ինչը դժվար է թվում մեզ համար:

ՀԵՇՏ ԵՎ ԴԺՎԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

«Եվ եղավ, երբ փարավոնը ժողովուրդին արձակեց, այն ժամանակ Աստված նրանց փղշտացիների երկրի ճանապարհով չտարավ, թեև այն մոտ էր, որովհետև Աստված ասաց. «Միգուցե

Ժողովուրդը պատերազմը տեսնելիս զղջա և ետ դառնա եգիպտոս»:

Ելից 13.17

Դուք կարող եք վստահ լինել, որ Աստված ձեզ ուր էլ տանի, Նա ի զորու է ձեզ պահպանելու: Նա երբեք մեր կյանքում թույլ չի տալիս մեր ուժերից վեր բաներ (տե՛ս Ա Կորնթ. 10.13): Նա վճարում է այն, ինչ պատվիրում է: Մենք չպետք է ապրենք անվերջ պայքարներում, եթե սովորում ենք անընդհատ վստահել Նրան՝ մեզ զորացնելու հարցում:

Եթե Աստված քեզ ասել է ինչ-որ բան անել, ապա մի՛ փախչիր դրանից միայն այն պատճառով, որ դա դժվար է: Հենց դժվարին պահերին պետք է ավելի շատ ժամանակ անցկացնենք Տիրոջ հետ, ավելի շատ վստահենք Նրան ու ավելի շատ շնորհք ընդունենք Նրանից (տե՛ս Եբր. 4.16):

Շնորհքն Աստծո ուժն է, որը Նա տալիս է մեզ բացարձակապես անվճար: Շնորհքի օգնությամբ մենք անում ենք այն, ինչն ի վիճակի չէինք անել ինքնուրույն: Զգուշացե՛ք այս մտքերից. «Ես չեմ կարող անել սա, որովհետև այն չափազանց դժվար է»:

Երբեմն Աստված մեզ տանում է դժվար ուղիներով, որովհետև Նա աշխատանք է տանում մեր ներսում: Ինչպե՞ս կսովորենք վստահել Նրան, եթե մեր կյանքում ամեն բան տրվի հեշտությամբ, և եթե մենք կարողանանք դժվարությունները հաղթահարել ինքնուրույն:

Աստված Իսրայելի որդիներին առաջնորդեց երկար ու բարդ ճանապարհով, քանի որ նրանք երկչուտ էին և Նա դեռ աշխատանք էր տանում նրանց սրտում՝ պատրաստելով այն պատերազմների համար, որոնք սպասվում էին Ավետյաց երկրում: Եվ թեպետ Նա տարավ դժվար ճանապարհով, դա այդքան էլ դժվար չէր նրանց համար: Աստված մեր ուժերից վեր բան չի պատվիրում մեզ: Մեր կյանքում ճանապարհները դժվարանում են միայն այն դեպքում, երբ մենք ենք սկսում մտածել, որ դրանք դժվար են:

Շատերը կարծում են, որ Խոստմունքի երկիր մտնելը նշանակում է վերջ բոլոր պայքարներին, բայց դա այդպես չէ: Եթե դուք կարդաք,

թե ինչ կատարվեց, երբ իսրայելացիներն անցան Յորդանանով և սկսեցին գրավել խոստացված տարածքները, կտեսնեք, որ նրանց մի պատերազմին հաջորդում էր մյուսը: Բայց նրանք հաղթեցին այդ բոլոր պատերազմներն Աստծո զորությամբ և Նրա առաջնորդությամբ:

Աստված առաջնորդեց նրանց երկար ու դժվար ճանապարհով, թեպետ կար մեկ ուրիշ կարճ և ավելի հեշտ ճանապարհ, որովհետև Նա գիտեր, որ ժողովուրդը դեռ պատրաստ չի մարտնչելու այն պատերազմներում, որոնք սպասվում էին նրանց Խոստմունքի երկիր մտնելու ընթացքում: Աստված կանխատեսում էր, որ նրանք թշնամուն տեսնելուն պես՝ կփախչեն դեպի Եգիպտոս: Այդ պատճառով էլ Նա ընտրեց դժվար ուղին, որպեսզի ցույց տա, թե ով է Ինքը և, սովորեցնի, որ նրանք չպետք է ապավինեն իրենց:

Երբ մարդն անցնում է կյանքի դժվարին պահերով, նրա միտքը ցանկանում է հանձնվել: Սատանան գիտի, որ եթե նա կարողանա մեզ պարտության մատնել մեր մտքում, ապա այդ պարտությունը կտարածվի նաև մեր կյանքի բոլոր բնագավառներում: Ահա թե ինչու է այդքան կարևոր, որ մենք չտրտմենք, չթուլանանք ու չհանձնվենք:

ԴԻՄԱՑԵՔ

«Եվ թող չտրտմենք, չթուլանանք ու չհանձնվենք ազնիվ ու ճիշտ գործեր գործելիս, քանի որ ճիշտ ժամանակին և նշանակված պահին մենք կհնձենք, եթե չթուլանանք և չկորցնենք մեր քաջությունը»:

Գաղատացիների 6.9, AMP

Տրտմությունն ու թուլությունը սկսվում են պարտության մտքերից: Սուրբ Յոզիմ մեզ հորդորում է ամուր լինել ու չհանձնվել մեր մտքում, որովհետև, եթե դիմանանք, անշուշտ, կհնձենք:

Մտածեք Յիսուսի մասին: Ջրով մկրտվելուց և Սուրբ Յոզով լցվելուց անմիջապես հետո Նա Սուրբ Յոզով անապատ տարվեց՝ սատանայի կողմից փորձվելու համար: Նա չտրտնջաց, չթուլացավ ու չընկճվեց, չմտածեց և չխոսեց բացասական բաների մասին: Նա

չշփոթվեց՝ փորձելով հասկանալ, թե ինչու դա պատահեց Իր հետ: Նա բոլոր փորձություններն անցավ հաղթանակով:

Անցնելով այդ փորձությունների միջով, մեր Տերը անապատում քառասուն օրուգիշեր չէր թափառում ու ասում, թե որքան դժվար է Իրեն: Ընդհակառակը, Նա ավելի մոտեցավ Իր երկնային Չորը և այդտեղից դուրս եկավ հաղթանակած (տե՛ս Ղուկ. 4.1-13):

Կարո՞ղ եք մի պահ պատկերացնել, թե ինչպես է Հիսուսն Իր աշակերտների հետ քաղաքից քաղաք շրջում և ասում, թե որքան դժվար է ամեն բան: Պատկերացնո՞ւմ եք Նրան խոսելիս, թե ինչ ծանր է լինելու խաչն Իր համար... կամ՝ թե ինչպես է Նա սարսափում այն ամենից, ինչ սպասվում է Իրեն... և՛ թե որքան դժվար է ապրել թափառականի կյանքով՝ չունենալով կենսական հարմարավետության և ոչ մի պայման. չկա ոչ մի ռոմինգ ծառայություն՝ զանգահարելու տուն, հայրենի երկիր... չկա տանիք գլխի վերևում... չկա փափուկ անկողին...

Ես էլ եմ ճանապարհորդում մի տեղից մեկ այլ տեղ, մի երկրից մյուսը՝ քարոզելով Ավետարանը, և ես չպետք է բողոքեմ այն դժվարությունների համար, որոնցով ուղեկցում է իմ ծառայությունը: Ես սովորել եմ չտրտնջալ, թե որքան ծանր է ապրել տարբեր հյուրանոցներում, հաճախակի սնվել դրսում, ամեն շաբաթ և կիրակի քնել տարբեր մահճակալներում, երկար ժամանակով բացակայել տնից, ծանոթանալ հիանալի մարդկանց հետ և հետո հրաժեշտ տալ նրանց, ում հետ արդեն հասցրել էի մտերմանալ: Եթե ես արտոնություն ունեմ անելու այն, ինչ անում եմ հիմա, ապա պետք է դրական վերաբերմունք ցուցաբերեմ բոլոր անհարմարավետությունների հանդեպ:

Մենք ունենք Քրիստոսի միտքը և կարող ենք իրավիճակներին արձագանքել այնպես, ինչպես Նա արեց. մենք պետք է հաղթական մտածելակերպի օգնությամբ մտովի պատրաստ լինենք հաղթանակի և ոչ թե պարտության:

ՏԱՌԱՊԱՆՔԻՆ ՀԱԶՈՐԴՈՒՄ Է ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Քանի որ Քրիստոսը մարմնով տառապեց մեզ համար, ապա դուք էլ ամրապնդեք ձեզ միևնույն մտքով ու նպատակով լաստծուն

հաճեցնելու համար համբերատար տառապել, և ոչ թե հանձնվել]: Քանի որ, մարմնով տառապողը [Քրիստոսի միտքն ունեցող], [միտումնավոր] կերպով մեղք գործելուց դադարեց [դադարեց հաճեցնել իրեն և աշխարհին, ու սկսեց հաճեցնել Աստծուն]: Այնպես որ, նա այլևս չի կարող իր կյանքի մնացած մասը ապրել իր մարդկային ցանկությունների պես, այլ [ապրում է] ըստ Աստծո կամքի»:

Ա Պետրոսի 4.1,2, AMP

Այս հատվածը ցույց է տալիս մեզ, թե ինչպես պետք է գոյատևել ծանր պահերին և հաղթահարել խոչընդոտները: Թո՛ւյլ տվեք մեկնաբանել այս երկու խոսքերը:

Մտածեք այն ամենի մասին, թե ինչի միջով անցավ Հիսուսը և, թե ինչպես Նա չարչարվեց մարմնով: Դա կօգնի ձեզ անցնելու ձեր դժվարությունների միջով: Ամրապնդեք ձեզ պատերազմի համար, պատրաստեք ձեր մտքերը հաղթելու այնպես, ինչպես Հիսուսն էր մտածում ու հաղթում: «Աստծուն հաճեցնելու համար ես համբերատար կչարչարվեմ և ոչ թե կհանձնվեմ»: Եթե տառապում եք Քրիստոսի միտքն ունենալով հանդերձ և այդ ամենին վերաբերվում եք Քրիստոսի նման, ապա այլևս չեք ապրի ձեզ հաճեցնելու համար՝ փախչելով բոլոր դժվարություններից ու հեշտացնելով ձեր կյանքը: Այլ՝ դուք կսկսեք ապրել՝ առաջնորդվելով Աստծո կամքով, և ոչ թե ձեր զգացմունքներով և մարմնական մտքերով:

Լինում են «մարմնավոր չարչարանքներ», որոնք մենք պետք է կրենք Աստծո կամքն իրականացնելու համար:

Միշտ չէ, որ իմ մարմնին հաճելի են իմ ծառայողական ուղևորությունները, բայց ես գիտեմ, որ դրանք Աստծո կամքն են ինձ համար: Այդ պատճառով էլ ես ոգևորում եմ ինքս ինձ ճիշտ մտքերով, այլապես, ես պարտության կմատնեմ ինձ հանձնարարված գործը դեռ այն սկսելուց առաջ:

Գուցե ձեր կյանքում կա մեկը, ում հետ դժվար եք լեզու գտնում, բայց նաև հասկանում եք, որ Աստված ցանկանում է, որպեսզի դուք պահեք ձեր հարաբերությունները նրա հետ և չխուսափեք նրանից: Ձեր մարմինը տանջվում է դրանից, քանի որ այդքան էլ հեշտ չէ այդ

մարդու հետ, բայց դուք պետք է ինքներդ ձեզ պատրաստեք՝ մտածելով և այդ իրավիճակին նայելով ճիշտ լույսի ներքո: Գտնվելով Աստծո կամքի մեջ, երբեմն լինում են դժվար պահեր, բայց Աստծո կամքից դուրս գալն առավել դժվար բան է:

ԻՄ ԱՌԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՋ Է

«Ես գիտեմ նվաստացած լինել և ապրել խոնարհաբար՝ նեղ պայմաններում, և ես գիտեմ, թե ինչպես անչափ ուրախ լինել և ապրել առատության մեջ: Ես սովորել եմ ցանկացած և բոլոր պայմաններում յուրաքանչյուր իրավիճակն ընդունելու գաղտնիքը՝ լինելով կուշտ կամ քաղցած, ունենալով առատություն և բավարար քանակություն խնայելու, կամ՝ գնալու առանց ինչ-որ բանի ցանկություն ունենալու:

Ես ամեն ինչում զորավոր եմ Քրիստոսի մեջ, Ով ուժ է տալիս ինձ [ես պատրաստ եմ ամեն ինչի և ամեն ինչում հավասարազոր եմ Նրա միջոցով, Ով լցնում է ինձ ուժով. իմ առատությունը Քրիստոսի մեջ է]:»:

Փիլիպեցիների 4.12,13, AMP

Ճիշտ մտածելակերպը զորացնում է մեզ մեր պատերազմի մեջ: Սխալ մտածելակերպով պատերազմելը մման է առանց զենքերի ճակատամարտի մեկնելուն: Եթե մենք այդպես վարվենք, մենք երկար չենք դիմանա:

Իսրայելացիները «նվնվացողներ» էին, և անապատում տասնմեկօրյա ճանապարհը քառասուն տարում անցնելու պատճառներից մեկը հենց դա էր: Նրանք գանգատվում էին ամեն մի դժվարության համար և տրտնջում ամեն մի ծագած խոչընդոտի համար: Նրանք անդադար խոսում էին, թե որքան դժվար է իրենց համար: Նրանք հիմնականում այսպես էին մտածում. «Խնդրո՛ւմ եմ, թող ամեն բան հնարավորին չափ հեշտ լինի. ես չեմ կարողանում դժվարություններին դիմանալ»:

Շատ հավատացյալներ կիրակի օրերին դառնում են զինվորներ, իսկ երկուշաբթի օրերին՝ «նվնվացողներ»: Կիրակի օրերին՝ եկեղե-

ցում, նրանք իրենց ընկերների առջև շատ լավ ճառեր են ասում, բայց երկուշաբթի օրերին, երբ հարկավոր է լինում վերադառնալ ամենօրյա կյանքին և, շրջապատում չկա մեկը, ում վրա կարելի կհներ տպավորություն թողնել, նրանք թուլանում են նույնիսկ ամենաչնչին փորձությունից:

Եթե դուք նվնվոցների և տրտնջոցների սիրահար եք, ապա փոխեք ձեր մտածելակերպը: Թող ձեր կարգախոսը լինի. «Ես ամեն բան կարող եմ ինձ գորացնող Հիսուս Քրիստոսով» (Փիլիպ. 4.13):

Գլուխ
19

**«Ես ոչինչ չեմ կարողանում
անել ինչ հեղ. ես դարձել եմ
փնթփնթացող, փրփրացող և
սխալներ փնտրող»:**

Անապատային մթաժելակերպ. թիվ 4

**«Ես ոչինչ չեմ կարողանում
անել ինչ հեք. ես դարձել եմ
փնթփնթացող, փրփրացող և
սխալներ փնտրող»:**

Գլուխ
19

Անապատային մտածելակերպ. թիվ 4

Մինչև մենք չսովորենք դժվար պահերի ժամանակ մեր ճիշտ վերաբերմունքով Աստծուն փառք բերել, մենք դժվարություններից չենք ազատվի: Տառապանքը չէ, որ փառավորում է Աստծուն, այլ՝ տառապանքների ժամանակ ցուցաբերած մեր բարեպաշտ վերաբերմունքն է հաճեցնում ու փառավորում Նրան:

Եթե ուզում ենք հասկանալ, թե Աստված ինչ է ցանկանում, որ մենք ունենանք, ապա պետք է այդ խոսքը դանդաղորեն, նախադասություն առ նախադասություն, կրկին կարդանք:

Խոստովանում եմ, որ ես արդեն երկար տարիներ է, ինչ փորձում եմ հասկանալ, թե Աստծուն ինչու է հաճելի մեր տառապանքը: Չէ՞ որ Աստվածաշունչը հստակ ցույց է տալիս, որ Հիսուսն Իր վրա կրեց մեր ցավը, տառապանքն ու պատիժը (տե՛ս Եսայի 53.3-6):

Շատ տարիներ առաջ ես հասկացա, որ Պետրոսի առաջին թղթում այս խոսքերի առանցքային իմաստը կայանում է ոչ թե տառապանքների, այլ դրանց հանդեպ մեր ունեցած վերաբերմունքի մեջ:

«Որովհետև սա շնորհք է [ընդունելի, հավանության և շնորհակալության արժանի], եթե մեկն Աստծոն աչքերում տառապանք է կրում անիրավ տեղը: [Ի վերջո] ինչպիսի՞ փառք [կա դրանում], եթե դուք անում եք սխալ բան ու պատժվում դրա համար, և դա կրում եք համբերությամբ: Բայց եթե դուք համբերալար անում եք լավ բան և անարժանաբար տառապանք կրում, դա ընդունելի ու հաճելի է Աստծուն»:

Ա Պետրոսի 2.19,20, AMP

Ուշադրություն դարձրեք խոսքի մեջ օգտագործված «համբերատար» բառին: Այստեղ խոսվում է այն մասին, որ եթե մեկը մեր հանդեպ անարդարացի է վարվում, և մենք դա կրում ենք համբերատար կերպով, ապա դա հաճելի է Աստծուն: Աստծուն դուր է գալիս մեր համբերատար վերաբերմունքը, ոչ թե մեր տառապանքը: Մեր տանջանքների մեջ մեզ զորացնելու համար մենք պետք է նայենք Հիսուսին, թե ինչպես էր Նա վերաբերվում իր հանդեպ ցուցաբերած անարդարացի հարձակումներին:

ՀԻՍՈՒՄԸ ՄԵՐ ՕՐԻՆԱԿՆ Է

«Որովհետև դուք հենց այդ բանի մեջ կանչվեցիք [ինչն անբաժան է ձեր կոչումից], որ Քրիստոսն էլ չարչարվեց և ձեզ [իր անձնական] օրինակ թողեց, որ Նրա հետքերին հետևեք:

Նա մեղք չգործեց, և Նրա շուրթերին ոչ մի խորամանկություն [նենգություն] չգտնվեց:

Որ նախատվելիս և վիրավորվելիս՝ փոխարենը չէր նախատում ու չէր վիրավորում, նվաստանալիս ու չարչարվելիս՝ չէր սպառնում [վրեժ լուծում], այլ Նա [իրեն և ամեն բան] վստահում էր արդար Դատավորին»:

Ա Պետրոսի 2.21-23, AMP

Հիսուսը չարչարվեց փառավոր կերպով: Չնայելով իրավիճակներին՝ Նա լռությամբ, առանց տրտունջների, ամեն բանում վստահեց Աստծուն:

Վերոհիշյալ մեջբերումը թույլ է տալիս մեզ հասկանալու, որ Հիսուսն օրինակ է մեզ համար. Նա եկավ մեզ ցույց տալու, թե ինչպես է պետք ապրել: Մեր ապրելակերպով մենք օրինակ պետք է լինենք մյուսների համար: Մենք մեր երեխաներին ավելի շատ սովորեցնում ենք մեր օրինակով, քան մեր խոսքերով: Մենք պետք է բաց նամակ լինենք մարդկանց համար, որպեսզի բոլորը կարողանան «կարդալ» մեզ (տե՛ս Բ Կորնթ. 3.2,3), ինչպես նաև, պետք է լինենք լույս՝ այս խավար աշխարհում (տե՛ս Փիլիպ. 2.15):

ՄԵՆՔ ԿԱՆՉՎԱԾ ԵՆՔ ԽՈՆԱՐՀ,
ՀԵՁ ԵՎ ՀԱՄԲԵՐՈՂ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Արդ, աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար կապվածս, որ այնպես քայլեք [կյանքն ապրեք], ինչպես որ կվայելի այն [աստվածային] կոչմանը, որի մեջ կանչվեցիք [այն վարքով, ինչը ձեզ արժանի է անում Աստծուն ծառայելու կոչմանը, ապրելով, ինչպես որ հասնում է ձեզ] մտքի լիովին համեստությամբ [խոնարհությունով] և հեզությունով [առանց եսասիրության, քնքշությամբ, փափկությամբ], համբերությամբ [երկայնամտությամբ], դիմանալով միմյանց և թույլ տալով իրար, քանի որ դուք սիրում եք միմյանց»:

Եփեսացիների 4.1,2, AMP

Ոչ այնքան վաղուց, մեր ընտանիքում մի միջադեպ եղավ, որը կարող է գերազանց օրինակ ծառայել խոնարհության, հեզության և համբերության վերաբերյալ իմ տեսակետի համար:

Միսիոներության մեկնած մեր որդին՝ Դանիելը, նոր էր վերադարձել Դոմինիկյան Հանրապետությունից: Նրա թևերը տեղ-տեղ պատված էին ցանով և մի քանի բաց վերքերով: Դոմինիկյան Հանրապետությունում նրան ասել էին, որ դա իրենց մոտ պատահում է, երբ դիպչում են թունավոր բաղեղին: Նրա վիճակը մեզ բավականին լուրջ թվաց: Մենք զանգահարեցինք մեր ընտանեկան բժշկին, բայց նա այդ օրն աշխատանքի չէր, այնպես որ, հանդիպումը նշանակվեց նրա օգնականի հետ:

Մեր դուստր Սանդրան զանգահարեց բժշկին, հաստատեց հանդիպումը, նրան ասաց Դանիելի տարիքը, ասաց, որ ինքը Դանիելի քույրն է և՛ որ ինքն է նրան բերելու: Այդ օրը մենք բոլորս, այդ թվում նաև Սանդրան, շատ զբաղված էինք: Մեքենան քառասունհինգ րոպե վարելուց հետո, նա հասել էր բժշկի մոտ և լսել հետևյալը. «Ես ցավում եմ, բայց ըստ մեր կանոնակարգի, մենք անչափահաս հիվանդներից, առանց ծնողների ուղեկցության, չենք ընդունում»:

Սանդրան փորձել էր բացատրել, որ նախապես զանգահարել և ասել էր, որ ինքն է եղբորը բերելու, ոչ թե ծնողները, քանի որ վերջիններս հաճախ են մեկնում ուղևորության: Սակայն բուժքույրը պնդել էր իր ասածը, որ առանց ծնողների չի կարող ընդունել:

Սանդրան կարող էր հուսահատվել. չնայած իր զբաղվածությանը, նա իր վրա էր վերցրել այդ պատասխանատվությունը, բայց պարզվել էր, որ ապարդյուն: Տուն վերադառնալու համար նա պետք է ևս քառասունհինգ ռոպե ճանապարհ անցներ, ինչը պարզապես թվում էր ժամանակի վատնում:

Աստված օգնեց նրան պահել հանգստությունն ու սերը: Նա զանգահարեց իր հայրիկին, ով այդ ժամանակ այցելել էր տատիկին, և նա խոստացավ գալ ու փորձել շտկել իրավիճակը: Այդ առավոտ Դեյվն իր ներսում զգացել էր, որ պետք է անցնի մեր գրասենյակով և իմ գրքերից ու լսաժապավեններից որոշ բաներ վերցնի իր հետ՝ ինքն էլ չիմանալով, թե ինչու: Նա պարզապես զգացել էր, որ պետք է այդպես անի:

Երբ նա եկել է կլինիկա, հիվանդներին գրանցող և թղթերով զբաղվող տիկինը հարցրել էր Դեյվին, թե արդյո՞ք նա եկեղեցու ծառայող է, և Ջոյս Մայերի ամուսինը: Դեյվն ասել էր, որ այդպես էլ կա: Պարզվել էր, որ այդ տիկինը նայել է մեր հեռուստատեսային հաղորդումները և բազմիցս լսել մեր ընտանիքի մասին, այդ պատճառով էլ Դեյվի ազգանունը ծանոթ էր եղել իրեն: Դեյվը զրուցել էր նրա հետ և զգացնունքային բժշկության վերաբերյալ իմ գրքերից մեկը տվել նրան:

Այս պատմությունը ձեզ պատմելու նպատակն այս է. ի՞նչ կլինեք, եթե Սանդրան բարկանար և կորցներ համբերությունը: Իրավիճակը միանգամայն այլ կերպ կդասավորվեր: Մենք կկորցնեինք Տիրոջ մասին վկայելու հնարավորությունը: Հեռուստատեսությամբ ինձ դիտող այդ կինը կտեսներ իմ ընտանիքի անդամի վատ վարքը, ինչն էլ նրան կարող էր հոգևոր զգալի վնաս հասցնել:

Շատերն են այս աշխարհում փնտրում Աստծուն, և այն, ինչ մենք ցույց ենք տալիս նրանց մեր վարքով, շատ ավելի կարևոր է, քան այն, ինչ ասում ենք նրանց մեր խոսքերով: Իհարկե, կարևոր է մարդկանց Ավետարանը քարոզելը, սակայն այդպես վարվելով և հաջորդ իսկ վայրկյանին մեր վատ վարքագծով մեր խոսքը ժխտելն ավելի վատ է, քան ոչինչ չասելը:

Սանդրան այդ իրավիճակում իր չարչարանքը կրեց համբերատար

կերպով: Աստժո խոսքն ասում է, որ մենք կանչված ենք նմանօրինակ վարք ու վերաբերմունք ցույց տալու համար:

ՀՈՎՍԵՓԻ ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՄԵՋ

«Նրանց առաջից մարդ ուղարկեց. Յովսեփը ծառայության մեջ ծախվեց:

Չարչարեցին նրա ոտքերը կապանքի մեջ. նրա հոգին երկաթի մեջ դրեցին:

Մինչև այն ժամանակ, որ նրա խոսքը կատարվեց [նրա դաժան եղբայրների կյանքում]. Տիրոջ խոսքը փորձեց նրան»:

Սաղմոս 105.17-19, AMP

Որպես Յին ուխտի օրինակ՝ մտածեք Յովսեփի մասին, ով անարդարացիորեն չարչարվեց իր եղբայրների կողմից: Նրանք վաճառեցին Յովսեփին ստրկության և իրենց հորն ասացին, թե նա սպանվել է վայրի կենդանիներից: Մինչդեռ, Յովսեփին գնել էր Պետափրես անունով մի մեծահարուստ մարդ և տարել իր տուն՝ որպես ստրուկ: Ուր էլ որ Յովսեփը գնաց, Աստված նրան շնորհք տվեց. այդպես եղավ նաև նրա նոր տիրոջ տանը:

Յովսեփի կոչումը բարձրացրին, բայց հետո նրա հետ կրկին անարդարացի դեպք տեղի ունեցավ: Պետափրեսի կինը փորձեց հրապուրել նրան, բայց, քանի որ Յովսեփն ազնիվ մարդ էր, նա մերժեց իր տիրուհուն: Կինը ստեց ամուսնուն՝ ասելով, որ իբրև Յովսեփը սիրահետել է իրեն, ինչի պատճառով նա բանտարկվեց, թեպետ ոչ մի վատ բան չէր գործել:

Բանտում գտնվելու ընթացքում Յովսեփը փորձեց օգնել ուրիշներին: Նա երբեք չտրտնջաց, և քանի որ տառապանքների ժամանակ նա ճիշտ վերաբերմունք ցուցաբերեց, Աստված վերջապես ազատեց նրան և բարձրացրեց: Ի վերջո, նա Եգիպտոսում հասավ այնպիսի մեծ իշխանության, որ ողջ երկրում իրենից բարձր մեկը չկար՝ փարավոնից բացի:

Աստված նաև շտկեց Յովսեփի և նրա եղբայրների միջև եղած հարաբերությունները: Երբ ողջ երկրում սով էր, նրանք ստիպված եղան

զմալ Յովսեփի մոտ և կերակուր խնդրել նրանից: Կրկին Յովսեփը բարեպաշտ վերաբերմունք է ցուցաբերում՝ վրեժխնդիր չլինելով իր եղբայրներից, թեպետ նրանք արժանի էին դրան: Յովսեփը եղբայրներին ասաց, որ իրենց վատ մտադրություններն Աստված բարիին գործակից արեց, որ նրանք գտնվում էին ոչ թե իր, այլ՝ Աստծո ձեռքում, և որ ինքը, օրհնելուց բացի նրանց որևէ բան անելու իրավունք չունի (տե՛ս Ծննդ. 39-50գլ.):

ՏՐՏՆՋԱԼՈՒ ՎՏԱՆԳԸ

«Եվ Քրիստոսին էլ չփորձենք [փորձելով Նրա համբերությունը, փորձություն դառնալով Նրա համար, քննադատաբար գնահատական տալ Նրան և չարաշահել Նրա բարությունը], ինչպես նրանցից ոմանք փորձեցին և թունավոր օձերից սասկեցին:

Եվ չտրտնջաք, ինչպես նրանցից ոմանք տրտնջացին, և սատակչի [մահվան] ձեռքով կորան:

Եվ այն ամենը նմուշի պես էր նրանց համար, [իսկ մեզ՝ որպես օրինակ և զգուշացում]. դրանք գրվել են մեզ խրատելու, շտկելու և ճիշտ վարվելու համար, և մենք այն օրերում ենք, որոնց վերջը հասավ [դրանց վախճանն ու եզրահանգման ժամանակահատվածը]:»:

Ա Կորնթացիների 10.9-11, AMP

Այս հատվածից մենք պարզորոշ կարող ենք տեսնել Յովսեփի և իսրայելացիների միջև տարբերությունը: Յովսեփը երբեք չտրտնջաց, իսկ իսրայելացիների բանուզործը միայն դա էր՝ տրտնջալ այն ամենից, ինչն իրենց ուզածով չէր: Աստվածաշունչը շատ հստակ է խոսում փնթփնթոցների, սխալներ փնտրելու և տրտունջի մասին:

Ամեն ինչ շատ պարզ է: Իսրայելացիների տրտունջները դուռ բացեցին նրանց հակառակորդի համար, որը եկավ ու ոչնչացրեց նրանց: Նրանք պետք է գնահատեին Աստծո բարությունը, բայց չարեցին, այնպես որ՝ վճարեցին դրա գինը:

Մենք ասացինք, որ նրանց բոլոր չարչարանքներն ու մահերը գրվել են որպես օրինակ, իմանալու համար, թե ինչ կարող է պատա-

հել մեզ հետ, եթե վարվենք նրանց նման:

Ոչ մի տրտունջ դուրս չի գա մեր բերանից, քանի դեռ դրանք չեն ծնվել մեր մտքում: Տրտունջն, անկասկած, անապատային մտածելակերպ է, որը թույլ չի տա մեզ մտնելու Խոստմունքի երկիր:

Հիսուսն է մեր օրինակը և մենք պետք է վարվենք այնպես, ինչպես Նա վարվեց:

Իսրայելացիները *տրտնջացին ու մնացին* անապատում:

Հիսուսը *փառք տվեց Աստծուն և հարություն առավ* մեռելներից:

Այս հակադրության մեջ կարող ենք տեսնել փառաբանության, շնորհակալության և տրտունջի զորությունները: Այո, տրտունջը, բողոքները, փնթփնթոցներն ու սխալներ փնտրելը նույնպես զորություն ունեն, բայց դա բացասական զորություն է: Ամեն անգամ, երբ մենք տրտնջում, բողոքում կամ սխալներ ենք փնտրում, սատանային իրավունք ենք տալիս մեզ վերահսկելու համար, այնինչ Աստված նրան այդ իշխանությունը չի տվել:

ՄԻ՛ ՏՐՏՆՋԱՑԵՔ, ՄԻ՛ ԴԺԳՈՂԵՔ, ՍԽԱԼՆԵՐ ՄԻ՛ ՓՆՏՐԵՔ

«Ամեն բան գործեք առանց տրտունջի և սխալներ փնտրելու և դժգոհելու [Աստծո դեմ], և հետաքրքրվելով ու կասկածելով [ձեր ներսում],

Որ ձեզ ցույց տաք որպես անբիծ ու անմեղ, անարատ ու չդժգոհող Աստծո որդիներ՝ առանց մեղադրանքի [մեղավորության, կշտամբանքի] այս կամակոր և ծուռ [հոգևոր փչացած ու այլասերված] սերնդի մեջ, որոնց միջում դուք երևաք ինչպես պայծառ լույսեր [վառ շողացող աստղեր կամ փարոսներ] այս [խավար] աշխարհի մեջ»:

Փիլիպեցիների 2.14,15, AMP

Երբեմն թվում է, որ ամբողջ աշխարհը դժգոհում է: Տրտնջացողների և փնթփնթացողների քանակը գերազանցում է երախտագիտություն և շնորհակալություն հայտնողների քանակին: Մարդիկ բողոքում են իրենց աշխատանքից, իրենց ղեկավարից, մինչդեռ պետք է շնորհակալ լինեն ունեցած աշխատանքի համար և գոհանան այն

փաստից, որ իրենք անտուն-թափառական չեն և չեն ապրում մի կացարանում ու ժամերով հերթ կանգնում մի թաս ապուր ստանալու համար:

Այդ աղքատ մարդկանցից շատերը երջանիկ կլինեին, եթե ունենային ձեր աշխատանքը: Նրանք առավել քան պատրաստ կլինեին համակերպվելու այն ղեկավարի հետ, ով ձեր կարծիքով այդքան էլ կատարյալ մարդ չէ, միայն թե մշտապես վարձատրվեին, ապրեին իրենց սեփական տանը և եփեին իրենց ուզած կերակուրը:

Միգուցե դուք ավելի բարձր աշխատավարձով աշխատանքի կարիք ունեք, և գուցե ձեր ղեկավարն, իրոք, արդարացի չի վարվում ձեզ հետ: Իհարկե դա վատ է, բայց դուք դժգոհելով ելք չեք գտնի:

ՄԻ՝ ՎԱԽԵՑԵՔ ԵՎ ՄԻ՝

ԱՆՎԱՆԳՍՏԱՑԵՔ. ԱՂՈԹԵ՛Ք ԵՎ ԳՈՎԱՑԵ՛Ք

«Հոգս մի՛ արեք, այլ՝ աղոթքով ու աղաչանքով ձեր խնդրվածքները գոհությունով թող հայտնի լինեն Աստծուն»:

Փիլիպեցիների 4.6

Այս խոսքում Պողոս առաքյալը սովորեցնում է մեզ՝ ինչպես լուծել մեր խնդիրները: Նա մեզ խորհուրդ է տալիս ցանկացած հանգամանքում *գոհությամբ աղոթք մատուցել*:

Տերն այս նույն սկզբունքն ինձ սովորեցրեց այս կերպ. «Ձո՛յս, ինչո՞ւ պետք է ես քեզ մեկ ուրիշ բան տամ, եթե դու չես կարողանում շնորհակալ լինել արդեն ունեցածիդ համար: Ինչո՞ւ քեզ տամ ևս մեկ հնարավորություն, որ ներկայացնես քո բողոքները»:

Եթե մենք չենք կարողանում մեր աղոթքները լցնել երախտագիտությամբ, մենք չենք ունենա բարեմպաստ պատասխան: Խոսքը չի ասում՝ աղոթիր դժգոհությամբ, այլ ասում է՝ աղոթիր գոհությամբ:

Սովորաբար մենք սկսում ենք փնթփնթալ, տրտնջալ, սխալներ փնտրել ու դժգոհել այն ժամանակ, երբ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկն այնպես չի վարվում, ինչպես մենք էինք ակնկալում, կամ, երբ ինչ-որ բանի ավելի երկար ենք սպասում, քան նախատեսել էինք: Աստծո

խոսքը սովորեցնում է մեզ նման պահերին համբերատար լինել:

Ես հայտնաբերեցի, որ համբերությունը ոչ թե սպասելու ունակությունն է, այլ սպասելու ժամանակ ճիշտ վերաբերմունք ցուցաբերելու ունակությունը:

Շատ կարևոր է, որ դժգոհություններին և բացասական մտածելակերպի նմանատիպ մտքերին լուրջ վերաբերվենք: Ես, անկեղծ, հավատում եմ, որ Աստված ինձ տվել է հայտնություն այն մասին, թե որքան վտանգավոր է մեր մտքերին և բերանին «ազատություն» տալը:

Երկրորդ Օրինաց գրքում կարդում ենք, որ Աստված իսրայելացիներին ասաց. «Բավական երկար մնացիք այս սարի վրա»: Գուցե դուք արդեն երկար ժամանակ եք գտնվում նույն սարի վրա և այժմ պատրաստ եք առաջ շարժվելու: Եթե այո, ապա լավ կլինի՝ հիշեք, որ ձեր կյանքում չեք կարող հեռու գնալ ոչ մի դրական ճանապարհով, քանի դեռ ձեր մտքերն ու խոսքերը բաղկացած են միայն դժգոհություններից:

Ես չեմ ասում, որ հեշտ է չդժգոհելը, բայց դուք ունեք Քրիստոսի միտքը: Ինչո՞ւ չօգտագործել այն:

Գլուխ
20

**«Ինչ մի՛ սպասեցրեք.
ես արժանի եմ, որ ամեն
քան ստանամ անմիջապես»:**

Անսպասարկ մտածելակերպ. թիվ 5

**«Ինչ մի՛ սպասեցրեք.
ես արժանի եմ, որ ամեն
բան ստանամ անմիջապես»:**

Գլուխ
20

Անաստասյան մտածելակերպ. թիվ 5

Անհամբերությունը հպարտության պտուղ է: Հպարտ մարդը ոչ մի բանի չի ցանկանում սպասել: Ինչպես արդեն խոսեցինք նախորդ գլխում, համբերությունը ոչ թե սպասելու ունակությունն է, այլ՝ սպասելու ժամանակ ճիշտ վերաբերմունք ցուցաբերելը:

Այս խոսքում չի ասվում՝ «համբերատար եղեք, եթե սպասում եք», այլ՝ «համբերատար եղեք... *ինչպես որ սպասում եք*»: Սպասելը կյանքի մի մասն է: Շատերը չեն ուզում սպասել, բայց, այնուամենայնիվ, մենք մեր ժամանակի մեծ մասն անցկացնում ենք սպասելու, քան ինչ-որ բան ստանալու մեջ:

Ինչ նկատի ունեն. մենք աղոթում և հավատքով Աստծուց ինչ-որ բան ենք խնդրում, ապա սպասում ենք, թե երբ խնդրանքը կպատասխանվի: Երբ պատասխանը ստանում ենք՝ լցվում ենք ուրախությամբ, քանի որ վերջապես ստացանք այն, ինչին այդքան երկար սպասում էինք:

Սակայն մարդ արարածը միշտ ձգտում է ինչ-որ մի նպատակի, այնպես որ, մենք կրկին վերադառնում ենք աղոթքին և կարիքներին՝ խնդրելով ու աղոթելով Աստծուն մեկ ուրիշ բանի համար, հետո սպասում, թե երբ կգա հաջորդ ճեղքումը:

«Այնպես որ, համբերատար եղեք, եղբայրներ [ինչպես որ սպասում եք], մինչև մեր Տիրոջ գալուստը: Տեսեք՝ ինչպես է գյուղացին սպասելով ակնկալում իր հողի քանկարժեք բերքին: [Տեսեք՝ ինչպես է] նա շարունակում պահել իր համբերությունը [արթուն], մինչև ստանա առաջին և վերջին անչրևները»:

Հակոբոս 5.7, AMP

Մտածելով սրա մասին, ես հասկացա, որ կյանքում ժամանակիս մեծ մասն անցկացնում եմ ավելի շատ սպասելով, քան ստանալով: Ուստի որոշեցի սովորել ուրախ լինել ոչ միայն պատասխանս ստանալու, այլ նաև դրան սպասելու ժամանակ:

Մենք պետք է սովորենք վայելել կյանքը նաև այն ժամանակ, երբ գտնվում ենք դեպի մեր նպատակը գնացող ճանապարհին:

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ Է ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ՍՊԱՍԵԼՈՒՆ

«Եվ հիմա զգուշացնում եմ ձեզ բոլորիդ ինձ տրված այն շնորհքով, որ դուք չգնահատեք ու չմտածեք ինքներդ ձեր մասին բարձր, քան որ կա [չունենաք չափազանց մեծ կարծիք ձեր կարևորության մասին], այլ մտածել պարկեշտ կենալ համաձայն այն հավատքի չափի, որ Աստված տվել է ձեզ»:

Հռոմեացիների 12.3, AMP

Անհնար է վայելել սպասողական ժամանակը, եթե չգիտեք՝ ինչպես համբերատար սպասել: Հպարտությունը խանգարում է համբերատար սպասելուն, որովհետև հպարտ անձնավորությունն իր մասին շատ բարձր կարծիք ունի և մտածում է, որ ինքը երբեք ոչ մի անհանգստություն չպետք է ունենա:

Մենք չպետք է մեր մասին ունենանք ոչ վատ, և ոչ էլ շատ լավ կարծիք: Միանգամայն վտանգավոր է ինքներս մեզ մեծարելը և մարդկանց վերևից նայելը: Մենք ամեն անգամ անհամբերություն ենք ցուցաբերում, երբ մեկն իրեն այնպես չի դրսևորում, կամ այնքան էլ արագ չի կատարում գործը, ինչպես մենք կցանկանայինք:

Համեստ անձնավորությունը երբեք անհամբեր վերաբերմունք չի ցուցաբերի Աստծո և մարդկանց նկատմամբ:

ԻՐԱՏԵՄ ԵՂԵՔ

«Աշխարհում դուք ունեք տառապանք, փորձություններ ու կսկիծ և վրդովմունք, բայց ուրախ եղեք [եղե՛ք համարձակ, վստահ,

հաստատուն, անվախ], ես հաղթել եմ աշխարհին: [Ես մերկացրեցի ձեզ վիրավորելու նրա ուժը և պարտության մատնեցի նրան ձեզ համար]»:

Յովհաննես 16.33, AMP

Սատանան փորձում է գրավել մեր միտքը, պահելով մեզ անհամբերության մեջ, և ստիպում, որ լինենք գաղափարախոսներ, այսինքն՝ կորցնենք կյանքի հանդեպ մեր իրատեսական հայացքներն ու տրվենք գաղափարներին:

Եթե մեր ուղեղում այն գաղափարն է, որ մեր կյանքում պետք է բոլոր պայմաններն ու փոխհարաբերությունները միշտ կատարյալ լինեն՝ չլինի ոչ մի թերություն, ոչ մի խոչընդոտ, ոչ մի տհաճ անձնավորություն, ուն հետ պետք է ստիպված լինենք գործ ունենալ, ապա այս ամենով իսկ մենք ստեղծում ենք մեր պարտության բոլոր նախադրյալները: Ավելի ճիշտ կլինի ասել, որ սատանան է ստեղծում այդ բոլոր նախադրյալները՝ մեզ պարտության մատնելու համար:

Ես կոչ չեմ անում ձեզ՝ լինել վատատես, քանի որ ինքս այն հավատացյալներից եմ, ովքեր գերադասում են դրական վերաբերմունքն ու մտքերը: Բայց ես հորդորում եմ ձեզ լինել իրատես՝ հասկանալու համար այն փաստը, որ այս կյանքում կատարյալ բաները շատ քիչ են:

Մեր ծառայության վաղ տարիներին, ամուսինս և ես գրեթե ամեն շաբաթ և կիրակի ուղևորությունների էինք մեկնում՝ տարբեր քաղաքներում սեմինարներ անցկացնելու համար: Ծառայությունների համար շատ հաճախ վարձակալում էինք հյուրանոցային սրահները կամ մշակութային կենտրոնների դահլիճները: Սկզբում ես ամեն անգամ տխրում էի, երբ այդ վայրերում ինչ-որ բան իմ ուզածով չէր դասավորվում, օրինակ՝ օդորակման սարքերը լավ չէին աշխատում (իսկ երբեմն՝ ընդհանրապես չէին աշխատում), սրահը բավականաչափ լուսավորություն չունեի նկարահանումների համար, աթոռները կեղտոտ էին կամ այնպես պատռված, որ ողջ պարունակությունը դուրս էր թափվում, կամ էլ նախորդ օրվա հարսանյաց տորթի մնացորդները դեռևս ցրված էին հատակով մեկ:

Ես մտածում էի, որ մենք բավականին զումար ենք տալիս այդ

սրահների վարձակալության համար այն հույսով, որ դրանք կլինեն լավ վիճակում: Այդ պատճառով էլ ես նյարդայնանում էի, երբ դա այդպես չէր լինում: Մենք անում էինք ամեն բան, որպեսզի մեր վարձակալած սրահները լինեին հարմարավետ ու մաքուր, սակայն դրանցից 75%-ը մեր հույսերը չէին արդարացնում:

Լինում էին ժամանակներ, երբ հյուրանոցը մեր խմբին խոստանում էր արագ գրանցում, սակայն տեղ հասնելուն պես, ստիպված էինք լինում սպասել մի քանի ժամ, մինչև սենյակներն ազատվեին: Մեր ծառայությունների ժամերի մասին հյուրանոցի անձնակազմը մարդկանց տալիս էր սխալ տեղեկություններ, չնայած այն հանգամանքին, որ մենք բազմիցս նրանց ասել էինք բոլոր տվյալները, նույնիսկ նախապես ուղարկել էինք տպված օրինակը, որտեղ գրված էին եղել հստակ օրերն ու ժամերը: Մեզ շատ հաճախ էին հանդիպում կոպիտ ու ծույլ հյուրանոցային աշխատողներ: Շատ անգամներ է պատահել, որ ճաշը չի համապատասխանել պատվերին:

Հիշում եմ մի դեպք, երբ մեր սեմինարի մասնակից քրիստոնյա կանանց, ովքեր մոտավորապես ութ հարյուր հոգի էին, մատուցվեց դեսերտ՝ ռոմով պատված: Խոհանոցում շփոթել էին պատվերներն ու մեզ մատուցել այն, ինչը պատրաստված էր հարսանյաց ճաշկերույթի համար: Ավելորդ է ասել, թե մենք որքան անհարմար զգացինք մեզ, երբ կանայք սկսեցին ասել, որ դեսերտից այնպիսի համ է գալիս, կարծես ալկոհոլային եփուկ լինի:

Ես կարող եմ շարունակել նման դեպքերի ցանկը, սակայն այս ամենի իմաստն այն է, որ մեզ շատ հազվադեպ է հաջողվել վարձակալել կատարյալ ու անթերի տարածքներ, գործ ունենալ կատարյալ մարդկանց հետ և կատարյալ ձևով անցկացնել մեր սեմինարները:

Ի վերջո, ես ստիպված եղա հասկանալ, որ այդ իրավիճակներում անհամբեր ու վատ վարվելուս պատճառներից մեկն այն էր, որ ես իդեալիստ էի, և ոչ թե իրատես:

Ես չեմ պլանավորում իմ անհաջողությունները, այլ հիշում եմ Հիսուսի խոսքերը, որ այս աշխարհում մենք գործ կունենանք տառապանքի, փորձությունների, կսկիծի ու վրդովմունքի հետ: Այս ամենը

երկրի վրա գոյություն ունեցող կյանքի մի մասն են՝ ինչպես հավատացյալների, այնպես էլ անհավատների համար: Սակայն այս աշխարհում կատարվող ոչ մի անհաջողություն չի կարող վնաս հասցնել մեզ, եթե մենք մնանք Աստծո սիրո մեջ՝ դրսևորելով Սուրբ Հոգու պտուղները:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Մենք դեռևս շարունակում ենք մեր ծառայողական ուղևորությունները, և արդեն քսանհինգ տարի է շատ վայրերում, ունենում ենք անհարմարություններ և անհաջողություններ: Վերջին երկու կոնֆերանսների ժամանակ, երեկոյան հավաքույթից հյուրանոցային սենյակներ վերադառնալիս, մեր բանալիները չբացեցին դռները: Ես դեռ չեմ հասկացել, թե ինչու է հյուրանոցի համակարգչային համակարգը բանալիները փոխում այն ժամանակ, երբ սենյակը դեռ ազատված չէ, բայց դա հաճախ է տեղի ունենում: Մենք սպասում ենք միջանցքում, մինչև ինչ-որ մեկը գնում է ընդունարանի գրասեղանից ստանալու նոր բանալիները և, իհարկե, այնտեղ նրանք միշտ ներողություն են խնդրում պատճառած անհարմարավետության համար:

Մենք հիմա շատ չենք տխրում մեր ոչ կատարյալ ճամփորդություններից, որովհետև գիտենք մի փաստ, որ դա մեր ամենօրյա կյանքի մի մասն է: Մեր գործը չէ հանգամանքների վերահսկումը, այլ՝ դրանց նկատմամբ աստվածային վերաբերմունք ցուցաբերելը:

ՀԱՄԱԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ

«Ուրեմն հագե՛ք, ինչպես Աստծո սեփական ընտրյալներ [Նրա սեփական ընտրված ներկայացուցիչներ], [ովքեր] գտված, սուրբ և բավականին սիրված են, [ունեն Աստծուց տրված վարք]՝ փափկասիրտ խիղճ, ողորմածություն, համեստ կարծիք, քնքշություն, համբերություն [ինչն անխոնջ է ու երկրատև չարչարանքներից դիմացող, և զորավոր է՝ ուրախությամբ դիմակայելու այն ամենին, ինչ գալիս է]»:

Կողոսացիների 3.12, AMP

Ես հաճախ եմ անդրադառնում այս խոսքին՝ ինձ հիշեցնելու համար, թե ինչպիսի վարք պետք է դրսևորեմ ցանկացած իրավիճակում: Ես հիշեցնում եմ ինձ, որ համբերությունը ոչ թե սպասելու ունակությունն է, այլ սպասելու ժամանակ ճիշտ վերաբերմունք ցուցաբերելու ունակությունը:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԾՆՎՈՒՄ Է ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

«Բոլորովին ուրախություն համարեք, եղբայրներ՝, երբ կերպկերպ փորձանքների կամ տարբեր տեսակի գայթակղությունների մեջ ընկնեք:

Հաստատ իմացեք և հասկացեք, որ փորձությունն ու ձեր հավատքի փորձառությունը ծնում են տոկունություն, կայունություն և համբերություն:

Բայց թող տոկունությունը, կայունությունն ու համբերությունը կատարյալ գործ ունենան, որպեսզի դուք լինեք կատարյալ [մարդիկ] և ամբողջովին զարգանաք [առանց որևէ թերությունների] և ոչ մի բանի պակասություն չունենաք»:

Հակոբոս 1.2-4, AMP

Համբերությունը Հոգու պտուղ է (տե՛ս Գաղատ. 5.22), որը դրված է յուրաքանչյուր վերստին ծնված մարդու հոգում: Աստժո համար շատ կարևոր է, որպեսզի Իր ժողովուրդը համբերություն ցուցաբերի կյանքում: Տերը ցանկանում է, որ մարդիկ Իր զավակների մեջ Իր բնավորությունը տեսնեն:

Հակոբոսի 1-ին գլխում ասվում է, որ երբ հասնենք կատարելության, մենք ոչ մի բանի պակասություն չենք ունենա: Սատանան չի կարող վերահսկել համբերությամբ լցված անձնավորությամբ:

Նույն գլխում նաև նշվում է, որ մենք պետք է ուրախ լինենք, երբ հայտնվում ենք դժվարին իրավիճակներում, իմանալով, որ Աստված մեզանում համբերություն է ձևավորում այն եղանակով, ինչը Քինգ Ջեյմսի թարգմանությունն անվանում է «զանազան փորձություններ»:

Սեփական փորձից հասկացա, որ «զանազան փորձություններն»,

ի վերջո, ինձանուն զարգացրեցին համբերություն, սակայն, նախ և առաջ, այդ փորձությունների ժամանակ «ջրի երես էին դուրս գալիս» այնպիսի անբարեպաշտ հատկանիշներ, ինչպիսիք էին՝ հպարտությունը, զայրույթը, ապստամբությունը, ինքնախղճահարությունը, դժգոհությունն ու սրանց նման այլ բաներ: Թվում էր, թե ուղղակի ստիպված էի այս ամենին հանդիպել և դրանց հարցերը պարզել՝ նախքան համբերության պտղի ձևավորվելը:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ,
ԹԵ՝ ԱՆՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

«Չովը լեռից շարժվելով դեպի Կարմիր ծովը տանող ճանապարհով, նրանք շրջանցեցին Եդովմը: Մարդիկ սկսեցին կորցնել իրենց համբերությունը [ընկճվեցին, հուսահատվեցին] ճանապարհի [փորձությունների] պատճառով»:

Թվոց 21.4, AMP

Եթե հիշում եք, համբերություն չունենալն անապատային մտածելակերպերից մեկն էր, որի պատճառով իսրայելացիները քառասուն տարի թափառեցին անապատում: Արդյո՞ք նրանց հանդիպած փորձություններն այդքան սարսափելի էին, թե՞ իրենք էին չհարմարվող: Վստահ եմ, որ շատերի մոտ ամեն բան ավելի դժվար է եղել, քան մյուսների, բայց շատ հաճախ մենք տրտմջում ենք այնպիսի բաներից, որ հասուն մարդը դրանց ոչ մի ուշադրություն չի դարձնի:

Ինչպե՞ս կարող էին այս մարդիկ Խոստմունքի երկիր մտնել, քչել այդ տարածքներում բնակվողներին և լիովին տիրել երկիրը, եթե նրանք նույնիսկ համբերություն չունեին և չէին դիմանում չնչին անհարմարավետություններին:

Ես կոչ եմ անում ձեզ սերտորեն աշխատել Սուրբ Չոգու հետ, որպեսզի Նա ձեզանում զարգացնի համբերության պտուղը: Որքան դիմադրեք Նրան, այնքան ձեր վերափոխման գործընթացը կերկարի: Սովորե՛ք համբերատար լինել, երբ անցնում եք տարբեր փորձություններով, և կտեսնեք, որ ձեր կյանքը ձեռք է բերում մի նոր որակ:

Դուք ոչ միայն կրիմանաք այս կյանքում, այլ նաև կվայելեք այն:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ

ՏՈԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Որովհետև դուք կարիք ունեք հաստատուն համբերության և տոկունության, որպեսզի լիովին կարողանաք իրագործել Աստծո կամքը, և դա անելով՝ ստանաք և ունենաք [և վայելեք առատապես] այն, ինչ խոստացված է»:

Եբրայեցիների 10.36, AMP

Այս խոսքում ասվում է, որ առանց համբերության և տոկունության մենք չենք կարողանա ստանալ Աստծո խոստումները: Եվ Եբրայեցիների 6.12-ում ասվում է, որ խոստումները կկարողանանք ժառանգել միայն հավատքով ու համբերությամբ (KJV):

Հպարտ մարդը վստահում է իր կարողությանը և փորձում իր ծրագրերն իրականացնել իրեն հարմար ժամանակին: Հպարտն ասում է. «Ես պատրաստ եմ հիմա»: Խոնարհն ասում է. «Աստված ավելի լավ գիտի և Նա չի ուշանա»:

Խոնարհ մարդը սպասում է համբերատար կերպով: Նա լցված է Աստծո երկյուղով, և նույնիսկ չի էլ մտածում, որ ինքը մի բան կարող է ինքնուրույն անել: Իսկ հպարտ մարդը փորձում է ինչ-որ բան անել մեկը մյուսի ետևից, և բոլորն ապարդյուն:

ՄԻՇՏ ՉԷ, ՈՐ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ

ՆՊԱՏԱԿԸ ՏԱՆՈՂ ԱՄԵՆԱԿԱՐԾ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է

«Կա ճանապարհ, որ ուղիղ է մարդու առաջին, բայց նրա վախճանը մահվան ճանապարհներ են»:

Առակաց 16.25

Մենք պետք է հասկանանք, որ հոգևոր աշխարհում միշտ չէ, որ ուղիղ ճանապարհն ամենակարճ հեռավորությունն է մեր և այն սահմանված տեղի միջև, ուր պատրաստվում ենք գնալ: Դա, թերևս, կարող է ամենակարճ հեռավորությունը լինել դեպի ոչնչացում:

Մենք պետք է սովորենք համբերել և սպասել Տիրոջը, նույնիսկ, եթե թվում է, որ Նա մեզ տանում է շրջանցիկ ուղիով դեպի մեր նպատակակետը:

Աշխարհը լի է դժբախտ քրիստոնյաներով, որովհետև նրանք ամեն կերպ փորձել են ինչ-որ բան անել, փոխարենը, որ համբերատար սպասեին, մինչև Աստված կաներ դա Իր ձևով և որոշված ժամանակին:

Երբ դուք փորձում եք սպասել Աստծուն, սատանան կհարձակվի ձեր մտքի վրա՝ պահանջելով, որ դուք սկսեք ինչ-որ բան անել: Նա ցանկանում է դրդել ձեզ, որ վարվեք ըստ մարմնի, որովհետև գիտի, որ մարմինը ոչ մի օգուտ չի տալիս (տե՛ս Հովի. 6.64, Հռոմ. 13.14):

Ինչպես արդեն տեսանք, անհամբերությունը հպարտության նշան է, և հպարտության միակ «հակաթույնը» խոնարհությունն է:

ԽՈՆԱՐՀԵՑՐԵՔ ԻՆՔՆԵՐԴ ԶԵՁ ԵՎ ՍՊԱՍԵՔ ՏԻՐՈՋԸ

«Հետևաբար, խոնարհեցրե՛ք ինքների ձեզ [իջեցնելով, ցածրացնելով ինքների ձեզ ձեր գնահատման մեջ] Ամենակարող Աստծո ձեռքի տակ, որ ճիշտ ժամանակին Նա ձեզ բարձրացնի»:

Ա Պետրոսի 5.6, AMP

«խոնարհեցրե՛ք ինքների ձեզ» արտահայտությունը չի նշանակում, որ մենք պետք է սկսենք մեր մասին վատը մտածել: Դա պարզապես նշանակում է՝ «Մի՛ կարճեք, որ դուք կարող եք ձեր բոլոր խնդիրները լուծել ինքնուրույն»:

Հպարտորեն ամեն բան մեր ձեռքը վերցնելու փոխարեն, մենք պետք է սովորենք ինքներս մեզ խոնարհեցնել Ամենակարող Աստծո ձեռքի տակ, քանի որ ճիշտ ժամանակին Նա կբարձրացնի մեզ:

Երբ մենք սպասում ենք Աստծուն և հրաժարվում ենք վարվել մարմնի համաձայն, դրանով մենք «սպանում ենք մեր «ես»-ը»: Մենք սկսում ենք մահանալ մեր ցանկությունների համար, և կենդանանում ենք Աստծո կամքի համար:

Մենք միշտ պետք է հնազանդորեն կատարենք այն, ինչ Աստված

պատվիրում է մեզ, դրա հետ մեկտեղ ունենալով Աստծո երկյուղը՝ մարմնի համաձայն չվարվելու համար: Հիշե՛ք, անհամբերության արմատը հպարտությունն է: Հպարտ մարդն ասում է. «Ինձ մի՛ սպասեցրեք. ես արժանի եմ, որ ամեն բան ստանամ անմիջապես»:

Երբ գայթակղություն եք զգում ձեր համբերությունը կորցնելու հարցում, խորհուրդ եմ տալիս ձեզ ասել հետևյալ բառերը. «Տե՛ր, ես ցանկանում եմ Քո կանքը և Քո ժամանակը: Ես չեմ ցանկանում Քեզանից առաջ ընկնել, և չեմ էլ ցանկանում ուշանալ Քեզանից: Հայր, օգնիր ինձ, որ համբերատար կերպով սպասեմ Քեզ»:

Գլուխ
21

**«Միգուցե իմ վարքը սխալ է,
բայց դա իմ մեղավորությունն է»:**

Անապատային մտածելակերպ. թիվ 6

«Միգուցե իմ վարքը սխալ է, բայց դա իմ մեղավորությունը չէ»:

Անապատային մտածելակերպ. թիվ 6

Մեփական գործողությունների համար պատասխանատվություն ստանձնելու ցանկություն չունենալը և բոլոր խնդիրների վերաբերյալ մեղադրանքը մեկ ուրիշի վրա զցելը լուրջ պատճառ է հանդիսանում անապատային կյանքով ապրելու համար:

«Եվ Ադամն ասաց. «Այն կինը, որ ինչ փոխի իմ հետ լինելու, նա փվեց ինչ այն ծառից [պրդից], և ես կերա...»: Եվ կինն ասաց. «Օձն ինչ խաբեց [խորամանկեց, մոլորեցրեց], և ես կերա»:

Ծննդոց 3.12,13, AMP

Մենք կարող ենք այս խնդրի գոյությունը տեսնել դեռևս մարդկության պատմության առաջին էջերում: Երբ Եդեմի պարտեզում Ադամն ու Եվան ստիպված էին պատասխան տալ իրենց կատարած մեղքի համար, նրանք սկսեցին մեղադրել միմյանց, Աստծուն և սատանային, դրանով իսկ փորձելով խուսափել իրենց գործողությունների համար անձնական պատասխանատվություն կրելուց:

ԴՈՒՔ ԵՔ ՄԵՂԱՎՈՐՆ

«Եվ Աբրամի կինը՝ Սարան, չէր ծնում նրա համար, և նա մի եգիպտացի աղախին ուներ, անունը՝ Հագար:

Եվ Սարան ասաց Աբրամին. «Ահա՛, Եհովան ինձ արգելեց ծնելուց, ուրեմն աղախնիս մոտ մտիր. գուցե նրանից որդի ստանամ»: Եվ Աբրամը Սարայի ծայնին լսեց: Եվ Աբրամի կին Սարան իր եգիպտացի աղախին Հագարն առավ, Աբրամը Քանանի երկրում տասը տարի բնակվելուց հետո, և տվեց նրան իր մարդուն՝ Աբրամին, որ նրան կին լինի:

Եվ նա մտավ Հագարի մոտ, և նա հղիացավ: Եվ երբ տեսավ, թե հղի է, իր տիկնոջն իր աչքի առաջին անարգեց:

Եվ Սարան ասաց Աբրամին. «Իմ անիրավությունը քեզ վրա լինի. ես իմ աղախինը քո գիրկը տվի, և երբ նա տեսավ, թե հղի է, ես նրա աչքի առաջին անարգվեցի: Եհովան իմ ու քո մեջտեղը դատաստան անի»:

Եվ Աբրամն ասաց Սարային. «Ահա քո աղախինը քո ձեռքին է. արա նրան ինչ-որ հաճո է քո աչքին»:

Եվ Սարան նեղեց նրան, և նա փախավ նրա երեսից»:

Ծննդոց 16.1-6, NKJV

Այն իրադարձությունը, որը տարիներ առաջ տեղի էր ունեցել Ադամի և Եվայի միջև, հիմա մենք կարող ենք տեսնել Աբրամի և Սարայի կյանքում: Նրանք հոգնել էին Աստծուն սպասելուց, որ մեկ օր Նա կկատարի Իր խոստումն ու երեխա կպարգևի իրենց, հետևաբար վարվեցին մարմնի համաձայն՝ անելով այնպես, ինչպես իրենք ճիշտ համարեցին: Երբ այդ ամենը վատ ընթացք ստացավ և հանգեցրեց մի շարք խնդիրների, նրանք սկսեցին մեղադրել միմյանց:

Նախկինում այս նույն դրվագները բազմիցս եղել էին մեր ընտանիքում՝ իմ և ամուսնուս միջև: Թվում էր, թե մենք անընդհատ խուսափում ենք մեր կյանքում առաջացած լուրջ խնդիրներին լուծում տալուց և չենք ցանկանում իրականության աչքերի մեջ նայել:

Ես հստակ հիշում եմ, թե ինչպես էի աղոթում Աստծուն, որ Դեյվը փոխվի: Աստվածաշունչը կարդալիս ես ավելի ու ավելի էի տեսնում նրա թերությունները, ու՝ թե նա որքան կարիք ունի փոխվելու: Երբ ես աղոթում էի, Տերը խոսեց ինձ հետ. «Ձո՛յս, խնդիրը Դեյվը չէ... այլ՝ դու»:

Դա ուղղակի ոչնչացրեց ինձ: Ես լալիս ու լալիս էի: Ես հեկեկում էի երեք օր շարունակ, որովհետև Աստված ինձ ցույց էր տալիս, թե ինչ է նշանակում՝ ապրել ինձ հետ միևնույն տանը: Նա ցույց տվեց ինձ, թե ինչպես եմ ես փորձում վերահսկել ամեն ինչ, ինչպես եմ ես դժգոհում ու բողոքում, թե որքան դժվար է ինձ գոհացնելը, թե ինչ վատատեսն եմ ես և նմանատիպ շատ այլ բաներ: Դա իմ հպարտությանն ուղղված մի ցնցող հարված էր, բայց այն նաև Տիրոջ մեջ իմ հոգևոր վերականգնման սկիզբն էր:

Ինչպես շատերը, այնպես էլ ես, ամեն ինչում մեղադրում էի ուրիշին կամ իմ վերահսկողությունից դուրս հանգամանքներին: Մտածում էի, որ իմ վատ վարքի պատճառն իմ վիրավորանքն է, որն ինձանում մնացել էր դեռևս մանկուց, երբ ինձ խոշտանգել ու դաժանաբար շահագործել էին: Սակայն Աստված ասաց. «Յնարավոր է, որ վիրավորանքն ու անարգանքը պատճառ հանդիսանան քո այդ վարքի համար, բայց թող դրանք արդարացում չդառնան քեզ համար, որ շարունակես մնալ դրա մեջ և չփոխվես»:

Սատանան ջանք չի խնայում մեր մտքերում անրություններ կառուցելու համար, որոնք կխանգարեն մեզ տեսնելու ճշմարտությունը: Իսկ նա գիտի, որ ճշմարտությունը մեզ ազատ կարծակի:

Ինձ թվում է, որ չկա առավել ցավալի բան, երբ դեմ առ դեմ կանգնում ես քո և քո վարքի մասին ճշմարտության առջև: Դա այնքան ցավոտ է, որ շատ մարդիկ փախչում են դրանից: Բավականին հեշտ է ուրիշի մասին ճշմարտությունն իմանալը, բայց երբ այն լույս է սփռում սեփական կյանքի վրա՝ ավելի ծանր ենք տանում:

ԵԹԵ...

«Եվ ժողովուրդը սկսեց խոսել Աստծո և Մովսեսի դեմ. «Ինչո՞ւ մեզ դուրս հանեցիք Եգիպտոսից, որ այս անապատում կոտորվե՞նք: Քանի որ չկա ո՛չ հաց, ո՛չ ջուր: Մենք զզվել ենք այս թեթև [արհամարհելի, ոչ պինդ] մանանայից»:

Թվոց 21.5, AMP

Ինչպես հիշում եք, իսրայելացիները դժգոհում էին, որ իրենց բոլոր խնդիրները Մովսեսի և Աստծո պատճառով էին: Նրանք հաջողությամբ խուսափում էին անապատում այդքան երկար ժամանակ գտնվելու ցանկացած պատասխանատվությունից: Աստված ցույց տվեց ինձ, որ սա հիմնական անապատային մտածելակերպերից մեկն էր, որի պատճառով նրանք անապատում թափառեցին քառասուն տարի:

Սա էր նաև այն պատճառներից մեկը, որ ես իմ կյանքում տարի-

ներ շարունակ պտտվում ու պտտվում էի նույն սարի շուրջը: Իմ արդարացումների ցանկը, թե ինչու էր իմ վարքն այդքան վատ, բավականին երկար էր.

«Եթե մանուկ ժամանակ անարգված չլինեի, ես հիմա այսքան վատը չէի լինի»:

«Եթե իմ երեխաներն ինձ ավելի շատ օգնեն, ես ավելի լավ կվարվեմ»:

«Եթե Դեյվը շաբաթ օրերին չգնա գոլֆ խաղալու, ես նրա հետ այդքան կոպիտ չեմ լինի»:

«Եթե Դեյվն ինձ հետ ավելի շատ զրուցի, ես ինձ այդքան էլ միայնակ չեմ զգա»:

«Եթե Դեյվն ինձ համար ավելի շատ նվերներ գնի, ես ավելի երջանիկ կլինեմ»:

«Եթե ես այսքան շատ չաշխատեմ, ես չեմ հոգնի ու մռայլվի» (ահա թե ինչու ես դուրս եկա աշխատանքից, բայց հետո...):

«Եթե ես կարողանամ տնից ավելի հաճախ դուրս գալ, ես այդքան էլ չեմ ձանձրանա»:

«Եթե մենք ավելի շատ գումարներ ունենայինք...»:

«Եթե մենք մեր սեփական տունն ունենայինք...» (ահա թե ինչու մենք գնեցինք նորը, բայց հետո...):

«Եթե մենք այսքան շատ վճարումներ չունենայինք...»:

«Եթե մենք ավելի լավ հարևաններ կամ շատ ընկերներ ունենայինք...»:

Եթե... Եթե... Եթե... Եթե... Եթե... Եթե... Եթե... Եթե...

ԲԱՅՑ...

«Եվ Տերն ասաց Մովսեսին. «Ուղարկի՛ր տղամարդկանց [ձեզ համար] ուսումնասիրելու և հետազոտելու Քանանի երկիրը, որը ես տալիս եմ իսրայելացիներին: Նրանց յուրաքանչյուր ցեղից մեկական տղամարդ ուղարկիր, որ իրենց ցեղում լինեն գլուխ կամ առաջնորդ»:

Այսպիսով՝ Մովսեսը Տիրոջ պատվերով Փառանի

անապատից ուղարկեց հետախույզներին, բոլորը տղամարդիկ, ովքեր իսրայելացիների մեջ առաջնորդներ էին:

Եվ երկիրը հետախուզելուց քառասուն օր հետո նրանք վերադարձան:

Նրանք եղան Մովսեսի ու Ահարոնի և ողջ իսրայելացիների բանակի մոտ, որ Փառանի անապատում էին՝ Կադեշում, և ամենքն իրենց խոսքն ասացին ու ցույց տվեցին այն երկրի պտուղները:

Նրանք ասացին Մովսեսին. «Մենք գնացինք այն երկիրը, ուր մեզ ուղարկեցիր. այդ երկրում, իրոք, բխում է կաթ ու մեղր: Ահա և պտուղները:

Բայց այնտեղ բնակվող մարդիկ ուժեղ են, իսկ քաղաքները լավ ամրացված ու շատ մեծ. բացի այդ, այնտեղ մենք տեսանք Ենակի որդիներին» [բարձրահասակ ու զորեղ]»:

Թվոց 13.1-3, 25-28, AMP (շեղագիրը հեղինակինն է)

«Եթե»-ն և «բայց»-ը այն սիրված բառերն են, որոնցով սատանան մոլորեցնում է մեզ մեր մտքում: Խոստմունքի երկիր ուղարկված տասներկու հետախույզները վերադարձան՝ իրենց հետ բերելով խաղողի այնպիսի հսկայական մի ողկույզ, որը պետք է կրեին երկու տղամարդիկ՝ ձողի վրա անցկացրած, բայց և այնպես, այն հաշվետվությունը, որը նրանք ներկայացրին Մովսեսին ու Ժողովրդին՝ բացասական էր:

Ընդհամենը մեկ «բայց»-ը կործանեց նրանց: Նրանք պետք է իրենց աչքերը պահեին ոչ թե առկա խնդիրների, այլ՝ Աստծո վրա:

Խնդիրների պատճառով մենք պարտություն ենք կրում, որովհետև կարծում ենք, թե մեր խնդիրներն ավելի մեծ են, քան Աստված: Դրա պատճառը կարող է նաև լինել այն, որ մենք դժվարությամբ ենք ընդունում ճշմարտությունը: Մենք վստահ չենք լինում, որ Աստված կարող է փոխել մեզ, ու դրանով իսկ ավելի շատ թաքնվում ենք ինքներս մեզանից, քան մեզ տեսնում այնպիսին, ինչպիսին որ իրականում կանք:

Հիմա ինձ համար այդքան էլ դժվար չէ կանգնել ճշմարտությանը դեմ առ դեմ, ինձ իրապես ճանաչելու համար, երբ Աստված աշխատանք է տանում իմ ներսում, քանի որ գիտեմ, որ Նա կարող է փոխել ինձ: Ես արդեն տեսել եմ, թե ինչ է Նա արել իմ մեջ, և ես լիովին

վստահում եմ Նրան: Սակայն, իմ կյանքում Նրան ճանաչելու առաջին քայլերն անելու տարիներին դա շատ դժվար էր: Կյանքիս մեծ մասն անցկացրել էի այս կամ այն բանից թաքնվելով: Ես այնքան երկար էի ապրել խավարում, որ դժվարանում էի դուրս գալ դեպի լույսը:

ՆԵՐՔԻՆ ՄԱՐԴՈՒ ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Ողորմի՛ր ինձ, ո՛վ Աստված, համաձայն Քո անասան սիրո, համաձայն Քո քնքուշ գթառատության և բարեսրտության՝ մի կողմ տար իմ օրինազանցությունները:

Լվա ինձ մանրազնին [և բազմիցս] իմ անիրավությունից ու մեղքից և մաքրի՛ր ինձ, ամբողջովին սուրբ արա իմ մեղքից:

Քանի որ ես գիտակցում եմ իմ օրինազանցությունը և ես գիտեմ դրանք. իմ մեղքը միշտ իմ առջևն է:

Քո դեմ, միայն Քո առջև ես մեղանչեցի և արեցի այն, ինչը չարիք է Քո աչքերի առջև, այնպես որ՝ միայն Դու ես արդար Քո վճռի մեջ ու անսխալ՝ Քո դատաստանում:

Ահա, ես բերում եմ իմ անիրավությունը. իմ մայրը մեղավոր էր, ով ծնեց ինձ մեղքով [և ես էլ եմ մեղավոր]:

Ահա, Դու փափագում ես ճշմարտություն՝ մարդու ներսում. ուրեմն այնպես արա, որ ես իմանամ իմաստությունն իմ սրտի խորքում»:

Սաղմոս 51.1-6, AMP

Այս սաղմոսում Դավիթ թագավորն Աստծուց ողորմություն և ներում էր աղերսում, որովհետև Տերը աշխատանք էր տարել նրա ներսում և ցույց տվել նրան իր մեղքը, որը գործել էր Բերսաբեի հետ և սպանել վերջինիս ամուսնուն:

Ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ, բայց Դավիթն այս սաղմոսը գրել էր այդ մեղքը գործելուց մեկ տարի հետո. նա այդ ընթացքում երբեք չէր անդրադարձել իր կատարած մեղքին և հասկացել դրա լրջությունը: Նա չէր կանգնել ճշմարտությանը դեմ առ դեմ, և որքան խուսափել էր դա անելուց, այնքան չէր կարողացել ճշմարիտ ապաշխարություն վերապրել: Եվ որքան ժամանակ չէր ապաշխարել, այնքան ժամանակ Աստված չէր ներել նրան:

Սաղմոսի 6-րդ խոսքը բավականին զորեղ է: Այն ասում է, որ Աստ-

ված փափագում է ճշմարտություն տեսնել մարդու սրտում, այսինքն՝ եթե մենք ցանկանում ենք Աստծո օրհնությունները, մենք պետք է անկեղծ լինենք Նրա հետ՝ մեր և մեր կատարյալ մեղքերի առումով:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏՈ ՆԵՐՈՒՄ

«Եթե ասում ենք, որ անմեղ ենք [հրաժարվելով ճանաչել, որ մեղավոր ենք], մենք խաբում ենք ինքներս մեզ, և ճշմարտությունը [որը պարունակվում է Ավետարաններում] մեր մեջ չէ [չի բնակվում մեր սրտերում]:

Եթե մենք [ազատորեն] ընդունում ենք, որ մեղք ենք գործել և խոստովանում ենք մեր մեղքերը, Աստված հավատարիմ է և ճշմարիտ [ճիշտ է Իր էությանը և խոստումներով] ներելու մեր մեղքերը [ազատելու մեզ մեր անօրենություններից] և [չարունակաբար] մաքրելու մեզ ամեն անիրավություններից [ամեն բան, որ չի համապատասխանում Նրա կամքին, լինի դա նպատակ, միտք կամ գործողություններ]:

Եթե մենք ասում ենք [հաստատում], որ մենք ոչ մի մեղք չունենք, ուրեմն հակասում ենք Նրա Խոսքին և Նրան դարձնում կեղծ ու ստախոս, և Նրա Խոսքը մեզանում չէ [Ավետարանի աստվածային ուղերձը մեր սրտերում չէ]:»:

Ա Զովհաննեսի 1.8-10, AMP

Աստված պատրաստ է անմիջապես ներել մեզ, եթե մենք անկեղծորեն ապաշխարում ենք: Բայց մենք չենք կարող անկեղծորեն ապաշխարել, եթե չենք նայում ճշմարտությանն ու գիտակցում մեր արարքները:

Եթե ընդունում ենք, որ սխալ ենք թույլ տվել, բայց անմիջապես փորձում ենք արդարացում գտնել, ապա դա ճշմարտությունն ընդունելու Աստծո տարբերակին չի համապատասխանում: Մարդու էությունը հակված է արդարացնելու իրեն և իր արարքները, բայց Աստվածաշնչում ասվում է, որ մեր միակ արդարացումը Հիսուս Քրիստոսի մեջ է (տե՛ս Զոռմ. 3.20-24): Մեղք գործելուց հետո մենք Աստծո առջև արդարացված կարող ենք կանգնել ոչ թե մեր արդարացումների, այլ միայն Հիսուսի արյան շնորհիվ:

Հիշում եմ, երբ մեկ անգամ հարևաններից մեկն ինձ զանգահարեց և խնդրեց, որ իրեն հասցնեմ բանկ, նախքան այն փակվելը, քանի որ նրա մեքենան փչացել էր: Ես զբաղված էի «ին գործերով» և ցանկություն չունեի թողնել դրանք, այնպես որ, բավականին կոպիտ ձևով մերժեցի նրան: Լսափողը ցած դնելուն պես հասկացա, թե ինչ վատ վարվեցի և, որ պետք է զանգահարեմ նրան, ներողություն խնդրեմ և տանեմ բանկ:

Միտքս լցվեց տարբեր արդարացումներով, որոնցով պատրաստվում էի հիմնավորել վատ պատասխանս. «Ես ինձ վատ էի զգում...», «Ես զբաղված էի այդ պահին...», «Այսօր ինձ մոտ այդքան էլ հաջող օր չէր...»:

Սակայն սրտիս խորքում զգում էի, թե ինչպես է Սուրբ Հոգին ասում ինձ. «Մի՛ փնտրիր որևէ արդարացում, պարզապես զանգահարիր նրան և ասա, որ սխալ ես վարվել և, որ ոչ մի արդարացում չկա քո արարքի համար: Ներողություն խնդրիր նրանից և հարցրու, արդյո՞ք թույլ կտա իրեն տանել բանկ»:

Կարող եմ միայն ասել, որ դա հեշտ չէր: Իմ մարմինն ուզում էր գոռալ: Ես բառացիորեն զգում էի, թե ինչպես է իմ մտքում մի փոքրիկ բան իրեն պատեպատ տալիս՝ ջանալով մի տեղ գտնել ու թաքնվել այնտեղ: Սակայն հնարավոր չէ թաքնվել ճշմարտությունից, քանի որ ճշմարտությունը լույս է:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՅՍ Է

«Սկզբում [ամեն ինչից առաջ] էր խոսքը [Քրիստոսը], և խոսքը Աստծո հետ էր, և Աստված Ինքը՝ խոսքն էր:

Նա հենց սկզբից Աստծո հետ էր:

Բոլոր բաները ստեղծվեցին ու գոյության մեջ մտան Նրա միջոցով. և առանց Նրա չստեղծվեց և ոչ մի բան, ինչ-որ ստեղծվեց և սկսեց գոյություն ունենալ:

Նրա մեջ էր կյանքը, և կյանքը լույս եղավ մարդկանց համար:

Եվ լույսը շողում է մթության մեջ, քանի որ մթությունը երբեք չի տիրել դրան [այն չի մարվել, դուրս չի մղվել կամ կլանվել, և այն անընկալունակ է խավարի համար]»:

Հովհաննես 1.1-5, AMP

Ճշմարտությունն ամենագորեղ գեներից մեկն է՝ խավարի թագավորության դեմ: Ճշմարտությունը լույս է, և Աստվածաշնչում ասվում է, որ խավարը երբեք չի տիրել լույսին ու երբեք էլ չի կարողանա տիրել:

Սատանան ցանկանում է ամեն բան թաքցնել խավարի մեջ, բայց Սուրբ Հոգին ցանկանում է դրանք լուսավորել և աշխատել դրանց հետ այնպես, որ մենք կարողանանք իրապես ազատ լինել:

Հիսուսն ասաց, որ ճշմարտությունը մեզ ազատ կարծակի (տե՛ս Յովհ. 8.32), իսկ ճշմարտությունը հայտնում է ճշմարտության Հոգին:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ

«Ես դեռևս շատ բան պետք է ասեմ ձեզ, բայց դուք ի վիճակի չեք տանելու դրանք, կամ՝ վերցնելու ձեզ վրա, կամ՝ հասկանալու դրանք հիմա:

Բայց երբ ես, ճշմարտության Հոգին [ճշմարտություն բերող Հոգին] գա, ես կառաջնորդի ձեզ ճշմարտության [ամբողջական, լիովին ճշմարտության] մեջ»:

Հովհաննես 16.12,13, AMP

Հիսուսը կարող էր իր աշակերտներին հայտնել ողջ ճշմարտությունը, բայց ես գիտեմ, որ նրանք դեռևս պատրաստ չեն դրան: Ես ասում եմ, որ իրենք պետք է սպասեն, մինչև Սուրբ Հոգին իջնի երկնքից և ապրի նրանց հետ և բնակվի նրանց ներսում:

Հիսուսը երկինք համբարձվելուց հետո ուղարկեց Սուրբ Հոգուն, որպեսզի ես աշխատի մեզ հետ, պատրաստի մեզ Աստծո (գերազանց) փառքի համար, և, որպեսզի ես դրսևորվի մեր միջոցով:

Բայց ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգին աշխատել մեր կյանքում, եթե մենք հրաժարվում ենք կանգնել ճշմարտության առջև: Նրա անունը «ճշմարտության Հոգի» է և Նրա ծառայության հիմնական նպատակն այն է, որ օգնի մեզ՝ ընդունել ճշմարտությունը և առաջնորդի մեզ դեպի ճշմարտությունը, որովհետև միայն ճշմարտությունը կարող է մեզ ազատ արձակել:

Հնարավոր է, որ անցյալում ձեզ ցավ են պատճառել կամ որևէ

դեպք է տեղի ունեցել, և դա այսօր դարձել է ձեր սխալ վերաբերմունքի պատճառը, բայց թույլ մի՛ տվեք, որ այն դառնա որպես արդարացուն ձեզ համար ու խանգարի ձեր փոխվելու ընթացքին:

Իմ վարքի հետ կապված խնդիրների մեծ մասն առաջացել են նրանից, որ ես ենթարկվել եմ սեռական անարգանքի ու ծաղրանքի և տառապել եմ մարդկանց դաժան վերաբերմունքից: Բայց իմ վարքը չէր փոխվում միայն այն պատճառով, որ ես օգտագործում էի իմ անցյալը որպես արդարացուն: Դա նման է նրան, կարծես դու պաշտպանում ես քո թշնամուն՝ ասելով. «Ես ատում եմ այս բանը, հենց այդ պատճառով էլ ես այն բաց չեմ թողնում»:

Դուք, միանշանակ, կարող եք ազատվել ցանկացած կապվածությունից: Պետք չէ ձեզ քառասուն տարի թափառել անապատում: Կամ, եթե դուք արդեն վատնել եք ձեր քառասուն տարին անապատում, քանի որ չեք իմացել, որ դրա պատճառը անապատային մտածելակերպն է, ապա այսօր կարող է վճռորոշ օր լինել ձեզ համար:

Խնդրե՛ք Աստծուն, որ ցույց տա ձեզ ճշմարտությունը՝ ձեր կյանքի վերաբերյալ: Եվ երբ Նա դա անի, պահե՛ք այն: Իհարկե դա հեշտ չի լինի, սակայն հիշե՛ք, որ Նա խոստացել է. «Ես երբեք ձեզ չեմ լքի, և երբեք ձեզ չեմ թողնի» (տե՛ս Եբր. 13.5):

Դուք անապատից դուրս գալու ճանապարհին եք, վայելե՛ք Ավետյաց երկիրը:

Գլուխ
22

*«Ես այնքան դժբախտ եմ.
ես խղճում եմ ինչ, քանի որ
ապրում եմ թշվառ կյանքով»:*

Անապատային մտածելակերպ. թիվ 7

**«Ես այնքան դժբախտ եմ.
ես խղճում եմ ինձ, քանի որ
ապրում եմ թշվառ կյանքով»:**

Գլուխ
22

Անապատային մտածելակերպ. թիվ 7

Ի սրայելացիները շատ էին խղճում իրենց: Ամեն մի անհարմարավետություն դառնում էր արդարանալու և իրենց դառը կյանքի համար սգալու մի նոր պատճառ:

Չիշում եմ, երբ մեկ անգամ Տերը խոսեց ինձ հետ իմ հերթական «ինքնախղճահարության արարողության» ժամանակ: Նա ասաց. «Ձո՛յս, դու կարող ես լինել կա՛մ խղճուկ, կա՛մ ուժեղ, բայց չես կարող լինել երկուսը միաժամանակ»:

Սա մի թեմա է, որին ես չէի ցանկանա թռուցիկ կերպով անդրադառնալ: Կենսականորեն կարևոր է գիտակցել, որ *մենք չենք կարող խաղ անել ինքնախղճահարության մեղքի հետ, և միևնույն ժամանակ՝ քայլել Աստծո գործությամբ:*

«Եվ ամբողջ բանակը բարձրաձայն լաց եղավ, և [նրանք] աղաղակեցին այդ գիշեր: Բոլոր իսրայելացիները տրտնջացին և սգացին իրենց վիճակի վրա»:
Թվոց 14.1,2, AMP

ԽՐԱԽՈՒՄԵՔ ԵՎ ԱՄՐԱՊՆԴԵՔ ՄԻՄՅԱՆՑ

«Ուրեմն խրախուսե՛ք [խրատեք, հորդորեք] միմյանց և ամրապնդե՛ք [զորացրեք և շինեք] մեկդ մյուսին, ինչպես էլ որ անում եք»:
Ա Թեսաղոնիկեցիների 5.11, AMP

Ինձ դժվար էր հրաժարվել ինքնախղճահարությունից. ես երկար տարիներ օգտվել էի դրանից՝ իմ կյանքի դժվար պահերին ինձ մխիթարելու համար:

Երբ որևէ մեկը վիրավորում է մեզ, կամ հիասթափված ենք լինում,

սատանան սկսում է մեր ականջի տակ ստեր շնջալ՝ թե ինչ դաժան ու անարդար վարվեցին մեզ հետ:

Ձեզ բավական է միայն ուշադիր լսել, թե ձեր գլխում ինչ մտքեր են պտտվում, և անմիջապես կհասկանաք, թե ինչպես է թշնամին օգտագործում ձեր ինքնախղճահարությունը՝ ձեզ գերության մեջ պահելու համար:

Աստվածաշունչը, սակայն, թույլ չի տալիս մեզ ազատություն տալ ինքնախղճահարության զգացմունքին: Ընդհակառակը, մենք պետք է խրախուսենք և ամրապնդենք միմյանց Տիրոջ մեջ:

Գոյություն ունի մի աստվածային պարզև՝ կարեկցանք, որի օգնությամբ մենք մեր կյանքը տալիս ենք ուրիշների տառապանքները թեթևացնելու համար: Բայց ինքնախղճահարությունը կարեկցանքի խեղաթյուրված տեսակն է:

Ինքներս մեզ խղճալով՝ մենք վերցնում ենք այն, ինչ Աստված նախասահմանել էր մարդկանց տալու համար, և դա ծառայեցնում ենք մեր օգտին:

Նույնը վերաբերում է սիրուն: Հռոմեացիների 5.5-րդ խոսքում ասվում է, որ Աստծո սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով: Նա դա արել է, որպեսզի մենք կարողանանք հասկանալ, թե որքան շատ է Աստված սիրում մեզ և, որ մենք նույնպես ի գորու ենք սիրել ուրիշներին:

Երբ մենք Աստծո կողմից նախասահմանված սերն օգտագործում ենք ի օգուտ մեզ, այն դառնում է եսասիրություն և եսակենտրոնություն, ինչն էլ, միանշանակ, կործանում է մեզ: Անշուշտ, մենք պետք է մեզ սիրենք, գնահատելով Աստծո ստեղծագործությունն ու ինքնահարգանքը, բայց դրանում պետք է հավասարակշռություն լինի: Չափազանց եսասիրությունը մեծ խնդիր է: Ինքնախղճահարությունը կռապաշտություն է, քանի որ մենք ամբողջությամբ կենտրոնանում ենք մեր զգացմունքների և մեզ վրա: Դա միայն սրում է «ես»-ի և սեփական կարիքների ու հոգսերի հանդեպ ուշադրությունը, ինչն էլ ստիպում է մեզ՝ ապրել սահմանափակ կյանքով:

ՄՏԱԾԵՔ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Միայն ձեր անձերի բաներին մտիկ չտաք, այլ՝ ամեն մեկն իր ընկերի բաներին էլ»:

Փիլիպեցիների 2.4

Վերջերս իմ հավաքույթներից մեկը անսպասելիորեն չեղյալ համարվեց: Իրադարձությունների նման շրջադաձն, իհարկե, մի փոքր հիասթափեցնող էր: Նախկինում նման դեպքն իմ ներսում ինքնախղճահարության զգացում, քննադատություն, բացասական մտքեր կառաջացներ: Հիմա ես սովորել եմ նման դեպքերում ինձ ավելի հանգիստ պահել. ավելի լավ է ոչինչ չասել, քան սխալ բաներ ասել:

Քանի որ ես սկսեցի պահել իմ հանգստությունը, Աստված էլ սկսեց իրավիճակները ցույց տալ ուրիշների տեսանկյունից: Այդ մարդիկ չէին կարողացել գտնել հարմար տարածք՝ հավաքույթն անցկացնելու համար: Աստված ցույց տվեց ինձ, թե որքան հուսահատված էին նրանք: Չէ՞ որ նրանք այդքան պատրաստվել և սպասել էին մեր հավաքույթին...

Ջարմանալիորեն հեշտ է ինքնախղճահարումից դուրս գալը, եթե մենք դեպքերին նայում ենք ոչ թե մեր տեսանկյունից, այլ՝ ուրիշների: Ինքնախղճահարությունն ուղեկցվում է միայն սեփականի մասին մտածելով, ուրիշ ոչ մեկի:

Երբեմն մենք պարզապես տանջում ենք մեզ՝ փորձելով համակրանք առաջացնել մարդկանց մեջ: Այո՛, ինքնախղճահարությունը սատանայի կողմից լարած հիմնական ծուղակն է և նրա սիրած հնարքներից մեկը, որին տրվելով մենք շարունակում ենք մնալ անպատում: Եթե մենք բավականաչափ ուշադիր չլինենք, ապա կարող ենք դրանից կապվածության մեջ ընկնել:

Սովորությունը կամ կախվածությունը մեխանիկորեն գործող ռեակցիա է որևէ բանի հանդեպ, այսինքն՝ ձեռքբերովի վարքագիծ, որը դառնում է սովորություն:

Որքա՞ն ժամանակ եք վատնում ինքնախղճահարության վրա: Ինչպե՞ս եք արձագանքում հիասթափություններին:

Քրիստոնյա անձնավորությունը բացառիկ արտոնություն ունի, որովհետև, երբ նա հիասթափված է, կարող է այդ հիասթափությունը հանձնել Աստծուն: Աստծո հետ միշտ էլ կա կրկին սկսելու հնարավորություն: Իսկ ինքնախղճահարությունը պահում է մեզ անցյալի շղթաներով:

ԹՈ՛Ղ ՀԻՆԸ ԵՎ ԹՈ՛ՒՅԼ ՏՈՒՐ ԱՍՏԾՈՒՆ՝ ԱՆԵԼՈՒ ՆՈՐԸ

«Առաջվա բաները մի՛ հիշեք, հինը մտքներդ մի՛ բերեք, քանի որ ես նորն եմ անելու, որ հիմա հայտնվելու է, և դուք պիտի ճանաչեք. ճամփա պիտի բացեմ անապատով և անջրդի հողում գետեր պիտի բխեցնեմ»:

Եսայի 43.18,19, AMP

Երկար տարիներ ես ապրել եմ ինքնախղճահարության մեջ: Դա դարձել էր իմ կապվածությունը: Ցանկացած հիասթափությունից իմ առաջին ռեակցիան լինում էր ինքնախղճահարությունը: Սատանան անմիջապես ուղեղս լցնում էր սխալ մտքերով, ես այլևս չէի կարողանում վերահսկել մտքերս, պարզապես մտածում էի այն, ինչ ծագում էր ուղեղումս: Եվ որքան շատ էի այդպես մտածում, այնքան ավելի շատ էի խղճում ինձ:

Ես հաճախ եմ պատմություններ պատմում իմ ամուսնության վաղ տարիներից: Դրանից մեկը սա է. ամեն կիրակի՝ ֆուտբոլային խաղերի ժամանակ, Դեյվը ցանկանում է հեռուստացույցով դիտել բոլոր խաղերը: Եթե դա չի լինում ֆուտբոլային այդ շրջանը, ապա դա լինում է մեկ այլ «բոլ»-ի շրջանը: Դեյվը հաճույք է ստանում դրանից, այնինչ՝ ես դրանով բացարձակապես չեմ հետաքրքրվում: Նա սիրում է բոլոր խաղերը, որոնք կապված են գնդակի հետ, և միշտ էլ սիրել է այդ սպորտաձևերը՝ նախքան իմ գոյության մասին իմանալը:

Մեկ անգամ ես կանգնեցի հենց նրա առջև ու պարզ ասացի. «Դեյվ, ես իսկապես ինձ վատ եմ զգում. թվում է՝ հիմա կմեռնեմ»:

Առանց աչքերն էկրանից կտրելու՝ նա ասաց. «Օ՛հ, շա՛տ լավ, սիրելիս»:

Ես այնքան բարկացած և ինքնախղճահարված կիրակիներ եմ

անցկացրել: Ես միշտ սկսում էի տունը մաքրել, երբ կատաղած էի լինում Դեյվի վրա: Հիմա ես գիտեմ, որ այդպես վարվելով՝ փորձում էի նրա մեջ մեղավորության զգացում առաջացնել, որ նա վայելում էր կյանքն այն ժամանակ, երբ ես այդքան դժբախտ էի ինձ զգում: Ես ժամեր շարունակ փոթորկի պես գնում ու գալիս էի տնով մեկ, շրխկացնում էի դռներն ու փեղկերը, անցնում այն սենյակով, որտեղ նա դիտում էր իր սիրած խաղերը, փռչեկուլը ձեռքիս աղմուկ էի ստեղծում և այդպես՝ իմ տուն մաքրելու ընթացքը վերածում մի ներկայացման:

Իհարկե, ես փորձում էի գրավել նրա ուշադրությունը, բայց նա դժվար թե նկատում էր ինձ: Ես ուժասպառ մտնում էի լոգարան, նստում հատակին ու սկսում էի լաց լինել: Որքան շատ էի լալիս, այնքան ավելի էի ինձ խղճում: Հետո Աստված ինձ հայտնություն տվեց այն մասին, թե ինչու եմ կանայք հիմնականում լոգարան մտնում՝ լաց լինելու: Նա ասաց, որ լոգարանը հարմար է նրանով, որ սովորաբար այնտեղ մեծ հայելի է լինում: Կանայք մի կուշտ լաց լինելուց հետո վեր են կենում հատակից, երկար նայում են իրենց այդ հայելու մեջ և համոզվում, թե որքան խեղճ են իրենք:

Իրականում ես այնքան վատ տեսք եմ ունենում լացելուց հետո, որ երբ ինձ նայում են հայելու մեջ՝ լացս ավելի է սաստկանում: Այդ ամենից հետո, ես իմ վերջին ողբերգությունը խաղում եմ հյուրասենյակում, որտեղ Դեյվն է նստած, ներս եմ մտնում դանդաղ քայլերով ու թշվառ հայացքով: Նա կարող է պահի տակ հայացք նետել ինձ վրա, բայց միայն ասելու համար. «Եթե խոհանոց ես գնում, խնդրում եմ՝ ինձ մի բաժակ սառը թեյ բերես»:

Պատմածիս իմաստն այն էր, որ այս մեթոդները չեն գործում: Զգացմունքայնորեն փորձելով ինձ արդարացնել, հաճախ ես ֆիզիկապես հիվանդանում էի, քանի որ ողջ ուժերս սպառում էի սխալ բաների վրա:

Միայն Աստված կարող է ազատել մարդկանց Իր ձեռքի զորությամբ և փոխել նրանց: Միայն Ամենակարողը կարողացավ հասկացնել Դեյվին՝ այդքան հաճախ չդիտել մարզական ծրագրերը: Որքան

սովորեցի վստահել Աստծուն և դադարեցի խղճալ ինքս ինձ, երբ ինչ-որ բան իմ ուզածով չէր լինում, այնքան Դեյվն ավելի հավասարակշռված դարձավ մարզական հաղորդումները դիտելու հարցում:

Նա դեռ սիրում է դիտել այդ հաղորդումները, բայց այժմ դրանք ինձ չեն նյարդայնացնում: Այդ ժամերին ես զբաղվում եմ իմ սիրած բաներով: Եվ եթե ես մեկ ուրիշ բանի կարիք եմ ունենում, խնդրում եմ Դեյվին ոչ թե զայրույթով, այլ՝ քնքշորեն, և շատ դեպքերում նա պատրաստակամորեն փոխում է իր ծրագրերը: Իհարկե լինում են նաև դեպքեր, երբ ոչ միշտ է ինչ-որ բան իմ ուզածով լինում, և դա անխուսափելի է: Եվ երբ զգում եմ, որ զգացմունքներս փորձում են գլուխ բարձրացնել, անմիջապես սկսում եմ աղոթել. «Ո՛վ Աստված, օգնիր ինձ՝ անցնել այս փորձությունը: Ես չեմ ցանկանում ևս մեկ անգամ շրջանցել նույն սարը»:

Գլուխ
23

**«Ես արժանի չեմ
Աստուծո օրհնություններին»:**

Անաստասյան միաժեյակերպ. թիվ 8

«Ես արժանի չեմ Աստծո օրհնություններին»:

Անապատային մտածելակերպ. թիվ 8

Աստված ինչ-որ բան էր անում իսրայելացիների հետ՝ նախքան Չեսուն նրանց կառաջնորդեր Յորդանանով անցնելու դեպի Խոստմունքի երկիրը և, մինչև նրանք պատրաստ կլինեին տիրելու և զավթելու իրենց առաջին քաղաքը՝ Երիթովը:

Տերը հրաման տվեց Իսրայելի բոլոր տղամարդկանց՝ թլպատվել, քանի որ դա չէր կատարվել մի ամբողջ քառասուն տարի, քանի դեռ նրանք թափառում էին անապատում: Սա նրանցից հնազանդություն էր պահանջում. այն նրանց համար պետք է լիներ մի նշան, որ նրանք պետք է ետ դառնային մարմնի գործերից, աշխարհիկ ճանապարհներից և որոշում կայացնեին Աստծո համար ապրել նոր ուղու վրա:

Թլպատումից հետո, Տերն ասաց Չեսունին, որ այժմ Նա «վեր է առնում» Իր ժողովրդից Եգիպտոսի նախատինքը:

Չեսունի գրքի վեցերորդ գլխում՝ վերոնշյալից մի քանի խոսք հետո, սկսվում է այն պատմությունը, թե ինչպես է Աստված առաջնորդում Իսրայելի որդիներին՝ հաղթելու և նվաճելու Երիթով քաղաքը: Ինչո՞ւ էր, նախ և առաջ, անհրաժեշտ հեռացնել նախատինքը նրանց վրայից: Ի՞նչ է նախատինքը:

«Եվ Տերը Հեսունին ասաց. «Այսօր վեր առա Եգիպտոսի նախատինքը ձեր վրայից», և այն փեղի անունը մինչև այսօր Գաղզադա կոչեցին»»:

Չեսու 5.9

ՆԱԽԱՏԻՆՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

«Նախատինք» բառը նշանակում է «մեղադրանք... խայտառակություն. ամոթ»¹: Երբ Աստված ասում էր, որ իսրայելացիներից վեր կառնի Եգիպտոսի նախատինքը, Նա մի բան էր շեշտադրում: Եգիպտոսը խորհրդանշում է աշխարհը: Տարիներ շարունակ աշխարհում լինելուց և աշխարհիկ դառնալուց հետո, բոլորս էլ կարիք ունենք այս աշխարհի նախատինքը մեզանից վեր առնելու:

Իմ կյանքում կատարած և ինձ հետ պատահած բաների պատճառով իմ մեջ խորապես արմատացած էր ամոթի զգացումը: Ինձ հետ կատարված վատ բաների համար ես մեղադրում էի ինձ (թեև դրանց մեծամասնությունը տեղի է ունեցել իմ մանկության տարիներին, և ես չեմ կարողացել դա կանգնեցնել):

Մենք ասում ենք, որ շնորհքն Աստծո զորությունն է, որը մեզ տվել է Աստված՝ որպես պարգև: Այն օգնում է մեզ հեշտությամբ անելու այն, ինչը չենք կարող անել մեր ուժերով: Աստված ցանկանում է մեզ տալ շնորհք, իսկ սատանան ցանկանում է շնորհքից զրկել:

Շնորհքից զուրկ լինելու այդ զգացողությունը ստիպում էր ինձ, որպեսզի ինձ վատ մարդ զգամ, ով արժանի չէ Աստծո սիրուն կամ օգնությանը: Ամոթը բառացիորեն թունավորել էր իմ ներքին մարդուն: Ես ոչ միայն ամաչում էի այն ամենից, ինչ կատարվել էր ինձ հետ, այլ ամաչում էի նաև ինձանից: Հոգուս խորքում ես ինձ չէի սիրում:

Աստծո կողմից նախատինքի վեր առնումը նշանակում է, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է Աստծուց ներում ստանա անցյալի մեղքերի համար:

Դուք պետք է գիտակցեք, որ երբեք չեք կարողանա արժանանալ Աստծո օրհնություններին: Դուք միայն կարող եք խոնարհաբար ընդունել դրանք և երախտապարտ լինել՝ հիանալով Նրա մեծ բարությանը ու անսահման սիրով:

Դուք կշարունակեք մնալ ու թափառել անապատում, եթե չհասկանաք Հիսուսի արյան միջոցով արդարություն ձեռք բերելու սկզբունքը և չազատվեք ինքնատեղության, ինքնամերժման, Աստծո ներումը

չընդունելու (ինքներդ ձեզ չներելու) խնդիրներից: Ձեր միտքը պետք է նորոգվի Հիսուսի շնորհիվ Աստծո հետ քայլելու միջոցով:

Երկար տարիներ գտնվելով ծառայության մեջ եկել եմ այն համոզմունքին, որ մեր խնդիրների 85%-ն առաջանում է մեր իսկ նկատմամբ ունեցած վատ վերաբերմունքի պատճառով: Յուրաքանչյուր ոք, ում գիտեք, որ քայլում է հաղթանակի մեջ, նա, անշուշտ, քայլում է նաև արդարության մեջ:

Ես գիտեմ, որ արժանի չեմ Աստծո օրհնություններին, բայց ես ընդունում եմ դրանք, որովհետև ես Քրիստոսի ժառանգակիցն եմ (տե՛ս Բռն. 8.17): Հիսուսը վաստակեց այդ օրհնությունները, իսկ ես դրանք ձեռք եմ բերում՝ Նրան հավատալու միջոցով:

ԺԱՌԱՆԳ, ԹԵ՛ ՄՇԱԿ

«Ուրեմն այլևս ստրուկ չես [կապյալ ծառա], այլ՝ որդի. և եթե որդի, ուրեմն [նշանակում է, որ դու] ժառանգ ես Աստծո օգնությամբ, Քրիստոսի միջոցով»:

Գաղատացիների 4.7, AMP

Ո՞վ եք դուք, որդի՞, թե՞ ստրուկ, ժառա՞նգ, թե՞ կապյալ ծառա: Ժառանգը նա է, ով ինչ-որ բան է ստանում ոչ ըստ իր արժանիքի, այլ՝ երբ գույքը մեկից փոխանցվում է մեկ ուրիշին՝ ըստ առաջինի ցանկության: Ծառան կամ մշակը, ըստ Աստվածաշնչի, նա է, ով տանջվում է՝ փորձելով հետևել Օրենքին: Վերջինս իր իմաստի մեջ ներառում է ծանր աշխատանք և անհանգստություն:

Տարիներ շարունակ ես թափառել եմ անապատում՝ որպես մշակ, փորձելով իմ քրտնաջան աշխատանքով արժանանալ այն լավին, որն Աստված ցանկանում է ինձ տալ Իր շնորհքի միջոցով և այն էլ առանց ինչ-որ բանի: Պատճառն իմ սխալ մտածելակերպն էր:

Նախ՝ ես մտածում էի, որ ամեն ինչը հարկավոր է վաստակել կամ ամեն ինչին հարկավոր է արժանանալ. «ոչ ոք ոչինչ հենց այնպես չի անի ձեզ համար»: Ես երկար տարիներ առաջնորդվում էի այս սկզբունքով: Ես մեծանում էի՝ շատ անգամներ լսելով այդ արտահայ-

ստությունը: Ինձ ասում էին, որ յուրաքանչյուր անձնավորություն, ով ցանկանում է ինչ-որ մի լավ բան անել ինձ համար, պարզապես ստում է և, որ դա վերջում կավարտվի իմ շահագործմամբ:

Աշխարհիկ փորձառությունը մեզ սովորեցնում է, որ ինչ-որ բան ստանալու համար մենք պետք է նախ՝ արժանանանք դրան: Մեզ ասում էին, որ եթե ցանկանում ենք ընկերներ ունենալ, ապա նրանց միշտ պետք է զվարճացնել, հակառակ դեպքում՝ նրանք մի օր կլքեն մեզ: Եթե ցանկանում ենք պաշտոնի բարձրացում աշխատավայրում, ապա պետք է ճանաչել ճիշտ մարդկանց, «լավ նայել» նրանց, և միզուցե, մեկ օր մեզ էլ հնարավորություն ընձեռվի առաջ անցնել: Ժամանակի ընթացքում մենք հոգնում ենք աշխարհից և դրա բոլոր մեթոդներից: Նախատիվը ծանր բեռի նման ընկնում է մեզ վրա, և մենք սկսում ենք զգալ դրանից ազատվելու կարիքը:

ԻՆՉ ԿԱՐԾԻՔ ՈՒՆԵՔ ՁԵՐ ՄԱՍԻՆ

«Եվ այնտեղ տեսանք հսկաներին՝ Ենակի որդիներին, որ հսկաներից են. այնպես որ, մենք մեր աչքին մորեխի պես էինք, և այնպես էինք նաև նրանց աչքին»:

Թվոց 13.34

Իսրայելացիներն այդ նախատիվը կրում էին իրենց վրա: Այս խոսքը հստակ ցույց է տալիս, թե որքան բացասական էր նրանց կարծիքն իրենց մասին: Նախքան իսրայելի ժողովրդի Յորդանան գետից անցնելը, Խոստմունքի երկիր հետախուզության զննցած տասներկու լրտեսներից տասը վերադառնալով՝ ասացին, որ այդ երկրում բնակվում են հսկաներ, ովքեր իրենց վրա նայում են որպես մորեխների, և հսկաների համեմատ իրենք էլ են իրենց աչքերում այդպես երևում:

Սա պարզորոշ ցույց է տալիս մեզ, թե ինչպես էին այս մարդիկ մտածում իրենց մասին:

Խնդրում են, իմացե՛ք, որ սատանան ձեր միտքը կլցնի (եթե թույլ տաք նրան) ձեր մասին ցանկացած տեսակի բացասական մտքերով:

Նախ՝ նա սկսում է ամրություններ կառուցել ձեր մտքում, որոնցից շատերը բացասական մտքեր են ձեր մասին և՛ թե ինչպես են ուրիշները վերաբերվում ձեզ: Նա միշտ այնպիսի իրավիճակներ է ստեղծում, որոնցում դուք ձեզ սկսում եք մերժված զգալ, որպեսզի ամեն անգամ, երբ փորձեք առաջ գնալ և դեպքերը փոխել դեպի լավը, նա կարողանա կրկին հիշեցնել ձեզ ձեր ցավի մասին:

Անհաջողության և մերժվածության վախը շատ մարդկանց պահում է անապատում: Տարիներ շարունակ Եգիպտոսում ստրուկ լինելը և վատ վերաբերմունքի արժանանալը իսրայելացիների վրա նախատինք էր բերել: Յետաքրքիր է նշել, որ Մովսեսի գլխավորությամբ Եգիպտոսից դուրս եկած սերնդից գրեթե ոչ ոք չմտավ Խոստմունքի երկիր: Երկիրը ժառանգեցին նրանց զավակները: Սակայն, ինչպես Աստված էր ասել, երեխաներից նույնպես անհրաժեշտ էր հեռացնել այդ նախատինքն ու ամոթը:

Նրանցից շատերը ծնվել էին անապատում՝ նրանց ծնողների Եգիպտոսից դուրս գալուց հետո: Ինչպե՞ս կարող էին նրանք իրենց վրա ունենալ Եգիպտոսի նախատինքը, եթե նույնիսկ Եգիպտոսում չէին ապրել:

Ծնողներից շատ բան է անցնում երեխաներին: Վերաբերմունքը, մտքերն ու վարքագծերը կարող են փոխանցվել ժառանգաբար: Դուք կարող եք ժառանգել ձեր ծնողների սխալ մտածելակերպը: Որևէ բանի մասին ձեր ունեցած կարծիքն ինչ-որ կերպ փոխանցվել է ձեզ, իսկ դուք երբևէ չեք էլ մտածել, թե ինչու եք այդ կարծիքին:

Իր մասին ցածր կարծիք ունեցող ծնողի այն մտածելակերպը, որ ինքն անարժան է Աստծո սիրուն և օրհնություններին, հաճախ կարող են փոխանցվել նրա երեխաներին:

Ու թեև ես այս մասին արդեն խոսել եմ, ցանկանում եմ մեկ անգամ ևս կրկնել, քանի որ այն շատ կարևոր է: Դուք պետք է իմանաք, թե ինչ է կատարվում ձեր ուղեղում՝ ինչպիսի՞ն է ձեր կարծիքը ձեր մասին: Աստված կամենում է ձեզ ողորմություն շնորհել ձեր պարտությունների համար, եթե դուք կամենաք ներել ձեզ ձեր ունեցած պարտությունների համար, և եթե դուք ցանկանաք ընդունել Նրա ներու-

մը: Նա պարզևատրում է ոչ թե կատարյալին, ով չունի ո՛չ թերություն, և ո՛չ էլ սխալ, այլ նրանց, ովքեր հավատում ու վստահում են Իրեն:

ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ

ՈՒՆԵՑԱԾ ՁԵՐ ՀԱՎԱՏՔԸ ՀԱՃԵԼԻ Է ՆՐԱՆ

«Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հաստատ հավատա, թե Նա կա, և թե Իրեն լրջորեն և ջանասիրաբար փնտրողներին վարձահատույց կլինի»:

Եբրայեցիների 11.6, AMP

Կխնդրեի նկատել, որ առանց հավատքի դուք չեք կարող գոհացնել Աստծուն. այդ պատճառով էլ, նշանակություն չունի, թե որքան «բարի գործեր» եք կատարել: Եթե դուք դրանք գործել եք Նրա բարեհաճությունը «վաստակելու» համար, ապա դա չի հաճեցնի Նրան:

Աստծո համար ցանկացած բան անելիս մեր շարժիչ ուժը պետք է լինի Նրա հանդեպ ունեցած մեր սերը, և ոչ թե այն, թե ինչ կարող ենք ստանալ Նրանից:

Այս խոսքում ասվում է, որ Աստված վարձահատույց է լինում Իրեն ջանասիրաբար փնտրողներին: Ես այնքա՛ն երջանիկ էի, երբ վերջապես հասկացա սա: Ես գիտեմ, որ շատ սխալներ են թույլ տվել անցյալում, բայց նաև գիտեի, որ այժմ ես ողջ սրտով ձգտում էի Աստծուն: Իսկ դա նշանակում է, որ դա որակավորում էր վարձք ստանալու իմ իրավունքը: Ես վաղուց արդեն որոշել եմ, որ կստանամ այն բոլոր օրհնությունները, որոնք Աստված ցանկանում է տալ ինձ:

Աստված կամեցավ իսրայելացիներին տանել Խոստմունքի երկիր և նրանց օրհնել այնպիսի օրհնություններով, որ չէին էլ կարող պատկերացնել, բայց, նախ և առաջ, Նա պետք է ազատեր նրանց իրենց նախատիմքից: Նրանք Աստծուց ոչինչ չէին կարողանա ստանալ այնքան ժամանակ, քանի դեռ գտնվում էին ամոթի, մեղավորության և խայտառակության զգացողության բեռի տակ:

ՆԱԽԱՏԻՆՔԻՑ ՎԵՐ

«Ինչպես որ [Նրա սիրո մեջ] Նա ընտրեց մեզ [ըստ էության, ընտրեց մեզ որպես Իր սեփականների] Քրիստոսի մեջ՝ աշխարհի ստեղծելուց առաջ, որ մենք լինենք սուրբ [Նրա համար օծված և առանձնացված] և առանց Նրա կողմից մեղադրանքի, նույնիսկ՝ նախատինքից վեր ու սիրո մեջ Նրա առջև կանգնած»:

Եփեսացիների 1.4, AMP

Սա հրաշալի խոսք է: Սրանով Աստված ցանկանում է ասել, որ մենք պատկանում ենք Իրեն, և ուզում է, որ հասկանանք, որ Նա սիրում է մեզ, որ մենք յուրահատուկ ենք, թանկ ենք Նրա համար և ուզում է, որ մենք լինենք սուրբ, ամարատ և վեր ամեն նախատինքից:

Մենք պետք է անենք ամեն ինչ՝ սուրբ կյանքով ապրելու համար: Բայց, փառք Աստծուն, որ երբ մենք սխալներ ենք թույլ տալիս, կարող ենք ներում ստանալ, վերականգնվել սրբության ու անարատության մեջ և վեր բարձրանալ նախատինքից... ու այս ամենն, իհարկե, Նրա շնորհով:

ԱՌԱՆՅ ՆԱԽԱՏԻՆՔԻ ԿԱՄ ՍԽԱԼՆԵՐ ՓՆՏՐԵԼՈՒ

«Եթե ձեզանից մեկը իմաստության պակաս ունի, թող նա խնդրի Աստծուն [Ով տալիս է] բոլորին առատորեն և առանց նախատինքի, առանց կշտամբանքի և սխալներ փնտրելու, և դա կտրվի իրեն»:

Հակոբոս 1.5, AMP

Եվս մեկ հիանալի խոսք, որը մեզ սովորեցնում է Աստծուց օրինություն ստանալ առանց նախատինքի:

Հակոբոսն ակնհայտորեն սույն ուղերձը հղում է այն մարդկանց, ովքեր տարբեր փորձություններ են ունեցել, և այժմ ասում է նրանց, որ եթե նրանք իմաստության կարիք ունեն իրենց իրավիճակների համար, ապա պետք է խնդրեն Աստծուց: Նա վստահեցնում է, որ Աստված չի նախատի և սխալներ չի որոնի նրանց մեջ, այլ պարզապես կօգնի նրանց:

Ձեզ երբեք չի հաջողվի անապատից դուրս գալ առանց Աստծո օգնության: Բայց եթե դուք ձեր մասին բացասական կարծիք ունեք, ապա նույնիսկ, եթե Նա կամենա ձեզ օգնություն ցուցաբերել, դուք այն չեք կարողանա ընդունել:

Եթե դուք ցանկանում եք ապրել հաղթական, հզոր և դրական կյանքով, դուք չեք կարող բացասական մտքեր ունենալ ձեր մասին: Մի՛ նայեք միայն դեպի ճանապարհի այն հատվածը, որը դեռ պետք է անցնեք, այլ նաև ետ նայեք ու տեսեք, թե որքանն եք արդեն անցել: Ստածեք ձեր առաջընթացի մասին և հիշեք Փիլիպեցիների 1.6-ը. «Եվ համոզված եմ ու վստահ սրանում, թե Նա, Ով ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի նաև մինչև Հիսուս Քրիստոսի օրը [ընդհուպ մինչև Նրա վերադարձի ժամանակը]՝ զարգացնելով [այդ բարի գործը] և կատարելագործելով ու ավարտին հասցնելով ձեզանում» (AMP):

Մտածե՛ք և ձեր մասին արտահայտվե՛ք միայն դրական խոսքերով:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Թեպետ այս գիրքը գրվել է տարիներ առաջ, ես առավել համոզված եմ, քան երբևէ, որ մեր իսկ նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքն իր ազդեցությունն է թողնում մեր կյանքի ամեն մի բնագավառի վրա: Ես միանշանակ կոչ եմ անում ձեզ՝ խաղաղության դաշինք կնքել ինքներդ ձեզ հետ: Միգուցե ձեզ դուր չի գալիս այն ամենն, ինչ անում եք, բայց դուք կարող եք և պարտավոր եք սիրել ձեզ: Ես վերջապես որոշեցի, որ եթե Հիսուսն ինձ մահու չափ սիրեց, ապա, ամենաքիչը, որ ես կարող եմ անել, դա ինձ սիրելն է: Ինչո՞ւ ձեզ մի լավ չգրկեք հենց հիմա և չասեք բարձրածայն. «Հանուն Հիսուսի կատարած զոհի, ես սիրում և ընդունում եմ ինձ: Նա ինձ նոր էություն է տվել, և հիմա ես պատրաստ եմ ապրել այն նոր կյանքով, որով Նա է ցանկանում, որ ես ապրեմ»:

Գլուխ

24

**«Ինչո՞ւ ես չեմ կարող
խանդել կամ նախանշել, երբ
բռնորի մոտ ամեն քան ավելի լավ է,
քան ինչ մոտ»:**

Անապատային մտածելակերպ. թիվ 9

**«Ինչո՞ւ ես չեմ կարող
խանդել կամ նախանշել, երբ
բոլորի մոտ ամեն քան ավելի
լավ է, քան ինչ մոտ»:**

Գլուխ
24

Անապատային մտածելակերպ. թիվ 9

Յովհաննեսի Ավետարանի 21-րդ գլխում Հիսուսը Պետրոսի հետ գրուցում էր այն դժվարությունների մասին, որոնք վերջինս պետք է կրեր Հիսուսին ծառայելու և Նրան փառավորելու համար: Հենց որ Հիսուսն այդ ամենն ասաց Պետրոսին, նա շրջվեց, տեսավ Յովհաննեսին, և անմիջապես հարցրեց Նրա կամքը Յովհաննեսի վերաբերյալ: Պետրոսն ուզում էր համոզվել, որ եթե ինքն անցնելու էր այդ ծանր փորձությունների միջով, ուրեմն նույնը սպասվում էր նաև Յովհաննեսին: Հիսուսն էլ քաղաքավարի կերպով ասաց Պետրոսին, որ դա նրա գործը չէ:

Ուրիշների գործերի մասին մտածելը մեզ կպահի անապատում: Խանդը, նախանձը և մեզ ու մեր հանգամանքներն ուրիշների հետ մտովի համեմատելն անապատային մտածելակերպի արդյունք են:

«Պետրոսը նրան [Յովհաննեսին] տեսնելով, Հիսուսին ասաց. «Տե՛ր, ի՞նչ կլինի այս մարդու հետ»:

Հիսուսն ասաց նրան. «Եթե Ես ուզեմս, որ նա մնա [կենդանի մնա, սպրի] մինչև Ես գամ, քե՞զ ինչ [դա քեզ վերաբերո՞ւմ է]: Դու հերևի՛ր Ինչ»»:

Յովհաննես 21.21,22, AMP

ԶԳՈՒՇԱՅԵՔ ԽԱՆԴԻՑ ՈՒ ՆԱԽԱՆՁԻՑ

«Հանգիստ և խաղաղ միտքն ու սիրտը կյանք և առողջություն են մարմնի համար, բայց նախանձը, խանդն ու զայրույթը նման են ոսկորների փտածության»:

Առակաց 14.30, AMP

Նախանձը կարող է մարդուն դարձնել շատ կոպիտ ու անսիրտ, երբեմն, նույնիսկ՝ հասցնել անասնական բնազդների: Նախանձը Յովսեփի եղբայրներին ստիպեց վաճառել նրան ստրկության: Նրանք ատում էին Յովսեփին այն պատճառով, որ իրենց հայրը նրան շատ էր սիրում:

Եթե ձեր ընտանիքում կա մեկը, ով ավելի շատ բարեհաճություն է գտնում, քան դուք, մի՛ ատեք այդ անձնավորությանը: Վստահե՛ք Աստծուն: Արեք այն, ինչ նա է խնդրում ձեզ անել. հավատացե՛ք Նրան և հաճություն կգտնեք, և ձեր վերջը առատապես օրհնված կլինի Յովսեփի կյանքի վերջի պես:

Վ.Ե.Վայնի «*Յին և Նոր կտակարանների բառերի բացատրական բառարանը*» «նախանձ» բառը հունարենից թարգմանաբար սահմանում է այսպես՝ «դժգոհության զգացում, որն առաջանում է ուրիշների կյանքում բարգավաճում տեսնելիս»¹: Վեբսթերի բառարանում «խանդ» բառը մեկնաբանվում է այսպես՝ «նախանձի, վախի, ցավի զգացում»²: Ես մեկնաբանում եմ սա, որպես ունեցածը կորցնելու վախ, ուրիշի հաջողության պատճառով առաջացած վրդովմունք, որն առաջանում է նախանձի զգացումից:

ՄԻ՝ ՀԱՄԵՄԱՏՎԵՔ ԵՎ ՄԻ՝ ՄՐՑԵՔ

«Նրանց մեջ մի վեճ էլ եղավ, թե իրենցից ո՞վ պիտի մեծ համարվի: Եվ նա ասաց նրանց. «Ազգերի թագավորները տիրապետում են նրանց վրա, և նրանց վրա իշխանություն անողները բարերար են կոչվում:

Բայց դուք ոչ այնպես, այլ ձեր միջի մեծը թող փոքրագույնի պես լինի, և առաջնորդը՝ ծառայողի պես»:

Ղուկաս 22.24-26

Իմ վաղ տարիներին ես կատաղի պայքարում էի ուրիշների հետ համեմատվելու, նախանձի և խանդի դեմ: Նման հատկանիշները բնորոշ են այն մարդկանց, ովքեր իրենց անապահով են զգում: Եթե մենք վստահ չենք սեփական արժանապատվության և արժեքի մեջ՝ որպես յուրահատուկ անձնավորություններ, ապա մենք մեզ կբռնաց-

նենք այն մտքի վրա, որ համեմատվում ենք այն անձանց հետ, ովքեր հաջողություններ ունեն:

Գիտակցելով իմ անհատականությունը (այն փաստը, որ Աստված յուրահատուկ, անհատական ծրագիր ունի իմ կյանքի համար), ես գտա մի մեծ ու թանկագին ազատություն, որն ինձ տրվեց Տիրոջ կողմից: Հիմա հաստատ գիտեմ, որ այլևս կարիք չունեմ համեմատելու ինձ (կամ իմ ծառայությունը) մեկ ուրիշի հետ:

Ես միշտ մխիթարվում եմ, որ դեռ հույս կա ինձ համար, երբ ամեն անգամ նայում եմ Հիսուսի աշակերտներին և հասկանում, որ նրանք էլ էին պայքարում այն նույն բաների դեմ, որոնց դեմ պայքարում եմ նաև ես: Ղուկասի Ավետարանի 22-րդ գլխում տեսնում ենք, որ աշակերտները վիճում էին այն մասին, թե իրենցից ով է ամենամեծը: Հիսուսը պատասխանում է նրան՝ ասելով, որ ամենամեծը նա է, ով պատրաստ է Իրեն համարել ամենափոքրը կամ պատրաստ է ծառայել ուրիշներին: Մեր Տերն Իր ժամանակի մեծ մասն անցկացրեց՝ փորձելով Իր աշակերտներին սովորեցնել, որ սովորաբար, կյանքն Աստծո արքայության մեջ՝ աշխարհիկ կամ ֆիզիկական կյանքի ճիշտ հակառակն է:

Հիսուսը նրանց ասաց հետևյալը. «Շատ առաջիններ վերջիններ կլինեն, և վերջիններն առաջիններ» (տե՛ս Մարկ. 10.31), «Ուրախացե՛ք նրանց հետ, ովքեր օրհնված են» (տե՛ս Ղուկ. 15.6,9), «Սիրե՛ք ձեր թշնամիներին, օրհնե՛ք ձեզ անիծողներին» (տե՛ս Մատթ 5.44): Աշխարհը կարող է ասել, որ սա անհեթեթություն է, բայց Հիսուսն ասում է, որ սա՛ է ճշմարիտ զորությունը:

ԽՈՒՄԱՓԵՔ ԱՇԽԱՐՀԻԿ ՄՐՅԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ

«Եկեք չդառնանք սնապարծ ու ինքնահավան, մրցակցող, մարտահրավեր նետող, զայրացնող ու զայրույթը բորբոքող՝ նախանձելով ու խանդելով միմյանց»:

Գաղատացիների 5.26, AMP

Աշխարհիկ հայացքների համաձայն, կյանքում ամենալավ տեղը

«վերևներում» է: Տարածված է այն մտածելակերպը, որ մենք պետք է ձգտենք դեպի վեր և հաշվի չառնենք, թե ում ենք ցավեցնում այդ ճանապարհին: Սակայն Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ հնարավոր չէ գտնել իսկական խաղաղություն, մինչև չազատվենք ուրիշների հետ մրցակցելու ցանկությունից:

Նույնիսկ զվարճալի խաղեր խաղալիս կարող ենք տեսնել, որ երբեմն մրցակցությունն այնպես է դուրս գալիս հավասարակշռությունից, որ խաղն ավարտվում է վեճով ու փոխադարձ ատելությամբ՝ միմյանց հետ հանգիստ և լավ ժամանակ անցկացնելու փոխարեն: Բնականաբար, մարդու բնույթն այնպիսին է, որ յուրաքանչյուրն էլ խաղում է հաղթելու համար, ոչ թե պարտվելու: Բայց եթե մարդը երջանիկ է միայն այն դեպքում, երբ հաղթողն ինքն է, ապա նա խնդիր ունի, այն էլ, միզուցե, այնպիսի լուրջ խնդիր, որն իր հերթին առաջացնում է այլ խնդիրներ նրա կյանքի մնացած բնագավառներում:

Աշխատելիս մենք, իհարկե, պետք է ներդնենք մեր բոլոր ջանքերը: Ոչ մի սխալ բան չկա նրանում, եթե մենք ցանկանում ենք ամեն բան շատ լավ անել և փորձում ենք առաջ գնալ մեր ընտրած մասնագիտության մեջ: Սակայն ես կոչ եմ անում ձեզ հիշելու, որ հավատացյալի համար աջակցումը պետք է գա Աստծուց, ոչ թե մարդուց: Մենք չպետք է աշխարհիկ խաղեր խաղանք «առաջ գնալու» համար: Աստված Իր հաճությունը կտա մեզ, և մենք շնորհք կգտնենք մարդկանց առջև, եթե ամեն բան անենք Նրա ճանապարհներով (տե՛ս Առակ. 3.3,4):

Խանդն ու նախանձը դժոխքից եկած տանջանքներ են: Ես տարիներ եմ վատնել խանդելով և նախանձելով ամեն մեկին, ով ավելի լավ տեսք ուներ, քան ես, կամ ով ավելի տաղանդավոր էր, քան ես: Ես նույնիսկ գաղտնի կերպով մրցակցում էի իմ ծառայության մեջ: Ինձ համար շատ կարևոր էր, որ իմ ծառայությունն իր ծավալով լինի ավելի մեծ, բարգավաճող, քան մեկ ուրիշինը, մարդիկ շատ լինեն և այլն: Եթե մեկ ուրիշի ծառայությունը ինչ-որ բանում գերազանցում էր իմ ծառայությանը, ես ցանկանում էի ուրախ լինել այդ մարդու համար միայն այն պատճառով, որովհետև գիտեի, որ Աստծո կամքը դա է, բայց ինչ-որ բան իմ հոգում խանգարում էր ինձ:

Որքան հասկանում էի, թե ով եմ ես Քրիստոսի մեջ, այնքան ազատվում էի ուրիշների հետ համեմատվելու կարիքից: Որքան շատ էի սովորում վստահել Աստծուն, այնքան ավելի շատ ազատություն էի վերապրում այս բնագավառներում: Ես հասկացա, որ իմ երկնային Չայրը սիրում է ինձ և ինձ համար կանի ամենալավը:

Եվ այն, ինչ Աստված կարող է անել ձեր և իմ կյանքում, կարող է չանել ուրիշի կյանքում, սակայն մենք պետք է հիշենք, թե ինչ էր Յիսուսն ասում Պետրոսին. «Մի՛ մտածիր, թե ես ինչ պետք է անեմ ուրիշի կյանքում. դու Ի՛նձ հետևիր»:

Մեկ օր իմ ընկերուհին Տիրոջից ստացավ այն նվերը, ինչի համար ես վաղուց աղոթում և երազում էի ունենալ: Ես իմ այդ ընկերուհուն այդքան էլ «հոգևոր» չէի համարում, որքան ինձ, այնպես որ, ես սկսեցի խանդել և նախանձել, երբ նա ոգևորված վազեց մեր տուն՝ կիսվելու ինձ հետ, թե ինչ էր Աստված արել նրա կյանքում: Իհարկե, նրա ներկայությամբ ես ստիպված էի ձևացնել, որ ուրախ եմ նրա համար, այնինչ «ին սրտից արյուն էր կաթում»:

Երբ նա գնաց, նրա հանդեպ իմ վերաբերմունքն ինձանից այնպես դուրս թափվեց, որ երբեք չէի մտածի, որ դա կար իմ ներսում: Ես չէի հասկանում, թե ինչպես կարող էր Աստված այդքան առատորեն օրհնել նրան, որովհետև *ես* չէի կարծում, որ նա արժանի էր դրան: Այդ ամենից հետո, *ես* մնացի տանը՝ աղոթելով և ծոմ պահելով այն ժամանակ, երբ *նա* վազում էր մի ընկերուհուց դեպի մյուսը և ուրախանում իր օրհնությունով: Տեսնո՞ւմ եք՝ ինչ «փարիսեցի» էի ես, իսկական կրոնական պճմանով մարդ, և նույնիսկ չէի էլ հասկանում դա:

Երբեմն Աստված դեպքերն այնպես է դասավորում, որ մենք չենք կարողանում որևէ բան փոխել, քանի որ Նա գիտի մեր կարիքները: Ես ավելի շատ կարիք ունեի ազատվելու իմ սխալ վերաբերմունքից, քան այն օրհնության, ինչի համար այդքան աղոթում էի: Աստծո համար կարևոր է հանգամանքներն այնպես դասավորել, որ մենք ստիպված լինենք դեմ առ դեմ կանգնել ինքներս մեր առջև: Չակառակ դեպքում՝ երբեք ազատություն չենք ունենա:

Քանի դեռ թշնամին կարողանում է սողոսկել մեր կյանք, նա միշտ

կփորձի վերահսկել մեզ: Դա է նրա միակ նպատակը: Սակայն Աստված կարող է մերկացնել նրան և մեզ ազատություն շնորհել, *եթե* մենք մեզ հանձնենք Աստծո ձեռքերի մեջ և թույլ տանք Նրան՝ սկսելու այն աշխատանքը, որը Նա կամենում է կատարել մեզանում:

Փաստորեն, Աստված արդեն վաղուց նախասահմանել էր, որ այն ծառայությունը, որը Նա պետք է ինձ տար, լինելու էր ծավալուն և Իր Խոսքը հասնելու էր միլիոնավոր մարդկանց՝ ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի, սեմինարների, գրքերի ու լսաժապավենների միջոցով: Բայց Նա չէր կարող ինձ լիովին բարձրացնել այդ ծառայության մեջ, քանի դեռ ես գտնվում էի Նրա մեջ «աճման» ընթացքում:

ՁԵՌՔ ԲԵՐԵՔ ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ

«Սիրելի՛ս, աղոթք են անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է»:

Գ Հովհաննեսի 2

Ուշադիր խորհեք այս խոսքի շուրջ: *Աստված ավելի շատ է ցանկանում մեզ օրհնել, քան մենք ենք երազում լինել օրհնված:* Բայց Նա նաև այնքան է սիրում մեզ, որ Նրա օրհնությունները չեն գերազանցում՝ դրանք կյանքում ճիշտ տնօրհնելու մեր կարողությունները, որպեսզի և՛ ներկայում, և՛ հետագայում կարողանանք ողջ փառքը տալ միայն Նրան:

Խանդը, նախանձը, ուրիշների հետ համեմատվելն ու սրանց մման այլ հատկանիշները ցույց են տալիս, որ մարդը հոգևորում դեռ մանուկ է: Սրանք բոլորն էլ բնորոշ են մարմնին և ոչ մի կապ չունեն հոգևորի հետ: Բայց անապատում թափառելու հիմնական պատճառներից մեկը նախանձն է:

Սկսեք հսկել ձեր մտքերն այս բնագավառում: Երբ նկատեք, որ ձեր ուղեղ է փորձում սողոսկել ինչ-որ մի սխալ միտք, ապա ինքներդ ձեզ ասեք. «Ինձ ի՞նչ օգուտ նրանից, եթե սկսեմ նախանձել ուրիշներին: Այդպես վարվելով ես օրհնված չեմ լինի: Աստված առանձնահատուկ ծրագրեր ունի մեզանից յուրաքանչյուրի համար: Ես կվստահեմ

Նրան, որպեսզի իմ կյանքը նույնպես լցվի Աստծո բարիքներով: Ինձ չի վերաբերում այն, թե ինչ է Նա որոշել անել ուրիշների կյանքում»: Իսկ հետո, գիտակցաբար ու միտումնավոր կերպով սկսեք աղոթել այն մարդկանց համար, ում դուք նախանձում էիք, որպեսզի նրանք նույնպես օրհնված լինեն:

Մի՛ վախեցեք Աստծո հետ լինել ազնիվ և խոսել ձեր զգացմունքների մասին: Նա գիտի, թե ինչ եք դուք զգում ձեր ներսում, այնպես որ, ավելի լավ կլինի, եթե դուք խոսեք Նրա հետ այդ մասին:

Ես Տիրոջն աղոթում էի այսպես. «Աստված իմ, ես աղոթում եմ ի համար, որ նա լինի առատապես օրհնված: Տո՛ւր նրան բարգավաճում և օրհնի՛ր նրան իր կյանքի բոլոր բնագավառներում: Տե՛ր, ես այս աղոթքն անում եմ հավատքով: Իմ հոգում ես նախանձում եմ նրան և ինձ ավելի ցածր եմ զգում նրանից, բայց ես ընտրում եմ վարվել այսկերպ՝ չնայելով զգացմունքներիս»:

Վերջերս մեկն այսպես արտահայտվեց, որ նշանակություն չունի, թե մենք որքան լավ կարող ենք ինչ-որ բան անել որևէ բնագավառում, որովհետև միշտ էլ կգտնվի մեկ ուրիշը, ով այդ նույնը կանի ավելի լավ: Այս հայտարարությունն իմ մեջ տպավորվեց, որովհետև դա իրոք այդպես է: Եվ եթե դա այդպես է, ապա ինչո՞ւ ենք մեր ողջ կյանքի ընթացքում փորձում առաջ անցնել որևէ մեկից: Երբ ինչ որ բնագավառում դառնում ենք առաջինը, ուշ թե շուտ, հայտնվում է մեր հետ մրցակցող մեկ ուրիշը, ով ավելի լավ է գլուխ հանում նրանից, ինչ մենք ենք անում:

Օրինակ բերեմ սպորտը. ինչպիսի ռեկորդներ էլ որ սահմանեն մարզիկները, ի վերջո հայտնվում են այլ մարզիկներ, որոնց սահմանած ռեկորդները գերազանցում են նախորդներին: Ի՞նչ կասեք շոու-բիզնեսի բնագավառի մասին: Աստղն աստղ է միայն որոշ ժամանակով, քանի դեռ հորիզոնում չի հայտնվել մեկ ուրիշ աստղ, որն իր պայծառությամբ կմարի նախորդի փայլը: Ինչպիսի՞ խաբեություն. մենք մտածում ենք, որ պետք է անընդհատ պայքարել՝ բոլորից առաջ անցնելու համար, իսկ հետո պայքարել՝ առաջին գծում ձեռք բերած տեղը պահելու համար: Մեր արժեքն այն չէ, թե ինչ ենք մենք անում, այլ այն, որ Աստված

սիրում է մեզ և Իր միակ Որդուն ուղարկեց՝ մահանալու մեզ համար:

Շատ տարիներ առաջ Աստված ասել էր ինձ, որ «պայծառ աստղերը» երկնքում հայտնվում են հանկարծակի և մեծ ուշադրություն են գրավում, բայց սովորաբար, դա երկար չի տևում: Մեծ մասամբ, նրանք ընկնում են նույնքան արագ, որքան արագ ծագել էին: Նա ասաց, որ ավելի լավ է չլինել ուշադրության կենտրոնում, բայց լինել գործող՝ երկար ժամանակով, և ողջ կարողությամբ ամել այն, ինչ Նա է պատվիրել: Նա հավաստիացրեց ինձ, որ անձամբ հոգ կտանի իմ հեղինակության մասին: Ես էլ իմ հերթին որոշեցի, որ կկատարեմ ցանկացած աշխատանք, որը Նա կպատվիրի ինձ, և ամեն բան հիանալի կլինի իմ կյանքում: Ինչո՞ւ: Որովհետև միայն Նա գիտի, թե ինչ կարող եմ ես ամել՝ ներդնելով իմ լավագույնը:

Միգուցե դուք այս բնագավառի հետ կապված ամրություններ ունեք ձեր մտքում: Ամեն անգամ, երբ հանդիպում եք մեկին, ով ինչ-որ հարցում ձեզ գերազանցում է, դուք զգում եք, թե ինչպես է ձեզանում գլուխ բարձրացնում նախանձը, խանդը կամ մրցակցության ցանկությունը: Եթե դա, իրոք, այդպես է, ապա կոչ եմ անում ձեզ՝ ձեռք բերել նոր մտածելակերպ:

Կարողացե՛ք ուրախ լինել ուրիշների համար, իսկ ձեր հարցերը վստահել Աստծուն: Դա ժամանակ և ջանք կպահանջի, բայց երբ խորտակեք ձեր մտքի այդ հին ամրությունները և դրանց տեղում կանգնեցնեք Աստծո խոսքը, դուք կկանգնեք անապատից դուրս բերող և դեպի խոստմունքի երկիրը տանող ուղու վրա:

Գլուխ
25

**«Ես դա կանեմ
կա՛ն իմ ճեղք, կա՛ն
ընդհանրապես չեմ անի»:**

Անպատասխան մտածելակերպ. թիվ 10

**«Ես դա կանեմ
կա՛մ իմ ճեռով, կա՛մ
ընդհանրապես չեմ անի»:**

Գլուխ
25

Անապատային մտածելակերպ. թիվ 10

Ի սրայելացիներն անապատում անցկացրած իրենց բոլոր տարիների ընթացքում կամակորոթյուն և ապստամբություն ցուցաբերեցին: Եվ հենց դա էր նրանց այնտեղ մահանալու պատճառը: Նրանք համառորեն չարեցին այն, ինչ Աստված էր ասել նրանց: Նրանք լաց էին լինում և աղաղակում Աստծուն՝ խնդրելով ազատել իրենց դժվարություններից: Նրանք նույնիսկ հնազանդորեն լսում էին Նրա հանձնարարությունները, բայց դա տևում էր այնքան ժամանակ, քանի դեռ իրավիճակը չէր փոխվել դեպի լավը: Հետո նրանք կրկին վերադառնում էին հին մեթոդներին և ապստամբությամբ:

Հին կտակարանում կարող ենք տեսնել, որ այս իրավիճակները պտտվում ու կրկնվում էին բազմաթիվ անգամներ: Եվ եթե դեռ իմաստությամբ չենք վարվում, ապա մեր կյանքը կվատնենք, եթե կատարենք նույն սխալները:

Մարդիկ, ըստ էության, տարբեր են և, հնարավոր է, որ ոմանք ավելի կամակոր ու ապստամբ լինեն, քան ուրիշները: Եվ հետո, իհարկե, մենք պետք է մտածենք մեր արձատների և կյանքում կատարած առաջին քայլերի մասին, որովհետև դրանք հետագայում իրենց ազդեցությունն են ունենում մեր կյանքում:

Բնավորությամբ ես ուժեղ անձնավորություն եմ և, թերևս, երկար

«Որ նրանք իրենց հույսն Աստծո վրա դնեն, և չմոռանան

Աստծո գործերը և Նրա պարվիրանները պահեն:

Եվ իրենց հայրերի անան չլինեն խաբարվիչ և դառնացնող ազգ. ազգ. որ իր սիրտը չպարտասպետեց և նրա հոգին հավատարիմ չէ Աստծուն»:

Սաղմոս 78.7,8

տարիներ են վատնել՝ փորձելով ամեն բան անել «իմ ձևով»: Բայց իմ կորցրած տարիները եղել են սեռական չարաշահման ու վերահսկողության տարիներ՝ այն ուժեղ և չափահաս անձանց «շնորհիվ», որոնց պատճառով իմ մեջ ձևավորվել է այն մտածելակերպը, որ այլևս ոչ ոք չպետք է ինձ ասի՝ ինչը ոնց անել:

Անշուշտ, Աստված կկարողանար ինձ օգտագործել միայն այն դեպքում, երբ ազատեր ինձ այս սխալ վերաբերմունքից:

Տերը պահանջում է, որ հրաժարվենք մեր ուղիներից և մեզ ինքնական հանձնենք Իր ձեռքերի մեջ: Նա չի կարողանա օգտագործել մեզ, քանի դեռ մենք կամակոր ու ապստամբ ենք:

«Կամակոր» բառն այլ խոսքերով ես կնկարագրեմ որպես հաստակող, պնդազուխ, համառ. մի անձնավորություն, ում հետ դժվար է գործ ունենալը: Իսկ «ապստամբ» բառը կնկարագրեմ որպես վերահսկողությանը, նկատողություններին հակառակվող, ընդհանուր կանոններին չհետևող: Այս երկու սահմանումն էլ նկարագրում էին ինձ, ինչպիսին ես երբևէ եղել էի:

Իմ կյանքի վաղ տարիներին ինձ սեռական բռնությունների են ենթարկել, որոնց պատճառով ես բավականին տառապել եմ, և հենց դրանք են դարձել հեղինակության հանդեպ իմ անհանդուրժող վերաբերմունքի պատճառները: Բայց, ինչպես արդեն ասել էի գրքի սկզբում, ես չէի կարող թույլ տալ իմ անցյալին, որ այն արդարացում դառնար ինձ համար, և դրանով մնայի ապստամբության կամ մեկ այլ սխալ բանի մեջ: Հաղթական կյանքը մեզանից պահանջում է անհապաղ հնազանդություն Տիրոջը: Մենք պետք է աճենք մեր կարողության և ցանկության մեջ, որպեսզի կարողանանք մեր կամքը խոնարհեցնել Աստծո կամքի առջև: Կենսականորեն շատ կարևոր է շարունակել առաջ գնալ այս բնագավառում:

Բավական չէ որոշակի մակարդակի հասնելն ու մտածելը. «ես անցա այնքանը, որքանը կարողացա անցնել»: Մեր կյանքում մենք պետք է հնազանդ լինենք ամեն ինչում՝ առանց Տիրոջից որևէ բան թաքցնելու կամ որևէ դուռ Նրա առջև փակ թողնելու: Մենք բոլորս ունենք այս «որոշ» բնագավառները, որոնք փորձում ենք հնարավո-

րին չափ երկար պահել: Սակայն ես կոչ եմ անում ձեզ հիշել, որ փոքր թթխմորը խմորում է ողջ զանգվածը (տե՛ս Ա Կորնթ. 5.6):

ԱՍՏՎԱԾ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է ՈՒԶՈՒՄ, ԵՎ ՈՉ ԹԵ ԶՈՀ

«Եվ Սամուելն ասաց [Սավուղ թագավորին]. «Մի՞թե Տերն ավելի շատ հավանում է այրված ողջակեզներն ու զոհերը, քան Տիրոջ ծայնին հնազանդվելը: Ահա հնազանդությունը զոհից լավ է, և ականջ դնելը՝ խոյերի ճարպից:

Որովհետև ապստամբությունը կախարդության մեղքի պես է, և անհնազանդությունը՝ կռապաշտության և թերափիմի [տունը պահպանող հաջողության նկարների] պես, որովհետև դու Տիրոջ խոսքը մերժեցիր, Նա էլ քեզ մերժեց, որ թագավոր չլինես»»:

Ա Թագավորաց 15.22,23, AMP

Սավուղի կյանքի ուսումնասիրությունը հստակ թույլ է տալիս տեսնելու, որ նրան թագավոր լինելու բացառիկ հնարավորություն էր տրված: Բայց նա երկար չմնաց այդ դիրքում իր կամակորության և ապստամբության պատճառով: Նա կյանքի նկատմամբ ուներ իր սեփական գաղափարները:

Մեկ անգամ, երբ Սամուել մարգարեն հանդիմանում էր Սավուղին նրա համար, որ վերջինս չէր արել այնպես, ինչպես ասվել էր իրեն, Սավուղը սկսեց ներկայացնել իր տեսակետներն ու կարծիքը, թե ինչն ինչպես պետք է տեղի ունենար (տե՛ս Ա Թագ. 10.6-8, 13.8-14): Իսկ Սամուել մարգարեն պատասխանելով Սավուղ թագավորին ասում է, որ Աստված ուզում է հնազանդություն, և ոչ թե զոհ: Չափից շատ «կարծելով»՝ մենք կարող ենք մեր ճանապարհները շեղել Աստծո կամքից:

Հաճախ մենք չենք ուզում անել այն, ինչ Աստված է ասում, իսկ հետո որոշակի քայլեր ենք ձեռնարկում, որպեսզի փոխհատուցենք մեր անհնազանդությունը:

Աստծո զավակներից քանի՞սը զրկվեցին «իրենց կյանքում թագավորներ լինելուց»՝ իրենց իսկ կամակորության ու ապստամբության

պատճառով (տե՛ս Գոռմ. 5.17, Հայտն. 1.6):

«Աստվածաշնչի Ընդլայնված թարգմանության» մեջ ժողովող գրքի նախաբանում ասվում է. «Սույն գրքի նպատակն է՝ քննել կյանքն ընդհանուր առմամբ և սովորեցնել մարդկանց, որ վերջնական վերլուծությամբ կյանքն անհմաստ է, եթե մարդն այն ապրում է առանց Աստծո հանդեպ կատարյալ հարգանք ու պատիվ ունենալու»:

Մենք պետք է հասկանանք, որ առանց հնազանդության՝ կատարյալ հարգանք կամ ակնածանք գոյություն ունենալ չի կարող: Ապստամբ ոգին, որն այսօր ակնհայտ է շատ երեխաների կյանքում, իրենց ծնողների հանդեպ հարգանքի և պատվի բացակայության պատճառն է: Սա հաճախ նաև ծնողների մեղավորությունն է, քանի որ նրանք երեխաների առջև իրենց կյանքը չեն ապրում այնպես, որը հարգանք ու պատիվ առաջացնի նրանց մեջ:

Շատ գիտնականներ համամիտ են այն կարծիքի հետ, որ ժողովող գիրքը գրվել է Սողոմոն թագավորի կողմից, ում Աստված օժտել էր շատ իմաստությամբ: Եթե Սողոմոնն այդքան իմաստուն անձնավորություն էր, ապա ինչո՞ւ նա իր կյանքում այդքան շատ սխալներ թույլ տվեց: Պատասխանը պարզ է. մարդը կարող է որևէ բան ունենալ և չօգտագործել այն: Մենք ունենք Քրիստոսի միտքը, բայց արդյո՞ք միշտ ենք օգտագործում այն: Հիսուսը մեզանում դարձավ Աստծո իմաստությունը, բայց արդյո՞ք մենք միշտ ենք օգտագործում այդ իմաստությունը:

Սողոմոնն ուզում էր գնալ սեփական ճանապարհով և վարվել իր ձևով: Նա իր կյանքը վատնեց՝ փորձելով նախ՝ մի բան, հետո՝ մյուսը: Նա ուներ այն ամենը՝ աշխարհի բոլոր հաճույքները, ինչը հնարավոր էր գումարով ձեռք բերել, սակայն իր գրքի վերջում գալիս է հետևյալ եզրահանգմանը.

«Բոլոր խոսքի վախճանը լսեք. Աստծուց վախեցե՛ք [երկրպագեք և մեծարեք Աստծուն՝ իմանալով, որ Նա է] և պահեք Նրա պատվիրանները, որովհետև սա է ամբողջությունը մարդու համար [նրա ստեղծման իրական, օրիգինալ նպատակը, Աստծո նախախնա-

մության օբյեկտը, բնույթի արմատը, ողջ երջանկության հիմքը, արևի տակ գոյություն ունեցող այն բոլոր աններդաշնակ հանգամանքների և պայմանների կանոնավորումը] և ամբողջ [պարտքը] յուրաքանչյուր մարդու համար»:

Ժողովող 12.13, AMP

Թո՛ւյլ տվեք նույն խոսքը ներկայացնել իմ բառերով. «Մարդու ստեղծման ողջ նպատակն այն է, որ նա Աստծուն երկրպագի և մեծարի՝ հնազանդվելով Նրան: Բնավորության բոլոր բարեպաշտ գծերը ծագում են հնազանդությունից. դա է երջանկության հիմքը: Ոչ ոք չի կարող իսկապես երջանիկ լինել՝ առանց Աստծուն հնազանդվելու: Այն ամենն, ինչ մեր կյանքում սխալ ուղու վրա է, կվերականգնվի Աստծուն հնազանդվելով: Հնազանդությունը յուրաքանչյուր մարդու պարտականությունն է»:

Իմ կարծիքով սա մի զարմանահրաշ խոսք է, և ես կոչ եմ անում ձեզ, որպեսզի դուք ինքներդ սերտեք և անձամբ ուսումնասիրեք այն:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ.

ԵՐԿՈՒՄՆ ԷԼ ՈՒՆԵՆ ԻՐԵՆՅ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

«Որովհետև ինչպես որ մեկ մարդու անհնազանդությամբ շատերը մեղավոր եղան, այնպես էլ Մեկի հնազանդությամբ շատերը արդարներ կլինեն»:

Յոռմեացիների 5.19, KJV

Մեր հնազանդվել-չհնազանդվելու ընտրությունն իր ազդեցությունն է ունենում ոչ միայն մեր, այլև շատերի կյանքում: Մտածեք մի պահ. եթե Իսրայելը կատարյալ ձևով հնազանդվեր Աստծուն, ինչ հրաշալի կդասավորվեր նրանց կյանքը: Նրանք և նրանց երեխաներից շատերը մահացան անապատում, որովհետև չցանկացան հետևել Աստծո ուղիներին: Նրանց որոշումն ազդեց իրենց երեխաների վրա, և նույնը կատարվում է նաև մեր օրերում:

Վերջերս իմ ավագ որդին ասաց. «Մայրի՛կ, ես քեզ մի բան եմ ուզում պատմել, որի ժամանակ, միգուցե, ես սկսեմ լաց լինել, բայց

դու լսիր ինձ մինչև վերջ»: Եվ շարունակեց. «Ես մտածում էի քո և հայրիկի մասին, թե որքան երկար տարիներ եք դուք ներդրել այս ծառայության մեջ, որքան անգամներ եք որոշել հնազանդվել Աստծուն և, թե որքան դժվար է դա եղել ձեզ համար: Ես հասկանում եմ, որ դու և հայրիկն այնպիսի բաների միջով եք անցել, որ շատերը տեղյակ չեն եղել, բայց ես ուզում եմ իմանաք, որ այս առավոտ Աստված ինձ հասկացրեց, թե որքան մեծ է իմ օգուտը ձեր հնազանդության պատճառով: Ես շնորհակալ եմ ձեզ դրա համար»:

Նրա խոսքերը մեծ բան էին ինձ համար, և դրանք ինձ հիշեցրեց Չռոմեացիների 5.19-րդ խոսքը:

Աստծուն հնազանդվելու ձեր որոշումն իր ազդեցությունն ունի ուրիշների կյանքում, և եթե դուք ընտրում եք չհնազանդվելը, ապա դա նույնպես իր հետևանքը կունենա մարդկանց կյանքում: Դուք կարող եք ընտրել երկրորդ տարբերակը և մնալ անապատում, բայց խնդրում եմ հիշել, որ եթե դուք հիմա երեխաներ ունեք կամ ունենալու եք ապագայում, ապա ձեր որոշումը ձեր երեխաներին նույնպես ձեզ հետ միասին կպահի անապատում: Միգուցե մեծանալով նրանք փորձեն իրենց դուրս բերել այդտեղից, բայց կարող եմ ձեզ հավաստիացնել, որ նրանք ստիպված կլինեն վճարել ձեր անհնազանդության գինը:

Ձեր կյանքն այսօր կարող էր շատ ավելի լավը լիներ, եթե ինչ-որ մեկը ձեր անցյալում հնազանդություն ցուցաբերեր Աստծուն:

Հնազանդությունը մեծամասշտաբ է. այն նաև կարող է փակել դժոխքի դարպասներն ու բացել երկնքի պատուհանները:

Ես մի ամբողջ գիրք կարող եմ գրել հնազանդության մասին, իսկ հիմա պարզապես ուզում եմ հասկացնել այն, որ անհնազանդության կյանքը սխալ մտածելակերպի արդյունք է, որը տանում է սխալ ընտրությունների:

**ԳԵՐԻ ԲՈՆԵՆՔ ԱՄԵՆ ՄԻՏՔ՝
ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀՆԱԶԱՆԴԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

«Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն [մարմնի ու արյան զենքեր], այլ՝ Աստծով զորավոր բերդեր քանդելու և խորտակելու, [քանի որ մենք] հերքում ենք փաստերն ու տեսությունները և հավաստիացումները, և ամեն մի հպարտ ու գոռոզ բան, որ ինքն իրեն բարձրացնում է Աստծո [ճշմարիտ] գիտության դեմ. և մենք առաջնորդում ենք ամեն մի միտք ու գերի ենք բռնում ամեն մի նպատակ՝ Քրիստոսին [Մեսիային, Օծյալին] հնազանդեցնելու համար»:

Բ Կորնթացիների 10.4,5, AMP

Հաճախ մեր խնդիրների պատճառները հենց մեր մտքերն են լինում: Եսայի 55.8-ում Տերն ասում է. «Իմ մտքերը ձեր մտքերը չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն» (AMP): Կարևոր չէ, թե ինչ ենք մենք մտածում: Աստված Իր մտքերը գրել է Իր գրքում, որը կոչվում է Աստվածաշունչ: Մենք պետք է որոշենք մարզել մեր մտքերն Աստծո Խոսքի լույսի մեջ և միշտ ցանկանանք մեր մտքերն ուղղել դեպի Նրա մտքերը՝ իմանալով, որ դրանք ամենալավն են:

Հենց սրա մասին է ասվում Կորնթացիների երկրորդ ուղերձի 10.4,5-րդ խոսքերում: Քննեք ձեր միտքը: Եթե այն համաձայն չէ Աստծո մտքերի (Աստվածաշունչի) հետ, ուրեմն խորտակեք ձեր սեփական մտքերն ու ընդունեք Նրա մտքերը:

Նրանք, ովքեր ապրում են իրենց մտքերի ունայնության մեջ, ոչ միայն ոչնչացնում են իրենց, այլ շատ հաճախ, նրանք կործանարար ազդեցություն են ունենում իրենց շրջապատողների կյանքում:

Միտքը կռվի դաշտն է:

Այս դաշտում է, որ դուք կա՛մ կհաղթեք, կա՛մ կպարտվեք այն պատերազմում, որը սատանան վարում է ձեր դեմ: Իմ սրտագին աղոթքն է, որ այս գիրքն օգնի ձեզ խորտակելու բոլոր պատկերացումներն ու ամեն մի անրություն, որ բարձրացել են Աստծո գիտության դեմ և օգնի, որ գերի վերցնեք բոլոր մտքերը՝ Հիսուս Քրիստոսին հնազանդեցնելու համար:

Նշումներ

Նշումներ

Գլուխ 7. Ստածի՛ր այն մասին, թե ինչ էս մտածում

1. W.E.Vine, Merrill F. Unger, William White, *An Expository Dictionary of Biblical Words* (Nashville: Thomas Nelson, Inc., 1985), p. 662
2. James Strong, *The New Strong's Exhaustive Concordance of the Bible* (Nashville: Thomas Nelson Inc., 1984), "Greek Dictionary of the New Testament", p.24
3. *Websters II New Riverside University Dictionary*, (Boston: Houghton Muffin Company, 1984), s.v. "meditate"
4. Vine, p. 400

Գլուխ 9. Թափառող, հետաքրքրասեր միտքը

1. *Webster's II*, s.v. "wander"
2. *Webster's II*, s.v. "wonder"

Գլուխ 10. Շփոթված միտքը

1. *Webster's II*, s.v. "reason"

Գլուխ 11. Չհավատացող և կասկածող միտքը

1. W.E. Vine, *Vine's Expository Dictionary of Old and New Testament Words*, (Old Tappan, N.J.: Fleming H. Revell, 1981), vol. 1: A-Dys, p. 335
2. Vine, vol. 4: Set-Z, p. 165

Գլուխ 12. Մտահոգ և անհանգիստ միտքը

1. *Webster's II*, s.v. "worry"
2. *The Random House Unabridged Dictionary*, 2nd ed. (New York: Random House, 1993), s.v. "worry"

Գլուխ 13. Դատապարտող, քննադատող և կասկածող միտքը

1. Vine, vol. 2: E-Li, p. 281
2. Vine, vol. 2: E-Li, p. 280

Գլուխ 15. Քրիստոսի միտքը

1. *Webster's II*, s.v. "depress"
2. *Webster's II*, s.v. "depressed"
3. Vine, vol. 2: E-Li, p. 60
4. Vine, vol. 3: Lo-Ser, p. 55
5. Strong, James, *The New Strong's Exhaustive Concordance of the Bible*, (Nashville: Thomas Nelson Publishers, 1984), "Hebrew and Chaldee Dictionary", p. 32

Գլուխ 23. «Ես արժանի չեմ Աստծո օրհնություններին»:

1. *Webster's II*, s.v. "reproach"

Գլուխ 24. «Ինչո՞ւ ես չեմ կարող խանդել կամ նախանձել, երբ բոլորի մոտ ամեն բան ավելի լավ է, քան ինձ մոտ»:

1. Vine, vol. 2: E-Li, p. 37
2. *Webster's II*, s.v. "jealousy"

Օգտագործված գրականություն

The Random House

The Random House Unabridged Dictionary, 2nd ed. (New York: Random House, 1993)

Strong, James, *The New Strong's Exhaustive Concordance of the Bible*, (Nashville: Thomas Nelson, Inc., 1984)

Vine, W. E., *Vine's Expository Dictionary of Old and New Testament Words*, (Old Tappan, N.J.: Fleming H. Revell Company, 1981)

Vine, W. E., Unger, Merrill F., White, William, eds. *An Expository Dictionary of Biblical Words* (Nashville: Thomas Nelson, Inc., 1985)

Webster's II New Riverside University Dictionary, (Boston: Houghton Mufflin Company, 1984)

Հեղինակի մասին

Ջոյս Մայերն աշխարհում աստվածաշնչյան առաջատար ուսուցիչներից մեկն է, ով 1976թ.-ից սովորեցնում է Աստծո Խոսքը և 1980թ.-ից գտնվում է ամբողջական ծառայության մեջ: Լինելով թիվ 1 «New York Times» ամենալավ վաճառվող գրքի հեղինակ, նա գրել է ավելի քան ութսուն ոգեշնչող գիրք, ներառյալ՝ «Ճշմարիտ երջանկության գաղտնիքը», «Կյանքը պարզեցնող 100 քայլերը», նրա առաջին գեղարվեստական ձեռնարկը՝ «Պենին» և այլն: Նա ունի հազարավոր աուդիո-ուսմունքներ, ինչպես նաև վիդեո-գրադարան: Ջոյս Մայերի «Վայելելով ամենօրյա կյանքը» ռադիո և հեռուստահաղորդումները հեռարձակվում են աշխարհի տարբեր մասերում:

Ջոյսը և նրա ամուսին Դեյվն ունեն չորս երեխա և ապրում են Սենտ Լուիսում (Միսուրի, ԱՄՆ):

ԱՂՈՌՔ՝ ՏԻՐՈՋ ՀԵՏ ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հիսուսն ամեն ինչից առավել ուզում է փրկել Քրեզ և լցնել քո կյանքը Սուրբ Հոգով: Եթե երբեք չես հրավիրել Հիսուսին՝ Խաղաղության Իշխանին, լինելու քո Տերն ու Փրկիչը, հիմա ունես այդ հնարավորությունը: Եթե իսկապես ի սրտե պատրաստ ես այդ քայլին, աղոթիր հետևյալ աղոթքը և սկսիր նոր կյանք Քրիստոսում.

«Հայր, Դու այնքան սիրեցիր աշխարհը, որ Քո Միածին Որդուն Կրկնորդ՝ մահանալու մեր մեղքերի համար, որպեսզի ով հավատա Նրան՝ չմահանա, այլ՝ հավիտենական կյանք ունենա:

Քո Խոսքն ասում է, որ մենք փրկված ենք շնորհքով՝ հավատքի միջոցով, որը պարզև է Քո կողմից, քանի որ մենք անկարող էինք փրկվել:

Ես հավատում և դավանում եմ, որ Հիսուս Քրիստոսը Քո Որդին է և աշխարհի Փրկիչը: Հավատում եմ, որ Նա մահացավ խաչի վրա ինձ համար, և փրկագինը վճարելով՝ մաքրեց իմ բոլոր մեղքերը: Հայր, ի սրտե հավատում եմ, որ Դու Հիսուսին հարություն Կրկնորդ մեռելներից:

Խնդրում եմ, ներիր իմ մեղքերը: Ես դավանում եմ Հիսուսին՝ որպես Տեր: Համաձայն Քո Խոսքի՝ ես փրկված եմ, և իմ հավիտենությունը կապրեմ քեզ

*հեղ: Շնորհակալություն, Հայր: Ես երախտապարտ
եմ Քեզ, Հիսուսի անունով: Ամեն»:*

(Տես Հովհ. 3.16, Եփես. 2.8,9, Հռոմ. 10.9,10,
Ա Կորնթ. 15.3,4, Ա Հովհ. 1.9, 4.14-16, 5.1,12,13):

ՊԱՅՔԱՐԸ ՄՈԼԵԳՆՈՒՄ Է

Ձեր միտքը կռվի դաշտն է

Անհանգստություն, կասկածներ, շփոթվածություն, դեպրեսիա, գայրույթ և դատապարտման զգացողություն... այս բոլորը հարձակումներ են, որոնք ուղղված են մտքի դեմ: Եթե դուք տատապում եք բացասական մտքերից, քաջալերվե՛ք... Ձոյս Մայերն օգնել է միլիոնավոր մարդկանց՝ հաղթելու այս շատ կարևոր պատերազմը, և նա կարող է օգնել նաև ձեզ:

Սիրված հեղինակն ու ուսուցիչն իր երբևէ ամենաշատ վաճառվող գրքում, որն այժմ ներկայացվում է վերախմբագրված տարբերակով, ցույց է տալիս, թե ինչպես կարող եք ձեր մտքերը փոխելով՝ փոխել ձեր կյանքը: Նա սովորեցնում է, թե ինչպես պետք է վարվեք ձեր գլխում եղած հազարավոր մտքերի հետ և, թե ինչպես պետք է մտքերը կենտրոնացնեք և մտածեք այնպես, ինչպես Աստված է մտածում: Նա նաև կիսվում է իր ամուսնության, ընտանիքի, ծառայության մեջ ունեցած փորձություններով, դժվարություններով և վերջնական հաղթանակներով, որոնք առաջնորդել են նրան դեպի հրաշալի և կյանք վերափոխող ճշմարտությունը: Դրանց օգնությամբ Ձոյսը բացահայտել է նաև, թե իր մեջ ինչպիսի մտքեր ու զգացմունքներ են առաջանում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ:

Այժմ ձեր հերթն է՝

- ձեռք բերել վերահսկողություն ձեր մտքի վրա և գտնել ազատություն ու խաղաղություն,
- ճանաչել վնասակար մտքերն ու արգելել դրանց ազդեցությունը ձեր կյանքում,
- համբերատար լինել ինքներդ ձեր հանդեպ, նույնիսկ՝ երբ սխալվում եք,
- զինել ձեզ Աստծո Խոսքով, փառաբանությամբ, աղոթքով և այլ հոգևոր զենքով,
- հաղթահարել ձեր «անապատային մտածելակերպը», դադարել վատ վերաբերմունք ցուցաբերելուց և արդարանալուց, որոնք ձեզ ետ կպահեն Աստծուց, և, ի վերջո, գտնել անպատմելի երջանկություն:

Մի՛ հանձնվեք, եթե կունենաք ևս մեկ դժբախտ օր: Այսօր պարզեք, թե ինչպես ձեռք բերել հաղթանակի երաշխիք ձեր ՄՏՔԻ ԿՈՎԻ ԴԱՇՏՈՒՄ: